BnF

gallica
BIBLIOTHÈQUE
NUMÉRIQUE

Vem. Revue bimestrielle arménienne

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Vratzian, Simon (1882-19..). Vem. Revue bimestrielle arménienne. 1933-1939.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF.Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :
*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.
*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer ici pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.
*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.



ՀԱՆԴԷՍ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Բ

ՆՈՅԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՓԱՐԻԶ
1933

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

„VEM"

REVUE BIMESTRIELLE ARMÉNIENNE

DIRECTEUR: S. VRATZIAN.

«ՎԷՄ»ԻՆ

Բաժանորդ կարելի է գրել հետեւեալ տեղերը·

Ֆրանսա՝ *Լ. Գեւոնեան*, 17, rue Damesme, Paris, XIIIe.
Ն. Կակոսեան, 49, rue Nationale, Marseille.

Յունաստան՝ *«Նոր Օր»*, 20-A rue Vouli, Athénes.

Կիպրոս՝ *Ս. Մահտեսեան*, Papho Gate st. 64, Nicosia.

Բուլգարիա՝ *Յ. Տէվէճեան*, 82, Bld Hristo Boteve, Sofia.

Ռումանիա՝ *Ե. Սարգսեան*, Typ. «Astoria», 14, str. Pictor Luchian, Bucarest.

Եգիպտոս՝ *Գ. Մխիթարեան, խմբագր. «Յուսաբեր»ի*: B. P. 868, Le Caire.

Սիւրիա՝ *Յ. Սիմոնի*, B. P. 208, Alep.
,, *Հ. Ապաճեան*, B.P. 870, Beyrouth.
,, *Ս. Պոյաճեան*, B. P. 321, Damas.

Իրաք՝ *Մ. Սօսեան*, South Gate Bataveen 29/1, Bagdad.

Պարսկաստան՝ *Խ. Մելքումեան, Թաւրիզ*:
,, *Յ. Մուրադեան, Աբադան*: P. O. Box 22.
,, *Վ. Յովհաննիսեան, Թեհրան*: Teint. «Hovar», Khiabane Nadery. Téhéran.

Ամերիկայի ընդհանուր գործակալ՝
Յ. Կոբոյեան, H. Gopoian, 359 W. 28-th. New-York.

Հարաւ. Ամերիկա՝ *«Արմենիա»*, Canning 1087, Buenos-Aires.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ամերիկա, Բրիտ. Կայսրութիւն, Եգիպտոս, Իտալիա՝	տարեկան	65 ֆրանք
Ֆրանսա եւ այլ երկրներ	,,	50 ֆրանք
Ռումանիա, Բուլգարիա, Յունաստան, Սիւրիա, Պարսկաստան	,,	40 ֆրանք

Հասցէ՝ նամակների, դրամի, յօդուածների եւ ուրիշ ամէն տեսակ առաքումների համար —

S. VRATZIAN,
4, Sq. Léon de Bertalot, Courbevoie-Bécon (S).

32887220
(1933 n°2)

ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ
ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Ս. ՎՐԱՑԵԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 2. 1933 ՆՈՅԵՄԲ.—ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԻՐԱԳԵԿ

ՀԱՅ ԱՆԴՐԱՆԻԿ ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆԸ

(«ԽՏՐԱԴԻՄԱՅ ԴԺՐՈՂՈՒԹԵԱՆ»)

I

Ընդհանուր տարածուած կարծիք է, որ հայ անդրանիկ թատերագիրը Մխիթարեան Հ. Պետրոս վ. Մինասեանն է: *Հետեւաբար, անդրանկութեան պատիւը կամ առաջին խօսքը, թատերգութեան մարզում եւս, ինչպէս մի քանի ուրիշ մարզերում, վերագրւում է Ս. Ղազարի հայրերին:*

Այս կարծիքը այնքա՞ն ընդհանրացած է, որ նոյն իսկ հայ գրականութեան դասագրքերի հեղինակները, ինչպէս Լէօ, Վ. Փափազեան, Լ. Մանուէլեան եւ ուրիշներ, հրամցնում են իբրեւ բացարձակ ճշմարտութիւն: Այսպէս, Լէօն իր «Ռուսահայոց Գրականութիւնը» աշխատութեան մէջ գրում է. «Թատերական գրականութիւնը ո՛չ Թիֆլիսում, ո՛չ Պոլսում կամ Զմիւռնիայում պիտի սկիզբ առնէր: Այստեղ էլ առաջին խօսքը պատկանում էր Մխիթարեան հայրերին: 1845*թ. Վենետիկում լոյս տեսաւ «Խոսրով Մեծն», ողբերգութիւն հինգ արարածով, հեղինակութեամբ Հ. Պետրոս վարդ. Մինասեանի: Դա մի շատ հետաքրքրական գիրք է... Այդ* անդրանիկ ողբերգութիւնը *գրաբար լեզուով էր, պատմական բովանդակութեամբ»* (էջ 100):

Նոյն վճռականութեամբ արտայայտւում է եւ Վր. Փափազեանը իր «Պատմ. Հայոց Գրականութեան» մէջ (էջ 434).— «19րդ դարում առաջին թատերական գրուածքն *է վենետիկեան Հ. Պետրոս վարդ. Մինասեանի «Խոսրով Մեծն» ողբերգութիւնը, հինգ արարածով եւ գրաբար լեզուով, որ լոյս տեսաւ* 1845 *թւին»* (*Ընդգծումները մերն են. Իր.*):

BnF
L&A

ACP 91 11923

DH 7ap

2008-160 686 Acp

Զմոռանանք փակագծերի մէջ յիշատակել, որ Հ. Մինասեանի աշխատութեան հրատարակութիւնից 15 տարի առաջ, այն է 1830թ. նոյն Վենետիկի վանքի նորընծայարանում դրել ու խաղացել էին մի քանի թատերգութիւններ, որոնք անտիպ են մնացել.— «Պօղիկտոս Վկայ» ողբերգ., «Աժդահակ» ողբ., «Անխորհուրդ փառասիրութիւն» կատակերգ., «Տարապայման հեգութիւն» կատակ., «Անիրաւ շահասիրութիւն» կատակ. եւ «Անտուութիւն դաստիարակութեան որդւոց առ սէր շահուց», կատակերգութիւն :

Հետաքրքրականն այն է, որ ինքը Հ. Մինասեանն էլ իր վերոյիշեալ ողբերգութեան ընդարձակ յառաջաբանում կարծէք իրեն է համարում առաջին հայ թատերագիրը եւ իր գրածքը որպէս անդրանիկը ներկայացնում: Այսպէս, անցողակի կերպով մատնանշելով, որ մենք հնում, Հայ Արշակունիների օրով, ունեցել ենք «թատերական տեսարանք», եւ Արտաւազդի անունն այդ առիթով յիշելով, անմիջապէս աւելացնում է. «Իսկ զարդիս մինչ դեռ վերատին սկսանի ազգ մեր զսիրով ուսումնական հրահանգայ եւ կենցաղօգուտ յառաջդիմութեան դալ... կամ եղեւ եւ մեղ տալ նմա զճաշակ եւ զայսր ազգի քերթութեան (այսինքն՝ թատերագրութեան. Իր.), զի մի եւ յայսըմ յետնեալ մնասցէ քան զայլս յազգաց» :

Մենք, զբաղւելով հնդկահայ տպագրութեան եւ մամուլի պատմութեամբ, ուրիշ խօսքով՝ բաւականաչափ հին հրատարակութիւններ քրքրելով՝ դալիս ենք յայտարարելու, որ նշմարտութեան դէմ մեղանչած են բոլոր նրանք, ովքեր կարծում են, թէ Հ. Պետրոս Մինասեանն է հայ անդրանիկ թատերագիրը եւ ուրեմն Մխիթարեան հայրերին է պատկանում առաջնութեան պատիւը հայ թատերագրութեան ասպարէզում: Ճիշտ չէ այդ: Առաջնութեան պատիւը կամ առաջին խօսքը պատկանում է հնդկահայերին, որոնք «խոսրով Մեծ»ի հրատարակութիւնից դեռ 24–25 տարի առաջ ունեցել են ո՛չ միայն հայերէն թատերախաղեր կամ ներկայացումներ, այլ նաեւ թատերագիրներ ու թատերգութիւններ՝ ինքնուրոյն եւ թարգմանական:

Պէտք է ընդգծել, որ առհասարակ շատ նշանակալից է եղել հնդկահայոց դերը մեր անցեալ կեանքում: Մի կողմ թողած նրանց

ջերմ մասնակցութիւնը մեր բոլոր ազգային–հասարակական գործերին, մանաւանդ, բարեգործութեան մարզում, չեշտենք նրանց անգնահատելի ծառայութիւնը մասնաւորապէս հայ մտքին ու քաղաքակրթութեան՝ հանդիսանալով հիմնադիրն ու ռահվիրան դրականութեան մի քանի ճիւղերում:

Այսպէս, հայ լրագրութեան հիմնադրութեան պատիւը մենք նրանց ենք պարտական՝ ի դէմս Յարութիւն քահանայ Շմաւոնեանի «Ազդարար» թերթի (Մադրաս, 1794թ.): Հայ քաղաքական միտքը շարունակ հրահրողը եւ վառ պահողը նրա՛նք են եղել՝ յանձինս Սուլթանամ Շահամիրեանի, Յովսէփ Էմինի, Յակոբ Շահամիրեանի եւ ուրիշների: Նրա՛նք են հայ քաղաքական դրականութեան առաջին ռահվիրան ու հիմնադիրը՝ ի դէմս յիշեալ Յակոբ Շահամիրեանի «Յորդորակ» (Մադրաս, 1792թ.) եւ «Որոգայթ փառաց» (Մադրաս, 1773թ.) հոյակապ աշխատութիւնների:

Ներկայ դէպքում՝ կրկին նրա՛նք են հայ թատրոնի ու թատերգութեան հիմնադիրները — մի փաստ, որ մինչեւ այժմ մնացել է անտեսուած ամենքի կողմից:

Հնդկահայ գաղութի այս արտակարգ ձեռներէցութիւնը պէտք է բացատրել մի շարք պատճառներով, բայց ամենից աւելի՝ իրենց նոր հայրենիքի, Հնդկաստանի նպաստաւոր պայմաններով: Գտնելով անգլիական ազատ ու լուսաւորուած պետութեան իշխանութեան ներքոյ՝ հայութեան այդ բեկորը լայն հնարաւորութիւններ ստացաւ իր ցեղային շինիչ ընդունակութիւնները գործադրելու եւ զարգացնելու: Այդ փաստը արձանագրում է եւ հայ լրագրութեան նահապետը, շիրազեցի սքանչելի քահանան՝ համեստութեամբ խոստովանելով, թէ լուսաւոր ազգերի, գլխաւորապէս անգլիացոց, օրինակին հետեւելով է որ ինքը հիմք է դրնում իր «Ազդարար»ի, հայոց անդրանիկ լրագրի: Նոյն խոստովանութիւնը տեսնում ենք նաեւ հնդկահայոց թատրոնի հիմնադիրների կողմից, որոնք յայտարարում են.—

«Մեր ազգի միջումն էսքան ժամանակ սովորութիւն չի եղել, որ մեր երեւելի հեղինակէրն էսպէս գործի (իմա՛ թատերագրութեան .Իր.) ձեռնամուխ լինին եւած, որ մենք հետեւողքս նոցին շարադրութեան եւ կանոնին հետեւինք... Մեք ինկլիզի հեղինակէրից օրինականք վերէլ, նոցին կանոնիւն յօրինէլանք մեր գործն». («Հասարակ.», էջ 119):

II

Հնդկահայոց մեզ յայտնի առաջին թատերգութիւնը Վոլտէրի «Ողբերգութիւն ի վերայ մահուան Յուլիոս Կեսարոսի» երկն է, թարգմանուած անգլիերէնից Յակոբ Նազար Շամրեանի ձեռքով՝ «ի զբօսանս ընթերցասէր պատանեկացն մերազնէից», եւ տպուած Մադրասում, 1812 թուին, նոյն Յակոբի եւ իր եղբայր Յովսէփի տպարանում:

Լեզուն գրաբար է, այն էլ բաւական խրթին, թէեւ թարգմանուած է «ընթերցասէր պատանեակների» համար: Առ հասարակ, հնդկահայ բոլոր հրատարակութիւններն էլ գրաբար են, որովհետեւ իրենք հնդկահայերն էլ ջերմ գրաբարեան են եղել եւ կարելի է ասել՝ մինչեւ այսօր էլ շարունակում են մնալ:

Բայց մեզ համար եւ մեր թատրոնի պատմութեան տեսակէտից՝ աւելի կարեւորը հնդկահայոց երկրորդ անդրանիկ թատերգութիւնն է, որովհետեւ նա այլեւս թարգմանական չէ, այլ ինքնուրոյն եւ բացի դրանից, գրուած է ո՛չ միայն ընթերցանութեան, ինչպէս վերեւինը, այլ եւ խաղալու համար, ու քանիցս էլ խաղացուել է ժամանակին:

Գրուածքը կոչուած է կատակերգութիւն, թէեւ շատ հեռու է իսկական կատակերգութիւն լինելուց: Ունի մի շատ տաբօրինակ ու խրթին խորագիր՝ «Խտրադիմայ Դժրողութեան», որ բառացի նշանակում է՝ Դրուժանութեան դիմագուշակը», բայց աւելի յարմար կը լինէր թարգմանել «Դրուժանութեան մարմնացումը»:

Որովհետեւ գիրքը խիստ հազւագիւտ է*), ուստի աւելորդ չենք համարում այստեղ լրիւ կերպով ներկայացնել նրա ամբողջ ճակատը (անունը), ինչպէս եւ արտաքին համառօտ նկարագրութիւնը:

Ճակատն է՝ «Խտրադիմայ դժրողութեան· որ է կատակերգութիւն իմն՝ ի չորս գործս բաժանեալ: Աշխատասիրեալ ուրումն մատաղ բանաստեղծի: Ի Կալկաթա, ի 1 Հոկտեմբերի, 1821: Տպագրեալ յընծայեալ Տպարանի Յորդանանեան Պարոն Պօղոսի»:

Գիրքը 6ածալ է, ընդամէնը 100 էջ: Տպագրութիւնը շատ վատ է, ինչպէս ընդհանրապէս Պ· Յորդանանեանի բոլոր հրատարակութիւնները: Թուղթը հասարակ է, անհարթ, տառերը թէեւ միջակ մեծութեամբ, բայց մաշուած, կոտրուած եւ շատ տեղե-

*) Մեր ձեռքի օրինակը պատկանում է ջուղայեցի պ· Մարտիրոս Աբգարեանին, որը սիրով տրամադրեց մեզ օգտուելու համար: Ջերմ շնորհակալութիւն իր այդ բարեացակամութեան համար:



ԽՏՐԱԴԻՄԱՅ

ԴԺԲՈՂՈՒԹԵԱՆ։

Ըստ կատակերգութեան՝ ի չորս գործս բաժանեալ։

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱԼ ՈՒՐՈՒՄՆ
ՄԱՏԱՂ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ։

ՊԷՏՔ։

Գ. ոեմ զայս ճեր՝ և թե. փիծ ինչ
Երևեսի յայսմիկ՝ չե ինչ։
Զի անզի իմն՝ արանանունք
Կինշին յորս՝ չեն աբսասուք։

Գրոն Ժոռնան։

ԻԿԱԼԿԱԹԱ

Ի 1 Հոկտեմբերի, 1821։

Տպագրեալ յընդ այեաց Տպարանի Յորդանանեան Զարան Զօղուի՝ ի Յ. Տն Յաքոբեանն։

«ԽՏՐԱԴԻՄԱՅ ԴԺԲՈՂՈՒԹԵԱՆ» գրքի առաջին էջը

բում բոլորովին չեն էլ երեւում: Այնպէս որ կարդացւում է բաւական դժւարութեամբ, մանաւանդ լեզուն էլ ծանր է — գրաբարը՝ խրթին, անհարթ, իսկ աշխարհաբարը՝ Զուղայի բարբառով:

Թատերգութեանը վերջից կցւած է մէկ շատ ընդարձակ բացատրութիւն՝ «Հասարակախօսութիւն» վերնագրով: Բաղկացած է 3 մասից (135 էջ) եւ տպւած է նոյն տպարանում, նոյն թւին, բայց դեկտեմբեր 19ին: Այստեղ, «Հասարակախօսութեան» մէջ, շատ հետաքրքրական տեղեկութիւններ են տրւում առհասարակ թատրոնի դերի ու նշանակութեան, ինչպէս նաեւ «Խորադիմայ»ի հեղինակների, գրութեան շարժառիթների եւ մի շարք այլ խնդիրների մասին:

Գրքի քննադատութիւնը մեր նպատակից դուրս լինելով՝ այսքանը միայն պիտի ասենք, որ «Խորադիման» իբրեւ գրական երկ, մանաւանդ իբրեւ թատերգութիւն, շատ թոյլ է: Եւ չէր էլ կարող այլ կերպ լինել՝ որպէս առաջին փորձ, այն էլ սրանից մէկ դար առաջ, երբ գրականութեան շունչը դեռ նոր-նոր էր սկսում ծնունդ առնել մեր ժողովրդի մէջ:

Գործողութիւն, հոգեբանութիւն եւ պատճառականութիւնը, որ իւրաքանչիւր թատերական գրւածքի անհրաժեշտ հիմքերն են գոյութիւն չունեն այնտեղ: Իսկ երկար ու բարակ ճառեր, մենախօսութիւններ ու խօսակցութիւններ — որքան ուզէք: Եւ, օրինակի համար, բեմը թողնելու կամ իրարից բաժանւելու համար բնաւ կարիք չկայ հարկադրական մէկ պատճառի, որ բխէր գործող անձանց հոգեբանութիւնից, նրանց փոխյարաբերութիւններից կամ մի խօսքով՝ գրւածքի ներքին էութիւնից: Բաւական է ասել՝ «քունս տանում է »եւ կամ՝ «գնանք թէյ խմենք» — ու բեմը իսկոյն կը դատարկւի (էջ 34, 42 եւ այլն):

Բայց իր բոլոր պակասութիւններով հանդերձ՝ «Խորադիմայ»ի միակ եւ գլխաւոր արժանիքը այնուամենայնիւ չի նսեմանում: Նա կայ եւ մնում է հայ անդրանիկ թատերգութիւնը եւ իբրեւ այդպիսին հայոց գրականութեան թանկագին զարդերից մէկն է կազմում:

III

Ո՞վ է սակայն, այն անձնաւորութիւնը, որը «Խորադիմայ Դժրողութեան»ը յղանալով՝ հիմք էր դնում հայկական թատերագրութեան եւ ինքն էլ նրա առաջին նահապետը դառնում:

Դժբախտաբար, այդ սքանչելի մարդու մինչեւ իսկ անունը

չգիտենք, որովհետեւ նա համեստօրէն թաղնուել է «մատաղ բանաստեղծ» անթափանց քօղի տակ — «աշխատասիրեալ ուրումն մատաղ բանաստեղծի»: Բայց «Հասարակախօսութիւն»ից այսքանը միայն տեղեկանում ենք, որ նա անդամ էր Օճանասիւռեան Ընկերութեան եւ հետագայում ապրում էր Մադրասում:

Յայտնի է, որ հայերը ԺԹ. դարի սկզբներում դեռ բաւական չօրեղ էին Հնդկաստանում — թէ՛ իրենց թուով եւ թէ՛ մանաւանդ տնտեսապէս: Դրա հետ միասին մեծ ոգեւորութիւն, մի գեղեցիկ շարժում կար նրանց մէջ, յատկապէս երիտասարդութեան շարքերում: Այն է՝ լուսաւորուել եւ լուսաւորել ժողովրդին: Որի համար նրանք հիմնում էին զանազան ընկերութիւններ ու միութիւններ կամ իրենց բառով եթէ ասենք՝ միաբանութիւններ: Յիշենք Արշարունեան եւ Իմաստասէրեան ընկերութիւնները Կալկաթայում եւ Օճանասիւռեանը՝ Բոմբէյում:

Յատկապէս, վերջինը կապ ունի մեր նիւթի հետ, հետեւաբար, մի քանի թռուցիկ տեղեկութիւններ նրա մասին թող աւելորդ չնկատուի այստեղ:

Բոմբէյի Օճանասիւռեան ընկերութիւնը հիմնուած էր 1815 թուին: Նրա անդամները մեղուի ջանասիրութեամբ աշխատում էին նախ եւ առաջ ինքնակրթութեան ու դաստիարակութեան համար: Այդ նպատակով՝ նրանք թարգմանութիւն էին անում — գլխաւորապէս անգլերէնից,— գրում էին բանաստեղծութիւններ, հեղինակում էին գրական ինքնուրոյն երկեր և, ինչպէս երեւում է, հաւաքւում էին միասին, կարդում, քննադատում ու մտքերի փոխանակութիւն էին ունենում:

Ժողովրդին էլ օգտակար լինելու կամ օճան (օգնութիւն, բարիք) սփռելու համար՝ նրանց հարկաւոր էր նաեւ մի տպարան, ուր կարողանային տպագրել իրենց վաստակները եւ առաջին հերթին՝ մեր հին, տակաւին անտիպ մնացած գրչագրերը, որոնց հրատարակութիւնը ժողովրդի լուսաւորութեան եւ ազգային ինքնագիտակցութեան արթնացման տեսակէտից գտնում էին խիստ անհրաժեշտ:

Օճանասիւռեանի այդ գեղեցիկ փափագին ընդառաջ է գնում մադրասաբնակ մեծատուն Պօղոս Յորդանանեանը, որը մէկ տպարան ձեռք բերելով՝ նւիրում է ընկերութեանը: Սակայն, տպարանը, փոխանակ Բոմբէյի, ուր գտնւում էր Օճանասիւռեանը, հասատւում է Կալկաթայում, որովհետեւ ընկերութիւնը յարգելով Իմաս-

տախնդրեան միութեան դիմումը՝ ժամանակաւորապէս զիջում է իր մամուլը նրան*) :

Ինչպէս ասացինք, Օճանասիւռեանի իւրաքանչիւր անդամը պարտականութիւն ունէր նաեւ գրել եւ միութեան ժողովին ներկայացնել գրական զանազան աշխատութիւններ՝ ինքնուրոյն կամ թարգմանական : Եւ ահա այդ գեղեցիկ գործի գեղեցիկ արդիւնքներից մէկն է լինում մեր «Խտրադիման»՝ հայոց անդրանիկ թատերգութիւնը :

Մատաղ բանաստեղծը — այդպէս էլ կոչենք նրան — իր թատերգութիւնը կարդում է միութեան ընդհանուր ժողովում, ուր ժողովականներից ամէն մէկը իր ուղղումներն ու դիտողութիւններն է մացնում, որից յետոյ ընդհանուր ուժերով երեք անդամ խաղացւում է հասարակութեան խնդրանօք :

«Հասարակախօսութեան» հեղինակը այդ մասին շատ պարզ կերպով վկայում է իր աղաւաղւած Զուղայի բարբառով. «Միաբանութեան անդամքս համէքս մին գործ յօրինեցինք — «ուզում է ասել իւրաքանչիւրն իր մասնակցութիւնը բերեց. Իր.) եւ տեղն իրեք անդամ խնդրանօք պատուելի հասարակութեան կատարեցինք»**) :

Անծանօթ հեղինակը, թերեւս համեստութիւնից դրդւած, ո՛չ անունն է դնում իր երկի վրա եւ ոչ էլ կամենում է հրատարակութեան տալ : Սակայն, Օճանասիւռեան ընկերութիւնը, կարեւոր համարելով երկի հրատարակութիւնը՝ ձեռագիրը յանձնում է իր անդամներից դպիր***) Մարտիրոս Մկրտչեանին հրատարակելու :

---

*) «Ազգասէր» լրագիր Կալկաթայի, 1847թ., №№ 102 եւ 103 :

**) Մեր ձեռքին եղած օրինակում մատիտով նշանակւած են դերակատարների անունները, որոնք բոլորն էլ ժամանակի աչքի ընկնող ազգայիններ են Կալկաթայում : Օրինակի համար, յիշենք նրանցից Յովհաննէս Աւդալեանին, որ Մարդասիրական ճեմարանի տեսուչն էր, նշանաւոր գրականագէտ ու ատենաբան, հեղինակ բազմաթիւ աշխատութիւնների եւ շատ ազդեցիկ ու յարգւած անձնաւորութիւն ամբողջ հնդկահայութեան մէջ : Նշանակում է՝ «Խտրադիման» խաղացել է նաեւ Կալկաթայում եւ ժամանակին լայն հետաքրքրութիւն է առաջացրել, որ այդպիսի դէմքեր մասնակցել են նրա խաղին :

***) *Դպիր* մակդիրը այստեղ նշանակում է գիտնական, գրագէտ : Մկրտչեանը ժամանակի նշանաւոր հնդկահայերից մէկն էր, աչքի ընկնող գիտնական ու ազգային-հասարակական գործիչ : Նրա գրական վաստակներից յիշենք «Վիկտորիայ Այբուբենարանը», Կալկաթա, 1831թ. : Ժամանակին նշանաւոր դասագիրք էր, որի վրա սերունդներ են դաստիարակւել : Այլ եւ խմբագիր է եղել Կալկաթայի «Շտեմարան» թերթի, 1821–23 թ.թ. :

Դպիր Մարտիրոսը կատարում է իր վրա դրված պարտականութիւնը, նախապէս իր ուզածի պէս փոփոխելով ու վերամշակութեան ենթարկելով թատերգութեան օրինակը: Իր կողմից էլ աւելացնում է ընդարձակ «Հասարակախօսութիւն»ը, Նոր-Ջուղայի բարբառով, վրան էլ դրոշմելով իր անունն ու ազգանունը:

Նշանակում է՝ «Ինտրադիման» այն ձեւով, ինչպէս որ նա հասել է մեզ, երեք ձեռքով կամ երեք խմբագրութեամբ է անցել — յօրինել է Մատաղ Բանաստեղծը, ուղղումներ ու սրբագրութիւններ է արել Օճանասիւռեան միաբանութիւնը եւ, վերջապէս, հիմնական բարեփոխութեան է ենթարկել Մարտ. Մկրտչեանը:

Հետեւաբար, հրատարակիչ Մկրտչեանը իրաւունք ունէր ասելու, որ «Ինտրադիման» երեք հեղինակ է ունեցել — իսկական հեղինակը կամ Մատաղ Բանաստեղծը, որ «այժմ Մադրասումնայ» — ասում է նա, Օճանասիւռեան ընկերութիւնը եւ ինքը:

Երեք ձեռքից անցնելով՝ գրածքը հիմնական փոփոխութեան է ենթարկւում թէ՛ իր բովանդակութեան, թէ՛ լեզուի եւ թէ՛ արտաքին ձեւի կողմից: Մատաղ Բանաստեղծը կամ Մադրասի հեղինակը գրել էր արձակ եւ գրաբառ ու աշխարհաբառ, բայց աշխարհաբառը՝ աւելի քիչ: Օճանասիւռեան ընկերութիւնը, լեզուին չդիպչելով, մտցնում է միայն ձեւի փոփոխութիւն, այն է՝ արձակի կողքին մտցնում է նաեւ ոտանաւորով մասեր: Վերջին խմբագիր Մկրտչեանը ձեւը բոլորովին փոխում է՝ ամբողջ գրածքը վերածելով ոտանաւորի, իսկ լեզուի խնդրում, գրաբառի եւ աշխարհաբառի հետ միասին մտցնելով նաեւ օտար լեզուներով խօսակցութիւններ:

Բայց աւելի լաւ է՝ խօսքը տանք իրեն, դպիր Մկրտչեանին, իր իսկ լեզուով պատմելու ամբողջ անցուդարձը.—

«Մադրասայ հեղինակն — ասում է նա, իւր գործն ընդարձակ շարադրութեամբայ յօրինել, գրաբառ եւ աշխարհաբառ. աշխարհաբառն շատ փոքրայ: Մեր Օճանասիւռեանց յօրինեալն խառնայ գրաբառ ու աշխարհաբառ, ընդարձակ շարադրութեամբ եւ ոտանաւորօք. գրաբառն իվելայ (աւելի է) քանզ աշխարհաբառն: Եւ կամեցայ երեք տեսակիցն եւս մեր ազգումն լինի. բոլորն ոտանաւոր յօրինեցի, աշխարհաբառ. եւ վասն նորատեսակ յօրինելոյն այլազգական բարբառ եւս ձգեցի մէջն որպէս եւրոպացիք եւս ունեն լաթիներէն, իտալերէն եւ այլ զանազան ազգաց բարբառ» (էջ 121):

IV

Որ «Խորադիման» իր տեսակի մէջ կամ որպէս թատերգութիւն առաջինն է հայ գրական անդաստանում — այդ մասին բազմիցս շեշտում եւ վկայում են եւ մեր երկու հեղինակները՝ Մատաղ Բանաստեղծը եւ զպիր Մարտիրոսը, առաջինը՝ իր «Նախերգանք»ի, իսկ երկրորդը՝ իր «Հասարակախօսութեան» մէջ:

Այսպէս օրինակ, Մկրտչեանը իր երկասիրութեան հէնց առաջին մասում խորին ափսոսանքով յայտարարում է.

«Ես մեծ պարծանք կհամարի, որ մեր ազգի միջումն ես լինի (լինէի) սկիզբն, որ թատրոնական խաղարկութեան հեղինակ լինի դառցէլ, եւ էս անծանօթ գործի վրայ առարկութիւն լինի արարել, որ անմահ իմ անուս կմնէր մեր ազգի միջումն»:

Առաջնութեան ու անմահութեան գաւինին տալով մեր մատաղ բանաստեղծին՝ զպիր Մարտիրոսն այնուամենայնիւ պարծենում է նրանով, որ ինքն էլ մասնակցութիւն ունի հայոց անդրանիկ թատերգութեան եւ ուրեմն հայ թատրոնի սկզբնաւորութեան մէջ: Որովհետեւ ինքը խմբագրել ու տպագրել է «Խորադիման», հետեւաբար «չի պիտիլ անմասն համարել իրեն յսկզբնապատճառ հեղինակութիւնից»:

Շարունակութեան մէջ նորից շեշտելով, որ «Խորադիման» մեր առաջին թատերգութիւնն է եւ գործի սկիզբը՝ նա աւելացնում է. «Արդ՝ որովհետեւ էս մին նոր բանայ՝ հարկաւորայ որ էս բանիս վերայ մին ընդհանրական ծանօթութիւն տալ, թէ էսպէս խաղարկութիւնն ե՞րբայ սկսվէլ, ի՛նչ իքմինայ կամ ի՛նչ օգուտ ունի»: Ու հէնց այդ նպատակով էլ յօրինում է իր ընդարձակ բացատրութիւնը կամ «Հասարակախօսութիւնը»:

Նոյն իսկ այն փաստը, որ Մատաղ Բանաստեղծը չի կամեցել ինքը տպագրել իր երկը եւ հրաժարուել է անգամ իր անունը նրա ճակատին դրոշմելուց — այդ փաստն եւս նա բացատրում է գործի նորութեամբ, թէ՝ «որովհետեւ նոր մին անծանօթ բանի հեղինակայ գառցէլ եւ խբարայ ելէլ (հասկացել է), որ իւր ժամանակիցքն կարելիայ խոժոռվեն (դժգոհեն), վասնորոյ ոչ անուննայ յիշէլ եւ ոչ տպէլայ տվէլ»:

V

Աւելորդ չենք համարում ներկայացնել այստեղ «Խորադիմա»յի համառօտ բովանդակութիւնը, որ անհրաժեշտ է մեր անդրանիկ թատերգութեան ոգին եւ ուղղութիւնը հասկանալու տեսակէտից:

Դէպքը կատարւում է Կալկաթա քաղաքում, հայկական շրջանում: Գործող անձինք են՝ պ. Մելիտոս, պ. Դօն-Ժուան, պ. Մարկոս, պ. Պետրոս, պ. Գասպար, պ. Ներսէս եւ պ. Գիրիք — բոլորն էլ պարոն առանց բացառութեան: Կանայք՝ Օր. Լիտիշայ եւ մայրը՝ տիկ. Սիրանոյշ: Ծառաներ եւ աղախիններ:

Գլխաւոր հերոսը պ. Մելիտոսն է: Փորձուած, խորամանկ, շահամոլ, եսական եւ ուխտադրուժութեան կատաբեալ մարմնացումն: Նրա շուրջն են համախմբուած բոլոր գործողութիւններն ու գործող անձինք:

Նա իբր թէ սիրում է մի օրիորդի — որը խաղում բնաւ հանդէս չի գալիս — եւ կամենում է անպայման ամուսնանալ: Բայց օրիորդի ծնողները չեն ուզում: Ուստի նա որոշում է ամէն գնով երկպառակութիւն ձգել նրանց մէջ — նախ՝ նրանցից վրէժխնդիր լինելու համար եւ երկրորդ՝ թերեւս այդ միջոցով յաջողի եւ իր գործը:

Իր այս չար դիտաւորութիւնն իրագործելու համար՝ նրան հարկաւոր է յարմար մի գործիք, որը ազատ ել ու մուտք ունենար օրիորդի ընտանիքում: Միւս կողմից՝ այդ գործիքը նրան միշտ տեղեակ պիտի պահէր աղջկայ տան ամբողջ անց ու դարձին, որպէսզի նա հնարաւորութիւն ունենար շարունակ նորանոր դաւեր նիւթելու:

Եւ նա իր ճանկն է դցում միամիտ Դօն-Ժուանին, որը շատ երկիւղած, աղնիւ, բարի, կրթուած մի երիտասարդ է, բայց չափազանց անփորձ, մարդ չճանաչող եւ ամենքին հաւատացող:

Այս խեղճին աւելի լաւ օգտագործելու համար՝ Մելիտոսը նախ և առաջ իրեն ձեւացնում է նրա ամենահաւատարիմ բարեկամը, պատրաստ մինչեւ անդամ իր կեանքը չխնայելու նրա համար — ի հարկէ, կեղծ: Ապա՝ նրան ծանօթացնում եւ սիրահարեցնում է Օր. Լիտիշային, որպէսզի նա ամբողջովին իր հմայքի տակ լինի.

Ես էսօր պիտի շատ զգոյշ խօսեմ,
Որ Դօն Ժուանին դրիստ կերպ խաբեմ.
Մեր Լիտիշի հետ սիրահարցնեմ,
Անելանելի մին թալակ գցեմ:

Ու իր աղէսային խորամանկութեամբ կարողանում է երկսին էլ այն համոզումը ներշնչել, թէ նրանց ամուսնութիւնն ու երջանկութիւնը միայն եւ միմիայն իրենից է կախուած:

Նրանց աւելի կուրացնելու եւ իր ձեռքին հաւատարիմ գործիք դարձնելու համար՝ նա աշխատում է աւելի ու աւելի բորբոքել սիրահարութեան զգացմունքը երիտասարդ զոյգի սրտերում: Ստեղծում է բազմաթիւ առիթներ, սարքել է տալիս խնճոյքներ պ. Գասպարի

եւ պ. Պետրոսի տներում, ուր նրանք հնարաւորութիւն ունենան իրար հանդիպելու եւ էլ աւելի խճճւեն սիրոյ ցանցերում:

Ու կատարելապէս հասնում է իր նպատակին: Դօն Ժուանն ու Լիտիշան փոխադարձաբար սիրահարուած են մինչեւ ականջների ծայրերը:

Բայց, յանկարծ, Լիտիշայի ամուսնութեան հարցը նրա համար փոխւում է մի իսկական արկածախնդրութեան: Իր շահատակութիւնների մէջ Մելիտոսն այնքան առաջ է գնում, որ ընկնում է շահամոլութեան ծուղակը: Մոռանալով իր նախկին նպատակը, որի համար նա սիրահարութեան թակարդ էր լարել Դօն Ժուանի ու Լիտիշայի համար, այժմ խորհում է օգտագործել Լիտիշայի ամուսնութիւնը իր նիւթական շահի համար:

Եւ, ուրեմն, Դօն Ժուանը նրան այլեւս հարկաւոր չէ, որովհետեւ նա աղքատ է, դրամ չունի: Մանաւանդ որ նա արդէն քամել, մզել էր նրան. այսինքն՝ ինչքան կարող էր շահագործել էր եւ այլ եւս նրա պէտքը չունէր:

Սա ինձ բարեկամ իւրնայ կարծում,
Էլ չի խասկաման (հասկանում) որ ինձամ սիրում.
Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛ էլ չի մտածում
Զո՞ւմ (ինչո՞ւ) պիտի սիրեմ, պատճառ չի խորհում.

Երբ իմ մաթլապին (նպատակին) որ ես հասանեմ,
Իմ սուիտ հարթին (սիրածին) որ տիրապետեմ,
Էլ միւս անգամ ականելէց չեմ (երեսին չեմ նայելու)
Դօն Ժուանն ո՞վայ, ճանաչելէց չեմ (չեմ ճանաչելու):

«խտրադիմայ», էջ 18.

Ուրեմն պէտք է փնտռել մէկ աւելի իւղոտ փեսացու, ով ուզում է լինի — տգէտ, տարիքոտ, անպիտան, միայն թէ փող ունենայ, գրպանը ճարպոտ լինի: Եւ գտնելն էլ հեշտ է, որովհետեւ նախ՝ Լիտիշան լաւ աղջիկ է, երիտասարդ, գեղեցիկ. երկրորդ՝ որ, ամենից գլխաւորն է, ունի բաւական խոշոր ժառանգութիւն: Հայրը մեռնելով, իր ամբողջ կարողութիւնը թողել էր այրուն՝ Տիկ. Սիրանոյշին եւ Լիտիշային:

Այս գործում նրա հաւատարիմ զինակիցն է պ. Պետրոսը, որը Տիկ. Սիրանոյշենց ընտանիքին շատ մօտ է եւ մեծ մասնակցութիւն ունի նրանց բոլոր գործերում: Բայց նա էլ անպիտանի ու փողասէրի մէկն է: Նա էլ ուզում է մէկ այնպիսի փեսացու ունենալ Լիտիշայի համար, որ ամուսնութիւնից յետոյ նրանց հարստութեան ամբողջ կարգադրութիւնը մնայ իր ձեռքում: Աւելի. նա մէկ «յարմար» փե-

սացու էլ որոնում է Լիտիշայի մօր՝ Տիկ. Սիրանոյշի համար, սակայն, էլի նոյն պայմաններով:

Միջանկեալ ասենք, որ Տիկ. Սիրանոյշն էլ մի բարի պատուղ չէ. նա՛ եւս շատ մեծ ախորժակ ունի ամուսնանալու: Նա մինչեւ իսկ նախանձում է իր աղջկան, որին այնքան ուզողներ կան, իսկ իրեն՝ ո՛չ ոք: «Էս իմ աղջկան ողջ էլ սիրումն, մինն ինձ սիրող խօ չի գուս գոլման» (չիդուրս գալիս) — վշտացած բացագանչում է նա Ջուղայի բարբառով:

Նրա բերանի ջուրը գնում է նոյն իսկ պ. Մարկոսի համար, որը իրենից շատ փոքր է.—

Մարկոսն ինձ սիրէր՝ շատ լէվ (լաւ) բան կլինէր.
Ամմա ափսո՛ս որ շատ պստիկայ.
Իմ թշնամիքն խելքում կբերեն,
Կասեն շատ մեծամ խելքից կխանեն (էջ 64):

Պ. Մելիտոնն ու պ. Պետրոսը, երկու շահամոլներ ու անպիտաններ, ձեռք-ձեռքի տուած գտնում են իրենց փնտրած փեսացուն՝ պ. Գիրիքին: Սա հարուստ պ. Ներսէսի որդին է, բայց ծայրայեղօրէն տգէտ, յիմար ու տխմար: Այնքան տխմար, որ նոյն իսկ չգիտէ, թէ ո՛ւմ օրիորդ կասեն եւ ո՛ւմ տիկին. եւ օրիորդ էլ ասելիս՝ ասում է օրատրդ եւ ամենքին ծիծաղեցնում իր վրա: Բայց փող ունի: Մայրը՝ Տիկ. Սիրանոյշն էլ համաձայն է իր աղջկան այդ անասունին տալու, որովհետեւ նա էլ իր փեսացուից միայն մի պահանջ ունի — այն՝ որ «ջուրը լի լինի», ինչպէս արտայայտում է ինքը գռեհկօրէն.

Եւ Լիտիշային տալիս են այդ մարդուն: Նա էլ լուռ գնում է, վախենալով, որ եթէ չգնայ՝ Գիրիքը նրան կանիծի: Ու իրեն մխիթարում է միայն նրանով, որ իր դժբախտութեան յանցաւորը ինքը չէ, այլ ուրիշները:

Դօն Ժուանն էլ լսելով ամբողջ եղելութիւնը՝ լուռ ու ճանջ գնում եւ ինքն իրեն 7 երեսանոց մի մենախօսութիւն է արտասանում, կեղծ դասական ուղղութեամբ: Ու ամէն ինչ Աստծուն վերադրելով եւ նախախնամութեան կամքով բացատրելով, հանդիսաւորապէս հաշտւում է իրեն հասած հարուածի հետ եւ խնդիրը փակում:

Դրանով էլ վերջանում է ամէն բան, որովհետեւ եթէ դա խրատի համար էր, այսքան էլ բաւական է: «Այսքանս բաւ է առ ի խրատ լինել այնոցիկ, որ դեռ չիցին փորձառեալ» — ասում է Դօն Ժուանն ու գնում իր գործին:

Ինչպէս տեսնում էք, թատերգութեան նիւթը շատ պարզ է եւ աւելի դրամատիկ, քան կատակերգական, թէեւ կատակերգութիւն



«ԽՏՐԱԴԻՄԱՅ ԴԺՐՈՂՈՒԹԵԱՆ» գրքի Յաւելուածը

է կաշված գրածքը։ Ամբողջ բովանդակությունը լուրջ է եւ տխուր։ Եթէ կատակերգություն անունն է տրված նրան — այդ երեւի այն պատճառով, որ մի–երկու տեղ թերեւս կարելի էր ժպտալ, ինչպէս օրինակ, ծառաներն ի զուր տեղը իրար ծեծում են, կամ բեմ դուրս գալով, նրանցից ամէն մէկը խօսում է տարբեր լեզուներով — հնդկերէն, թուրքերէն եւ այլն, այն էլ սոսկալի աղաւաղելով, կոտրտելով։

«Ատրաղիմայ»ի հեղինակները իրենք էլ զգում են, որ իրենց գործը շատ պակասաւոր է եւ դրա համար ընթերցողի ու հանդիսատեսի ներողամտությունն են խնդրում։ Սակայն, յանցանքը իրենցը չէր, որովհետեւ իրենք առաջինն են այդ մարզում. «Մեր ազգի միջումն — մի անգամ էլ կրկնենք նրանց այս ուշադրաւ յայտարարությունը — էսքան ժամանակ սովորություն չի եղել, որ մեր երեւելի հեղինակէրն էսպէս գործի ձեռնամուխ լինեն եղած, որ մեք հետեւոզքս նոցին շարադրության եւ կանոնին հետեւինք»։ («Հասար.» էջ 119)։

VI

Հիմնական դաղափարը կամ աշխարհայեացքը, որի վրա կառուցած է մեր անդրանիկ թատերգության ամբողջ շէնքը — կրօնաբարոյական է։ Ըստ որում մարդկային կեանքի վերջնական նպատակն է երջանկությունը, որին հասնելու համար պէտք է ընթանալ քրիստոնէական կրօնի ցուցմունքերով եւ կատարել աստուածային պատուիրանները։ Ուրիշ խօսքով՝ պէտք է հետեւել քարոզն ու չարից զգուշանալ, խուսափել։

Բայց, դժբախտաբար, մարդկային բնությունը սխալական է եւ միշտ հակամէտ դէպի չարը — այստեղից էլ առաջանում է մարդուն զգուշացնելու, կրթելու անհրաժեշտությունը, որպէսզի նա չարն ու բարին ճանաչելով՝ հրաժարվի չարից եւ դէպի բարի ընթանայ։ Եւ ինչի՞ համար են բիւրաւոր մատեանները, եթէ ո՛չ միայն եւ միայն ա՛յդ նպատակի համար։ Սակայն, մարդուն հրահանգելը եւ նրա միտքը դէպի բարին առաջնորդելը պէտք է կատարվի հաճելի, ախորժ ձեւով, որպէսզի մարդ սիրով անձնատուր լինի հրահանգության եւ այդպիսով դիւրությամբ կրթվի ու դաստիարակվի։

Գրական բոլոր տեսակներից — վէպ, բանաստեղծություն, պատմություն եւ այլն — լաւագոյնն այդ տեսակէտից թատերգությունն է, որովհետեւ մարդ հաճոյքով եւ կենդանի գործով տեսնում է բեմի վրա մարդկային բոլոր արարքները, իրենց լաւ ու վատ

հետեւանքներով, եւ ուրեմն աւելի զօրեղ կերպով համոզուում, որ պէտք է չարից խորշել եւ բարուն հետեւել:

Ահա թէ ինչու «Խորադիմայ»ի հեղինակները չափազանց բարձր դաղափար ունեն թատրոնի դաստիարակչական դերի մասին եւ, թէեւ վախենալով, որ շատ խորթ պիտի հնչի իրենց հայրենակիցների ականջին, «երկրորդ եկեղեցի» եւ «առաջին ուսումնարան» են կոչում թատրոնը: Այդ իսկ պատճառով նրանք նախանձով են նայում բոլոր կրթեալ ժողովուրդների եւ մասնաւորապէս եւրոպացոց վրա, որ ըմբռնում են թատրոնի վսեմ նշանակութիւնը եւ իրենց մեծ թատերգակներին ու դերասաններին սիրում են, արձաններ կանգնում ու անմահացնում են:

Իրենք էլ, հայ ժողովրդի կրթութեան ճանապարհի վրայից դէթ մի քար վերցնելու գեղեցիկ պատրաստակամութեամբ, գրիչ են առնում եւ յօրինում «Խորադիման»: Եւ թատրոնը նկատելով որպէս դաստիարակիչ մի հաստատութիւն՝ բնականօրէն իրենց հայեացքը դարձնում են դէպի իրական կեանքը եւ այնտեղ թագաւորող 'չարն ու բարին, իրենց աշխատութեան մէջ ներկայացնում են չարը իր գարշելի կերպարանքով՝ նրանից խորշելու, խուսափելու համար, բարին իր գրաւիչ գեղեցկութեամբը՝ նրան սիրելու եւ նմանուելու համար:

Այստեղից էլ «Խորադիման» նախ՝ դադարում է մի իսկական թատերական երկ լինելուց — այդ դաղափարի այսօրուայ գրական իմաստով — որի մէջ նիւթի միութիւնը կամ ամբողջականութիւնը եւ գործող անձանց հոգեբանութիւնը պիտի յարգուած լինէին:

Երկրորդ՝ դառնում է դոյնզդոյն մի հաւաքածու կեանքից առնուած զանազան տիպերի ու պատկերների, յաճախ չափազանցուած եւ դոյները խիստ թանձրացած — որոնք իրար հետ կապուում են ո՛չ թէ ներքինապէս, մէկը միւսից բխելով, այլ մեքենայօրէն, պ. Մելիտոսի գործի ու անձի պահանջների համեմատ:

Այդ է պատճառը, որ «Խորադիման»ի մէջ դուք չէք տեսնում երկու կամ աւելի ներհակ (հակադիր) զգացմունքների պայքարը, իրենց ուրոյն հերոսներով եւ գործողութիւններով, այլ որքան անձինք՝ այնքան էլ կիրք ու բնաւորութիւն: Եւ որովհետեւ — մէկ էլ չեշտենք — մեր հեղինակներն իրենց նպատակ են դրել քարոզել եւ խրատ կարդալ, ուստի պիտի վերցնէին ըստ կարելւոյն շատ չար ու բարի օրինակներ եւ ներկայացնէին իրենց դրուածքում: Ու այդպէս էլ արել են:

«Մարդկային ընկերութիւնն — ասում է երկրորդ հեղինակը, դպիր Մարտիրոսը — զանազան բնութեամբ, վարուք եւ ուսմամբ

անձանցովայ բաղկացած. եւ որովհետեւ «Խորադիմէս» մին ընկերութեան (հասարակութեան) պատկերամ յօրինէլ, հարկաւոր էր, որ կերպս կերպ խառնուածով դերասանք (գործող անձինք) հանդիսացուցանի, որ անպտուղ աշխատութիւն չլինէր» (էջ 27):

Նոյն այդ խրատելու, ուսուցանելու միտումով պէտք է բացատրել — այն էլ՝ մարդկային սովորական կենցաղավարութեան համար եւ ո՛չ թէ մի բարձր գաղափարի, օրինակ հայրենասիրութեան համար — որ «Խորադիմայ»ի հեղինակները աչք են փակում մեր պատմական անցեալի վրա եւ դիմում են դէպի իրական կեանքը՝ նրանից վերցնելով իրենց նիւթը եւ հերոսներին:

Իսկ հետագայում, ինչպէս յայտնի է, մեր թատերագրութիւնը բոլորովին այլ ուղղութեամբ է զարգանում: Իրեն նպատակ դնելով դլխաւորապէս հայրենասիրութիւնը եւ ազգային գիտակցութեան արթնացումը՝ նա իր երեսը դարձնում է դէպի մեր պատմական անցեալը եւ այնտեղից քաղում իր համար նիւթեր ու հերոսներ — Խոսրով Մեծ, Խոսրով Բ., Արշակ Բ., Վարդանանց պատերազմը, Շուշանիկ, Արտաշէս եւ Սաթենիկ, Կոռնակ, Վահէ եւ էլն եւ էլն:

«Խորադիման» մի ուրիշ առաջ դիծ եւս ունի իր մէջ: Նպատակ դնելով իրական կեանքը ներկայացնել բեմի վրա եւ դրանով դաստիարակել հասարակութիւնը՝ մեր հեղինակները չէին կարող ժխտել կանանց ներկայութիւնը թատրոնում եւ թատերական գրուածքներում — ինչպէս այդ անում է Հ. Պետրոս վ. Մինասեանը:

Հ. Պետրոս վ. Մինասեանն եւս թատրոնի նպատակ է դնում խրատը եւ դաստիարակութիւնը բարոյական սկզբունքների հիման վրա, սակայն, բարոյականութեան գաղափարը մի փոքր այլ կերպ հասկանալով, քան «Խորադիմայ»ի հեղինակները: Նրա համար անբարոյական է, եթէ կինը յայտնուի բեմի վրա, որովհետեւ նրա ներկայութիւնը բեմի վրա ո՛չ միայն չի կարող դաստիարակիչ ազդեցութիւն ունենալ, այլ, ընդհակառակը, միայն վնասել կարող է հասարակութիւնը: Դրա համար էլ նա ժխտելով ժխտում է կանանց մասնակցութիւնը թատերգութիւնների մէջ:

Աւելին. նա չի ընդունում, որ պատանիները կանանց հագուստով բեմ դուրս գան եւ կատարեն կանացի դերեր — ինչպէս անում են սովորաբար մահմեդական երկրներում ու վանական դպրոցներում: Ժողովրդի բարոյական դաստիարակութեան տեսակէտից այդ եւս չափազանց վնասակար է: Ուստի նա վճռականապէս պահանջում է. «Ոչ մուծանել յազգս մեր զսովորութիւն երեւելոյ յունաց ի թատեր կամ պատանեաց ի հանդերձս կանացիս» («Թատերգութիւնք», Ա. էջ 38):

«Խորագիմայ»ի հեղինակները աշխարհական մարդիկ են և միանգամայն աղաւ վանականութեան կաշկանդումներից ու նախապաշարումներից։ Ունենալով «լուսաւորուած ինկլիզի» օրինակն իրենց աչքի առաջին, նրանք թատրոնը առանց կնոջ չեն ըմբռնում, քանի որ թատրոնը պիտի ներկայացնի կեանքը, իսկ կեանքն առանց կնոջ չէ։

Օրինակ, Լիտիշայի տիպը բացատրելիս՝ «Հասարակաց-թեան» հեղինակը շատ պարզ ու որոշակի դրում է. «Մարդկային ընկերութեան մին մասն՝ օրիորդակայ բաղկացեալ եւ մեծ անդամ ընկերութեան (այսինքն՝ օրիորդները հասարակութեան մեծ մասերից մէկն եմ կազմում. Իր.)... ուստի հաճեցայ «Խորագիմում» մին Լիտիշայ անուամբ օրիորդ հանդիսացուցանեմ եւ զանազան գործողութիւն տալ առ ի հրահանգութիւն միամիտ մատց նոցին» (էջ 54)։

Համարեա նոյն բանը նա կրկնում է նաեւ Տիկ. Սիրանոյշի մասին. «Արդ՝ ըստ որում «Խորագիմէս» վասն իրատու հասարակացայ, վասն որոյ մին մայր հանդիսացրի եւ անուանեցի Սիրանոյշ եւ զանազան գործս տվէլ» (էջ 81)։

Մեր հեղինակների կուռքը, պաշտամունքի առարկան մարդկային հասարակութիւնն է — կամ իրենց բառով եթէ ասենք՝ մարդկային ընկերութիւնը — եւ նրա դասակարգութիւնը՝ երջանիկ տարբեր համար։ Հետեւաբար թատրոնն ու թատերգութիւնը կեանքի պատկերը, նրա մանրանկարը պիտի լինեն։ Այդ սկզբունքից ելնելով է, որ նրանք ծառաների կամ ազատների ներկայութիւնն եւս համարում են անհրաժեշտ թատրոնում, որովհետեւ նրանք էլ մարդկային հասարակութեան մէկ կարեւոր տարր են կազմում։ «Ազատաւորքն մարդկային ընկերութեան մին մասնան, որ պիտանի անդամն հասարակութեան» —նկատում է դպիր Մարտիրոսը։

Եւ շատ հետաքրքրական է նրանց տեսակէտը առ հասարակ ծառայի եւ տիրոջ փոխյարաբերութիւնների եւ նրանց իրաւական յանձնառութիւնների մասին, որից անգլիական օրինականութեան հոտն է բուրում։

Ծառայի պաշտօնը, ընդհանուր առմամբ, «կամակատարութիւն» է, այսինքն՝ նա պարտաւոր է կատարել իր պարոնի հրամանները — բայց օրինաւորութեան սահմաններում։ Պարոնն էլ իրաւունք ունի իր ծառային հրամայելու, կարգադրութիւններ անելու — բայց կրկին օրինաւորութեան սահմաններում։ Հակառակ դէպքում՝ երկուսն էլ պատասխանատու են միմիայն օրէնքի առաջ, ծառան իր անհնազանդութեան համար, իսկ պարոնը՝ ապօրինի կար-

գաղրութեան համար։ Ուրիշ խօսքով՝ ծառայի անհնազանդութեան կամ պարտաղանցութեան դէպքում՝ պարոնը իրաւունք չունի ինքը դատաւոր լինելու եւ ինքը նրա պատիժը որոշելու։ Նա պիտի դիմէ դատարան, որի վճիռը երկուսի համար էլ վերջնական է ու պարտադիր։

***

Պէտք է իբրեւ վերջին խօսք հաճոյքով արձանագրենք, որ, ինչպէս տեսանք, հայ թատերագրութիւնը ի դէմս «Խորադիմա»յի հէնց սկզբից բռնել էր իր զարգացման համար մի ուղիղ եւ առողջ ճանապարհ — այն է՝ իրականութիւնից քաղել իր սնունդը եւ նպաստել կեանքի ալնւացմանը։ Բայց, դժբախտաբար, հետագայում նա չուտով շեղւեց այդ ճանապարհից — թերեւս Հ. Պ. Մինասեանի ու Մխիթարեան հայրերի ազդեցութեամբ — եւ իր դէմքը դարձրեց դէպի մեր հին, պատմական անցեալը՝ այստեղից առնելով իր նիւթերն ու դոյութեան իմաստը։

Դրա հետեւանքով էլ նա դարձաւ անկեանք, անհիւթ, արհեստական մի բան, վերուն ազդասիրութեան եւ մեծաղղորդ, ճարճատուն բառերի հաւաքածու։ Առաջին օրինակը, գոնէ տպագրուած թատերգութիւնների նկատմամբ, տուեց Հ. Մինասեանը, որին հետեւեցին մեր բոլոր թատերագիրները, բաւական երկար ժամանակ մնալով ու դրելով կախարդական մի եւնոյն շրջադծի մէջ։

Յիշենք դէթ մի քանի նշանաւորներին մեր ասածը հաստատելու համար — Վիէննայի Մխիթարեան հայրերը՝ իրենց «բարոյական թատրներ»ով (1850թ.), Սրապ. Հէքիմեանը՝ իր մի շարք ողբերգութիւններով («Արտաշէս եւ Սաթենիկ», «Սամուէլ», «Հարմակ եւ Աշխէն», «Վահրամ» եւն. 1857թ.), Միրզա Վանանդեցին՝ իր «Արշակ Բ.» ողբերգութիւնով (1861), Յ. Կարինեանը՝ իր «Շուշանիկ» եւ «Վարդանանց պատերազմը» ողբերգութիւններով, Մ. Պէշիկթաշլեանը՝ իր «Վահան», «Վահէ», «Կոռնակ» եւ այլն ողբերգութիւններով, Թ. Թէրլեանը՝ իր «Սանդուխտ», «Խոսրով Բ.» ողբերգութիւններով, Տիգ. Ամիրճանեանը՝ իր «Ս. Վարդան եւ «Ս. Տրդատ»ով, Դուրեանը՝ իր հինգ ողբերգութիւններով եւ այլն եւ այլն։

Թէ մեր յիշած եւ թէ նրանց նման բոլոր դրուածքների մասին իրաւամբ կարող ենք կրկնել Մի. Նալբանդեանի շատ բնորոշ գնահատականը Վանանդեցու «Արիստակէս» ողբերգութեան մասին.— «Առհասարակ շատ թոյլ բան է եւ զուրկ ամենայն բանաստեղծական ճարտարութիւնից. ասես թէ հեղինակը հարկադրանքով է գրել։ Նա

ամենայն լրոպէ զանազան ազգասիրական խօսքերով աշխատում է վարագուրել դրամատիկական գործողութեան պակասութիւնը եւ չքաւորութիւնը»։

Բարեբախտաբար, այդ թխածոյ թատերագրութեան չրջանը, թէեւ բաւական երկար, բայց մշտատեւ չի լինում։ Մեր թատերագրութիւնը ժամանակի ընթացքում կամաց-կամաց ապաքինւում է իրեն պարտադրուած հիւանդութիւնից և կրկին բռնում իր զարգացման ուղիղ եւ առողջ ճանապարհը։ Այն ճանապարհը, որով առաջինը ընթացել էր հայ թատերագրութեան ռահվիրան — «Խորադիմայ Դժրողութեան»ը։

Սպահան – Նոր-Ջուղա



ԱՐՇԱԿ ՋԱՄԱԼԵԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

(Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՄԱՀԻԱՆ ՏԱՍՆԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ)

II

Անձնական տրամադրութիւնների տեսակէտից, տիրական գիծը Թումանեանի նկարագրի մէջ մեծատունի հոգեբանութիւնն էր: Ինչպէս հայրենասիրութիւնը, նոյնպէս եւ այս հոգեբանութիւնը զգալի չափով պայմանաւորուած էր նրա համոզումով կամ զգացումով, թէ ինքը մի հին ազնուական տոհմի ժառանգ է:

Ազնուական մեծատունի բնորոշ գծերից մէկն է լայն ու արձակ ապրելու տրամադրութիւնը, որով Թումանեանը օժտուած էր մեծապէս: Նա հանդուրժել չէր կարողանում չքաւորի կեանքը:—

« Ես շատ առաձգական բնաւորութիւն ունեմ — գրում է նա 1898ին մի նամակում: Կը տանեմ ամենադաժան զրկանք գւարթ եւ անսասան, որպէս թէ այն սարի գլխից մի սեւ ամպ է անցկացել· բայց չեմ կարող ապրել զրկանքների մէջ: Ես չեմ սիրում չքաւորութիւնը: Եթէ մի օր ինձ զգամ չքաւոր — սիրտս կը պատռի: Ես միշտ համոզուած եմ, որ շատ հարուստ մարդ եմ, միայն հարստութիւնս այս րոպէիս մօտս չի եւ ամենաշատը միայն ափսոսում եմ, որ այս րոպէիս չկարողացայ այս անել կամ այն, կամ զայրանում ու վշտանում եմ, որ այս րոպէները երկար են տեւում») :*

Դժբախտաբար, դառն իրականութիւնը չէր ներդաշնակում Թումանեանի այս տենչին: Գիւղական համեստ ընտանիքի մի զաւակ, նա կեանքի ասպարէզ էր ելել շատ սահմանափակ միջոցներով: Ներսիսեան դպրոցը կիսատ ձգելով՝ նա ստիպուած էր, իր ապրուստը հայթայթելու համար, ձեռք զարնել ամենաանախանձելի աշխատանքների — գործակատարութիւն, կոնսիստորիայի գրագիրութիւն եւ մինչեւ իսկ տիրացութիւն՝ քահանայ դառնալու ակնկալութեամբ:

Սակայն, «բախտը» հալածում էր նրան այս բոլոր գործերի

*) «Նոր Ուղի», 1929թ· էջ 191:

մէջ։ Բախտ ասածն էլ իր «մուսան» էր, կամ բանաստեղծական խառնուածքը, որ անպէտք էր դարձնում նրան ամէն մի գործնական զբաղմունքի համար։ Այդ շրջանում ունեցած իր վիճակն ու ապրումները Թումանեանը տաղանդաւոր կերպով ներկայացրել է «Պօէտն ու Մուսան» երկի մէջ։ Բայց այս երկը լրիւ կերպով չի տալիս նրա ապրումների պատկերը։ Մի նամակի մէջ նա գրում է.

«Ոչ տէրտէր եմ, ոչ վաճառական, ոչ վարժապետ, ոչ արհեստաւոր, ոչ զինուորական, ոչ երկրագործ, ոչ նոյնիսկ աւազակ, — չէ՞ որ այս էլ կեանքի ճամբաներից մինն է։ Մի խօսքով, ինչպէս ճիշտ նկատել են, երբեք չեմ եղել կեանքի մարդ... Բայց (լաւ լսիր) դու ելած ես կեանքի ամէն ճամբաներից, եւ այն բոլոր մարդիկ, որ այդ ճամբաներով են գնում, չեն կարող քեզ հետ լինել, այլ զարմանում են քեզ վրա, յանդիմանում են քեզ, կըռւում են, վշտացնում են, հալածում են, մի խօսքով՝ «Պօէտն ու Մուսան», բայց ոչ իմ գրածը, այլ իմ ապրածը, այսինքն՝ աւելի մեծ չափով» *)։

Եւ իրօք, Թումանեանի այս շրջանի կեանքը մի կատարեալ էպոպէ է՝ համեմուած ամենապաւեշտական միջանկեալ պատմութիւններով։ Առանձնապէս հարուստ էր այսպիսի պատմութիւններով նրա տիրացուութեան շրջանը։ Նմոյշի համար յիշատակեմ սրանցից մէկը.—

Թումանեանը տիրացութիւն է անում Թիֆլիսի եկեղեցիներից մէկում։ Այդ եկեղեցում երկու քահանայ կար, որոնք մահացու թշնամիներ էին իրար։ Նրանք միմեանց հետ չէին խօսում, բացի այն դէպքերից, երբ կռւում էին եւ հայհոյում իրար՝ ամենավուլգոյային խօսքերով։ Ծննդեան ճրագալոյցին, պիտի պատարագէր այս քահանաներից մէկը, իսկ միւսը պիտի սարկաւագութիւն անէր։ Վերջինս, ժամերգութիւնից առաջ, գալիս է եկեղեցի եւ խորանից տանում թաղցնում պատարագի բոլոր նոր եւ փայլուն զգեստները։ Պատարագիչ քահանանան, հարկադրուած, զգեստաւորւում է հին եւ ցնցոտի շուրջառով եւ սաղաւարտով, բայց «եռում ու էփում էր ինքն իր մէջ»՝ հասկանալով թէ բանն ինչումն է։ «Գիտէինք, որ մի բան պիտի պատահի», ասում էր Թումանեանը։ Այդպէս էլ լինում է։ Պատարագիչը դուրս է գալիս խորանից կարմրած երեսով ու աչքերով եւ ջղայնօրէն խնկարկում շուրջը՝ ձեռքի բուրվառով։ Երբ հասնում է իր հակառակորդ քահանային, խնկարկելու պատրւակի տակ, բուրվառով մի քանի

*) Նոյն տեղը, էջ 189։

ուժգին հարուածներ է հասցնում նրա հաստլիկ փորին եւ անցնում։ «Տեսա՞ք, ինչ արաւ էդ լիրբը» — փրփրած շշնջում էր հարուածների ենթարկուած քահանան։ «Հիմա էլ սպասում էինք, թէ սա՞ ինչ պիտի անի»։ Իսկ սրա արածը լինում է հետեւեալը.— ժամերգութեան կէսերին, երբ նա, իբրեւ սարկաւագ, պիտի վերցնէր պատարագէի աղաւարտը՝ «մէկ էլ տեսնեմ, պատարագիչս ղէմքը ծամածռած, ոտքերը վեր ու վար է անում։ Դու մի ասիլ, էկ անիծուած «սարկաւագը, աղաւարտի հետ միասին բռնել էր պատարագէի քունքերի մազերը եւ ուժգնօրէն վեր էր քաշում»։ Սրանով, սակայն, «միջադէպը» չի սպառւում։ «Ժամերգութիւնից յետոյ, մի սոսկալի զոռոց լսեց խորանից։ Մտնեմ ներս եւ ի՞նչ տեսնեմ.— պատարագիչը մինչեւ ծունկը թրջուած ոտքը գետին զարկելով, էլ հայհոյանք չկայ, որ չթափի միւս քահանայի հասցէին։ Դու մի ասիլ, էս անպիտանը, բեմի վրա կատարածը բաւական չհամարելով, մտել էր խորանը եւ ծածուկ ջուր լցրել պատարագէի ճիտկաւոր կօշիկների մէջ եւ ծլկել։ Պատարագէի կատաղութիւնը մեծ էր մանաւանդ այն պատճառով, որ ուրիշ կօշիկ չունէր, իսկ թաց կօշիկներով չպիտի կարողանար այդ երեկոյ տնօրհնէք կատարել հարուստների մօտ։

Նման պատմութիւնների մի անվերջ շարան է ներկայացնում եւ Թումանեանի գրագիրութիւնը Թիֆլիսի առաջնորդարանում։

90ական թւականների կէսերին մեր բանաստեղծը վերջնակապէս հրաժարւում է այս կարգի բոլոր աշխատութիւններից եւ նուիրւում գրականութեան։ Հետզհետէ նա ամուր դիրք է գրաւում մեր գրականութեան մէջ իբրեւ «կոչեցեալ բանաստեղծ»։ Այս հանգամանքն, ինքնին բարեբաւում չէ բերում նրա նիւթական կեանքի համար — հայոց գրականութիւնը ե՞րբ է վայելուչ ապրուստ տուել իր մշակներին — բայց հնարաւորութիւնն է ստեղծում սպարտքեր անելու կամ զանազան միջոցներով ունեւոր շրջաններից օգնութիւն ստանալու։ Սկսւում են Թումանեանի անպարտաճանաչութեան եւ պատեհապաշտութեան մասին անախորժ փսփսուկներ, որոնց մէջ ճշմարտութիւնն ու բամբասանքը իրար են հիւսուած։ Բանաստեղծն զգում է իր վիճակի անյարմարութիւնը եւ մինչեւ իսկ տառապում նրանից, բայց չի կարողանում յաղթահարել իր մէջ լայն ու արձակ ապրելու ձգտումը, որ մեծանում էր նրա բանաստեղծական հուչակին զուգահեռաբար։ Վերոյիշեալ նամակի մէջ նա գրում է.

«Անցեալ օրը գիտե՞ս ինչ պատահեց։ Թիֆլիսից մինը եկել

էր այստեղ (Շուլաւէր)։ Դրան բան եմ պարտ։ Ինձ հարցնում է՝ թէ ե՞րբ ես գալու, ի հարկէ, ակնարկելով այն հաշիւը։ Ասում եմ՝ «շուտով կը գամ»։ Այստեղ էլ մի խանութպան, մի քանի օր առաջ ինձ հարցրել է, թէ ե՞րբ եմ գնալու Թիֆլիս — հաշիւը մաքրենք։ Ասել եմ՝ «դեռ շուտ չեմ գնալու»։ Այդ երկուսը միասին ինձ հանդիպեցին ու զրոյց ենք անում։ Այդտեղ դուրս եկաւ, որ մէկին այսպէս եմ ասել, միւսին՝ այնպէս։

«Գուցէ կարելի է այստեղ ծիծաղել, բայց սաստիկ ծանր է լինել ոչինչ մարդկանց կոնտրոլի տակ, տանել նրանց մուննաթները ու ակնարկները, միշտ անհանդիստ լինել նրանցից ու համբերել առանց յոյս ունենալու թէ կազատւես դրանցից — ապա հաշտւել այդ վիճակի հետ ու... ծիծաղել»։

Եւ այսպէս «ծիծաղելով»՝ Թումանեանը ապրում էր մի կեանք, որ նրա տաղանդի աստիճանն ունեցող մի օտար գրողի կարող էր շատ համեստ երեւալ, բայց հայ գրողներին եւ հանրային գործիչներին նախանձելի էր թւում։

Նախանձելի էր, որ նա ապրում էր վայելուչ բնակարանում, որտեղ մինչեւ անգամ առանձին սենեակ ունէր իրեն համար՝ լիքը հազուագիւտ գրքերով, արժէքաւոր հնութիւններով եւ գեղարւեստական իրերով։ Նախանձելի էր, որ նա կարողանում էր իր տասը երեխաներին կանոնաւոր կերպով հագուեցնել եւ ուսում տալ։ Նախանձելի էին մանաւանդ նրա հացառատ սեղանը եւ անհաշիւ հիւրասիրութիւնները։

Հիւրասիրութիւնը, իբրեւ ազնւական մեծատունի աւանդութիւններից մէկը, մի առանձին արժէք ունէր Թումանեանի աչքում։ Կարելի է ասել, որ նա առանց հիւրի սեղան չէր նստում, իսկ շաբաթը գոնէ մի անգամ կանոնաւոր խնճոյք պէտք է ունենար՝ գրական, քաղաքական եւ հանրային գործիչների սեղանակցութեամբ։

Այս խնճոյքները սովորաբար սկսւում էին մտքերի փոխանակութեամբ օրւայ «հրատապ հարցերի» շուրջը եւ վերջանում քէֆով, որին մասնակցում էր եւ «ժողովուրդը», այսինքն Թումանեանի երեխաները։ Սրանք տարիքի կարգով շարւում էին սեղանի ներքեւի կողմը եւ իրենց քրքիջներով ու բացագանչութիւններով լեցնում ընդարձակ սեղանատունը։

Հակառակ ընկալեալ սովորութեան, որ տան տէրը սեղանապետ կամ թամադա չէ լինում, Թումանեանը սովորաբար ինքն էր թամադայութիւն անում իր հիւրասիրութիւնների ժամանակ,

որովհետեւ քչերը կարող էին համարձակւել «համազգային թամաղայի» ներկայութեամբ — սա էլ Թումանեանի տիտղոսներից մէկն էր — այսպիսի դեր ստանձնել: Նրա «կենաց բաժակները» համեմւած էին լինում անվերջ սրախօսութիւններով, որոնք եթէ դրի առնւէին՝ հսկայական հատորներ կը կազմէին:

Իր սրախօսութիւնների նիւթ էր դարձնում նա յաճախ իրեն՝ իր ցրւածութիւնը, իր անգործնականութիւնը եւն:

— Էս մեր տնեցին էլ — խօսքը իր կնոջ մասին էր — մի կողմից է ինձ խաթի մէջ դցում: Շարունակ ականջս ծամում է, թէ ես չեմ հետաքրքրւում իմ երեխաների ուսումով: Անցեալ օրը խելքս փչեց մի սիւրպրիզ անել սրան: Գայանեան դպրոցի մօտով անցնում էի, ասացի մտնեմ մի տեղեկանամ, թէ մեր Նւարդը (իր երկրորդ աղջիկը) ինչպէս է սովորում: Մտայ ուսուցչանոց: Բարեւ, Աստծու բարին: Էս մեր Նւարդը իր թւանշաններն ինձ ցոյց չի տալիս. մի ասէք տեսնեմ, ի՞նչպէս է հետեւում դասերին: Տեսնեմ՝ ուսուցիչները զարմացած իրար են նայում: Բանից դուրս եկաւ, որ Նւարդը Գայանեան դպրոցում չի սովորում, այլ Յովնանեան դպրոցում: Անյարմար դրութիւնից մի կերպ դուրս պրծայ ու չունչս Յովնանեան դպրոցում առայ: Էդտեղ էլ ի՞նչ իմանամ, որ լաւ լինի — թէ՝ Նւարդը անցեալ տարի աւարտել է դպրոցը... Իսկ էս անպիտան աղջիկը ինձ էդ մասին ոչինչ չի ասել...

Մի անգամ էլ, պատերազմի շրջանին, Թումանեանը «թամաղայօրէն գանգատւում էր» իր չար բախտից.

— Ախպէր, էսօր անցնում էի Գոլովինսկի պրոսպեկտով (Թիֆլիսի ամենամեծ փողոցը): Մի կօշկեղէնի խանութում տեսայ մի գոյգ գեղեցիկ կօշիկ՝ վրան նշանակւած 50 ռուբլի: Զարմացայ, որովհետեւ էդ տեսակ կօշիկը 100 ռուբլուց պակաս առնել չի լինի: Թարսի պէս էս առաւօտ էլ ականջովս էր ընկել, որ մեր Արփիկը (իր չորրորդ աղջիկը) կօշիկ չունի: Մտայ խանութ եւ իմացայ, որ կօշիկը մի կամ երկու օրւայ հնութիւն ունի, դրա համար էլ էժան գին է նշանակւած վրան: Գլուխներդ ի՞նչ ցաւացնեմ՝ կօշիկն առայ ու տուն բերի: Էստեղ մեր Օլեան (տիկին Թումանեան) աչքերը չռած վրէս պրծաւ.— Էս ո՞ւրտեղ առիր: Աւի՝ էն ինչ խանութում: — Վա՛յ տնաշէնի մարդ, սա իսօ մեր Արփիկի կօշիկն է. ուրքին նեղ էր, դրա համար էլ երէկ ծախեցինք այդ խանութի վրա 35 ռուբլով...

Թումանեանի հիւրասիրութիւնները յաճախ բոլորովին պա-

տահական բնոյթ էին կրում։ Փողոցում հանդիպած Անդրանիկը, կամ մի գրող կամ մի հանրային գործիչ առիթ էր դառնում, որ նա կնոջը լուր ղրկի, թէ ճաշին «մարդիկ են գալու» եւ, մի շարք ուրիշ «ընկեր-բարեկամներ» էլ հետն առած, տուն վերադառնայ։ Երբեմն նա առանց կնոջը նախազգուշացնելու էլ հիւրեր էր տանում տուն։ Պատմում են հետեւեալ դէպքը.

Մի անգամ Թումանեանը, առաւօտեան անից ելնելիս կրակի վրա տեսնելով իրենց մեծ պղինձը, որի մէջ կինը յաճախ «խաչ» («փաչա») էր դնում՝ հրաւիրում է բազմաթիւ բարեկամների ճաշի։ Կինը տեսնելով այս բազմութիւնը մնում է զարմած, որովհետեւ ճաշի ոչ մի պատրաստութիւն չէր տեսել։

— Վնաս չունի, հանգստացնում է նրան Թումանեանը, դու խաշը բե՛ր, էդ էլ բաւական է։

— Խա՞շը որտեղից է, հարցնում է ապշած կինը։

— Չէ՞ որ էս առաւօտ մեծ պղինձը կրակի վրա էր։

— Վա՛յ քո տունը չքանդուի, մեծ պղինձը լացքի համար էի կրակին դրել. ջուր էի եռացնում...

Խեղճ կինը ստիպւում է լացք-բան մի կողմ թողնել եւ հապշտապ ճաշ պատրաստել հիւրերի համար։

Իր «Յիշողութիւնների» մէջ յիշատակելով այս դէպքը, որ Թիֆլիսում բերնէ-բերան էր անցնում, Լէօն ասում է, թէ բարեկամների շրջանում տիկին Թումանեանին կոչում էին «նահատակ», իսկ նրա անհաշիւ ամուսնուն՝ «ընտանեկան աղէտ»։

Երկու որակումներն էլ միանգամայն տեղին էին։

Սակայն, Թումանեանը ոչ մի բանով այնքան չէր փայլում, որքան իր անօրինակ սրամտութեամբ։ Ամենադժուարին պարագաներում էլ, նա հնար կը գտնէր իր միտքն արտայայտելու։ Վերը մենք տեսանք, թէ, նորեկ բոլշեւիկների պատուին սարքած խրնջոյքում, նա ինչքա՜ն սրամիտ կերպով արտայայտում է իր բացասական վերաբերմունքը դէպի խորհրդային իշխանութիւնը։ Յատկանշական է նրա սրամտութեան տեսակէտից եւ հետեւեալ դէպքը։ —

Համաշխարհային պատերազմի սկզբին, Թիֆլիսում, գումարւած էր ռուսահայոց Ազգային ժողովի պէս մի բան՝ գաւառական ներկայացուցիչների մասնակցութեամբ։ Անւանապէս ժողովը գումարւած էր որոշելու համար, թէ ռուսահայերը կամովին ի՞նչ լրացուցիչ պարտականութիւններ պէտք է ստանձնէին ռուսական բանակին օգնելու գործում։ Բայց, էապէս, ժողովական-

ներին զբաղեցնողը Թիւրքահայաստանի անկախութեան կամ ինքնավարութեան հարցն էր, որի մասին արտայայտել չէին համարձակւում՝ վախենալով թէ դա կարող է կառավարութեան եւ զօրքի մէջ գրգռում առաջ բերել դէպի հայերը:

Խորհրդակցութիւնների փակումից յետոյ, տեղի ունեցաւ մեծ հացկերոյթ Թիֆլիսի առաջնորդարանում: Կենաց բաժակներ առաջարկւեցին ցարի, Վորոնցով-Դաշկովի, ռուսական բանակի, հայ ժողովրդի համար եւն, բայց ոչ ոք չէր վստահանում բերան բանալ Թիւրքահայաստանի ապագայի մասին, որ ամենքի մտահոգութեան առարկան էր: Հերթը հասաւ Թումանեանին, որ բաժակը ձեռքն առնելով՝ ելաւ տեղից:

— Աղքատ ու թշւառական քրդի մէկը մեռել էր: Հարեւանուհիները հաւաքւել էին դիակի շուրջը սուգի: Մեռելի կինը բերան-բերան լաց էր լինում ամուսնու դիակի վրա եւ ասում. «Վա՛յ ես քո արծաթապատ թրին մատաղ: Վա՛յ ես քո ոսկեզարդ հագուստներին մատաղ: Վա՛յ ես քո արաբական նժոյգին մատաղ...»: Հարեւանուհիները, այս ողբի վրա զարմացած՝ իրար երես են նայում: Վերջը, նրանցից մէկը, չհամբերելով՝ դառնում է քրդի այրիին եւ ասում. «Աղջի, ախր քո մարդը ո՛չ արծաթապատ թուր ունէր, ո՛չ ոսկեզարդ հագուստ եւ ոչ էլ արաբական նժոյգ. էդ ինչե՞ր ես երդում դու»: Այրին, աչքերը սրբելով պատասխանում է. «Ճիշտ է, չունէր, բայց մտքումը կար»: Հիմի, պարոննե՛ր, ես բարձրացնում եմ այս բաժակը ձեր մտքինի կենացը...

Նրա արտակարգ սրամտութիւնը արտայայտւում էր ոչ միայն ճաշերի ու հիւրասիրութիւնների ժամանակ, այլ եւ մասնակի զրոյցների մէջ: Թումանեանի տրամադրուած զրոյցները մի-մի քերթուածներ էին: Վա՛յ եթէ մէկը այդպիսի պահերին վէճի բռնէր նրա հետ: Ծաղը ու ծանակի առարկայ կը դառնար: Թումանեանը խօսքի տակ մնացողը չէր:

Վերը յիշատակեցի, որ 1920ի ամառը բժ. Սաղեանի հետ այցելութեան գնացի Թումանեանին: Որովհետեւ Սաղեանը յաճախ տեսնւում էր Թումանեանի հետ, իսկ ես, Հայաստանում լինելով, մի քանի ամսից ի վեր նրան չէի հանդիպել՝ բնականաբար, առաջին բարեւին, ես էի նրա ուշադրութեան առարկան: Սրա վրա Սաղեանը, որ ինքն էլ նշանաւոր զրուցակից եւ առակախօս է, ասց.

— Երկու գիւղացիներ, Առաքելը եւ Ցակոբը, այցելութեան են գնում Գրիգոր անունով մի երրորդ գիւղացու: Առաքելը բերել

էր Գրիգորի համար մի խուրջին՝ լիքը ձմերուկով, սեխով, մեղրով ու դաթաներով, իսկ Յակոբը ձեռքին ոչինչ չունէր։ Գրիգորը, տեսնելով խուրջինը՝ նեռւում է Առաքելի դիրքը։— «Բարով, հազար բարով, Առաքել ջան, ի՞նչպէս ես, քէֆդ, հալդ, սանամէ՞րս ինչպէս է, երեխաներդ էլ, Աստուծով, ողջ ու առողջ են։ Դէ, պատմի՛ր տեսնենք։ Գո՞րծերդ ոնց են։ Յուսով եմ, որ հունձդ լաւ էր էս տարի։ Հա, եզդ լաւացա՞ւ. լսեցի թէ մի ոտքը դուրս է ընկել...» Այսպիսով, բոլոր ողջագուրանքներն ու հարցերն ապառելուց յետոյ՝ Գրիգորը դառնում է դէպի դատարկաձեռն եկած Յակոբը եւ ասում. «Յակո՞բ. դէ էդ ա դու էլ էտդեղ ես»... Հիմա մեր բանն է դառել, Յովհաննէս, Արշակի համար է՛լ համբոյր, է՛լ գրկախառնութիւն, է՛լ հարց ու փորձ, իսկ ինձ համար հասարակ բարեւ էլ չկայ...

— Էդ էդպէս է, վրա բերաւ Թումանեանը, բայց թէ՝ խուրջինը չեմ տեսնում...

Աւելի՛ եւս բնորոշիչ է, Թումանեանի սրամտութեան տեսակէտից, հետեւեալ պատմութիւնը։ —

1918ի օգոստոսին, մեր ընտանիքները գնացել էին ամարանոց։ Թիֆլիսում «անտէր» մնացած՝ Թումանեանը եւ ես ամէն օր հանդիպում էինք միասին Բօ-Մօնդ ճաշարանում։ Ճաշի ժամանակ, բնականաբար, խօսում էինք հազար ու մի հարցի մասին։ Մի օր էլ խօսքը դարձաւ օր ըստ օրէ չեշտուող թանգութեան շուրջը։ Այս առթիւ ես այն միտքն արտայայտեցի, որ եթէ մենք, միեւնոյն թաղի մէջ ապրող ծանօթ-բարեկամներս, շնորհք ունենանք հաւաքական ճաշեր կազմակերպելու՝ ե՛ւ մեր ապրուստը կաժանանար, ե՛ւ մեր կանայք կազատուէին խոհանոցի ամենօրեայ տաղտուկից։ Այս միտքը պառկեց Թումանեանի գլխում։ Մատիտը ձեռքն առաւ, սկսեց զանազան հաշիւներ անել եւ դուրս բերաւ, որ մարդագլուխ 25 կոպէկով, կարելի է շատ վայելուչ հաւաքական ճաշ կազմակերպել։ Իր այս հաշւական եզրակացութիւնը ստուգելու համար, նա դիմեց ճաշարանի տիրոջը.

— Միրիմա՛ն, թէ հոգիդ սիրես, ճիշտն ասա՛. այս ճաշը, որ դու մեզ տալիս ես 60 կոպէկով, քեզ վրա ի՞նչ է նստում։

Միրիմանը փոքր ինչ մտածեց եւ պատասխանեց.

— Ձեր արեւն եմ ասում, պ. Թումանեան, այդ ճաշը, որ դուք ուտում էք, ինձ վրա նստում է 80 կոպէկ։

— Ինչպէ՞ս թէ։

— Հա, էդպէս է։ Ամէն մի ճաշում ես 20 կոպէկ վնաս եմ անում։

— Էդ չեղաւ, ախպեր, ասաց Թումանեանը, կաբեկցական արտայայտութիւն տալով իր դէմքին։ Էդ հօ քեզ շատ զօր է հասնում։ Արի քո բեռը մի քիչ թեթեւացնենք։

— Ինչպէ՞ս թեթեւացնէք, հարցրեց Միրիմանը հետաքրքրուած։

— Ա՛յ, այսպէս. արի դու ամէն մէկիս օրական 10 կոպէկ տուր, էլ չդանք քեզ մօտ ճաշելու...

Ընթերցողը նկատում է անշուշտ, որ այս պատմութիւնների մէջ սրամտութիւնն ու հիւմորը իրար հրմշտկում են։ Պատճառն այն է, որ հիւմորն էլ Թումանեանի նկարագրի էական տարրերից մէկն է կազմում։ Ոչ ոք նրա պէս համով հեգնել չէր կարող։ Նրա նոյն իսկ սուր հեգնանքը չէր վիրաւորում մարդկանց, որովհետեւ նա խիստ նուրբ էր իր հեգնանքների մէջ։

Երեւոյթների եւ մարդկանց մէջ էլ, երգիծականը առանձին պայծառութեամբ էր տպաւորւում նրա յիշողութեան մէջ։ Որեւէ մէկի մասին խօսելիս, մանաւանդ ուրախ տրամադրութեան ժամանակ, անմիջապէս մի երգիծական դէպք կը յիշէր նրա կեանքից։

Նրա հիւմորը առատ նիւթ էր ստանում մանաւորապէս մեր ժողովրդական բարքերի դիտողութիւնից։ Ինչքա՜ն երգիծական պատմութիւններ ունէր նա հայ գիւղացիների եւ մանաւորապէս լոռեցիների կեանքից... 1913ի ամառը, երբ մի քանի ընկերների հետ միասին երեք օր հիւր էինք նրա մօտ Դսեղում, մենք հանդիստ չունէինք նրա պատմութիւններից եւ չէինք ուզում հանդրստանալ — այնքա՜ն համով էին նրանք։

Հէնց առաջին օրը, ստամոքսի տկարութիւն ունենալով, փոքր ինչ ադա խնդրեցի Թումանեանից։ Բերեց մի բաւական մեծ ծրար։

— Ա՛յ մարդ, այսքան սոդան ինչի՞ դ է պէտք, որ առել ես, հարցրի ես զարմացած։

— Բա՛, դա շատ հարկաւոր դեղ է այստեղ։ Մեր գիւղացիների համար դա ամենաթուժիչ դեր է կատարում։

Եւ սկսեց պատմութիւնը։

— Անցեալ տարի, ես էլ քեզ պէս ստամոքսի ցաւ ունենալով՝ մի օր սոդայի հետ փոքր ինչ թթուտ խառնեցի ու խմեցի։ Պատահաբար մօտս մի քանի գիւղացիներ կային։ Դու մի ասիլ

դրանց վրա շատ մեծ տպաւորութիւն է թողնում իմ փչփչացող խմիչքը: Յաջորդ օրը տեսնեմ, մի քանի հիւանդ գիւղացիներ եկան մօտս: Մէկը սրտի ծակոցից էր դանդաւում, միւսը՝ երիկամունքից, երրորդը՝ ռեւմատիզմից եւն: Խնդրում էին, որ իրենց դեղ տամ: Ես էլ հետս միշտ փոքրիկ դեղարան եմ բերում՝ այսպիսի դէպքերի համար: Խելքս կտրած դեղերից հանեցի եւ ամէն մէկին մի բան տուի:

— Չէ, պ. Յովհաննէս, դու է՛ն դեղիցը տուր մեզ, է՛ն դեղիցը, դոչեցին հիւանդներս միաբերան:

— Ո՞ր դեղիցը:

— Է՛ն փչփչացող դեղիցը, որ ունիս:

Գլխի ընկնելով, որ խօսքը սոդայի ու թթուտի մասին է, աշխատեցի համոզել հիւանդներիս, որ այդ դեղը սոսամոքսի ցաւերի համար է. բայց բան չդուրս եկաւ: Ճարահատեալ հանեցի իմ «փչփչացող դեղը» եւ մի-մի բաժակ տուի իմ այցելուներին:

— Արա՛, կտրեց, հրճւանքով ասաց սրտի ծակոց ունեցողը:

— Ես հէնց իմ մօրից նոր ծնւած լինեմ, վրա բերեց ռեւմատիզմից տառապողը:

— Արա, էս ի՞նչ օրհնւած դեղ ա, ասես թա մէջս է՛լ պլծիկ չլինի, վկայեց երրորդը:

Էսպէս էլ միւսները: Էդ օրւանից սկսած, էլ ուրիշ դեղ հարցնող չկայ. քոսն էլ, քաչալն էլ, խուլն էլ շարունակ «փչփչացող դեղի» յետեւից են գալիս: Դրա համար եմ էսքան մեծ պաշարով եկել...

Յաջորդ առաւօտ դիտում էինք Թումանեանի տան բակում գտնւող հինաւուրց եկեղեցին, երբ մի ծերուկ, մութ ու մռայլ դէմքով, անցաւ մեր առջեւից, առանց նոյն իսկ Թումանեանին բարեւելու:

Մեր հարցումին, թէ ի՞նչ ունի այդ գիւղացին Թումանեանի դէմ՝ առանք հետեւեալ պատասխանը.

— Բա՛, դա էլ մի պատմութիւն ունի: Անցեալ ամառ մի երեկոյ մի քանի գիւղացիներ, դա էլ հետները, եկել էին ինձ մօտ՝ նորութիւններ իմանալու: Բաւական համով զրոյց ունեցանք: Մեկնելուց առաջ, յանկարծ, գիւղացիներից մէկը դարձաւ ինձ, թէ՝ «պ. Յովհաննէս, ի՞նչ կլի մեր էս երկու հարեւաններին բարիշացնես իրար հետ. բոլա ինչքան խռով մնացին»: Խօսքը այս ծերուկի եւ մէկ էլ մի ուրիշ տարիքաւոր գիւղացու մասին

էր։ Ես, բնականաբար, հետաքրքրուեցի, թէ բանն ինչո՛ւմն է։ Ծերուկից չկարողացայ ոչինչ իմանալ, իսկ միւսը պատմեց հետեւեալը.—

«Ախպեր, տասը-տասներկու տարի առաջ, մի առաւօտ ինքս ինձ համար գնում էի մեր հանդը։ Ճանապարհս սրանց արտի մօտով էր անցնում, սա էլ կանգնած էր արտի միջումը։ Հէնց որ ինձ տեսաւ՝ սկսեց սոսկալի գոռալ եւ ուշունց տալ (հայհոյել). ա՛յ ես քու էսէնցը, ա՛յ ես քու էնէնցը... Մտածեցի, էս մարդը գժւե՞լ ա թէ ինչ ա, ու գնացի իմ բանին։ Երեկոյեան վերադառնում էի էլի էն ճամբով։ Սա որ ինձ տեսաւ՝ էս անգամը վրա քշեց ուշունց տալով եւ ձեռքին մի հաստ փայտ ճօճելով։ — Ա՛յ մարդ, ի՞նչ եղաւ քեզ, ի՞նչ ես ուզում ինձանից... Բայց լսո՞ղն ով ա։ Տեսայ որ բանը լուրջ ա, չուխէս հանեցի թեւիս փաթթեցի եւ առաջ ընկնելով՝ փայտը ձեռքից առայ, վեր գցեցի, տակս կոխեցի եւ սկսեցի բղել (խեղդել)։ Երբ որ մատներս մի քիչ հուսի տուի, մէկ էլ տեսնեմ մրթմրթաց.— «Հերիք չելաւ խեղդե՞ս...» — Որ ուզում ես թող հերիք ըլի», ասացի ես եւ, փայտը հետս առնելով՝ ճամբէս շարունակեցի։ Էդ օրւանից դէսը հետս խօսում չի։ Գնա մատաղ, պ. Յովհաննէ՛ս, մի հարցրու իրան, տեսնենք՝ էն օրը ինձանից ի՞նչ էր ուզում։

— Հարցրի՞ր, հետաքրքրուեցինք մենք։

Ինչպէ՞ս չէ։ Բայց պատասխանողն ով է։

— Յետո՞յ։

— Յետոյ էլ էն, որ ծերուկը մի խոժոռ հայեացք նետեց նախ իր հակառակորդի, ապա եւ ամենքիս վրա ու դուրս գնաց։ Էդ օրւանից ինձ էլ չի բարեւում։

Բայց այդ օրերին լսածս պատմութիւնների մէջ, ամենահետաքրքրականը Ալէքի աղջիկ փախցնելու պատմութիւնն է։ —

Գսեղի երիտասարդներից մէկը սիրահարւում է մի աղջկայ։ Սակայն, աղջկայ ծնողները ոչ մի կերպով համաձայնութիւն չեն տալիս նրանց ամուսնութեան համար։ Տղան շատ դէս ու դէն է ընկնում, վերջը, տեսնելով որ ուրիշ ճար չկայ, որոշում է փախցընել աղջկան՝ նախապէս վերջինիս հաւանութիւնն առնելով։ Սրա համար գիմում է համագիւղացի Ալէքի օգնութեանը։ Ալէքը՝ մի աժդահա գիւղացի եւ մասնագէտ աղջիկ փախցնելու գործում, տալիս է իր համաձայնութիւնը, բայց ուզում է վստահանալ, թէ աղջիկն էլ սիրո՞ւմ է տղային թէ չէ։

— Աստուած, երկինք վկայ սիրում է, հաւատացնում է տղան։

— Դէ որ այդպէս է, ծրագրում է Ալէքը, դու նախ եւ առաջ աղջկանից կիմանաս, թէ ինքը որտե՛ղ է պառկում։ Այս ինչ գիշերը մենք, այսինչ տղաների հետ, նրանց տանը վրա՛ կը տանք։ Ես, այսինչ տղաների հետ միասին, աղջիկը կառնեմ եւ կը փախցնեմ սարի էն կողմը ընկած ձորը. իսկ դու, այսինչների հետ հրացանաձգութեամբ մեր թիկունքը կը պաշտպանես։ Սակայն, պէտք է այնպէս անէք, որ արիւն չթափի. թէ չէ՝ ես դատարանների հետ գլուխ չունեմ։ Երբ որ տեսնէք, որ էլ չեն հետապնդում մեզ՝ կը գաք մեր յետեւից։ Այսինչ քարի տակ մենք ձեզ կը սպասենք։

Որոշած գիշերը տղաները յարձակւում են աղջկայ տան վրա։ Ալէքը մի հարւածով ջախջախում է շան գլուխը եւ լռեցնում, մի ուրիշ հարւածով էլ կրնկահան է անում տան դուռը, մտնում աղջկայ մօտ եւ իր վերմակի մէջ փաթաթելով, կռան տակն առնում ու դուրս թռչում։ Մնացածը կատարւում է ինչպէս ծրագրւած էր։ Փեսացուն եւ իր ընկերները մի քանի պարապ գնդակներ են փոխանակում տնեցիների հետ եւ գնում Ալէքի եւ միւսների յետեւից։ Մինչեւ որոշած տեղ հասնելը, լոյսը բացւում է։

Ալէքը, երբ տեսնում է խմբի մօտենալը, առաջ է անցնում եւ, չրա՛խկ՝ մի հուժկու ապտակ փեսացուի դէմքին։

— Ա՛յ, ես քու էսպէսն ու էնպէսը։ Հարա՛մզա՛գա, ինչի՞ ինձ խաբեցիր, թէ աղջիկը քեզ սիրում է։

— Քեզ ո՞վ ասաց, որ չի սիրում, հարցնում է փեսացուն շշմած։

— Էս ի՞նչ սիրել է, չա՛ն լակոտ. ամբողջ ճանապարհին էլ անէծք չկայ որ գլխիս չթափէր։

— Ինչպէ՞ս թէ... Ո՞ւր է՝ տեսնեմ։

— Հրէն էն ծառի տակին վեր ընկած։

Փեսացուն գնում է դէպի ծառը եւ տեսնում որ, իրօք, աղջիկը կծկւած վերմակի մէջ՝ անընդհատ մրթմրթում է։ Յետ է քաշում վերմակի ծայրը ու «ի՞նչ տեսնի որ լաւ լինի՝ աղջկայ տեղ տան պառաւին են բերել... Դու մի ասիլ, աղջկայ ծնողները գլխի ընկնելով, որ տղան փախցնելու մտադրութիւն ունի, այդ գիշեր աղջկան տարել էին իրենց մօտ, իսկ նրա անկողնում պառաւին պառկեցրել... Տղաների մէջ սկսում է մի հռհռոց, որ էլ

Աստուած ազատի: Իսկ միւս կողմից էլ պառաւն է իր ձայնը բարձրացնում հայհոյելով ու անիծելով առեւանգիչներին»:

— Վերջն ինչ է լինո՞ւմ:

— Վերջն էն է լինում, որ պառաւին նորից փաթաթում են վերմակի մէջ եւ փեսացուի շալակը տալիս: Տնքտնքոց, անէծք ու հռհռոց իրար խառնելով՝ խումբը, կէսօրին մօտիկ, բարձրանում է ա՛յ էն սարի գլուխը: Էնտեղից սկսում են գոռալ աղջկայ մխրոջը. «Է՛յ, եկէք ձեր անտէր պառաւը տարէք»...

Այսպէսի պատմութիւններ անհատնում էին Թումանեանի մօտ: Եթէ հնարաւորութիւն ունենայիք լսելու՝ օրերով ու շաբաթներով կարող էր զբաղեցնել ձեզ: Նրա յիշողութեան մէջ — աւա՛ղ, միայն յիշողութեան մէջ — առանձին խնամքով դասաւորուած էին իր տեսածն ու լսածը մեր ժողովրդական այն տիպերի եւ բարքերի մասին, որոնց մէջ նա իր երգիծական ճաշակին արժանի նիւթ էր տեսնում:

Ես վերջացրի իմ յօդուածը, բայց չվերջացրի Թումանեանի դիմագծութիւնը: Դրա համար պակասում են ինձ ոչ միայն անհրաժեշտ նիւթերը, այլ եւ նկարագրելու ձիրքը: Ամենայն Հայոց բանաստեղծը շա՛տ բազմերանգ, ստւերներով ու լոյսերով հարուստ մի անձնաւորութիւն էր, որպէսզի կարելի լինի նրան սովորական գրիչով դիմագծել: Նպատակս էր, այս մեծ գրողի մահուան տասնամեակի առթիւ, նրա մասին մի որոշ գաղափար տալ արտասահմանի մեր այն երիտասարդ գրասէրներին, որոնք դեռ հնարաւորութիւն չեն ունեցել մօտիկից չփւելու ռուսահայ անուանի գրողների հետ: Այդ նպատակին հասնելու համար, իմ սուղ պայմաններում, ես իմ կարելին արի:

Փարիզ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱԻՐԵԱՆ

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱ

V

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ

Անհրաժեշտ եմ համարում մի քանի խօսքով ներկայացնել Վրաստանի վիճակը Սայեաթ Նովայի դարաշրջանում, որպէսզի ընթերցողները պարզ տեսնեն, թէ ի՞նչ պայմաններում է ընթացել բանաստեղծի կեանքը:

Վախթանգ Զ. (1711 – 1724), *որի արքունիքում պալատական աշուղ էր քիչ յետոյ յիշուած Նաղաշ Յովնաթան աշուղը, շատ ծանր թագաւորութիւն ունեցաւ: Վրաստանը բաժան – բաժան էր լինում պարսիկների եւ թիւրքերի միջեւ: Կնքուած պայմանագրով պարսիկները Վրաստանը զիջեցին Թիւրքիային. իր հերթին Ռուսաստանը, նոյնպէս դաշնագրով, Վրաստանը զիջեց պարսիկներին: Նման խառնաւնթոր դրութեան մէջ, երկու տէրերի իշխանութեան տակ, Վրաստանի իշխանութիւնը շատ դժուար էր Վախթանգի համար եւ բաւական էր չնչին բարդութիւն, որպէսզի բոլորովին անհնար դառնար կառավարելը: Եւ այդպէս էլ պատահեց: Կախեթիայի խան *) Կոստանդին Գ. (մահմեդական անունով Մահմէդ – Կուլի – խան) շահ Թահմասպից իրաւունք ստացաւ գործելու Վախթանգի դէմ, իբրեւ պարսից տիրապետութեան ենթարկուել չուզողի: Կոստանդինը 1723 թուին ջարդեց Վախթանգին. Վախթանգը փախաւ Իմերեթիա, այնտեղից էլ՝ հարաւային Ռուսաստան կովկասեան սահմանի մօտ գտնուող Սուրբ Խաչ ամրոցը, որտեղից օգնութիւն խնդրեց Պետրոս Մեծից, բայց օգնութիւն չստանալով՝ իրաւունք ստացաւ բնակուելու Ռուսաստանում... 1724ին Վախթանգն արդէն Մոսկվայում էր, 1000 հոգինոց շքախմբով, որի մէջ կային եւ իշխանազուններ ու իշխաններ, եւ հոգեւորականներ եւ հասարակ մարդիկ:*

Վախթանգի հեռանալուց յետոյ, Վրաստանում մնացած իշխա-

---

*) Պարսից տիրապետութեան շրջանում Վրաստանը բաժանուած էր երկու խանութեան՝ Քարթալինիա Թիֆլիս մայրաքաղաքով եւ Կախեթիա՝ Թելաւ մայրաքաղաքով:

նաղուններով մէջ թէ իրենց հաւատարմութեամբ թահմազ – Կուլի – խանին (հետագային Նադիր շահ) եւ թէ յաջող կռիւներով դարեր շարունակ Վրաստանի վրա յարձակւող եւ աւարի մատնող լեզգիների դէմ առանձնապէս աչքի ընկան Թէյմուրազ եւ նրա որդի Իրակլի իշխանաղունները: 1744 թ. Նադիր շահը Թէյմուրազին նշանակեց Քարթալինիայի խան – թագաւոր, իսկ Իրակլի Բ.-ին՝ Կախեթիայի *): Հայր ու որդի գործում էին միասիրտ ու անձնուիրութեամբ եւ Նադիր շահի հովանաւորութեան տակ՝ մեծ յաջողութիւններ ունեցան Վրաստանի ներքին կեանքի կարգաւորման մէջ:

1747 թ. Նադիր շահը մեռաւ եւ Պարսկաստանում ծայր տուին անվերջ խռովութիւններ գահի տիրապետութեան համար: Այս անկարգութիւններն այնքան զբաղեցրին պարսիկներին, որ նրաք այլեւս չէին կարող Վրաստանով ու հեռաւոր խանութիւններով հետաքրքրւել: Վրաստան նշանակւած կուսակալները խաղալիք էին Թէյմուրազի եւ Իրակլիի ձեռքին, որոնք ճարտարութեամբ օգտւեցին Պարսկաստանի ներքին խռովութիւններից ու արտաքին հմայքի տկարացումից եւ ամրացրին Վրաստանի ոյժն ու կշիռը: Թէյմուրազի թագաւորութեան վերջին տարիները, հօր ծերութեան հետեւանքով, Իրակլին գրեթէ մենակ էր կառավարում Քարթալինիան, իսկ Թէյմուրազի մահից յետոյ նա իր իշխանութեան տակ միացրեց Քարթալինիան ու Կախեթիան: Իրակլին աշխատում էր օգտագործել յարմար վայրկեանը եւ Պարսկաստանի տիրապետութիւնից ազատւելով՝ մըտնել ռուսական ազդեցութեան շրջանակի մէջ: Տեսականապէս Իրակլին շահեց իր դիւանագիտական խաղը: 1783 թ. յուլիս 24ին Եկատերինա Բ.ը եւ վրաց թագաւոր Իրակլի Բ.ը կնքեցին մի դաշնագիր, որ շատ նպաստաւոր էր Իրակլիի համար եւ որով Իրակլիի արժանիքն ու իշխանութիւնը շատ աւելի բարձր ու լայն նշանակութիւն էր ստանում, քան պարսից տիրապետութեան տակ:

Սակայն, նոյն ժամանակները, 1779 թ. շահական գահն ընկաւ Աղա – Մահմէդ խանի ձեռքը, որով հիմնեց Ղաջարների հարստութիւնը: Իր թագաւորութեան առաջին տարիները Աղա – Մահմէդը զբաղւած էր պետութեան ներքին գործերի կարգաւորումով եւ մեծաւոր շրջանների ապստամբութեան ճնշումով: Յետոյ, ուշադրութիւն դարձրեց նաեւ Վրաստանի կողմը եւ չարաչար պատժեց նրան, դաւաճանութեան համար: 1795 թւին շահը նւաճեց ու աւարի մատ-

*) 17րդ դարից ի վեր Թէյմուրազը Վրաստանի առաջին քրիստոնեայ թագաւորն է, որովհետեւ Շահ Աբբաս Ա-ից յետոյ Վրաստանի բոլոր թագաւոր-խաները մահմետականներ էին՝ ոմանք անկեղծ, ուրիշներ՝ առ երես:

նեց Վրաստանը, քար ու քանդ անելով մայրաքաղաք Թիֆլիսը, այն ճիշդ հաշուով, որ տեսական դաշնակից ռուսները օգնութեան չեն գայ վրացիներին: Վրաստանի աւերումից քիչ անցած, 1798ին Ռ-ակլի Բ. մեռաւ: Նրանից երկու տարի յետոյ, 1800 թ., մեռաւ եւ Ռ-ակլիի որդին, Գէորգի ԺԳ.ը, Վրաստանի վերջին թագաւորը: Սրա մահից յետոյ, Ալեքսանդր Ա. կայսրը, 1801ին, Վրաստանը միացրեց Ռուսական կայսրութեան:

IV

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ԾԱԳՈՒՄԸ

Սայեաթ Նովայի ծննդեան տեղի խնդիրը համարւում էր որոշ հէնց իր բանաստեղծի տեղեկութեամբ.

Վաթանըմ Թիֆլիզ դուր, սամթի Գուրջիստան,
Անամ Հավլաբարլու, աթամ Հալաբլու:

Կայ եւ մի ուրիշ վկայութիւն. Հր. Աճառեանի նկարագրած ձեռագրում, որ գրուած է Սայեաթ Նովայի ձեռքով 1766թ., Սայեաթ Նովան իրեն անւանում է Թլփսցի (Թիֆլիսցի):

Ինչ վերաբերում է ընկերային վիճակին, Սայեաթ Նովան համարւում էր հասարակ դասից, աղքատ արհեստաւոր, որ երգով ու երաժշտութեամբ գրաււած՝ թողել էր արհեստը եւ դարձել աշուղ: Սայեաթ Նովայի հայրը մըղդըսի էր (№ 27)*) նրան այդ անունով է կոչում եւ ինքը Սայեաթ Նովան իր 1766թ. ձեռագրում, «Իր ծընողաց մահտեսի Կարապետն մօրն Սառային», եւ «Հայր իմ մահտեսի Կարապետն եւ մայրն իմ Սարրայ»:

Սայեաթ Նովայի հօր՝ մըղդըսի Կարապետի զբաղումի խնդիրը մինչեւ օրս էլ պարզուած չէ: Վրացի գրող Զ. Մթածմինդելին (Զ. Ճիճինաձէ) Սայեաթ Նովայի մասին գրած իր մի յօդուածում **) ասում է, երեւի աւանդութիւններից առնելով, որ Սայեան Նովայի հայրը պայտագործ էր՝ նալբանդ: Մթածմինդելին, սակայն, ցոյց չի տալիս, թէ ինչ աղբիւրից է քաղել այդ տեղեկութիւնը:

---

*) Հայերէն երգերը յիշելիս ես պիտի դնեմ միայն համարը, որովհետեւ բոլոր հրատարակութիւնների մէջ հայերէն երգերը դասաւորուած են Գ. Ախվերդեանի ընդունուած կարգով: Վրացերէն երգերը յիշելիս կը նշանակեմ միայն Գրիշաշվիլիի գրքի էջը, որովհետեւ Սայեաթ Նովայի վրացերէն երգերի ուրիշ հրատարակութիւն գոյութիւն չունի:

**) «Դրոէբա», 1878թ. №№ 113 եւ 120:

Համարեա միաժամանակ եւ, ըստ երեւոյթին, իրարից քոլորովին անկախ՝ Մելիքսէթբէգն ու Լէոնիձէն ուրիշ ենթադրութիւն են անում։ Նրանք մեկնում են այն փաստից, որ Թիֆլիսում վրացացուած միդդիսի (Թիֆլիսահայ բարբառում՝ մըղդըսի) բառով յաճախ կոչում են եկեղեցական այն պաշտօնեային, որ մոմեր է վառում, եկեղեցին է մաքրում եւ զանազան մանր աշխատանքներ է կատարում։ Այդ պաշտօնեաները Թիֆլիսում երբեմն կոչւում են նաեւ տաբատատա — ռուսերէն Староста բառի աղաւաղումը։ Վրացերէն դրանց ասում են մնաթի — լուսարար։ Եւ որովհետեւ Սայեաթ Նովայի հօր հայրն էլ կոչւում էր մահտեսի, այստեղից Մելիքսէթբէգն ու Լէոնիձէն եզրակացնում են, թէ նա եկեղեցական մանր պաշտօնեայ է եղել՝ լուսարար, ժամկոչ։ Այս ենթադրութեան առարկում է Ասատուրը, որ դիտել է տալիս, թէ քանի որ Սայեաթ Նովան ինքը իր հօր անուանում է մահտեսի, դրանով ուզում է ոչ թէ նրա պաշտօնը ցոյց տալ, այլ շեշտել պատուաւոր կոչումը։ Ասատուրի այս դիտողութիւնը, անշուշտ, աւելի հիմնաւոր է, որովհետեւ պարզ է, որ Սայեաթ Նովան մահտեսի կամ մըղդըսի տիտղոսով չի ուզեցել ասել, թէ իր հայրը լուսարարի կամ ժամկոչի աննշան պաշտօնն է վարել — ժամկոչութիւնը պարծենալիք բան չունի իր մէջ. մահտեսի բառով նա ուզեցել է ընդգծել հօր արժանիքը։

Մելիքսէթբէգի եւ Լոնիձէի տեսակէտն ընդունում է եւ Սայեաթ Նովայի երգերի Հալէպի անանուն հրատարակիչը (1931 թ.), որ հինգերորդ էջում գրում է թէ՝ «Հայրը ատենին Հալէպէն գաղթած, պարզ ժամհար մը եղած է»։ Որտեղի՞ց է առնուած այս տեղեկութիւնը, յայտնի չէ։

VII

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ

Սայեաթ Նովայի ընկերային վիճակի հարցն էլ պարզ չէ։ Ըստ Ախվերդեանի, Սայեաթ Նովան Թիֆլիս քաղաքի ատորին դասի բնակիչների կարգից էր, աղքատ, բայց ազատ մարդ։ Գ. Ասատուրը 1902 թ., քննելով Սայեաթ Նովայի որդի Իվան Սէիդովի մեզ արդէն ծանօթ ձեռագիրը, վրացերէն երգերից մէկում գտել է հետեւեալ ոտանաւորը. «Ես ռամիկ եմ, իշխան լինել չեմ ուզում»։ Նոյն տեղ Ասատուրը գտել է Իվան Սէիդովի հետեւեալ նկատողութիւնը. «Սայեաթ Նովային Գիօրգի թագաւորի ճորտ (զմա) են անուանում, ճշմարիտ է»։ Այս երկու նկատողութիւնից Ասատուրը

եզրակացնում է, որ Սայեաթ Նովան Գէորգի ԺԳ. թագաւորի ճորան է եղել, երբ Գէորգին դեռ թագաժառանգ էր:

Գրիշաշվիլիի գրքի հրատարակութեամբ ղմա, գլեխի եւ մոնա բառեր պարունակող մի քանի նոյնիմաստ վկայութիւններ էլ աւելացան.

ա) Սայեաթ – Նովային կոչում են Գուրգէն – խանի (Գէորգի թագաւորի) ճորտ (ղմա), այդ ճիշդ է» (98) *): Այս տողը շատ նման է Իվան Սէիդովի բերած նկատողութեան, որով պէտք է ենթադրել, թէ Իվանը հօր ոտանաւորի մի տողն է արձանագրել յիշողութեամբ եւ ոչ թէ հօր ընկերային վիճակի մասին վկայութիւն է տալիս.

բ) Ես գնաց ստրուկ (մոնա) եմ, քո. եղկելի ստրուկը (ղուլի) – (106 – 1) **):

գ) Ես ոչ կին ունիմ, ոչ զոքանչ.

դ) Ես գիւղացի եմ (գլեխի) հողի վրա ապրող***):

Մելիքսէթբէգը այս խօսքերը հասկանում է որպէս ինքնանաստացման միջոց եւ բոլորովին ճիշդ եզրակացնում է, թէ Սայեաթ – Նովան հասարակ դասից էր, բայց խօսք իսկ չի կարող լինել նրա ճորտութեան կամ ստրկութեան մասին:

Մելիքսէթբէգի գրքի հետ միաժամանակ լոյս տեսած Լէոնիձէի գրքում էլ այդ հարցը դրուում է՝ նոր, անտիպ վաւերագրերի հիման վրա: Վրաց Հնութեանց Թանգարանի № 1091 ձեռագրում կայ արքայազն Թէյմուրազի հետեւեալ գրութիւնը. «Նա (Սայեաթ – Նովան) ապրել է Իրակլի Բ. թագաւորի ժամանակ. Գէորգի ԺԳ. թագաւորին պատկանող ճորտ (ղմա) էր, նրա արքունական կալւածքից, եւ միշտ նրա հետ էր գտնւում: Սակայն, յաճախ այցելում էր Իրակլի թագաւորի պալատը, որովհետեւ իրօք որ հիանալի սազանդար էր, նւագում էր զանազան գործիքների վրա եւ երգում էր իր յօրինած երգերը: Նա Սանահնեցի էր, Գէորգի ԺԳ.ի արքունական կալւածքից, Վրաստանի հայերից էր: Նա երգում էր (նոյնպէս)****) և հայերէն

*) საჲათნოვას გურგენ-ხანის ყმას ამბობენ, მართალია.

**) ნასკიდი მონა ვარ, ყული შენთვინა.

***) არ მყავს მეუღლე, არცა მძახალი, მე გლეხი ვარ მიწაზედ დასახალი.

****) Ես աւելացնում եմ «նոյնպէս», որովհետեւ գրուածքից երեւում է, որ Սայեաթ Նովան երգում էր վրացերէն, եւ վրացերէն այդ երգերի գնահատութիւնը տալիս է Թէյմուրազ արքայազնը քիչ վարը:

ու թուրքերէն և ամէն պատեհ առիթով երգեր էր յօրինում։ Յանպատրաստից սքանչելի կերպով կազմուած ոտանաւորները նա երգում էր զարմանալի կերպով զեղեցիկ՝ նւագի ընկերակցութեամբ։ Թէեւ յօրինուած ոչ գրական, հասարակ ժողովրդի լեզուով՝ այդ հիանալի ոտանաւորները լիքն էին մտքով, համապատասխանում էին վայրկեանին եւ խիստ դիւր էին գալիս միշտ»։

Այս կտորից Լէոնիձէն ամենից առաջ եզրակացնում է, որ Սայեաթ – Նովայի ծննդեան վայրը ոչ թէ Թիֆլիսն է, ինչպէս կարծում են միւս հետազօտողները եւ ինչպէս պնդում է ինքը Սայեաթ – Նովան, այլ Սանահինը, որտեղից 1747 թ., լեզգիների յարձակման հետեւանքով, Սայեաթ – Նովան տեղափոխուեց Թիֆլիս։ Այդ 1747 թ. տեղի ունեցաւ Սանահնի եւ շրջակայքի հայերի գաղթը Վրաստան։ Գաղթականները բնակուեցին Մուխրանի մօտերը, իսկ Սայեաթ – Նովան բնակութիւն հաստատեց Թիֆլիսում։

Ապա Լէոնիձէն՝ վերեւ բերուած երգերի կտորները համեմատելով արքայազն Թէյմուրազի հաղորդած տեղեկութիւնների հետ՝ պնդում է, որ Սայեաթ – Նովան Գէորգի ԺԳ.-ի ճորտն էր եւ, իբրեւ յաւելեալ փաստ, վկայութեան է կանչում արքայազն Գէորգիին ձօնուած երգից մի տող.

Քո իրամանով ես սազ եմ բռնել *)։

Գ. Ասատուրը **) միանգամայն իրաւացի կերպով մերժելով Սայեաթ – Նովայի Սանահնում ծնուած լինելու վարկածը՝ ընդունում է, որ Սայեաթ – Նովան Գէորգի ԺԳ.-ի ճորտն է եղել երբ Գէորգին դեռ արքայազն էր։ Գ. Ասատուրի այս մասին արած բոլոր խորհրդածութիւնները, ինչպէս եւ Սայեաթ – Նովայի հօր Հաւլաբարում հաստատուելու եւ յօժար կամքով արքայազն Գէորգիին ճորտ արձանագրուելու պատմութիւնը ոչ մի քննադատութեան չի դիմանում։ Ամենից առաջ՝ Թէյմուրազ արքայազնի դրութիւնը բոլորովին պատահական բնոյթ ունի եւ հաղիւ թէ ստոյգ տեղեկութիւնների վրա հիմնած լինի։

Այս դրութեան մէջ ցոյց է տրուած, որ Սայեաթ Նովան ծնուել է ճորտի ընտանիքում Գիորգի արքայազնի արքունական կալուածքի մէջ, Սանահնում։ Սակայն, ահա թէ ինչ են ասում ստոյգ փաստերը.

Սայեաթ Նովան, ինչպէս քիչ վարը կը տեսնենք, ծնուել է 1711

*) თქვენის ბრძანებით მიჭირავს საზი.
**) «Նոր Ուղի», 1930, № 4–5, էջ 155–56։

թւից ոչ առաջ եւ 1722 թւից ոչ ուշ։ Իրակլի Բ. ծնւել է 1716 թւին եւ մեռել է 1798-ին։ Արքայազն Գէորգին ծնւել է 1750 թ.(մեռել 1800), այսինքն՝ այն ժամանակ, երբ Սայաթ Նովան արդէն Իրակլի թագաւորի պալատական սազանդարն էր։ Արքունիքից նա հեռացաւ 1765թ., երբ Գէորգին դեռ 15 տարեկան պատանի էր։ Այս ամենից հետեւում է, որ Թէյմուրազի այն խօսքը, թէ Սայեաթ Նովան գըտնում էր Գէորգի արքայազնի մօտ եւ յաճախ այցելում էր Իրակլի Բ-ի պալատը, պարզ անհեթեթութիւն է։ Ուժի մէջ է մնում Գ. Ախվերդեանի տեսակէտը, որ Սայեաթ Նովան հասարակ դասից Թիֆլիսեցի հայ էր։

Իսկ ի՞նչ էր հասարակ դասի իրաւական դրութիւնը Վրաստանում։ Հասարակ կամ ստորին դասը Վրաստանում բաժանւում էր երեք կարգի. ա) ստրուկներ (մոնա) — պատերազմական գերիներ եւ դրամով գնւած մարդիկ. բ) ճորտեր — գլեխի, որոնք պատկանում էին կալւածատիրոջ, որ կարող էր նրանց ծախել հողի հետ միասին եւ հողից անջատ, ամբողջ ընտանիքով կամ ընտանիքի անդամներին առանձին-առանձին, գ) Գլեխի — քաղաքներում, աւաններում եւ դիւղերում ապրող եւ արհեստով կամ առեւտուրով զբաղւող հասարակ խաւերը։ Երբ սրանք հաստատւում էին կալւածատէրերի հողի վրա, վերջիններիս հետ պայման էին կնքում փոխադարձ յարաբերութեան մասին, բայց ազատութիւնից չէին զրկւում։ Դրանք, այսպէս ասած, ժամանակաւոր պարտաւորութեան տակ մտած մարդիկ էին, պայմանաժամի լրացումով վերջանում էին եւ նրանց պարտաւորութիւնները կալւածատիրոջ վերաբերմամբ։ Այս կարգի գլեխիների շարքին պատկանում էին գլխաւորապէս օտար երկրներից եկող եւ Վրաստանում բնակութիւն հաստատող մարդիկ*)։ Հէնց այսպիսի օտարական էր եւ Սայեաթ Նովայի հայրը՝ Մըղդըսի Կարապետը։ Որով ուրեմն Գլեխի բառը դեռ իրաւունք չի տալիս Աստուրին եւ Լէոնիձէին եզրակացնելու, թէ Սայեաթ Նովայի հայրը ճորտ է եղել։

Իսկ եզրակացութեան ի՞նչ հիմք է տալիս դմա բառը։ Դմա բառը վրացերէնում նշանակում է. ա) պատանի, պարմանուհի։ բ) երիտասարդ ասպետ, մարտիկ, գ) ստրուկ, ճորտ եւ դ) ծառայող, մոտիկ մարդ։ Բառի նշանակութիւնը կախւած է այն բանից, թէ ինչ համադրութեամբ է դրւած։ Եթէ Սայեաթ Նովայի վիճակի մէջ լինէին ստրկութեան նշաններ, դմա բառը կարելի կը լինէր հասկանալ ստրուկ առումով։ Բայց ներկայ դէպքում նա նշանակում է ծառայող, շքախմբում գտնւող։ Իսկ ընդհանրապէս «Սայեաթ Նովային կո-

*) Иваненко: "Гражданское Управленіе Закавказьем.

չում են Գուրգէն – խանի դմա: Այդ ճիշտ է» տողը թւում է մի քիչ տարօրինակ:

Յայտնի է, որ 17րդ դարի սկզբին, Շահ Աբաս Մեծի օրով, Վրաստանը թիւրքական տիրապետութիւնից անցաւ պարսիկներին (1603): Նա կառավարւում էր պարսիկների նշանակած խաների ձեռքով, որոնք Վրաստանում կոչւում էին թագաւոր կամ աւելի շատ, խան: Այս խաները նշանակւում էին Վրաստանի արքայական՝ Բագրատունեանց տոհմից: Իշխող խանի զաւակները կամ մերձաւոր ազգականները պատանդ էին պահւում, եւ դաստիարակւում էին Պարսկաստանում: Նրանք միշտ մահմեդականացւում էին՝ ոմանք յօժար կամքով, ուրիշներ՝ հարկադրաբար եւ առերեւոյթս: Վրաստանի խանութեան թափուր պաշտօնի նշանակւելիս նրանք պարսից շահից ստանում էին յատուկ շնորհագիր եւ խանի տիտղոս ճիշտ այնպէս, ինչպէս եւ Պարսկաստանի միւս շրջանների կառավարիչները: Խանի տիտղոս կրում էր միայն Վրաստանի կառավարիչը եւ նրա ընտանիքի միւս անդամների վրա այդ տիտղոսը չէր տարածւում:

Սայեաթ Նովան, որ 15 տարուց աւելի դտնւել է վրաց արքունիքում եւ, անշուշտ, լաւ տեղեակ էր տիրող կարգերին ու պաշտօններին, չէր կարող թոյլ տալ այդպիսի կոպիտ անքաղաքավարութիւն — խան անունով կոչել որդուն, երբ հայրը դեռ ողջ – առողջ, իշխանութեան գլուխ էր գտնւում: Այդ պատճառով, եթէ այդ տողը ճիշտ այդ ձեւով է դուրս եկել Սայեաթ Նովայի գրչի տակից կամ բերանից, նա պէտք է վերաբերւի ոչ թէ արքայազն Գէորգին, այլ Գէորգի ԺԳ. թագաւորին: Այս տողին մենք նորէն կը հանդիպինք հետագային, Սայեաթ Նովայի մահւան տարեթւի մասին խօսելիս:

Վերջապէս, չպէտք է մոռանալ եւ այն փաստը, որ երբ Սայեաթ Նովան կոպտութիւն ցոյց տւեց վրաց թագաւորին, մի վարմունք, որ առնւազն երկու անգամ է կրկնւել նրա կեանքում, նա պատժի չենթարկւեց — այն ինչ պէտք է ենթարկւէր, եթէ ճորտ եղած լինէր — այլ միայն հեռացւեց արքունիքից: Եւ երկրորդ անգամ հեռացւելուց յետոյ՝ ազատ կամքով ընդունեց հոգեւորականութիւն:

Այս բոլորի հիման վրա ինձ թւում է, որ Սայեաթ Նովան հատուկ ծագումի տէր, բայց ազատ մարդ էր:

VIII

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ԾՆՆԴԵԱՆ ԹՎԱԿԱՆԸ

Սայեաթ Նովայի ծննդեան թուականը որոշապէս յայտնի չէ, եւ ամէն ուսումնասիրող մի կերպ է ցոյց տալիս: Գոյութիւն ունեցող նիւթերից երեւում է, որ Սայեաթ Նովայի վրացերէն երգերը տարեթիւ չունին, Թուրքերէն տարեթիւ ունեցող երգերից ամենահինը նշանակուած է 1742 *թուականով, իսկ հայերէն երգերից ամենահինը ունի* 1752 *տարեթիւը: Իրենց հաշիւներում բոլոր ուսումնասիրողները զեկավարւում են այն մակագրութեամբ, որ Սայեաթ Նովան արել է թուական չունեցող (թիւ* 23) *հայերէն երգի վրա. մակագրութիւնը տրուած է հայերէն, բայց վրացական տառերով:* « Էս դիվանի խիստ լաւն է, օվ օր սօվրի օղօրմի ասէ, հիմի գուզիմ հայեվար ասիմ, Ամէն Աստուած, ես մըղդըսու վուրթի Արութիւնս, պստուց ինչորի, եարսուն տարին գլուխ դրի ամէնուն խաղին. ամա սուրբ Կարապետի կարողութէնով սօվրեցայ համանչէն, ու չօնգուրն ու (տ)ամբուրէն»: (*Տառադարձութիւնը Ախվերդեանինն է:*

Այս գրութիւնը ուսումնասիրողները հասկանում եմ այն իմաստով, որ Սայեաթ Նովան աշուղական արուեստի ուսումը լրացրել է երեսուն տարեկան հասակում, ուստի ոմանք նրա տարեթիւ ունեցող (1742 *թ.) ոտանաւորը համարելով գրական գործունէութեան ըսկիզբ,* 1742 *թուականից հանում են երեսուն եւ Սայեաթ Նովայի ծննդեան տարի ընդունում են* 1711 — 1712 *թուականը: (Ախվերդեան, Աղբալեան, Մակինցեան, Վ. Բրիւսով եւ այլք): Ուրիշներ՝ ընդունելով, որ Սայեաթ Նովան սկսել է երգել աշուղական կրթութիւնը լրացնելուց առաջ եւ որ* 30 *տարեկանին, արդէն որպէս չափահաս աշուղ, կամեցել է « հայէվարի ասել », եւ ենթադրելով որ Սայեաթ Նովան սկսել է երգել* 1752 *թ. (տարեթիւ ունեցող առաջին հայերէն երգի թուականը),* 1752*ից հանում են երեսուն եւ ստանում են* 1722 *թ., իբրեւ Սայեաթ Նովայի ծննդեան տարի (Գրիշաչվիլի):*

Սակայն, Սայեաթ Նովայի վերեւ բերուած մակագրութիւնը, թուում է ինձ, տարբեր նշանակութիւն ունի: Սայեաթ Նովան գրում է. « ես մըղդըսու վուրթի Արութիւն, պստուց, ինչորի եարսուն տարին գլուխ դրի ամէնուն խաղին », այսինքն՝ նա փոքր հասակից երեսուն տարի շարունակ երգ է սովորել: Ուրիշ խօսքով, Սայեաթ Նովան երեսուն տարի երգ սովորելով է զբաղւել եւ ոչ թէ երգ սովորելը լրացրել է երեսուն տարեկան հասակում, որովհետեւ նա աւելացնում է « պստուց », այսինքն, պէտք է ենթադրել, շուրջ տասը տարեկանից: Ինչ թուում է, որ Սայեաթ Նովայի տարեթիւը դէթ մօ-

տաւոր կերպով որոշելու համար հարկաւոր է հետեւեալ ձեւով մտածել. 1750 թ. Սայեաթ Նովան դարձաւ պալատական աշուղ Իրակլի թագաւորի մօտ: Այդ պատւին նա հասաւ մի աշուղական մրցութիւնից յետոյ, ուր խիզախեց պարսկական ձեւով ու եղանակներով վրացերէն երգեր երգել եւ փառաւոր յաղթութիւն տարաւ: Ակներեւ է, որ այդ ժամանակ նա արդէն լրացրել էր աշուղական ուսումը եւ դարձել կատարեալ աշուղ: Եթէ այս թւից հանենք աշուղական կրթութեան վրա գնացած 30 տարին, կը ստանանք 1720թ.: Սրանից էլ պէտք է հանել 8–10 տարի, մանկութեան տարիները («պատուց»), որով Սայեաթ Նովայի ծննդեան թւականը կը լինի 1711—12 թիւը:

Մէլքիսէթ բէկը մի ուրիշ փորձ էլ է անում Սայեաթ Նովայի ծննդեան տարին գտնելու համար: Որոշ կենսագրական տարրեր պարունակող թուրքերէն մի երգում, (Երեւանի թանգարանի ձեռագիր, էջ 75 — 76), ուր տեղեկութիւններ կան եւ Սայեաթ Նովայի ծնողների, նրա արհեստ սովորելու մասին, կան հետեւեալ տողերը.

Օն դօքքուզ իլում թամամ օլդի — գեորդում Հաբաշ*) — Հինդուստան. (լրացաւ իմ 19 տարին – ես տեսել եմ Հաբեշն ու Հնդկաստանը):

Մելիքսէթբէգը այս տողը համեմատում է այն տեղեկութիւնների հետ, որ հաղորդում է Արմենակ – բէյ Սաղբղեանը**) ոմն Թամբուրի Արութինի մասին, որ ճանապարհորդել է Հնդկաստան Թահմազկուլի – Խանի (Նադիր Շահի) մօտ, եւ ենթադրում է, թէ Սայեաթ Նովան հէնց այդ Արութինն է: Այս միտքը Գ. Լեւոնեանն է ներշնչել Մելիքսէթբէգին: Թիֆլիսում ու Երեւանում չգտնելով Սաղբղեանի դիրքը, Մելիքսէթբէգը, առանց ստուգումի, ընդունել է Լեւոնեանի ենթադրութիւնը եւ հետեւեալ հաշիւն է արել. Նադիր Շահի արշաւանքը դէպի Հնդկաստան եղել է 1738 թ., հանած 19, կը ստացուի 1719 թ.:

Թէ այս հաշիւը, եւ թէ այդ աւթիւ եղած խորհրդածութիւններ-

---

*) Հաբեշ, վրացերէն Հաբեշեթի: Այդ անունով վրացիներն այժմ կոչում են Հաբեշստանը, իսկ առաջ, մինչեւ 18րդ դարի վերջը կոչում էին Հնդկաստանի այն մասը, որ սահմանակից է Պարսկաստանին եւ շրջապատուած է ճահիճներով: (Такайшвили, Гуджар Бараговых из Бетаніи. Зап. Вост. Отд. Русск. Арх. О-ва, т. 8, стр. 15). Հաբեշ բառը նոյն իմաստով պէտք է հասկանալ եւ Սայեաթ Նովայի հայերէն երգերում:

**) Ա. Սագբզեան, Նոր Ջուղայեցի վանառականի մը անուան Հայկական երկու մետալներու առիթով. «Անահիտ», 1929. № 1, էջ 63:

ը բոլորովին անտեղի ու անհիմն են, որովհետեւ Թամբուրի Արութինը Պոլսեցի էր, Պարսկաստան եւ այնտեղից Հնդկաստան էր գնացել 1735 թ. եւ Նադիր Շահի մօտ իբրեւ երաժիշտ մինչեւ 1740 թ. մնալով՝ վերադարձել էր Պոլիս*): Բացի երաժշտական զբաղումից եւ անունից, այս անձը ոչ մի ընդհանուր բան չունի Սայեաթ Նովայի հետ: Մելիքսէթբէգը այսպիսի կոպիտ սխալ չէր անի, եթէ նայէր Ախվէրդեանի գրքի 103 էջը, որտեղից երեւում է, որ Ախվէրդեանը տեսել ու կարդացել է այդ գրքոյկը եւ նրա սուր աչքից չէր կարող վրիպել Սայեաթ Նովայի կենսագրութեան համար այդպիսի մի աղբիւր:

IX

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ԿՐԹՈՒԹԻՆԸ

Դժւար է ասել, թէ ուր եւ ինչ կրթութիւն է ստացել Սայեաթ Նովան, այդ մասին մենչ ոչ մի տեսալ չունինք: Մթածմինդելիի ցուցմունքը, թէ Սայեաթ Նովան կրթւել է վրաց «Դարիանի» (Դարիա թագուհու) վանքում, անհիմն է, թէկուզ այն պատճառով, որ այդ վանքը Իրակլի Բ.-ի երկրորդ կին՝ թագուհի Դարիան է հիմնել շատ ուշ, ա՛յն ժամանակ, երբ Սայեաթ Նովան արդէն հոգեւորական էր:

Ուսումնասիրողների մեծ մասը այն կարծիքի է, որ Սայեաթ Նովան վրացերէն գրել – կարդալ սովորել է ինքնուսութեամբ, իսկ հայերէն գրագիտութիւն ձեռք է բերել ծերութեան հասակում, երբ արդէն հոգեւորական էր: Մելիքսէթբէգը ենթադրում է, որ Սայեաթ Նովան սովորել է Հախպատի վանքի միաբաններից մէկի մօտ, որ ապրում էր այդ վանքի Թիֆլիսի շէնքում, այսպէս կոչւած, Բերդի Եկեղեցու մօտերը:

Իր կրթութեան մասին Սայեաթ Նովան ինքը ունի երկու անուղղակի ակնարկ. հայերէնագիտութեան մասին, թիւ 53 երգում ասում է.

---

*) Տամբուրի Արութին. Դահման Գուլի խանին թէվարիխի. վէնետիկ 1800 (հայատառ թուրքերէն): Ֆրանսերէն թարգմանութիւնը՝ Yacoub Artin Pacha. Journal de Tambouri Aroutine. Bulletin de l'Institut Egyptien, 1914. p. 168-232. Սա սուր դիտողութիւն ունեցող մի մարդու կողմից արւած չափազանց հետաքրքրական պատմութիւն է, որ պատկերացնում է Նադիր Շահի եւ Պարսկաստանի ազգաբնակութեան, սրանց թւում եւ պարսկահայերի բարքերը, բայց, ի հարկէ, ոչ մի կապ չունի Սայեաթ Նովայի կենսագրութեան հետ:

«Այբիմն (այբուբենը) կարթացիլ իմ դասէ դաս»*) : Այս խօսքից չի հետեւում բնաւ որ Սայեաթ Նովան մի քանի տարի սովորել է դպրոցում՝ փոխադրուելով դասարանից դասարան (դասէդաս) : Սայեաթ Նովայի սովորած դպրոցը անշուշտ, եղել է այն ժամանակւայ նախնական դպրոցը, ուր քահանայ կամ վարդապետ ուսուցիչը աշակերտներին տարրական գրել-կարդալ էր սորվեցնում և հաղորդում իր ունեցած տեղեկութիւնները գրականութեան եւ առհասարակ, գրքի հետ կապ ունեցող խնդիրների մասին, և աշակերտների ընդունակութիւնից էր կախւած այդ տեղեկութիւններից օգտուելը : Մի քանի տարի նման դպրոցում սովորելով՝ աշակերտը ստանում էր ինչ որ կարելի էր ստանալ այն ժամանակւայ պայմաններում :

Նոյնը կարելի է ասել եւ Սայեաթ Նովայի վրացերէն կրթութեան մասին : Գրիշաշվիլիի վրացերէն ժողովածուի հէնց առաջին երգում (էՀ97) որ մի սուր ծաղը է արքայազն Վախտանգի հասցէին, Սայեաթ Նովան ասում է. «ես գրել-կարդալ գիտեմ, ես իմանում եմ գործածել բառերը» (կանգնած եմ բառերի գլխին)**) : Բանաստեղծի այս խօսքերը կարելի է հասկանալ միայն մէկ իմաստով, որ նա հպարտութեամբ յայտարարում է, թէ ինքը կատարելապէս գրագէտ, կրթւած մարդ է :

Ասել է Սայեաթ Նովայի խոստովանութեամբ իսկ նա եղել է հայերէն եւ վրացերէն որոշ կրթութիւն ստացած անձնաւորութիւն :

Քանի որ ստոյգ տեղեկութիւններ չկան, կրթութեան հարցը պէտք է լուծել Սայեաթ Նովայի երգերի բովանդակութեան հիման վրա : Այն փաստը, որ Սայեաթ Նովան իր երգերում գործ է ածում դեղեցիկ պատկերներ, ճոխ գոյներ, բառերի եւ արտայայտութիւնների բազմազանութիւն, գրաբառ, ինչպէս եւ Թիֆլիսինից զատ նաեւ ուրիշ հայ բարբառների ձեւեր ու խօսքեր, այդ ամենը բնաւ այն տպաւորութիւնը չի թողնում, թէ հեղինակը անգրագէտ կամ քիչ կրթւած մարդ էր : Վրաց երգերը, վրացի գրողների ասելով, թէև հասարակ ժողովրդի լեզուով, Թիֆլիսի վրացերէն բարբառով են յօրինւած, բայց լիքն են հմայիչ գեղեցկութիւններով : Իսկ ինչ վերաբերւում է թուրքերէն երգերին, ծանօթ մարդիկ վկայում են, որ գեղեցկութեամբ ու բովանդակութեամբ հայերէն երգերից յետ չեն : Պէտք է աւելացնել նաեւ, որ Սայեաթ Նովան անպայման շատ լաւ իմացել է

*) Ըստ իս, պէտք է կարդալ «այբուբենը», մանաւանդ որ գրրուածքը թէՀնիս է, այսինքն՝ 11 վանկնոց ոտանաւոր, մինչդեռ առաջին եւ երկրորդ տողերում ունի 10ական վանկ : «Այբուբենը» աւելի է համապատասխանում իմաստին եւ չափին :

**) ანა-ბანა ვიცი, სიტყვით წინა ვარ.

եւ պարսկերէն ու Ատրպատականի թուրքերէն լեզուները եւ վարպետութեամբ, լայնօրէն ու մեծ ճաշակով օգտւում է մահմետական լեզուների (արաբերէն, պարսկերէն, թուրքերէն) բառարանից եւ նրա գործածած բառերից եւ արտայայտութիւններից շատերը շատ հեռու են ժողովրդի մէջ գործածական լինելուց: Զուտ գրական բառեր եւ արտայայտութիւններ են դրանք, որ գործածելու համար պէտք էր ծանօթ լինել թէկուզ անկման շրջանի պարսից գրական երկերի բնագիրներին: Հարց է, թէ որքա՞ն ուսեալ էր Սայեաթ Նովային դաս տուող հազպատցի վարդապետը, եթէ ճիշտ է այս մասին եղած ենթադրութիւնը: Արդեօք Սայեաթ Նովան առիթ ունեցե՞լ էր լսելու պարսկերէն գրական երկերի հրապարակային ընթերցանութիւն, որ այն ժամանակները սովորական էր Վրաստանում, հաւանաբար, նաեւ Հայաստանում, կարդացե՞լ էր անձամբ, եթէ ծանօթ էր արաբերէնի,— ես չեմ կարող ասել, բայց որ այդ երկերից մի քանիսի բնագիրներին, թէկուզ հատուածներով, Սայեաթ Նովան չէր կարող ծանօթ չլինել,— այդ, ինձ համար, կասկածից դուրս է:

Նոյնպէս անորոշ է եւ Սայեաթ Նովայի ստացած վրացերէն կրթութիւնը: Ո՛չ մի տեղեկութիւն չկայ, թէ նա վրացերէն ուսում է առել, բայց նրա վրացերէն եւ հայերէն, թերեւս նաեւ թուրքերէն երգերում յաճախ յիշւում են վրաց վէպերի հերոսների անունները, յիշւում են վրացերէն եւ վրաց – պարսկական գրական երկերից դէպքեր, առանձին պատկերներ եւ արտայայտութիւններ: Գրիշաշվիլին (էջ 75) հիմնւած դլխաւորապէս այն բանի վրա, որ Սայեաթ Նովայի լեզուն գրական չէ, կարծում է թէ նա կրթութիւն չի առել եւ բոլոր այդ գիտելիքները հաւաքել է «օդից», վիողոցում, պատահած ու լսած բաներից: Բայց զգալով այս կարծիքի թուլութիւնը՝ Գրիշաշվիլին վերջացնում է մի պատեհապաշտ եզրակացութեամբ, «Սայեաթ Նովան այդ ամենը սովորել է մօր արգանդում—հալալ լինի այդպիսի մօր ծծի կաթը»: Սպա թւում է այն ամենը, որ Սայեաթ Նովան լմացել եւ օգտւել է վրաց գրականութիւնից եւ կամ այն ժամանակները Վրաստանում շատ յարգի եղած պարսկերէն եւ հայերէն գրական երկերից: Հերոսական ու սիրային վէպեր ու քերթւածներ են դրանք*):

*) Ահա Գրիշաշվիլիի առաջ բերած ցանկը· «Վեփխիս տդաոսանի (Ընձեռաւոր), «1001 գիշեր»· Ղարամանիանի· Վարդ Բուլբուլյանի (Վարդ ու Սոխակի երգը)· Շուշանիկիանի (Ս· Շուշանիկի վէպը)· Ղարաօղլի· Շամի Փարվանեանի· Փարհատ Շիրինիանի· Ասլի Քեարիմանի· Սիրինօղիանի: Այս ցանկը Գրիշաշվիլին վերջացնում է «եւ այլն» բառերով: Հայերէն երկերից նա դուրս է ձգել առնւազն «Պղնձէ Քաղաքը», որ պարզ յիշւած է վրացերէն երգերից մէկում (էջ 108):

Սովորական առարկութիւնը Սայեաթ Նովայի հայերէն կրթութիւն ստացած լինելու դէմ այն է, որ Սայեաթ Նովան իր հայերէն երգերը գրել է վրացերէն տառերով եւ վարժ ձեռքով, իսկ հայերէն տառերով գրած թուրքերէն երգերը և 1766թ. ձեռագիրը (Ամառեան) գրուած են անվարժ ձեռքով և վերջին ձեռագիրը լիքն է ուղղագրական սխալներով: Այս առարկութիւնը ինձ չի թւում բաւական զօրաւոր, որովհետեւ կասկածից դուրս է, որ Վրաստանի եւ մասնաւորապէս Թիֆլիսի հայերի մէջ վրացերէն գրերը աւելի էին տարածուած, քան հայերէնները: Մինչեւ այսօր էլ պահւել են վրացատառ հայերէն եկեղեցական շատ գրքեր, որոնք վկայում են վրացերէն գրերի գործածական լինելը հայերի մէջ: Այդ գրքերը մեծ մասամբ գրուած են հայ հոգեւորականների համար, որոնք, անկասկած, մայրենի լեզուն աւելի լաւ գիտէին, քան հայերէնը, բայց աւելի վարժ էին վրացական գրին, մանաւանդ որ, ասենք ի դէպ, վրաց այբուբենի գրերը կատարելապէս համապատասխանում են հայ գրերին:

Վրաստանի հայերի մէջ վրաց գրեր գործածելու սովորութիւնն տեւեց մինչեւ 19րդ դարի կէսերը և վերացւեց միայն հայկական դպրոցների հաստատումով: Թէ վրաց գրերի գործածութեան սովորութիւնը որքան տարածւած եւ ամուր էր հայերի մէջ, յիշեմ հետեւեալ բնորոշ փաստը: Յայտնի է, որ Ղզլարի եւ Մոզդոկի հայերը Վրաստանից են գաղթած, Աղա-Մահմէդ-Խանի արշաւանքից առաջ: Գիտենք արդէն, որ այդ հայերի հետ Սայեաթ Նովան էլ իր ընտանիքը ուղարկեց: Գիտենք նոյնպէս որ Սայեաթ Նովայի որդի Իվան Սէիդովը գրել է հայերէն, վրացերէն ու թուրքերէն՝ վրացական գրերով: 120 տարի անցած, 1912ին, տողերիս գրողը, իբրեւ փաստաբան, գործ ունեցաւ 60 տարեկան մի ղզլարցի առեւտրականի հետ, որ յայտնեց թէ ինքը իր հաշիւները թագցնելու սովորութիւն չունի, քանի որ արձանագրում է ծածկագրերով, որ հայերը չեն հասկանում: Եւ որքան մեծ եղաւ նրա զարմանքը, երբ ես կարդացի նրա հաշւի թղթերը, որոնք գրուած էին վրացերէն տառերով: Նա ինձ հաւատացնում էր, թէ իր գործածած գրերը գիտեն միայն ծերունիները: Այդ առեւտրականը ոչ մի բառ չգիտէր վրացերէն եւ, առհասարակ, աղօտ գաղափար ունէր իր գործածած գրերի մասին:

Իսկ ինչ վերաբերւում է ուղղագրական սխալներին, այն ժամանակները բոլոր աշխարհաբառ գրողները շատ սխալներ էին անում, հէնց թէկուզ այն պատճառով, որ դեռ եւս աշխարհաբառը անկազմակերպ լեզու էր եւ քերականական հաստատուն օրէնքներ չունէր: Ով տեսել է, օրինակ, Պոլսի Աւետիք պատրիարքի 18րդ դարի սկզբի գրքերը, որոնք տպւած են 1871 թ. միաժամանակ «Մասիս»ում եւ «Արարատ»ում, Սայեաթ-Նովայի ուղղագրութիւնից բնաւ չի

սարսափի։ Իսկ որ Սայեաթ-Նովայի գրութիւններից շատ տառեր կամ բառեր են փախցուած, պատճառը նրա անվարժութիւնն էր հայերէն գրութեան մէջ։ Հէնց այդ անվարժութիւնը յաղթահարելու համար էր, որ նա սկսել էր արտագրել Ժողովողի և Առաքելոց թղթերը։

Ամէն ոք ուշադրութիւն է դարձնում այն բանի վրա, որ հայերէն երգերը Սայեաթ Նովան գրել է վրացերէն տառերով, իսկ թուրքերէն երգերը՝ հայերէնով։ Այդ փաստը ես բացատրում եմ նրանով, որ Սայեաթ Նովան թուրքերէն գրել չի իմացել եւ հայերէն գրերը ընտրել է այն պատճառով, որ հայերէն լեզուն աւելի լաւ գիտէր եւ ուրեմն, հայերէն տառերով աւելի հեշտ կարող էր արտայայտել թուրքական հնչիւնաբանութիւնը։

Հիմք կայ ենթադրելու, որ Սայեաթ Նովան բացի հայերէն, վրացերէն, պարսկերէն, թուրքերէն լեզուներից իմացել է եւ Կովկասեան լեռնական մի լեզու, բայց ո՞րը— դժուարանում եմ ասել։ Սայեաթ Նովայի որդու տեսրակում կայ չորս լեզուով գրուած մի երգ։ այդ նոյն երգի մի ուրիշ փոփոխակը գտնուում է վրացերէն մի երգարանում։ Գրիշաչվիլին (էջ 62) առաջ է բերում այդ երգը, որի մէջ գործածուող երեք լեզուները որոշ են — վրացերէն, հայերէն եւ թուրքերէն — չորրորդը չի հասկացուում։

Այս ամենը իրաւունք է տալիս ինձ եզրակացնելու, թէ Սայեաթ Նովան չէր կարող կրթութիւն չստացած մէկը լինել։ Ի հարկէ, նրա կրթութիւնը կանոնաւոր-դպրոցական կրթութիւն չէր, բայց, անշուշտ, արդիւնք էր յարատեւ ու տքնաջան աշխատանքի («եարսուն տարի գլուխ դրի», № 23), երբ նա ժրաջան մեղուի պէս ամէն կողմից գիտութիւն էր հաւաքում։ Բնական է, նրան շատ էին օգնում եւ իր բնածին ընդունակութիւնն ու գիտութեան ծարաւը, եւ մօրից ժառանգած դիւրութեամբ հասկանալու եւ իւրացնելու կարողութիւնը։ Այդ պատճառով, չեմ կարող ես էլ չկրկնել Գրիշաչվիլիի այն-քա՛ն արտագին ու ճիշտ նկատողութիւնը. օրհնեա՛լ լինի ծծի կաթը այն մօր, որ այդպիսի զաւակ է պարգեւել։

Փարիզ. (Շարունակելի)

ՄԿՐՏԻՉ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

I

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Վահան Թէքէեան ծնած է Կ. Պոլիս, Օրթագիւղ, 1878 յունուար 21ին (Հ. տ.): Մեծցած է Իւսկիւտար, յաճախած՝ թաղային ներսէսեան, Պէրպէրեան եւ յետոյ Ազգ. Կեդր. վարժարանները, որոնցմէ եւ ոչ մէկէն շրջանաւարտ եղեր է: 16 տարեկանին կը թողու Կեդրոնականը: Ատկէ վերջ, երկու տարի՝ Պոլիս, երկու տարի՝ Լիվըրփուլ, հինգ տարի՝ Մարսէյլ գրասենեակի պաշտօնեայ, եւ երկու տարի ալ Համպուրկ վաճառական-յանձնակատար եղեր է: 1904ին Եգիպտոս է, ուր՝ մինչեւ 1908 օգոստ. փոխն ի փոխ եղած է խմբագիր «Ազատ Բեմ»ի, «Լուսաբեր»ի եւ «Շիրակ»ի, միեւնոյն ատենը լալով առեւտրական պաշտօնեայ: 1908 օգոստոսէն յետոյ Պոլիս վերադարձեր է եւ հոն յաջորդաբար խմբագիր եղած է «Շիրակ»ի, «Հայրենիք»ի եւ «Արեւելք»ի, աշխատակցելով նաեւ Պոլսոյ եւ արտասահմանի թերթերուն: Տարի մը այցելու ուսուցիչ Նոր Դպրոցի, յետոյ տեսուչ՝ Ազգ. Հիւանդանոցի Կեդր. դրասենեակին, եւ մնայուն ներկայացուցիչ Ազգ. Ժողովոյ Երուսաղէմի պատրիարքութեան մօտ: Հաղիւ թէ գործի ձեռնարկած է, երբ երկու ամիս վերջը՝ պաշտօնին գործադրութեան դէմ հանուած արգելքներուն պատճառաւ Եգիպտոս կանցնի եւ հոն կը մնայ պատերազմի պատճառաւ: Պոլսոյ մէջ չորս տարի Ազգ. Երեսփոխան Եգիպտոսի (ա. ատենադպիր) եւ դրեթէ նոյնքան ատեն անդամ Կեդր. վարժարանի խնամակալութեան: Դարձեալ Եգիպտոսի պատուիրակ Գէորգ Ե.ի կաթողիկոսական ընտրութեան:

1896ին Պոլսոյ մէջ հնչակեան է, 1904ին Եգիպտոսի մէջ վեր. հնչակեան, մինչեւ 1905ի վերջերը: 1908ին դարձեալ վեր.-հնչակեան եւ քիչ յետոյ՝ ռամկավար, որուն մէջ կը ձուլի վեր.-հնչակ. Եգիպտոսի մասնաճիւղը:

1905ին Միք. Կիւրճեանի հետ «Շիրակ» ամսագիրը հիմնած էր Աղեքսանդրիոյ մէջ: 1915 մայիսին, ընկերներու հետ նոյն քաղաքին մէջ կը հիմնէ երկօրեայ «Արեւը»: 1916 սեպտեմբերին կենթարկուի յարձակումի, կորսնցնելով մէկ աչքին տեսողութիւնը: Անդամ եղած է Գահիրէի առաջին Ազգ. Մխիթեան, և անոր կողմէ իբրեւ պատուիրակ կերթայ Կիպրոս Հայկ. Լէգէոնին եւ Փարիզ՝ Ազգ. Պատուիրակութեան մօտ: 1918ին Փարիզէն Երուսաղէմ կը մեկնի, իբրեւ ներկայացուցիչ Ազգ. Պատուիրակութեան: Զինադադարին վերատին Փարիզ՝ Եգիպտոսի Ազգ. Մխիթեան կողմէ, հոն անդամ Համագումարին եւ անկէ ընտրուած Ազգ. Պատուիրակութեան: 1919ին, այս վերջնոյն կողմէ պատուիրակ-բանագնաց Երեւան Հ. Հ. կառավարութեան

մօտ, Մայիս 28ի միացման աֆթին հետեւանօք: 1920ի վերջը Պոլիս վերադարձած եւ խմբագրապետ՝ «Ժողովուրդի Ձայն»ի: Վահան Թէքէեան Հայ Արուեստի Տան եւ«Բարձրավանք» հանդէսին հիմնադիրներէն մէկն էր նաեւ: 1922 սեպ.ին տեսուչ Ազգային Կեդրոնական վարժարանին եւ Նոյեմբերի վերջը մեկնած Պոլսէն, նախ Վառնա, յետոյ Յունաստան, ամիս մը Սուրիա եւ յետոյ ձգած Փարիզ ուր կը մնայ մինչեւ 1924ի վերջերը, անկէ մեկնելով Եգիպտոս, ուր՝ Գահիրէի մէջ, 1926–28 կընտրուի ատենապետ Քաղ. Ժողովի, եւ 1927–30, երկար բացակայութիւններով, կը վարէ «Արեւ»ի խմբագրապետութիւնը:

Վահան Թէքէեան ոտանաւոր սկսած է գրել 9 տարեկանին: Առաջին հրատարակութիւնները, երբ 16–17 տարեկան էր, լոյս տեսած են «Տեսարան»ի եւ Ա. Զօսլանեանի «Ծաղիկ»ին մէջ: Հրատարակած է քերթուածներու չորս հատոր. Հոգեր՝ 1901ին. Հրաշալի Յարութիւն 1914ին, Կէս Գիշերէն Մինչեւ Արշալոյս՝ 1919ին, եւ Սէր՝ 1933ին: Բացի բանաստեղծութենէ եւ խմբագրական յօդուածներէ, ստորագրած է քրոնիկներ, երգիծական էջեր եւ վիպակներ: Ունի նաեւ փորձեր՝ թատերգութեան եւ վէպի, ուղեւորական նօթեր՝ Կեսարիոյ վրա, թարգմանութիւններ եւ գրական թատերական քննադատութիւններ:

II

ՆԿԱՐԱԳԻՐԻ ՄԸ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Վահան Թէքէեանի ստեղծագործութիւնը ենթակայական ապրումներու, հոգեկան դանդաղ բարդ վիճակներու, արտաքին աշխարհի դանդաղ երեւոյթներու բոլոր տարրերը կը պարունակէ իր մէջ: Զինքը անձամբ ճանչնալու, իրեն հետ խօսած ըլլալու անհրաժեշտութեան պէտք չի կայ երբեք: Թերթատեցէք իր հատորները, նշանակեցէք քանի մը ճգնաժամային պահեր, հոգիի քանի մը զգայութիւններ, մտքի քանի մը կայծեր, եւ արդէն կազմած պիտի ըլլաք ուրուագիծը թէ՛ իր գրականութեան եւ թէ՛ իր ներքին անհատականութեան: Տրուած պիտի ըլլաք գրականութեան նկարագիրը եւ իր եսին քանի մը կարկառուն գիծերը:

Մտնելէ առաջ ուրեմն իր ստեղծագործութեան մէջ, չափազանց հրահանգիչ է կազմել քանի մը ստուերագիծերով մարդը, ճամբորդել իրեն հետ դանդաղ կլիմաներու տակ, արեւելքէն արեւմուտք, հիւսիսէն հարաւ, թափառիլ մէկուն հետ, որ կրեր է, իբրեւ չափազանց զգայուն էակ, տպաւորութիւններ, ներշնչեր է ամէն երկինքներու տակ, շնչեր՝ տարբեր հորիզոններու հոգին ու ծաղիկներուն բոյրը, ճանչցեր՝ բոլոր գոյները, ապրեր՝ մարդկային հոգիներու հետ նկարագրի հակընդդէմ տարրերով բեռնաւոր, դառնութեան շատ պահեր անցուցեր, կեանքի բաղմաթիւ վիճակներ փոխեր, եւ բոլոր այս գրական ու բացասական պայմաններու մէջ չէ դադրեր երգելէ իր երգը, քնարի մը լարերուն վրայէն լսելի ընելով ներքին ողբերգութեան մը աղաղակը:

Պերճախօս չէ՞ք դտներ իր կենսագրական տողերը, որոնք՝ իրենց պարզութեան մէջ, կը խտացնեն մտաւորական մարդուն պայքարը

արտաքին աշխարհին դէմ բազմաթիւ ձեւերով։ Ու չէ՞ք մտածեր այն կորովին մասին, որ ունեցեր է քերթողը մտաւորական վերելքներու ստեղծագործական գեղեցիկ թռիչքներու եւ ներշնչման հզօր պահերու արգելք եղող եւ խոտոր համեմատող վիճակներու մէջ։

Բանաստեղծ Թէքէեանի հետ, ոչ անշուշտ տիրական կերպով, քալեր են ուրիշ Թէքէեաններ ալ։ Ամէն անգամ որ նիւթական աշխարհը դրապաշտութեան քարոզը լսելի ընել ուզեր է եւ հրապուրել զինքը, բանաստեղծը գլուխ ցցած է եւ իր իրաւունքը պահանջած։ Ներշնչման ամէնէն յստակ պահերուն, ներքին պայքարը մատներ է իր ներկայութիւնը։ Յաճախ տեղի տալ ստիպուեր է, կեանքի անողոք պայմաններուն առջեւ։ Այսպիսով Թէքէեան քալեր է ճամբէ մը, զոր քալեր են իրմէ առաջ շատ շատերը հայ մտաւորականներէն, ու պիտի քալեն իրմէ յետոյ։

Հազիւ թէ դպրոցէն կելլէ, առանց դայն աւարտելու, երբ կը դառնայ առեւտրական պաշտօնեայ եւ վաճառական-յանձնակատար։ Շատ կը ճամբորդէ։ Իր քերթուածները դրոշմը կը կրեն բազմաթիւ երկիրներու եւ քաղաքներու։ Կ՚այցելէ եւ կ՚ապրի Պոլսէն յետոյ, որ իր ծննդավայրն է, Լիվերիուլի, Մարսէյլի, Փարիզի, Համպուրկի, Գահիրէի, Յունաստանի, Աղեքսանդրիոյ, Էջմիածնի, Երեւանի, Վառնայի, Սիւրիոյ եւ Կիպրոսի մէջ։ Կը դառնայ ուսուցիչ եւ տեսուչ։ Ամէն ուր որ կ՚երթայ հանրային գործունէութիւնը անբաժան է իրմէ։

Ազգային երեսփոխան է եւ անդամ՝ Կեդրոնական վարժարանի Խնամակալութեան։

Ներկայացուցիչ Երուսաղէմի Պատրիարքութեան եւ պատուիրակ կաթողիկոսական ընտրութեան, Հայկական Լէգէոնին եւ Ազգ. Պատուիրակութեան, Բանագնաց՝ Հ. Հ. կառավարութեան մօտ։

Երբեմն հնչակեան, յետոյ վեր.—հնչակեան, ամենէն վերջը ռամկավար-ազատական, Վահան Թէքէեանի միտքը չէ կրցեր հաշտիլ քաղաքական պարտադրութիւններու և կապանքներու։ Կը թուի թէ դաւանանքի հարցը բռնի զգեստ մը եղեր է իրեն համար, ինքը չէ ապրած անոնցմով, իբրեւ անհրաժեշտութիւն եւ մտաւորական պահանջ։

Բոլոր այս յարափոփոխ վիճակներուն մէջ կենդանի մնացեր են մտաւորական մարդուն հոգերը, զոր իրեն հետ պտտցուցեր է ամէն երկինքներու եւ ամէն կլիմաներու տակ։

Փորձեր է գրականութեան գրեթէ բոլոր սեռերը։ Եղեր է խմբագիր եւ յօդուածագիր։ Գրեր է քերթուածներ, քրոնիկներ, երգիծական էջեր, վիպակներ, ուղեւորական նօթեր, գրական-թատերական քննադատութիւններ, թատերական փորձեր եւ կատարեր է թարգմանութիւններ։ Այս բոլոր տքնութիւններէն կը մնան սակայն քերթուածներու չորս հատորները, որոնց մէջ, չափազանց թափանցիկ կերպով, իր կեանքը կը քնարերգի, չըսելու համար, իր տարակոյսները, սէրը, զգայութիւնները, խոհերը, յուշերը, կարօտները, դժգոհութիւնները, պատրանքները, յոյսերը աղօթքներն ու համակերպութիւնները։

Յիշած բոլոր զգայութիւններուն մասնատուին ըլլալով մէկտեղ հատորները անփոխարինելի աղբիւրներ են ճանչնալու քերթողին ներքին մարդը, որուն գիծերը դժուար է արձանագրել լուսանկարի

մը վրա, որովհետեւ խուսափուկ են անոնք եւ չեն մտներ չափի ու կշիռի սահմաններուն մէջ։ Դժուար է, որովհետեւ բանաստեղծը մը-տածումն ունեցեր է անցորդներէն դաղտնի պահել ինչ փոթորիկ որ կը յուզէ իր հոգին։

Հոգիս իմս է եւ որքան թըլիմ յանձնել զայն այստեղ
Անցորդներուն անծանօթ, իւրաքանչիւր էջի վրա,
Հոգիս ի՛մս է եւ ոչ ոք պիտի ամբողջ զայն ճանչնայ
Իր լոյսերովը պայծառ, իր մըթութեամբը ահեղ···։
(«Մէր»—ընթերցողին էջ 7)

Եւ սակայն, եթէ նոյնիսկ «քիչերու ամբողջովին յանձներ է» ան իր հոգին, անոնք յստակ գիտակցութեամբ կը կարդան քերթողին հոգիին «պայծառ լոյսերը» եւ ներքին «ահեղ մթութիւնը»։

Այն գիտակցութիւնը, որ արեւուն մարդը եւ ամբոխը դէմ առ դէմ կը գտնուին ակամայ, ներքին հոգեբանական փրուրումներու կը տանին զինքը։ Խո՛ր ու ցաւագին պայքարի մը արձագանգը պիտի լսի այլեւս անոր քերթողութեան մէջ։ Երբ անտեղիտալի կայծը իր ճարակը կը փնտռէ եւ քերթուածներու մէջ կաթիլ առ կաթիլ կը քամենք քերթողին սիրտը, ողբերգութիւնը աւելի կատարեալ կը դառնայ քանի որ հակառակ այդ գիտակցութեան, չի կրնար մարել ստեղծագործութեան կրակը, և ինքզինքը դէմ հանդիման կը դանէ «մարդակեր»ին որ ընթերցողն է, հաւաքականութիւնն է։ Ներքին այդ ողբերգութիւնը այլեւս իր ճարակը կը փնտռէ քերթողին բովանդակ ստեղծագործութեան մէջ, ու կը տարածուի քերթուածէ քերթուած։

Այս գիտակցութիւնը հաւատքի մը արբութեան պէս ունենալէն յետոյ, դժուար չէ այլեւս դուշակել դգացած դառնութիւնը, եւ անոր անխուսափելի հետեւանքները իր տրամադրութիւններուն եւ նկարագրին նախ եւ առաջ եւ յետոյ իր քնարերգութեան վրա։

Բանաստեղծը տրամադրութիւններուն մարդն է։ Ուրիշներուն համար աննշան զարթ պահեր, իր մէջ կը փթթեցնեն խանդավառութիւն եւ ներշնչումի զեղեցիկ ծաղիկը։ Ընդհակառակն, ամէն անկարեւոր պատճառներ, խօսք մը, նայուածք մը, արտաքին ոեւէ պատկեր, չարժում, ձայնի շեշտ մը, տխրութեան ոեւէ վիճակ, յիշատակի փշրանք մը, ջախջախուած երազ մը, եւ ուրիշ բիւրաւոր վիճակներ ու հոգեկան տրամադրութիւններ դառնութեան թոյներ կը կաթեցնեն անոր ստեղծագործութեան վրա։ Կը դարձնեն յոռետես, եւ ինչո՞ւ չէ, նաեւ մարդատեաց։ Կը թունաւորեն անոր հութիւնը, ամէն բան սեւ տեսնել կուտան եւ դէմը ելլողը՝ հակառակորդ։ Եթէ երբեմն ամբողջ հոգիով գթութեան արցունք կը դառնար, մութին մէջ կրծուած՝ ինքզինքը որոնումներու յորձանքին կը յանձնէր ու սիրոյ երջանկութիւնը կը տարածէր ամէն կողմ, յանկարծ կը գայրանայ ու ամէն բան ծաղրի ու ծիծաղի առարկայ կը դարձնէ։

Այս դգայութիւնը չա՞տ խոր է բանաստեղծ թէքէեանի մէջ։ Անկամայ, իր բոլոր հատատաներ է անոր հոգիին մէջ. տեսակ մը քերդ, որուն կ՝ապաւինի յաճախ, երբ մարդկային անիրաւութիւնները իր դէմ կը գինուին։ Ծաղրն ու ծիծաղը հեգնութեան կը փոխուին, երբ «իր անձը կուաղաշտ նետել պէտք ըլլայ»։ Եթէ երբեմն մարդոց վրա

ինդալը անհրաժեշտութիւն մըն էր քերթողին համար, կուգայ պահ մը, որ իբրեւ ղէնք եւ պաշտպանութեան միջոց, այդ ղգայութիւնն ալ անղօր կը դառնայ: Բանաստեղծը կը ղգայ այս, եւ իր աչքերուն առջեւ կը տեսնէ փոխուած աշխարհը, որ կը հեգնէ երեւակայական–բանաստեղծական ղէնքերուն անղօրութիւնը:

Հետեւեալ քանի մը տողերը խորապէս կը բացատրեն քերթողին ներքին տրամադրութիւնները:

Քեզ, ո՛վ ծիծաղ, ատենով երբ այնքան ալ դեռ չէի
Քեզի կարօտ, գրկեցի զերդ կատու մը կուրծքիս վրա,
Քեզ գգւեցի՛ գրգռեցի եւ ճանկաբաց, սխրալի՝
Երեսն ի վեր շատերուն արձակեցի՛ անխընայ...:
Բայց հիմա քիչ, օ՜հ, շատ քիչ, կրնամ այլեւս խնդալ...
Հիմա հոգիս ինքնիրմով բրգրքտուած է այնքան,
Այնքան ցաւոտ, վիրաւոր՝ որ իր ծիծաղն ու է՛ն առաջ զինք կ'արիւնեն ու իր վրա՜յ կը մընան...:

(«Ծիծաղ», Սէր հատորին էջ 79)

Նկարագրի ուրիշ գիծեր կը բերեն մեզի Սէր հատորէն խառնուրդ (էջ 55), խաւարումն (էջ 59) *եւ ուրիշ քերթուածներ:*

Բանաստեղծը ամէն բանէ առաջ, վճռական շարժումներու եւ ուրմատական դաղափարներու թռիչքը պակսեր է իրեն: Իր մտքի հորիզոնին վրա երբեմն յայտնուեր են շանթեր ու որոտում, սակայն երազի եւ երեւակայութեան անձնատուր, չէ կրցեր զանոնք արտայայտել, հասկնալու համար չէ ուզեր, չոշափելի եւ գործնական ձեւերով: Ներդեր է, ճիշտ է, Սրբազան Ընթրոստութիւնը. Սէրը *որակած է կարծրը* Աստուած («Սէր» էջ 17), *սակայն գերագոյն խենդութիւնը չէ ունեցեր: Ամէն անգամ որ ընթրոստութեան այրքները իր մէջ բարձրացեր էն, եւ խո՛ր դառնութիւն զգացեր է աշխարհի անիրաւութիւններուն հանդէպ, եւ երբ* « Կոտրէ՛ կարկահդ, ո՛վ յիմար »· (*խօսքը ուղղուած ստեղծագործ* Հայաստանին, Սէր էջ 34): Կրտորնեերովը անոր զինէ՛ խօլաբար· զա՛րկ եւ փլցուր· զա՛րկ, հարուածէ՛ ու քանդէ՛, եւ փլատակաց դէզին տակ դո՛ւն ալ թաղուէ...»: *Կարդայ, յանկարծ կը սթափի ու զրի կ'առնէ նաեւ հետեւեալ տողերը.*

Բայց՝ կը սոսկա՜մ արձագանգէն իմ ձայնիս...
Բայց՝ մի՛, դուն մի՛ լըսեր զիս
Եւ յաւիտեան ըրէ այնպէ՜ս
Ինչպէս գիտես...:

Մտքի այս երկդիմի վիճակը աւելի թանձրացեալ կը դառնայ, երբ հայկական եկեղեցին ներբողը կերդէ, («Սէր», էջ 36–37), *եւ որուն վերջաւորութեան անոր խաչերը կը նմանցնէ դաշոյնի, դանդակները՝ բոմբիւնի եւ երգը յաղթութեան... Վիպական արեւտի եւ ընթռնումի որպիսի պերճախօս ապացոյց:*

Նկարագրի ուրիշ մէկ յատկանշական գիծն է ծանրախոհութիւնը: Հիմնական տարր մըն է այս, որ տարիքի հետ կապուած չէ: Իր առաջին քերթուածներէն մինչեւ վերջինը, ծանրախոհութեան ծիրանին կը կրէն իրենց վրա: Ժամանակէն առաջ չափահաս, աշխարհը եւ մար-

դիկը կանուխէն ճանչցած ըլլալու հովը կայ անոր եւ գրականութեան եւ յարաբերութիւններուն մէջ։ Իր մէջ միշտ իմաստուն մը նստեր է, կեանքին եւ մահուան համբիչը ձեռքին, համբելու համար մարդկային կեանքի օրերը։ Մէկն է անիկա, որ խօսքին եւ գիրին արժէքը կը զգայ եւ կը ջանայ զգացնել ուրիշներուն։

Ինչպէս որ իր քերթուածները կաղապարներու մէջ ձուլուած ըլլալու տպաւորութիւնը կը ձգեն, այնպէս ալ իր խօսքը նման զգայութիւն մը կարթնցնէ դինքը լսողին վրա։ Բառերը անոր շրթներուն վրա միշտ իրական եւ խորհրդաւոր իմաստ մը ունին։ Քիչ բառերով, կարճ նախադասութիւններով տպաւորութիւն գործելու գաղտնիքը գիտէ, բան մը որ նկարագիր դարձեր է իր գրականութեան մէջ։ Սովորական խօսակցութիւններու պահուն իսկ չէ՞ք զգացեր իր խօսքին խորհրդաւորութիւնը։ Խօսակիցներուն տրուած չէ երբեք թափանցել անոր բառերուն ետեւ ծածկուած գաղափարներու իմաստին ու խորութեան։ Պիտի ըսէք թերեւս, թէ բոլոր դառնացած հոգիներու յատուկ երեւոյթ մըն է այս։ Ես այս տպաւորութիւնը կրեր եմ, ամէն անգամ որ, կարճ պահերով, դինքը մտիկ ըրեր եմ։ Չեմ գիտեր թէ, եթէ մտերիմ գաղափարակիցներ ունի, անո՞նք ինչպէս ճանչցեր են մարդը բանաստեղծին մէջ։

Ինծի այնպէս թուեր է, թէ կասկածի զգայութիւնը միշտ արթուն հսկեր է իր մէջ։ Սիրեր է մտիկ ընել, քան խօսիլ, հակաճառել՝ քան ընդունիլ կարծիք մը, հեգնել՝ քան համակրիլ։ Իր քերթուածները, սեղմ ու այլաբանօրէն երկնուած, աւելի հեշտ է վերլուծել, քան իր նկարագիրը, որուն դիծերը, ճառագայթներու պէս, ցրուեր է իր ստեղծագործութեան մէջ։ Իր հոգիին հաւատարիմ մէկ քերթուածն է Հպարտութիւնը (Կէս Գիգերէն մինչեւ Արշալոյս), զոր կերդէ, որովհետեւ ապրիլ կարենալու համար, օդի, ջուրի եւ հացի նման, պէ՛տք ունի հպարտութեան պէս հզօր զգայութեան մը։ Այս է պատճառը, որ մտաւորական մարդուն առանձնայատուկ հով մը դինքը կը դարձնէ ընտրեալ մը մարդոց մէջ, տեսակ մը առաքեալ, որ իր ճամբան կերթայ, տխուր՝ որ դինքը չեն հասկցեր մարդիկ։ Մտքի այս բացառիկ վիճակն ալ ուրեմն, ինծի կը թուի, հիմնական պատճառներէն մէկն է, որ ինք կղզիացած ապրի, հեռու մտաւորական հանդիպումներէ եւ հանրային շփումներէ, պատճառ դառնալով անիմաստ հակակրութիւններու, կանխակալ կարծիքներու եւ թիւրիմացութիւններու։

Թէքէեան ալ, ինչպէս իր սերունդին բոլոր մտաւորականները, այսօրեան մտաւորական սերունդին արթուն հսկողութեան տակ, չէ կրցեր դառնալ մտաւորական կեղրոնաձիգ այն ուժը, որ հանրային կեանքի մէջ առաջնորդելու պաշտօնը պիտի ունենար, եւ շատ բարձր պիտի կենար մեր կեանքը յուզող բոլոր խնդիրներէն ու տարակարծութիւններէն։ Այսօր աւելի քան երբեք կը տառապինք մեր կեանքը դառնացնող անհամաձայնութիւններու երեսէն, կը փնտռենք իմացական հայ միտքը, որուն խօսքը եւ շարժումը զգաստութեան եւ հաշտութեան պիտի հրաւիրէր մեզ բոլորս, կենդանութեան եւ գործունէութեան վառարան պիտի դառնար եւ ընթացք պիտի տար ազգային քաղաքականութեան մը։ Ինչպէս բոլորը, Թէքէեանն ալ ապրեր է իր պատեանին մէջ ու երգեր արեւստագէտի իր երգը, հեռո՛ւ կեանքէն

ու մարդոցմէն: Զեն գտնուած խումբ մը մարդիկ, ազգային գերագոյն հոգերուն ծանրութիւնը իրենց ուսերուն վրա առնելու, ատելութեան արծարծած կրակը մարել փորձելու, մտաւորականութեան զանազան ներկայացուցիչները քով քովի բերելու, եւ հնարաւոր ծրագրի մը շուրջ զանոնք համախմբելու համար:

Ինչո՞ւ համար Թէքէեան չի դառնար Կամուրջ, զոր այնքան գեղեցկօրէն կերգէ իր Սէր հատորին մէջ.

«... Ի՜նչ փոյթ թէ ի՛մ կամ ուրիշ՝
Հոգի մը պէտք է սակայն,
Արեւաշող, աստղանիշ՝
Որ հոգիին Հայութեան
Ըլլայ ճամբայ ու ճա՛ճանչ.
Ըլլա՛յ անոր բազմատանջ
Կեանքին, յոյսին ապաւէն...
Ըլլա՛յ ամբարն այն՝ որուն
Մէջ լեցուի հունձքն հայրերուն
Եւ փրկէ՛ ազգն այս սովէն...:»

Մեր ցաւը անոնց համար է, որ գեղեցիկ դաղափարներու քարոզիչները դարձան միայն, առանց երբեք կեանքի մէջ զանոնք իրականացնելու մասին տքնելու, մեր շուրջը հետզհետէ կուտակուող ատելութեան մթնոլորտը փարատելու համար:

Փոխանակ պայքարելու անմիաբանութեան դարաւոր ցաւին դէմ գեղեցի՛կ է անշուշտ երգը, զոր քերթողը կը նւիրէ այդ ղգայութեան, Միջնորդութիւն վերնագրով քերթուածի մը մէջ (կէս գիշերէն մինչեւ արշալոյս): Միջնադարեան տաղերգուներուն պէս, հասարակաց մեղքին համար կուրծք կը ծեծէ: Իր սիրտը կարիւնի, երբ կը տեսնէ որ հին յանցանքը եւ իր թոյնը կը խօսին մեր մէջ, որ հայ սիրտերն իրար կը բզքտեն մոլեգին...

Վ. Թէքէեան երգող բանաստեղծ է: Պիտի դադրէր իր մօտ ներշնչումը, եթէ անձնատուր չըլլար երգին ու իր քմահաճոյքներուն: Երազին նւիրուած քերթուածները բազմաթիւ են իր հատորներուն մէջ: Մանկական եւ պատանեկական երազներէն յետոյ, չափահասութեան մէջ դարձեալ կերգէ: Իր նկարագրին, հետեւաբար բանաստեղծին, էական յատկանիշերէն առաջինը երգն է, երեւակայութիւնը, որուն թեւերէն տարուելով, պատրանքներու ոստայնը կը հիւսէ, իր «գօս հոգին» երգով թեթեւցնելու համար: Ու չէ՞ք գտներ, որ բանաստեղծը իր հոգիին հարազատ պատկերը տուած կըլլայ, երբ ծովուն վերեւ ու դաժան երկինքին տակ, կը կանգնէ բարձր ու սէգ աշտարակ մը, դուրսի հարուածներէն իր հոգին պաշտպանելու համար. (Աշտարակը, Հրաշալի Յարութիւնէն): Այս մեկուսացումը կը շեշտի իր մէջ հետզհետէ, ու զինքը կը դարձնէ դժգոհ ու յոռետես: Այս է պատճառը, որ քերթուածներուն բոլոր հատորներուն մէջ կը հնչէ յոռետեսութեան քնարը: Հազւադէպ է լաւատես ոեւէ վանկ ու ղգայութիւն, կարծէք ուրախ տրամադրութիւններ չէ ունեցեր քերթողը:

Բանաստեղծին մարդկային հոգիին պատկերը եւ գրական – գեղարուեստական ճարտարապետութիւնը աւելի լրիւ պիտի պատկե-

բացւի, երբ քննութեան ենթարկենք իր քերթւածները, որոնք չորս հատորներու մէջ ամփոփւած, կը կազմեն անոր գրական վաստակը:

Հիմնական երկու դասաւորումի կը հպատակին Վ. Թէքէեանի քերթւածները: Առաջին խումբին կը պատկանին անոնք, որոնց մէջ մեծ չափով զգալի է ենթակայական տարրը: *Բանաստեղծը կը մերկացնէ իր ներքին մարդը, եւ կերգէ անոր բոլոր քմահաճոյքները: Ներքին քնարերգութիւնն է այդ, հզօր շեշտերով ու կատաղաբաղձ հոգիի մը գալարումներով երգւած ու ողբացւած: Երկրորդ խումբին կը պատկանին բոլոր այն քերթւածները, որոնց կաւր տանւած է* համայնական *աւաղանէն: Հոս աւելի քան առարկայական է եղած քերթողը, սակայն յաճախ նսեմացած է արւեստագէտը, որ հանրային զառիթափին վրա, ինկեր է հռետորութեան գիրկը, եւ դարձեր ձրդատումներու քարոզիչ:*

Ընդհանուր այս բաժանումէն անկախաբար, Վ. Թէքէեանի քերթւածները ունին ուրիշ ստորաբաժանումներ ալ, հպատակելով վերը յիշւած երկու հիմնական բաժանումներուն:

Ենթակայական գլխին տակ կը ճանչնանք.

ա. Սիրահարը.
բ. Բնութեան երգիչը.
գ. Հաւատացեալը.
դ. Յոռետեսը.
ե. Մահերգուն.

Համայնական են՝

ա. Հայրենասիրական եւ տեղական բնոյթ կրող քերթւածները.

բ. Իմաստասիրական քերթւածները.

Կը զգամ որ այս բաժանումը քմահաճ է, որովհետեւ դժւար է ըսել թէ ո՞ւր կը սկսի եւ ուր կը վերջանայ ասոնցմէ ամէն մէկը:

Անշուշտ, քերթւածներ կան, որոնք մէկ կամ միւս բաժանումին տակ կ'իյնան: Սակայն, կան այնպիսիներ ալ, որոնց բովանդակութիւնը խառն է: Երբ կերգէ բնութիւնը, սիրոյ ենթական իր ներկայութիւնը զգալի կընէ: Երբ կերգէ, օրինակ, հայրենիքը, առօրեայ տրամադրութիւնները, մահուան եւ յուսախաբութեան զգայութիւնները քով քովի տեղ կը բռնեն: Այսպէս ալ շարքին միւս մասերը: Երբ կերգէ այսօրը անկարելի է, որ կարօտի թեւերէն տարւած, չվերադառնայ իր մանկութեան եւ պատանեկութեան անցեալը, որմէ կը ներշնչւի քերթողը եւ կը ստորադրէ յիշատակի լաւագոյն քերթւածները:

Փարիզ

(Վերջը յաջորդ անգամ)

ԱՐՏԱՇԷՍ ԱԲԵՂԵԱՆ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՅԵՏՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Ոչ մի երկիր այնչափ մեծ ծառայութիւն չէ մատուցած հայագիտութեան, որչափ Գերմանիան: Եւրոպայի առաջին հայագէտը գերմանացի է եղած՝ Շրեօդէր: Ճիշտ է, նրանից առաջ եւս հայերէնի ուսումը այս կամ այն գերման գիտունի ուշադրութիւնը գրաւած է, բայց՝ պատահական կերպով միայն: Յիշենք օրինակ Անդրէաս Ակուլուբոսի անունը, որ 1680ին Լայպցիգում հայերէն ճաշոց Գիրքը տպագրեց: Հռչակաւոր փիլիսոփայ եւ բազմագիտուն Լայբնից (1646 — 1716) եւս ուշադրութեան է առել մեր լեզուն: Եօհան Ցրիպրիխ Շրեօդէրն էր սակայն, որ Ամստէրդամում հիմնովին ուսումնասիրեց հայերէնը եւ այնուհետ էլ լոյս ընծայեց իր հռչակաւոր Thesaurus Linguae Armenicae կամ Գանձ Արամեան Լեզուի աշխատութիւնը (1711): Անցողակի նկատենք, որ ոմանք (օրինակ Աճառեան) Շրեօդէրին սխալմամբ հոլանդացի են համարում, այն ինչ նա գերմանացի էր, Մարբուրգի համալսարանի ուսուցչապետ: Շրեօդէրի աշխատութեամբ է, իսկապէս, որ հիմք է դրուում հայագիտութեան Արեւմտեան Եւրոպայում:

19րդ դարը հանդէս բերաւ մի շարք անուանի գերման հայագէտներ — Հ. Պետերման, Վինդիշման, դը – Լագարդ, Ցր. Միւլլէր, եւայլն: Ստրասբուրգի համալսարանի ուսուցչապետ Հ. Հիւբշմանին էր վերապահուած, սակայն ամենամեծ հայագէտի անունը վաստակել: Դրանք բոլորը, ինչպէս նաեւ Ն. Ցինկ, Ե. Կարստ եւ ուրիշներ՝ զուտ լեզուաբաններ են: Եղած են, սակայն, եւ շատեր, որոնք առաւելապէս հայ բանասիրութիւնն են իրենց ուսումնասիրութեանց առարկայ դարձրել — Նոյման, Լաուէր, Գութշմիդ, Ցէտտեր, Սիմոն Վեբէր, Գելցէր եւայլն, բայց, մանաւանդ, Մարքվարտ: Հայաստանի հնագոյն՝ ուրարտական շրջանի պատմութիւնն ուսումնասիրող գերման գիտուններով շարքում յիշենք մասնաւորապէս Լեման — Հաուպտի եւ Բելքի անունները: Անտարակոյս, 19րդ դարում եւ այնուհետեւ էլ մինչեւ մեծ պատերազմ, հայագիտութիւնը Գերմանիայում՝ այլ վաստակաւորներ եւս հաշւում է: Մոռանալ պէտք չէ, օրինակ, գերման ճամբորդներից շատերի մատուցած ծառայութիւնը

Հայ երկրի եւ ժողովրդի ուսումնասիրութեան եւ ծանօթացման գործում։ Հիներից յիշենք՝ Պարրոտի, Կարլ Ֆոխի, Հաքսահաուզէնի, Բոդէնշտէդտի, ինչպէս նաեւ երկրաբան Աբիխի, իսկ բաղդատաբար նորերից՝ Հոֆմայստէրի, Ռոհրբախի, Բանդէի եւ կոմս Վեստարպի անունները։

Ի՞նչ աչքի ընկնող հրատարակութիւններ են լոյս տեսել հայագիտութեան եւ հայ մշակոյթի շուրջը Գերմանիայում, այս յետպատերազմեան տարիներին։

Ամենից առաջ յիշատակել պէտք է դարձեալ հանգուցեալ Մարքվարտի աշխատութիւնները։ Ինչպէս որ Հիւբշման հայ լեզուի ուսումնասիրութեան մարզում է ամենամեծ դէմքը գերման գիտնականների մէջ, այնպէս եւ Եօզէփ Մարքվարտ՝ հայ բանասիրութեան մարզում։ Դեռ պատերազմից առաջ նա իր մի քանի աշխատութիւններով հռչակ էր ձեռք բերել որպէս ներհուն հայագէտ։ Յիշենք իր Eranschahr մեծահատոր գործը, որ թէեւ Իրանի պատմական աշխարհագրութեանն է նուիրուած, բայց՝ աղբիւրը Մովսէս Խորենացու անունով ծանօթ Աշխարհագրութիւնն է։ Հեղինակի «Հայ այբուբէնի ծագումը» փոքրիկ, բայց վերին աստիճանի հմտալից աշխատութիւնը եւս նախապատերազմեան տարիներից է, ինչպէս եւ նրա «Բագրատունեաց ծագումը» ու մի քանի ուրիշ գրուածքներ։

Պատերազմից անմիջապէս յետոյ (1919), հայ պետականութեան վերականգման օրերին, Մարքվարտ լոյս ընծայեց իր «Հայ ազգի ծագումը եւ վերականգնումը» անունով խիստ շահեկան աշխատութիւնը, բաղկացած երկու մասից։ Առաջինը զուտ գիտական է եւ վերաբերում է հայ ազգի ծագման, իսկ երկրորդը ժամանակակից, հրատապ բնոյթ ունի եւ շօշափում է հայ պետականութեան վերականգնման հարցը։ «Յունահռոմէական կայսրութեան մշակութային ազդեցութեան տակ ապրած ժողովուրդներից միայն երկուսն են իրենց ազգային դիմագիծը եւ լեզուն անվթար պահպանել», ասում է Մարքվարտ, «մինչեւ անգամ սեփական քաղաքակրթութիւն մշակել։ Դրանք են՝ մի կողմից գերմանները, իսկ միւս կողմից Հայերը, վերջինների հետ հաշուելով նաեւ մշակութապէս նրանցից կախում ունեցող Վրացիներին»։

Հայ լեզուի ծագման եւ հայ ազգի հնագոյն պատմութեան ուսումնասիրութիւնից Մարքվարտ հետեւցնում է. 1. Հայերէնը իր հիմնական տարրերով հնդեւրոպա՛կան է եւ պատկանում է այդ լեզուների եւրոպական խումբին, 2. Հայերը հնումը Եւրոպայում են ապրել, Յոյների եւ Թրակիացիների նախահայրենիքին մերձակայ շրջանում»։ Ինչ վերաբերում է հայ ցեղի մարմնակազմին, զուտ մարդաբանական կողմին, Մարքվարտ ուրիշ մասնագէտների հետ այն կար-

ծիքին է, թէ Հայերը սերունդ են հին հիթիթների, սրանք էլ տիպիկ ներկայացուցիչներն են՝ այսպէս անուանուած «մերձաւոր – ասիական» (կամ «հայատիպ», armenoid) ցեղի:

Մարքվարտի ցաւառիթ մահից (3 փետր. 1930) յետոյ լոյս տեսաւ նրա հայագիտական ամենանշանաւոր աշխատութիւններից մէկը՝ «Հարաւային Հայաստանը եւ Տիգրիսի ակունքը ըստ յոյն եւ արաբ աշխարհագրագէտների»: Գրուածքի որոշ մասեր առաջ լոյս էին տեսած «Հանդէս Ամսօրեայ»ի էջերում: Ինչպէս գրքի վերնագիրն էլ ցոյց է տալիս, Մարքվարտ իր այդ աշխատութեամբ ներկայացնում է Հարաւային Հայաստանի պատմական աշխարհագրութիւնը, հիմնւելով յոյն եւ արաբ, բայց հայ ու լատին աղբիւրների տեւալների վրա: Բուն աշխատութիւնից (576 էջ) զատ՝ հատորը պարունակում է եւ մի ընդարձակ (125 էջ) ներածութիւն: Վերջը կցուած է անունների եւ նիւթերի մանրամասն ցանկ: Ներածութեան մէջ ասուած է թէ աշխատութեան նպատակն է «գիտական լոյսի տակ դնել Հայերի պատմական իրաւունքը այս գրքում նկարագրուած երկրամասի վրա»: Հիւբշմանի «Հին Հայաստանի տեղւոյ անունները» ծանօթ գործից (1904) յետոյ՝ Մարքվարտի այս գրուածքը առհասարակ ամենանշանաւոր գիտական աշխատութիւնն է գերմաներէն լեզուով՝ նւիրուած Հայաստանի պատմական աշխարհագրութեան:

Հանդուցեալը անտիպ աշխատութիւններ եւս թողել է, որոնք հետզհետէ լոյս են տեսնում: Նրանք մի մասով միայն հայագիտական են, միւսները վերաբերում են Կովկասի եւ Իրանի ուսումնասիրութեան: Տպւում են մասնագիտական հանդէսներում եւ առանձին հատորներով: Հռոմի կաթոլիկ գիտական հիմնարկութիւններից մէկի տրամադրութեան տակ են դնում հանգուցեալի ձեռագիր աշխատութիւնները: Նոյն հիմնարկութիւնն է ձեռք բերել նաեւ նրա անձնական գրադարանը: Հռոմում հրատարակւող Orientalia Christiane գիտական հանդէսի մէջ վերջերս լոյս տեսաւ (1932) Մարքվարտի մի անտիպ աշխատութիւնը՝ «Հայ թեմերի ծագման» մասին, իսկ Caucasiea հանդէսի մէջ՝ (գիրք է.) նրա «Պատմական թւականութիւններ հայերէնի ձայնաւորների օրէնքի ժամանակագրութեան շուրջը»: Յուսանք, որ մեծ հայագէտի թողած միւս ձեռագիր աշխատութիւններն եւս լոյս աշխարհ կը հանւին մաս առ մաս: Զմոռանանք յիշել նրա յետպատերազմեան աշխատութիւններից մէկն եւս, որ տպւել է «Հանդէս Ամսօրեայ»ի 40ամեակի առթիւ (1927) լոյս տեսած մեծածաւալ «Յիշատակարան» հատորի մէջ: Աշխատութիւնը կրում է «Ակնարկներ Կովկասի պատմական տեղագրութեան եւ անցեալի մասին» վերնագիրը ու «Արքունի ճամբան Արտաշատից դէպի Արմաստիկա (Վրաստան) հռոմէական աշխարհաքարտէսի վրա» խորագիրը:

Այս կապակցութեան մէջ աւելցնենք անմիջապէս, որ Վիէննացիների վերոյիշեալ «Յիշատակարան»ի մէջ ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ ունին գերման ուրիշ հայագէտներ եւս — Սաքսոնիոյ դուքս պրոֆէսոր Մաքս, Կ. Ռոթ, Եւրինգէր, Բլայխշտայնէր, Լէման – Հաուպտ, Վասմէր, Բաումշտարկ, Մէրք եւ Շվեգէր: Դարձեալ, Ֆրայբուրգի համալսարանի եկեղեցական պատմութեան ուսուցչապետ՝ յիշեալ դուֆս Մաֆսի աշխատութեամբ լոյս է տեսել Ներսէս Լամբրոնացու երկու հեղինակութեանց՝ Առակաց եւ Ժողովող գրքերի մեկնութեանց գիտական հրատարակութիւնը, գերմաներէն թարգմանութեամբ մէկտեղ (1919—1926, 1929):

Հիւբշմանի աշակերտ եւ յաջորդ՝ Ներկայիս Ստրասբուրգի համալսարանի ուսուցչապետ Եօզէֆ Կարստ դեռ պատերազմից առաջ՝ ծանօթ էր իր հայագիտական երկու աշխատութիւններով, մէկը նուիրուած միջնադարեան հայ իրաւունքին, իսկ միւսը՝ միջին կամ Կիլիկեան հայերէնի քերականութեան: Այս վերջինը (1901 թ.) իր տեսակում մի եզակի եւ վերին աստիճանի գնահատելի գործ է, որի նմանը հայերէն լեզուով անգամ լոյս տեսած չէ մինչեւ օրս: Յետպատերազմեան շրջանում եւ ի մասնաւորի վերջին տարիներս, պրոֆ. Կարստ լոյս է ընծայել աշխատութիւններ, որոնք եւս անմիջապէս կամ միջնորդապէս շօշափում են հայագիտական հարցեր: Մասնաւոր յիշատակութեան արժանի է նրա «Հայ քանասիրութեան պատմութիւնը» աշխատութիւնը, որ տալիս է գրեթէ ստոյգ պատմութիւնը հայագիտութեան ծագման եւ զարգացման, Եւրոպայի մէջ: Նշանաւոր հայ մասնագէտների աշխատանքները եւս մոռացութեան չեն տրուած այդ տեղ: Կարստի միւս աշխատութիւնները, (Atlantis եւայլն) շատ լայն շրջանակ ունին, շօշափում են միջերկրականեան – փոքրասիական հնագոյն լեզուների եւ մշակոյթների խնդիրներ՝ այդ կապակցութեան մէջ առնելով նաեւ հայ լեզուն: Այստեղ նկատենք, որ հայերէնի վերաբերմամբ Կարստի տեսակէտը աւելի ու աւելի շեղւում է Հիւբշմանի եւ Եւրոպացի մասնագէտներից մեծ մասի որդեգրածից եւ թեքւում է դէպի Մառի ու այն լեզուագէտների տեսութիւնը, համաձայն որի՝ հայերէնը ոչ թէ զուտ հնդեւրոպական, այլ խառն լեզու է, իր մէջ պարունակում է բազմաթիւ ոչ – հնդեւրոպական տարրեր: Այդ ազդեցութիւնների (հայերէնի ծագման վրա) շրջանակը Կարստ շատ ընդարձակում է, տարածելով ոչ միայն հնագոյն փոքր Ասիա, այլ եւ Միջերկրականի հեռաւոր ու մօտաւոր երկիրները:

Գերման գիտնական Լեման – Հաուպտի անունը ծանօթ է հայ պատմասէր ու հնասէր շրջանակների: Հայաստանի նախաբնիկների՝ Խալդերի լեզուի ու մշակոյթի պատմութեան սակաւաթիւ մասնագէտ-

ներից մէկն է նա, ամբողջ Եւրոպայում։ Ներկայիս ուսուցչապետ է Ինսբրուկի (Ուիսոլ, Աւստրիա) համալսարանում։ Դեռ 1898–1899ին, Լեման – Հաուպտ գիտական – հետախուզական ճամբորդութիւն է կատարել դէպի Հայաստան, երբեմնի Ուրարտուն, ի մասնաւորի նրա հին մայրաքաղաք Վան։ Սհա այդ հետախուզական ձեռնարկի գլխաւոր արդիւնքն է՝ իր «Հայաստան երբեմն և այժմ» մեծածաւալ աշխատութիւնը, բաղկացած երկու հատորից։ Առաջին հատորը լոյս էր տեսել դեռ 1910ին, ասել է՝ ճամբորդութիւնից 11—12 տարի յետոյ միայն։

Պատերազմի եւ այլ խոչընդոտների պատճառով՝ այդ հոյակապ աշխատութեան երկրորդ հատորը լոյս տեսաւ շատ աւելի ուշ։ Բաժանուած է երկու դրքերի, ամէն մէկը՝ մի քանի հարիւր ընդարձակ էջերից։ Այս երկրորդ հատորի առաջին դիրքը լոյս տեսաւ 1926ին, իսկ երկրորդը՝ 1931ին։ Փաստօրէն, ուրեմն, Լեման–Հաուպտի «Հայաստան երբեմն եւ այժմ» գործը երեք խոշոր հատորներից է բաղկացած, բոլորն էլ՝ պատկերազարդ։

Առաջին հատորը նուիրուած է Ռուսահայաստանին, Պարսկահայաստանին, Հիւսիսային Միջագետքին եւ Հարաւային Հայաստանին՝ Տիգրիսի ակունքներին։ Երկրորդ հատորի առաջին դիրքը նուիրուած է Տաճկահայաստանի ուսումնասիրութեան, կեդրոն ունենալով Վան քաղաքը, իր հռչակաւոր սեպագիր արձանագրութիւններով, ինչպէս նաև Հիւսիսային Ասորեստանին, իսկ երկրորդ դիրքը՝ հին խալդերի և նրանց երկրի՝ Ուրարտուի (Նախահայաստանի) ուսումնասիրութեան։

Բնականաբար, մօտաւոր կերպով իսկ կարելի չէ այս կարճ տողերի մէջ զաղափար տալ Լեման–Հաուպտի գործի մասին։ Այսչափը ասենք, որ մեր կարծիքով աշխատութեան ամենաարժէքաւոր մասը այն հատուածներն են, որ վերաբերում են երբեմնի, այսինքն նախահայկական Հայաստանին՝ Հայերի–Ուրարտուին և նրանց ժողովուրդներին ու քաղաքակրթութեան։ «Այժմեան» Հայաստանին վերաբերեալ հատուածները գլխաւորապէս նկատի են առել հայ երկրի եւ ժողովրդի այն վիճակը, որ կար 1898–99ին, այսինքն դիտնական հեղինակի ճամբորդութեան եւ ստ տեղեան կատարած ուսումնասիրութեանց միջոցին։ Մի վիճակ, որ հիմնովին փոխուած է մեծ Լղեռնի հետեւանքով։ Այդ պարագան մինչեւ իսկ վարանման առիթ է տուել մի առ ժամ մեր հեղինակին — պահե՞լ արդեօք, երկրորդ և երրորդ դրքերի համար եւս, առաջինի վերտառութիւնը, թէ՞ փոխել։ Այս հանգամանքը նկատի ունենալով, այլեւ այսօրուան Հայաստանի մասին համառօտ ճշգրիտ տեղեկութիւններ տալու առաջադրութեամբ՝ Լեման – Հաուպտ ընդարձակ մէջբերումներ է անում Ֆր. Նանսէնի ծանօթ դրքից,

բայց նաեւ մեր « Այսօրեան Հայաստանը » վերնագրով մի համառօտ տեսութիւնից, լոյս տեսած 1927 թ. « Հայաստան » (գերմ.) անունով մի փոքրիկ ժողովածուի մէջ: Բայց, ինչպէս ասացինք, հատորի ամենակարեւոր մասը « Խալդերի ծագումը եւ մշակոյթը » ընդարձակ հատուածն է, որ գրաւում է գրքի 233 էջը եւ ներկայացնում է նիւթը, սպառիչ կերպով: Յաջորդ հատուածն եւս (էջ 687 — 833), որ քննութեան է առնում Քսենոֆոնի « Նահանջ Բիւրոց »ի ճամբան Հայաստանի մէջով (400 թ. Ք. ա.) հարաւից հիւսիս ուղղութեամբ, մինչեւ Տրապիզոն, մի որոշ չափով դարձեալ զբաղւում է խալդերով, աւելի ճիշդը՝ այդ հին ժողովրդի մնացորդներով, երբ նրանց երկիրը եկւոր արմէնների կողմից վաղուց արդէն գրաււել եւ Հայաստան անունն էր ստացել:

Հնարաւորութիւն չկայ այստեղ՝ յետպատերազմեան տարիներում գերմաններէն լեզուով լոյս տեսած, հայագիտական բոլոր հրատարակութիւնների թւումն անել: Յիշենք նաեւ ծանօթ դրամագէտ եւ էրմիտաժի թանգարանապետ Վասմէրի մի մենագրութիւնը՝ « Հայաստանի արաբ ոստիկանների ժամանակագրութեան » նուիրուած (Վիէնա 1931), այլեւ Հայդենբերգի « Հայ – Բիւզանդական յարաբերութիւնները » ուսումնասիրութիւնը (Միւնխէն, 1929), Սկանդինաւացի հայագէտ Պեդերսէնի « Հայեր » աշխատութիւնը՝ էբերտի « Նախապատմութեան հանրագիտարան » ժողովածուի մէջ, վերջապէս, երիտասարդ հայերէնագէտ Հ. Լեւիի մի հետազօտութիւնը Փիլոն Եբրայեցու մասին, նախնեաց հայ թարգմանութեան կապակցութեամբ: Սրանցից եւ ուրիշ հատորներից զատ՝ հայագիտական աշխատութիւններ եւ յօդւածներ կան լոյս տեսած արեւելագիտական այս կամ այն պարբերականում եւս:

Յատկապէս հայագիտութեան էր նուիրուած՝ Դոքտ. Կարլ Մոռթի խմբագրութեամբ լոյս տեսնող Armeniaca հանդէսը, որ, դժբախտաբար, միայն երկու թիւ ունեցաւ (1926 — 1927) եւ այնուհետեւ դադարի մատնուեցաւ: Նա աւելի լաւ ճակատագրի չարժանացաւ, քան դարուս սկզբին գերման հայագէտ Նիկ. Ֆինկի հիմնած « Հայագիտութեան Հանդէսը » — Zeitschrift fuer die armenische Philologie) Կ. Ռոթի « Armeniaca »ի մէջ ուսումնասիրութիւններ ունին՝ ինքը խմբագիրը, արեւելքի եւ ի մասնաւորի հայ արուեստի ծանօթ պատմաբան Ստրժիգովսկին եւ ուրիշներ:

Ստրժիգովսկին հեղինակութիւն է իր մասնագիտութեան մէջ: Ծանօթ է արդէն նրա տեսութիւնը Հայ արուեստի եւ մասնաւորապէս հայ ճարտարապետութեան մասին, համաձայն որի՝ վերջինս ունեցած է իր ազդեցութիւնը Արեւմուտքի ճարտարապետութեան վրա: Այդ

տեսութիւնը նա հիմնաւորել է բազմաթիւ ուսումնասիրութիւններով եւ մանաւանդ «Հայկական ճարտարապետութիւնը և Եւրոպան» երկհատոր հոյակապ աշխատութեամբ, որ լոյս է տեսել պատերազմից անմիջապէս յետոյ, 1918 թ. թէեւ արդիւնք պատերազմից առաջ երկու անգամ դէպի Հայաստան կատարած գիտական ճամբորդութեանց։ «Armeniaca» հայագիտակն հնդէսի պակասը որոշ չափով լրացնում է՝ միեւնոյն հրատարակչական տան (Asia Major, Լայպցիգ) կողմից հրատարակւող «Caucasica» կովկասագիտական հանդէսը, որ լոյս է տեսնում 1924 թուականից ասդին։ Հանդէսի մէջ տպւած եւ անմիջապէս կամ միջնորդապէս հայագիտական բնոյթ կրող ուսումնասիրութիւններից յիշատակենք այժմեան խմբագիր կովկասագէտ Գերհարդ Դէէտերսի մի ուշագրաւ ուսումնասիրութիւնը՝ «Հայերէն եւ Հարաւային կովկասերէն» վերնագրով (Caucasica, 1926 — 1927, գիրք Գ. եւ Դ.)։ «Հարաւային կովկասերէն» ասելով՝ հեղինակը հասկանում է վրացական կամ քարթվելական լեզուները՝ բաժանելով նրանց մի քանի խմբի։ Անժխտելի համարելով հանդերձ հայերէնի հնդեւրոպական բնոյթը, հեղինակն այն կարծիքն է յայտնում, թէ հայ լեզուի մէջ շատ տարրեր կան մտած Հայաստանի նախաբնիկների՝ Խալդեերի լեզուից, որոնք, իրենց կարգին, Դէէտերսի եւ ուրիշ շատերի կարծիքով, այժմեան կովկասեան ժողովուրդներին ցեղակից եղած են։ Հայերէնի եւ վրացերէնի ու քարթվէլական միւս լեզուների միջեւ եղած որոշ նմանութիւնները այդ եղանակով էլ բացատրւում են Դէէտերսի հետազօտութեան մէջ։ Մի ուրիշ գիտնական Հ. Իւնկեր, «Աւեստայի այբուբենը եւ հայ ու վրացական գրերի ծագումը» անունով հետազօտութեան մէջ (Caucasica, 1925 — 1926, գիրք Բ. եւ Գ.) ջանում է ցոյց տալ վերջիններիս կախումը առաջինից։

Մոռացութեան տալ պէտք չէ մեր մի քանի հին մատենագիրների գերմաներէն թարգմանութիւնները եւս, լոյս տեսած պատերազմից յետոյ։ Առաջ էլ նման աշխատանքներ կատարւած կային Գերմանիայում. Կորիւն, Փաւստոս, Բիւզանդ, Խորենացի, Եղնիկ, Յաճախապատում, Յովհ. Մանդակունի, Ասողիկ և մի քանի ուրիշ երկեր՝ վաղուց թարգմանւած էին գերմաներէն։ Մասնաւոր գնահատանքի արժանի էր եւ դեռ մինչեւ օրս էլ անգերազանցելի է մնում՝ Եղնիկի թարգմանութիւնը, կատարւած Շմիդի ձեռքով։ Յիշեալ գործերի թարգմանիչները, ինչպէս նաեւ առհասարակ հայ բանասիրութեամբ զբաղւող Գերման գիտուններից շատերը, նկատենք անցողակի, Գերմանիոյ կաթոլիկ գիտունների շարքին են պատկանում, առաւելապէս մեր եկեղեցական մատենագրութիւնն է նրանց հետաքրքրում։

Վերը խօսք արի Ներսէս Լամբրոնացու երկու գրւածքների թարգմանութեան եւ բնագիրների հրատարակութեան մասին, որ կատարել

է դուքս Մաքս, դարձեալ կաթոլիկ գիտնական եւ մասնագէտ եկեղեցական պատմութեան։ Թարգմանչական մի նոր գործ է յաջողցրել մի ուրիշ կաթոլիկ գիտուն հոգեւորական, որ մեռաւ մի երկու տարի առաջ—Սիմոն Վեբեր։ Հանգուցեալը դեռ պատերազմից առաջ լոյս էր ընծայել, «Արարատը Սուրբ Գրոց մէջ» անունով եւ հայագիտական մի քանի ուրիշ աշխատութիւններ։ Նրան ինք պարտական այժմ, մեր մի շարք մատենագիրների նոր թարգմանութիւնները, ամփոփուած երկու հատորի մէջ եւ դեռևզուած «Եկեղեցական Հայրերի մատենագրան» անունով ծանօթ շարքում (հատոր 57 եւ 58)։ Վեբերի թարգմանութիւնները կրում են «Հայ եկեղեցական հայրերի հատընտիր մատենագրութիւններ» ընդհանուր վերնագիրը (Միւնխէն, 1927)։ Առաջին հատորի մէջ զետեղուած են Եղնիկի, Կորիւնի եւ Յաճախապատումի, իսկ երկրորդի մէջ՝ Յովհ. Մանդակունու, Մամբրէ Վերծանողի եւ Եղիշէի երկու փոքր գործերի թարգմանութիւնները։ Ամբողջ ձեռնարկութեանը, այլեւ ամէն մի գործի թարգմանութեան կցուած են մատենագրական – քննական ներածութիւններ եւ ծանօթութիւններ, որոնք աւելի եւս բարձրացնում են ձեռնարկութեան արժէքը։

Այդ թարգմանութիւնները մի օժանդակ միջոց են՝ Հայոց հին մատենագրութեան ծանօթացման համար, գերման գիտական շրջաններում։ Մոռանալու չէ, որ բնագիրները իրենց կատարեալ հարազատութեամբ շատ քիչերին միայն մատչելի են։ Վերջապէս, օժանդակի դեր ունի նաեւ վիէննական Մխիթարեան Հ. Ինկլիզեանի մի գրքոյկը գերմաներէն լեզուով (1929), «Հայ Դպրութիւնը», որ մի կարճատօտ ակնարկ է հայկական հին մատենագրութեան վրա։

Այս կապակցութեան մէջ յիշատակութիւն անենք նաեւ հայագիտութեան ուսուցման մասին՝ Գերման համալսարաններում։ Թէեւ ամենից աւելի այս երկրում է մշակուել հայագիտութիւնը, սակայն՝ վերջինիս նուիրուած յատուկ ամբիոն երբեւէ գոյութիւն չէ ունեցած այս երկրում։ Բոլոր ծանօթ հայագէտները — Պետերմանից սկսած մինչեւ Հիւբշման — կա՛մ հնդեւրոպագէտներ են եղած եւ կա՛մ իրանագէտներ ու արեւելագէտներ։ Որպէս այդպիսիք էլ, ուրեմն կողմնակի կերպով միայն, ուսումնասիրել են հայ լեզուն եւ բանասիրութիւնը եւ այդ մարդին նուիրել մնայուն գործեր։

Հանգուցեալ Մարքվարտ առաջինը եւ միակն էր ամբողջ Գերմանիայում, որի համար հիմնուեցաւ (Բերլինի համալսարանում) մի առանձին ամբիոն՝ իրանական եւ հայկական բանասիրութեան յատուկ։ Ուրիշ խօսքով՝ հայ բանասիրութիւնը հաւասար դեռնի վրա դրուեցաւ իրանականի կողքին։ Եւ Մարքվարտ իր ուսուցչական ու գիտականմատենագրական գործունէութիւնը հաւասարապէս տարածեց մէկի եւ միւսի վրա։ Մարքվարտի յաջորդն է այժմ՝ նրա աշակերտ եւ —

հակառակ դեռ իր երիտասարդ տարիքին արդէն իսկ անուանի արեւելագէտի հռչակ վայելող պրոֆէսոր Շեդէր։ Այս ամառուան կիսամեակից սկսած՝ նա դասախօսում է նաեւ հայերէն (գրաբար)։ Անկասկած է որ՝ յանձին այդ երիտասարդ գիտնականի հայագիտութիւնը մի նոր եւ փայլուն ներկայացուցիչ պիտի ունենայ Գերմանիայում։ Բոլորովին վերջերս նրան յանձնուեցաւ նաեւ Բերլինի համալսարանին կից գտնուող Արեւելեան լեզուների Սեմինարի վերատեսչի պաշտօնը։ Այս տեղիւ տամ անցողակի, որ վերջին հիմնարկութիւնը արեւելեան կենդանի լեզուների մի վարժարան է, աւելի՝ գործնական առաջադրութեամբ։ 1926 թուականի ամարային կիսամեակից սկսած՝ այդտեղ աւանդւում է նաեւ հայերէն աշխարհաբար լեզուն, տողերս առորագրողի կողմից։ Չմոռնամ աւելացնել վերջապէս, որ ներկայ տարւայ ամարային կիսամեակից սկսած՝ հայերէն (գրաբար) աւանդւում է նաեւ Համբուրգի համալսարանում, դասախօս դոքտ. Բենֆէի կողմից։

⁂

Գերմանիայի և առհասարակ Եւրոպայի հայագէտները իրենց ուսումնասիրութեանց նիւթ դարձնում են, գրեթէ բացառաբար, մեր հին լեզուն եւ մատենագրութիւնը։ Վասնզի, այս վերջիններս ներկայացնում են ոչ միայն ինքնուրոյն գանձեր, այլեւ օժանդակ միջոց ընդհանուր լեզուաբանութեան եւ Հին Արեւելքի պատմութեան։ Յայտնի է արդէն, որ քրիստոնեայ Արեւելքի ազգերից հաւեւ մի քանիսին միայն յաջողւել է՝ առնդել սեփական գիր ու մատենագրութիւն։ Բոլոր միւսները ստիպուած են եղել տանել յոյն եւ մանաւանդ լատին լեզուի ու մատենագրութեան լուծը, ինչպէս որ ճիշդ կերպով արտայայտուում է Մարքվարտ։ Մեր նախնիք այդ քիչերից են եղել ահա, որ թօթափել են օտարի հողեկան լուծը եւ ստեղծել ազգային գիր ու գրականութիւն։

Արդէն խօսք արինք այն մասին, որ միջնադարեան հայ լեզուի եւ մատենագրութեան մասին շատ գնահատելի աշխատանքներ է կատարել Պրոֆ. Կարստ։ 1908 թ. էլ լոյս է տեսել Մխիթար Հերացուի գերման թարգմանութիւնն եւս դոքտ. Զայդէլի աշխատութեամբ։ Հայ միջնադարեան գեղեցիկ գրականութիւնը եւ մանաւանդ բանաստեղծութիւնը գրեթէ անծանօթ է մնացած Գերմաններին։ Զարմանալի էլ չէ այդ, քանի որ մե՛ր մէջ իսկ՝ վաղուց չէ որ ծանօթացում եւ գնահատւում է այն։ Թէեւ ոչ շատ, բայց եւ այնպէս՝ այդ մարդում եւս գործ կատարել է այսուհետ, յեսպատերազմեան տարիներին։ Այսպէս, Գերման բանաստեղծ Բեթգէի թարգմանութեամբ եւ «Հայ Սոխակը» վերնագրով՝ 1924ին լոյս է տեսել Նահապետ Քուչակի տաղաւորների ժողովածուն, շքեղ տպագրութեամբ։ Դժբախտաբար,

թարգմանությունը չէ կատարած հայերէն բնագրի, այլ՝ Ֆրանսերէն փոխադրության (Ա. Զոպանեանի) վրայից, գործի ներքին արժէքը տուժում է բնականաբար դրանից: Բեթգէի աշխատությունը նեղ իմաստով թարգմանություն էլ չէ իսկապէս, այլ մի տեսակ ազատ վերարտադրություն, որ ձգտում է տալ բնագրի ոգին ու ոչ թէ տառը: Եւ առհասարակ, Բեթգէն, որ արեւելեան ուրիշ աղգերի բանաստեղծությունները եւս գերմանացրել է, միշտ միեւնոյն կերպ է վարւում իր նիւթերի հետ: Այսպէս կամ այնպէս, չնորհակալության արժանի մի գործ է այդ: Գերման ընթերցողների լայն շրջանակներ հնարաւորություն ունին այդպիսով՝ անձամբ ծանօթանալու հայ բանաստեղծության ընտրեալ ներկայացուցիչներից մէկի ստեղծագործության: Եթէ աւելցնեմ այստեղ նաեւ այն, որ տողերս ստորագրողի աշխատությամբ վերջին տարիներս գերման մամուլի զանազան օրգաններում լոյս է տեսել մի շարք միջնադարեան հայ առակների գերմաներէն թարգմանությունը եւս, դժբախտաբար, կարելի չէ եղել այդ ամէնը եւ ուրիշները մի հատորի մէջ ամփոփել —, ներկայացրած կը լինինք Գերմանիայում մեր միջնադարեան գրականության շուրջը կատարած ամբողջ աշխատանքը:

Հայոց աշխարհաբար լեզուն ու նոր գրականությունը բոլորովին անտես արուած չեն եղել այստեղ: Այսպէս, դեռ անցեալ դարու 80ական թւականներին, ծանօթ հրապարակագիր Աբգար Յովհաննիսեանի խմբագրությամբ և հրատարակությամբ ու «Հայկական Գրադարան» անունով մատենաշարի մէջ լոյս են տեսել մեր մի քանի հեղինակների թարգմանությունները՝ Րաֆֆիի, Ռ. Պատկանեանի, Պռոշեանի եւ Սունդուկեանի: Նոյն շարքի մէջ մտցուել է նաեւ, հանգ. Գր. Խալաթեանի թարգմանությամբ, Սասմայ Ծռերի առաջին վարիանտի (Սրուանձտեանի) գերմաներէն թարգմանությունը: Գերմանացի Արթուր Լայստ, որ իր ողջ կեանքը Կովկասում անցկացրեց (Թիֆլիս), մի առանձին հատորիկով լոյս է ընծայել մեր նոր բանաստեղծներից (արեւելահայ եւ արեւմտահայ) ոմանց ընտիր ոտանաւորների թարգմանությունը: Մի ուրիշ հատորիկի մէջ նա ամփոփել է իր գրական – քննական ակնարկները նոյն նիւթի մասին: Յետոյ, գերման ծանօթ Ռէքլամի մատենաշարի մէջ տպել է (1909) Ա. Ահարոնեանի պատկերների և պատմուածքների մի փոքրիկ ժողովածուն, թարգմանությամբ Ագնէս Ֆինկի, քոյրը հանգուցեալ հայագէտի: Պրոֆէսոր Ֆինկ եւս, վաղաժամ մահացած այդ հանճարեղ լեզուաբանը եւ հայագէտը (Մարբվարտի նախորդը Բերլինի համալսարանում), որ Հայոց հին մատենագրության եւ լեզուի մասին մի քանի ընտիր աշխատություններ ունի, կազմել եւ հրատարակել է (1902), Ս. Կանայեանի աշխատակցությամբ, Արեւելահայ լեզուի

քերականութիւնը։ Նման մի ձեռնարկ ունի, գործնական ուսուցման համար, հանգ. Ֆ. Դիր. մի ուրիշ գերմանացի, Քայնց, կազմել է արեւմտահայ լեզուի Քերականութիւնը։ Կան եւ ուրիշ աշխատութիւններ, թէեւ ոչ շատ։ Հայաստանի եւ հայոց կեանքը ներկայացուած է եղած առաւելապէս՝ ուղեգրութիւնների մէջ։ Վերը խօսք արինք նշանաւորների մասին։

Յետպատերազմեան տարիներին, թէեւ աննպաստ պայմանների տակ, դարձեալ որոշ գործ կատարուած է՝ Հայը եւ Հայաստանը գերմանացիներին ծանօթացնելու համար։ Մեր բարեկամ հանգուցեալ Լեպսիուսի աշխատութեամբ և ջանքերով՝ 1919ին լոյս տեսաւ «Գերմանիա եւ Հայաստան 1914 — 1918 թ.» հատորը, Գերմանիոյ արտաքին նախարարութեան դիւանից քաղուած վաւերագիրների մի ժողովածու, որ առատ նիւթ է պարունակում Հայոց նորագոյն պատմութեան համար։ Արտաքին նախարարութեան պաշտօնական՝ մի քանի տասնեակ հատորներից բաղկացած վաւերագրային ծանօթ ընդարձակ հրատարակութիւնն եւս, նուիրուած 1871 — 1914 դարաշրջանին, մեզ հետաքրքրող փաստական նիւթեր է պարունակում. նմանապէս, Բերլինի համալսարանի պատմաբան և Թուսիոյ մասնագէտ պրոֆ. Հեօշի և բոլշևիկ պատմաբան (վախճանուած) Պոկրովսկիի հիմնած համանման հրատարակութիւնը։ Լեպսիուսի գրչի տակից ելած է (1919) կէս վաւերագրական մի ուրիշ հատոր, նուիրուած Հայոց մեծ Եղեռնին եւ «Հայ ժողովուրդի Գողգոթան» վերնագրով։ Մի քանի տարի գրուածքներով եւս Լեպսիուս ջանացել է Հայութեան սեւ վիճակը իրական լոյսի տակ դնել։ Իր հիմնած եւ այժմ էլ շարունակուող «Արեւելք» հանդէսի մէջ նրա եւ զանազանների գրչի տակից ելած բազմաթիւ յօդուածներ կան տպուած, վերջապէս, Հայը եւ Հայաստանը գերման ընթերցողներին ծանօթացնելու առաջադրութեամբ։

Լեպսիուսի ջանքերով է հիմնուած դարձեալ, պատերազմի նախօրէին, Հայագերման Ընկերութիւնը։ Թէեւ համեստ չափերով միայն, բայց եւ այնպէս՝ որոշ աշխատանք կատարել է նա, որ գնահատել պէտք է։ Յետպատերազմեան առաջին տարիներին՝ նա հրատարակել է իր պարբերական տեղեկատու թերթերը — մի տեսակ շարունակութիւն՝ 1914ին հիմնուած եւ, դժբախտաբար, միայն մէկ թիւ լոյս տեսած «Մեսրոպ» ամսաթերթի (հայերէն եւ գերմաններէն յօդուածներով)։ 1919ին՝ ընկերութեան ջանքերով եւ դոքտ. Ռոհրբախի (Լեպսիուսի մահից յետոյ՝ նախագահ Հայագերման ընկերութեան) խմբագրութեամբ լոյս է տեսել բաւական մեծածաւալ եւ պատկերազարդ մի հատոր՝ «Հայաստան» վերնագրով։ Աւելի ուշ, 1927 -ին, ընկերութիւնը լոյս է ընծայել մի ուրիշ գրքոյկ, դարձեալ «Հայաստան» վերնագրով եւ նման բովանդակութեամբ — պատմական, աշ-

խարհագրական, տնտեսական, մշակութային, վիճակագրական եւ այլն: Աչքաթող ենք անում մանր հրատարակութիւնները: Վերջապէս, այս մի քանի ամիսների ընթացքում, երբ անպատասխանատու եւ մանաւանդ անիրազեկ ու վատ իրազեկ «գիտնականների» ու յօդուածագիրների կողմից խիստ աննպաստ արտայայտութիւններ լսեցան հայերի մասին (մարդաբանական «ցեղակցութիւն» ... հրեաների հետ), Հայագերման ընկերութիւնը աշխատում է կրկին՝ ուր եւ որի առաջ որ անկ է՝ ճշմարտութիւնը երեւան բերելու համար:

Հայաստանի եւ հայ ժողովուրդի ներկան եւ իրական վիճակը եւրոպացիներին ծանօթացնելու գործում ահագին ծառայութիւն արաւ, վերջապէս, հանգուցեալ Ֆրիտեօֆ Նանսէնը, այդ մեծ բեւեռախոյզը եւ մարդասէրը: Յայտնի է, որ նա 1925ին Ազգերի Դաշնակցութեան կողմից Հայաստան ուղարկուեցաւ, գաղթականական գործով: Այդ ճամբորդութիւնից գոնէ մի հատիկ դրական գործ մնաց — Հայաստանին նուիրուած հատորը, ամենալաւերից մէկը, որ երբ եւ է գրուել է Հայաստանի եւ Հայերի մասին՝ մի օտար մարդու ձեռքով: Բաց ի նորվեգերէնից՝ աշխատութիւնը լոյս է տեսել նաեւ անգլիերէն, ֆրանսերէն եւ գերմաներէն, վերջինս՝ «Խաբուած ժողովուրդ» վերնագրի տակ: (1928 թ.. Լայպցիգ): Հատորը պարունակում է նաեւ ամփոփ ու ճշգրիտ ակնարկ հայ անցեալի վրա, սկզբից մինչեւ մեր օրերը: Աւելի լաւ աշխատութիւն քան այս՝ դժուար է յանձնարարել մի եւրոպացու, մօտաւոր ու ճշգրիտ գաղափար կազմել տալու համար Հայաստանի եւ Հայութեան մասին:

Գերմանացի կէս-համայնավար երիտասարդ գրող Արմին Վեգներ 1927 – ին Խորհ. Ռուսաստան, այնտեղից էլ Հայաստան կատարած իր ճամբորդութեան տպաւորութիւնները ամփոփել է մի առանձին հատորի մէջ, որի վերնագիրն է՝ «Հինգ մատներ դէմխոս վերեւ»: Յատուկ հատուածներ կան նուիրուած Հայաստանին: Գրուածքը մնայուն, գիտական արժէք չի ներկայացնում, տպաւորութիւնների ժողովածու է սոսկ, բայց ներշնչուած է ջերմ համակրանքով դէպ ի հայերը եւ Հայաստանը:

Գերման հրապարակագիր եւ գործիչ Հ. Ֆիրքիւխէր 1930ին լոյս ընծայեց մի գրքոյկ՝ «Հայաստանը 1915 թուականին» վերնագրով, ուր համառօտակի եւ վաւերագրերի հիման վրա ներկայացուած է Հայկական Մեծ Եղեռնը: Գրուած է տաք շնչով. բողոքի մի բուռն ճիչ է՝ ուղղուած «քաղաքակիրթ» աշխարհի դէմ, որ անկարեկիր մնաց Հայաստանի տառապանքների հանդէպ եւ անպատիժ թողեց պատասխանատուները:

Ծանօթ դանեմարքուհի օրիորդ Կարէն Եփիէ, որ իր ողջ կեանքը նուիրել է հայ որբերի եւ գաղթականների ցաւերը ամոքելու վանք պոր-

ծին, գերմաներէն լեզուով մի – երկու գրքոյկներ է հրատարակել։

Դարձեալ, Եփփէի կեանքը մի տեսակ վէպի նիւթ դարձրած մի ուրիշ աշխատութիւն դանեմարքացի բանաստեղծուհի Զիքի, թարգմանել է գերմաներէն։ Բաղմաթիւ իրական ու կենդանի էջեր է պարունակում նա հայ որբաշխարհի կեանքից, ոչ միայն եղերական եւ սրտաճմլիկ, այլ եւ հերոսական ու կաղդուրիչ։

Ի վերջոյ, յիշենք նաեւ Ֆրանց Վերֆէլի նորերս լոյս տեսած եւ «Մուսա Դաղի 40 օրը» վերնագրով երկհատոր մեծ վէպը, որի մասին բաւական գրուեց հայ թերթերում։

Քանի որ ներկայ տողերի նպատակն է՝ հայագիտութեան եւ հայ մշակոյթի շուրջը յետպատերազմեան Գերմանիայում կատարուած աշխատանքների ամփոփ պատկերը ներկայացնել, թող թոյլ տրուի աւելցնել նաեւ, որ այս յօդուածի հեղինակը եւս իր համեստ մասնակցութիւնն է բերել այդ գործին, գերման պարբերական մամուլի մէջ։ Թարգմանուած են մի քանի արձակ էջեր հայ նոր գրողներից, տպուել են բաւական թուով կտորներ հայ ժողովրդական բանահիւսութիւնից, Յովհ. Թումանեանի մշակած աւանդավէպերից շատերը լոյս են ընծայուել աղատ փոխադրութեամբ։ Յետոյ, բազմաթիւ յօդուածների միջոցով ջանք է թափուել՝ գերման ընթերցողների լայն շրջանակներին ծանօթացնելու հայ երկիրը եւ կեանքը, ժողովրդական սովորոյթները եւ այլն*)։

Ահա մօտաւոր պատկերը Գերմանիայում եւ գերմաներէն լեզուով հայ գիտութեան եւ մշակոյթի շուրջը կատարուած աշխատանքների, յետպատերազմեան շրջանում։

Բերլին

*) Պատմութեան համար արձանագրենք, որ հայերէն լեզուն Սեմինարի ծրագրի մէջ մտցուած է գլխաւորապէս մեր աշխատակից Դր. Ա. Աբեղեանի թափած ջանքերի շնորհիւ։ Դեռ 1925 թուին նա մի պատճառաբանուած յուշագիր էր ներկայացրել Պրուսիոյ կրթական նախարարին պրոֆ. Բեքէրին (այժմ մեռած)՝ հիմնաւորելով աշխարհաբար հայերէնի կարեւորութիւնը արեւելեան կենդանի լեզուների շարքում եւ նրա դասաւանդման անհրաժեշտութիւնը Սեմինարի մէջ, ի թիւս ուրիշ լեզուների։ Հանգուցեալ Մարբվարտի ջերմ յանձնարարական մի գրութիւնն եւս կցուած էր յուշագրին։ Նոյն իմաստով դիմում էին արել եւ պրոֆ. Ռադէն (Մարբուրգ) ու հանգուցեալ Լեպսիուսը։ Այս դիմումների հիման վրա Պրուսիոյ կրթական նախարարը որոշեց հայերէնը մտցնել Սեմինարի ծրագրի մէջ եւ դր. Ա. Աբեղեանին նշանակեց դասատու՝ յատկացնելով շաբաթական երեք ժամ։ ԽՄԲ.

ԱՐՇԱՄ ԽՈՆԴԿԱՐԵԱՆ

ՕՊՈԶԻՑԻԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

I

ՓՈԽԱՐՔԱՅԻ ՊԱԼԱՏԻՑ ԱՐԱՄԵԱՆՑԻ ՏՈՒՆԸ

2· ՀՈԿՏԵՄԲԵՐԻՑ ՅԵՏՈՅ

Բոլշեւիկեան յեղաշրջումը հիմնովին փոխեց Անդրկովկասում ստեղծուած դրությունը: Խզուեցան կապերը Պետերբուրգի հետ եւ ցամքեց ակն այն գաղափարախօսութեան, որ ուղղութիւն եւ բովանդակութիւն էր տալիս յեղափոխական կազմակերպութիւնների գործունէութեան: Այս վերջիններիս առաջ դրուեցան բոլորովին նոր խնդիրներ, միանգամայն տարբեր նրանցից, որոնք ծագել էին փետրուարեան յեղափոխութեան հետ ու նրա շնորհիւ: Դրա հետեւանքով էլ փոխուեցան ոչ միայն Անդրկովկասում գործող ուժերի փոխյարաբերութիւնները, այլ եւ նրանցից իւրաքանչիւրի գործելակերպն ու տեսակարար կշիռը:

Հոկտեմբերեան յեղաշրջման անմիջական հետեւանքն Անդրկովկասում եղաւ այն, որ այս ծայրերկիրը մնաց մենակ, ինքն իր ուժերին յանձնուած: Մեկնեց Կովկասից ռուս բանակը եւ վերջ դուաւ այն իրական ու բարոյական օժանդակութիւնը, որ ցոյց էր տալիս հսկայ Ռուսաստանը իր այս ծայրամասին: Օրեայ խնդիր դարձաւ ոչ թէ «յեղափոխութեան խորացումն եւ լայնացումը» Պետերբուրգի հետ ու նրա մեթոդներով, այլ ներքին կարգ ու կանոնի պաշտպանութիւնն ու պատերազմի հաշւեյարդարը միմիանակ, իր սեփական ուժերով:

Այս նոր կացութեան հանդէպ առաջինը իրենց շտկեցին վրաց սոցիալ-դեմոկրատները: Նրանք նախեւառաջ վերջ դրին մինչեւ այդ գոյութիւն ունեցող կառավարչական բլոկին, խզելով իրենց գործակցութիւնը սոցիալիստ-յեղափոխականների հետ: Այս կազմակերպութիւնը, Լենինի կատարած պեռական հարուածից յետոյ, կորցրել էր

այն երկու պատանդանները, որոնց վրա հիմնված էր նրա ուժն ու ազդեցութիւնը Անդրկովկասում: Դրանցից մէկն էր կովկասեան բանակը, իսկ միւսը՝ էսէռական Պետերբուրգը: Զրկւելով մէկից ու միւսից և չունենալով բաւականաչափ յենարան անդրկովկասեան զանգուածների մէջ՝ սոցիալիստ-յեղափոխականները դարձել էին «արհամարհելի մի քանակութիւն», որի հետ գործակցութիւնը այլևս որևէ շահ չէր ներկայացնում: Բացի այդ, չարունակելով հաւատարիմ մնալ փետրուարեան յեղափոխութեան սոցիալիստական գաղափարախօսութեան ու միջազգայնական գործելակերպին, նրանք պարզապէս դարձել էին անյարմար դաշնակիցներ վրացական սոցիալ-դեմոկրատիայի համար, որ արդէն արագութեամբ քայլում էր դէպի ազգայնական դիրքեր, դէն նետելով իր վրայից միջազգայնականութեան աւելորդ դարձած պաճուճանքները: Ինչ վերաբերում է Անդրկովկասի առաջ դրուած նոր խնդիրների լուծման, սոցիալիստ-յեղափոխականները առանձնապէս արժէք չէին ներկայացնում նաեւ այդ տեսակէտից:

Ոչ պատերազմի հաշուեյարդարման և ոչ էլ երկրի ներքին կարգի պահպանման ուղղութեամբ նրանք կարեւոր դեր կատարել չէին կարող, քանի որ, ինչպէս ասացինք, այլեւս իրական ոյժ չէին ներկայացնում Անդրկովկասում: Հարկաւոր էր, ուրեմն, ստեղծել նոր «կօալիսիոն» ուրիշ ուժերի հետ, որին եւ դիմեցին վրացի սոցիալ-դեմոկրատները:

Ռուսական տարրի հեռանալուց յետոյ, Անդրկովկասում մնում էին տեղական երեք գլխաւոր ազգութիւնները՝ վրացիները, հայերը եւ ադրբէջանցիք, որոնք, «մէկ ազգ-մէկ կուսակցութիւն» սկզբունքի շնորհիւ, կազմակերպւել էին երեք ազգային կուսակցութիւնների մէջ՝ Սոցիալ-Դեմոկրատիա, Դաշնակցութիւն և Մուսաւաթ: Սրանք էին, որ ի մի բերւելով՝ պէտք է հիմ ծառայէին նոր իշխանութեան կազմակերպման համար:

Սոցիալ-Դեմոկրատիան, որ դեռ մի քանի ամիս առաջ ամէն տեսակ միջոցներով էր դիմում եղակի դիրքեր ձեռք ձգելու համար, այժմ արդէն յօժարում է բաժանել իշխանութիւնը միւս տարրերի հետ եւ այդ գլխաւորապէս այն պատճառով, որ այդ օրերին իշխանութիւնը ոչ թէ միառքի հանապարհ էր, այլ ծանր ու դժւարին մի լուծ, որից խուսափում էին բոլորը: Եւ մտնելով «կօալիսիոնի» մէջ միւս ուժերի հետ, սոցիալ-դեմոկրատիան այլ եւս չէր քննում, թէ նրանք ո՛րչափով զտարիւն սոցիալիստներ ու միջազգայնականներ են եւ առանց այլեւայլութեան գնում է գործակցելու ոչ միայն «մանր-բուրժուական» Դաշնակցութեան, այլ նաեւ «ֆէոդալական» Մուսաւաթի հետ:

Բայց այս զիջումը աւելի շուտ սկզբունքային էր, քան իրական: Անգամ այս շրջանում վրացական սոցիալ-դեմոկրատները պահեցին իրենց ձեռքում խմբավարի փայտը եւ ղեկավարեցին ու ուղղութիւն տուին Անդրկովկասի ողջ քաղաքականութեանը, ինչպէս ներքին, նոյնպէս եւ արտաքին ճակատների վրա: Նրանք հանդիսացան նախաձեռնողներ ու հեղինակներ այնպիսի ծանրակշիռ ակտերի, ինչպէս Անդրկովկասի անկախութեան հռչակումը եւ ապա՝ ազգային երեք հանրապետութիւնների կազմակերպումը՝ այդ միացեալ հանրապետութեան փլատակների վրա: Դարձեալ նրանք էին, որ ղեկավարեցին յեղափոխական մարմինների գործունէութիւնը, երբ այս վերջինները պէտք է ճշտէին իրենց դիրքը Պետերբուրգում կատարուած բոլշեւիկեան յեղաշրջման հանդէպ, ինչպէս եւ նրանց գործօն մասնակցութեամբ էր, որ հաշուեյարդարի ենթարկուեցաւ կովկասեան ճակատում մղուող պատերազմի հետ կապուած հարցերը:

Իրենց այս առաջնակարգ դիրքի դիտակցութիւնն ունէին եւ այժմ էլ ունին վրացական սոցիալ-դեմոկրատները եւ երբեք էլ չեն փորձում քօղարկել կամ թաղցնել այն: Մի պաշտօնական հրատարակութեան մէջ ահա թէ ինչ են գրում նրանք այդ մասին: «Պատմութիւնը վրացական դեմոկրատիայի վրա դրեց Անդրկովկասի դեմոկրատական ուժերի հաւաքման խնդիրը յեղափոխութեան օրերին: Եւ նրա ուսերի վրա ընկաւ իր ամբողջ ծանրութեամբ Անդրկովկասի քաղաքական կազմակերպութեան գործը Ռուսաստանում կատարուած բոլշեւիկեան յեղաշրջումից յետոյ, երբ խզուեց Անդրկովկասի կապը հիւսիսի հետ, վրացական դեմոկրատիային վիճակուեց իր վրա առնել նախաձեռնութիւնն այն բոլոր քայլերի, որոնք, նրա համոզումով, անհրաժեշտ էին ոչ միայն Վրաստանի, այլ նաեւ ամբողջ երկրի փրկութեան համար»*):

Ի՞նչպէս կարողացան վրացիները ապահովել իրենց համար այս ղեկավարող դիրքը անդրկովկասեան գործերի մէջ: Շատ հասարակ ձեւով: Նրանք օգտագործեցին հայ-թաթարական ներհակութիւնները, որոնք այդ ժամանակ արդէն ընդունել էին ազգամիջեան ընդհարումների բնոյթ եւ, հաղնելով հաշտարարի ու միջնորդի ձեռնտու պատմուճանը, նոյն իսկ երկու պայքարող կողմերի (Դաշնակցութիւն եւ Մուսաւաթ) բարեհաճ ցանկութեամբ գլուխ կանգնեցին Անդրկովկասի միացեալ իշխանութեան (Կոմիսարիատ եւ Սէյմ) ու վարեցին երկրի ողջ քաղաքականութիւնը:

Այս երկրորդ շրջանում ունեցած իրենց գործունէութեան մէջ

*) "Документы и матеріалы по внѣшней политикѣ Закавказья и Грузіи". 1919 г. Тифлис.

վրացի սոցիալ-դեմոկրատները շատ աւելի վրան բաց ձեւով հանդէս եկան իրենց ազգային շահերի պաշտպանների դերում, քան առաջ: Դրա գլխաւոր պատճառն, ինչպէս ասացինք, այն էր, որ ռուսական յեղափոխութեան պարտութիւնից յետոյ նւաղել էր դերն այն ուժի, որ թէ՛ Պետերբուրգում (սոց.-յեղափ. եւ սոց.-դեմ.) եւ թէ Անդրկովկասում (սոց.-յեղ.) դասում էր անջատողական եւ կենտրոնախոյս շարժումները եւ յեղափոխութեան զարգացման ընթացքը պահում էր համապետական հունի մէջ: Ռուսաստանի քաշւելուց յետոյ, Անդրկովկասը բռնեց մերկապարանոց ազգայնացման ուղին, որի անմիջական հետեւանքը եղաւ ազգութիւնների պայքարը յանուն իրենց շահերի: Այդ շահերը, ինչպէս յայտնի է, ներհակ էին միմեանց, եւ նրանց լաւագոյն ապահովումը պայմանաւորւում էր մասնակցութեան այն բաժինով, որ այս կամ այն ազգային խմբակցութիւնը ունէր երկրի իշխանութեան մէջ: Այստեղից դժւար չէ ենթադրել, թէ ինչ կատաստրոֆիկ նշանակութիւն ունեցաւ հայերի համար Անդրկովկասում ստեղծւած այս նոր դրայվիճակը, երբ երկրի բարձրագոյն իշխանութիւնը համառուսական պետականութիւնը ներկայացնող չեղոք տարրի ձեռքից անցաւ պայքարի մէջ մասնակցող կողմերից մէկի՝ վրացիների ձեռքը: Հետագայ բոլոր դժբախտութիւնները, որ փրթեցան հայ ժողովրդի գլխին, հէնց այստեղից է որ սկսւեցին:

Ի՞նչ դիրք բռնեցին հայ սոցիալ-դեմոկրատները այս նոր կացութեան եւ մասնաւորապէս իրենց «մայր» կուսակցութեան վերը մատնանշած նոր քաղաքականութեան հանդէպ:

Ամենակարեւոր խնդիրների նկատմամբ նրանք եղան ընդդիմադիր իրենց կուսակցութեան ներսում: Որոշ հրջանում եւ որոշ խնդիրների նկատմամբ այդ ընդդիմադրութիւնը արտայայտւեց կուսակցական կարգապահութեան խախտման ձեւով եւ ընդունեց հրապարակային ելոյթի բնոյթ: Այսպէս, օրինակ, Պայքար թերթը, որ սոց.-դեմոկրատական օրգանն էր, տպագրեց այդ հրջանում մի շարք քննադատական յօդւածներ իր կուսակցութեան ղեկավարների դէմ, նրանց Զխենկելու վարչապետութեան նկատմամբ բռնած դիրքի համար: Նոյն թերթում կան արձանագրւած նաեւ ուրիշ ելոյթներ, որոնց հեղինակները դէմ են արտայայտւում կուսակցութեան որդեգրած տեսակէտներին այս կամ այն հարցի նկատմամբ: Բայց պէտք է ասել, որ այս ամենը, ընդհանուր առմամբ, կրում է մասնակի բնոյթ: Դրանք փոքրիկ ըմբոստութիւններ էին, որ գսպւում էին վրացի ղեկավարների կողմից, եւ հայ սոցիալ-դեմոկրատների գործունէութիւնը նորից դրւում էր կուսակցութեան որդեգրած քաղաքականութեան ընդհանուր հունի մէջ: Այսպէս էր գոնէ համառնդրկովկասեան գործունէութեան արսպարիզում: Ինչ վերաբերում է

զուտ ազգային (հայկական) հարցերին, թեև էր թէ դրանց նկատմամբ հայ սոցիալ-դեմոկրատները օգտուում էին գործունէութեան որոշ ազատութեամբ, որի սահմանները ստուգիւ ճշտել դժուար է:

Բոլշեւիկեան յեղաշրջման շնորհիւ Անդրկովկասում ստեղծուած նոր կացութիւնը փոփոխութիւն մտցրեց նաեւ Դաշնակցութեան գիրքի ու դերի մէջ: Վերացուեց նախ եւ առաջ անդրկովկասեան գործերի մէջ մասնակցելու այն աթգելքը, որ վերարաբեան յեղափոխութեան սկզբնական շրջանում դրուեց այդ կուսակցութեան առաջ՝ նրա «ազգայնական» ու «ոչ-սոցիալիստական» լինելու պատրուակով: Վրացական սոցիալ-դեմոկրատիան, որ նիւթողն էր այդ մեքենայութեան, այժմ ինքն էր դարձել բացարձակօրէն ազգային կազմակերպութիւն եւ չէր կարող այլ եւս դիմել պայքարի նման զէնքերի: Միւս կողմից, ինքը՝ Դաշնակցութիւնը, որ ինչպէս տեսանք, սկզբում առանձին հետաքրքրութիւն չէր ցուցահանում դէպի լայն, անդրկովկասեան գործունէութիւնը, այժմս մասնաւոր նախանձախնդրութիւն էր ցոյց տալիս դէպի իր իրաւունքները, պատշաճ տեղ պահանջելով երկրի բարձրագոյն մարմինների մէջ՝ ինչպէս, օրինակ, Կոմիսարիատ, Սէյմ եւ անդրկովկասեան կառավարութիւն:

Այս ուղղութեամբ ձեռք բերուած նրա նուաճումը, ինչպէս ասացինք, ունեցաւ գերազանցապէս բարոյական նշանակութիւն, քանի որ իրականի մէջ Դաշնակցութիւնը համակովկասեան գործերի նկատմամբ երբեք չկարողացաւ ապահովել իր համար վրացի մենշեւիկներին հաւասար դեր: Աւելին՝ նա չկարողացաւ արժեցնել իր խօսքը եւ ոչ մէկ քիչ թէ շատ կարեւոր խնդրի լուծման մէջ, որը ամէն անգամ տեղի ունեցաւ վրացի մենշեւիկների նախաձեռնութեամբ եւ նրանց ընդունած որոշումների համաձայն:

Բոլշեւիկեան յեղաշրջման օրից մինչեւ 1918 թուի մայիսի վերջը երեք գլխաւոր խնդիրներ դրուեցան Անդրկովկասի առջեւ՝ վերաբերմունք խորհրդային իշխանութեան հանդէպ, 2) Անդրկովկասի անկախութեան հռչակում եւ 3) Ազգային հանրապետութիւնների ստեղծում:

Այդ երեք խնդիրներից առաջինը՝ վերաբերմունք դէպի բոլշեւիկեան յեղաշրջումը (հոկտ. 26)՝ լուծուեց մենշեւիկների և էսէռների բլոկի ժամանակ եւ այս վերջինիս միջոցով: Դաշնակցութիւնը չմասնակցեց այդ հարցի քննութեան ու քէարկման եւ յետոյ միայն, անջատ ելոյթի ձեւով, միացաւ ընդունուած որոշման: Ինձ յայտնի չէ, թէ Դաշնակցութեան ո՞ր մարմնի մէջ քննուեց այս հսկայական նշանակութիւն ունեցող հարցը եւ ո՞ր չափով միակամ ու վերջնական եղաւ այդ մասին ընդունուած որոշումը: Գիտեմ միայն, որ երբ հետագայում, «Անդրկովկասի ընդհանուր կոմիսար» Ստ. Շահումեանի

Թիֆլիսում երեւան գալու հետեւանքով, խորհուրդների հանդէպ Անդրկովկասի ունենալիք վերաբերմունքի հարցը էլի մէկ անգամ ու աւելի իրական ձեւով դրուեց օրւայ կուսակցութիւնների առաջ, Դաշնակցութեան դիրքը եղաւ առ այդ բաւականին հակասական։ Անդրկովկասեան Կոմիսարիատում, յանձին իր պատասխանատու ներկայացուցիչների (Բիւրոյի անդամները), նա միացաւ մենշեւիկներին ու էսէռներին եւ վաւերացրեց Ստ. Շահումեանի ձերբակալման մասին տրուած հրամանը, իսկ իր մի քանի այլ պատասխանատու գործիչների ձեռքով (նոյնպէս Բիւրոյի անդամ) նա կազմակերպեց նոյն Ստ. Շահումեանի անլեգալ բնակութիւնը Թիֆլիսում եւ ապա նրա ապահով փախուստը դէպի Բաքու։

Շատերը հակամէտ են այս գործելակերպի մէջ տեսնելու ինչ որ «բարձր դիւանագիտութիւն»։ Ես կարծում եմ աւելի ճիշտ կը լինէր հետեւեալ պարզ բացատրութիւնը։— Դաշնակցութիւնը չունեցաւ յատուկ ու հաստատուն տեսակէտ այն մասին, թէ ո՞րն էր աւելի ձեռնտու հայ ժողովրդի շահերի համար՝ Անդրկովկասի խորհրդայնացո՞ւմը (Բաքուի օրինակով), թէ՞ նրա ինքնուրոյնումը հայ-թաթարա-վրացական խառն իշխանութեան գլխաւորութեամբ։ Չկարողանալով դուրս գալ այս երկընտրանքից՝ Դաշնակցութիւնը փորձեց իր նաւը մերթ մէկ եւ մերթ միւս ափը թեքելու, ի վերջոյ այն մենշեւիկեան նաւահանգիստը տանելու պայմանով։

Աննշան եղաւ Դաշնակցութեան դերն ու տարօրինակ նրա դիրքը նաեւ երկրորդ խնդրի՝ Անդրկովկասի անկախութեան հարցի լուծման մէջ։ Այս ծրագիրը առաջ քաշեց թաթարների ու վրացիների կողմից, տարբեր մեկնակէտներով։ Թաթարներին հետաքրքրում էր Անդրկովկասի անկախութիւնն այն չափով, ինչ չափով որ դա նշանակում էր անջատում Ռուսաստանից։ Այս գործը նրանք՝ այդ հեռուն նայող ու վերին աստիճանի զգուշաւոր քաղաքագէտները՝ ուզում էին անպատճառ գլուխ հանել վրացիների ու հայերի մեղսակցութեամբ, որից յետոյ դէպքերի ընթացքը նրանց համար պարզ էր՝ Թուրքիան դալու էր Անդրկովկաս։

Վրացիները Անդրկովկասի անկախութեան ծրագիրն առաջ քաշեցին այն սին յոյսով, որ նախ՝ այդ կը դիւրացնէ հաշտութիւնը Թուրքիայի հետ եւ երկրորդ՝ վերջ կը տայ հայերի ռուսական եւ թաթարների թուրքական օրիենտասիոններին ու կովկասեան երեք ազգութիւններին կը միացնէ սեփական, անդրկովկասեան հայրենիքի դաղափարով։

Հայերը սարսափում էին թաթարների ծրագրների իրականացման հեռանկարից եւ միւս կողմից չէին բաժանում նաեւ վրացիների վերոյիշեալ միամիտ յոյսերը, որովհետեւ շատ լաւ գիտէին, որ

կովկասեան թաթարների վնասածը ոչ թէ անկախ հայրենիքն է՝ այն էլ հայերի ու վրացիների հետ, այլ Թիւրքիոյ դերիշխանութիւնը: Բացի այդ, առաջնորդելով ինքնապաշտպանութեան բնազդով՝ հայ ժողովուրդը նոյնպէս չէր ուզում բաժանուել Ռուսաստանից: Այսպիսով, չկար մի բանաւոր պատճառ, որ ստիպէր հայ ժողովրդի մեծամասնութիւնը ներկայացնող կուսակցութեանը առաջ քաշել Անդրկովկասի անկախութեան ծրագիրը: Մնում էր, որպէս «ելք», հին տակտիկան՝ գնալ դէպքերի յետեւից, ինչ որ եւ այնպէս «փայլուն կերպով» կատարեց Սէյմում Դաշնակցութեան անունով Յ. Քաջազնունին: «Յուզած, մազերը ցրիւ՝ բարձրացաւ ամբիոն ու կարդաց. « Պարոնայք, Սէյմի անդամներ: Դաշնակցութեան փրակցիան՝ գիտակցելով շատ պարզ այն մեծ պատասխանատուութիւնը, որ առնում է իր վրա այս պատմական վայրկեանին, ՄԻԱՆՈՒՄ է ինքնուրոյն անդրկովկասեան պետութեան յայտարարութեան»*):

Երրորդ խնդրի՝ Անդրկովկասի բաժանման վրա աւելորդ եմ համարում կանգ առնել, քանի որ այդ պատմութիւնը քաջածանօթ է բոլորին: Վրացի Զ. Աւալովը իր յայտնի դրքի մէջ տուել է «ամենայն անկեղծութեամբ» նրա մանրամասնութիւնները, որից մենք տեղեկանում ենք, որ անդրկովկասեան «միացեալ» քաղաքականութեան այս վերջին գործողութիւնը նոյնպէս բեմադրուել ու խաղացուել է բացառապէս վրացի սոցիալ-դեմոկրատ դերակատարներով: Հայ ղեկավարների — դաշնակցական — դերը այս յոյժ կարեւոր հարցի լուծման ժամանակ եղել է շատ ողորմելի:

Կայլո՞ն, արդեօք, ճակատագրօրէն ճախորդ այս գործունէութեան համար նաեւ առարկայական պատճառներ, թէ՝ բոլոր պատճառներն էլ ենթակայական էին: Ճիշտ չէր լինի, անշուշտ, երկու տասնեակից աւելի տարիներ գոյութիւն ունեցող զանգուածային մի կազմակերպութեան որոշ ասպարէզում ունեցած անյաջողութիւններն ամբողջովին վերագրել ենթակայական պատճառների: Ինչպէս որ պտմական սխալը իր տեւական յարատեւման հետեւանքով վեր է ածւում պատմական օրինաչափութեան, այնպէս էլ ենթակայական բնոյթ ունեցող գործօնը, տարիների ընթացքում ազդելով դէպքերի շղթայի վրա, ի վերջոյ դառնում է այդ շղթայի վերջին օղակների նկատմամբ առարկայական պատճառ: Դաշնակցութեան կազմակերպական ձեւը (ազգային ինքնամփոփ շրջանակ), նրա ուժերի եւ ուշադրութեան կենտրոնացումը մէկ ուղղութեամբ (Տաճկահայաստան), պայքարի իւրայատուկ ու միակողմանի մեթոդները (պարտիզանականութիւն, ֆիդայականութիւն, տերորիզմ), քամահրանքը

*) Ս. Վրացեան.— Հայաստանի Հանրապետութիւն, էջ 86:

զէպի իր անդամների ու նոյն իսկ ղեկավարների տեսական պատրաստութիւնը եւ դրա հետեւանքով ընկերային բարդ երեւոյթների էութիւնն ըմբռնելու ու նրանց ապագայ զարգացման ընթացքը կանխատեսելու անվարժութիւնը,— ահա այն բոլոր ենթակայական յատկութիւնները, որոնք դարձան հետագայում առարկայական պատճառներ նրա անդրկովկասեան գործունէութեան անյաջողութեան: Դաշնակցութիւնը, վերը մատնանշած պատճառների հետեւանքով, անհարազատ, անվարժ ու խորթ ղգաց իրեն այն միջավայրում, որի մէջ նա ստիպուած էր գործել և, որ ամենէականն է, չկարողացաւ միասնական տեսակէտ մշակել ոչ միայն Անդրկովկասում զարգացող իրադարձութիւնների, այլ նոյն ինքն հիմնական պրոբլեմի՝ ռուս յեղափոխութեան մասին: Պատմում են, որ նրա հանրաճանաչ պարագլուխը՝ Ռոստոմը խորը յուսաբեկութեամբ է ընդունել փետրուարեան յեղաշրջման առաջին լուրը, մինչդեռ կուսակցական շարքերն ու ղեկավարների մեծ մասը ծափ էին տալիս ու ծնծղայ խփում: Տեսակէտների այս տարբերութիւնը շարունակւեց, ինչպէս ասացինք, նաեւ անդրկովկասեան գործերի ու խնդիրների վերաբերմամբ: Մենք վերը տեսանք, որ Դաշնակցութեան շարքերում միահամուռ չէր կարծիքը «սովետների» նշանակութեան, ինչպէս եւ յեղափոխական կազմակերպութիւնների մէջ մասնակցութիւն բերելու խնդրի մասին: Տարակարծութիւններ առաջ եկան նաեւ երկրորդ շրջանում եւ յատկապէս Սէյմում ու անդրկովկասեան կառավարութեան մէջ տարուող քաղաքականութեան շուրջը: Դէպքերի զարգացման ամենալարուած պահին՝ Կարսի անկման ու Զխենկելու իշխանութեան գլուխ կանգնելու ժամանակ տեսակէտների տարբերութիւնները Դաշնակցութեան ղեկավար շրջաններում վերածւեցան սուր հակամարտութեան, որի մի արտայայտութիւնն եղաւ Զխենկելու դէմ — պարտիզանական կարգով — կազմակերպւած անյաջող մահափորձը:

Տարբեր էր, սակայն, պատկերը այն գործունէութեան, որ նոյն այդ ժամանակ ցոյց էր տալիս Դաշնակցութիւնը ազգային շրջանակում: Բոլշեւիկեան յեղաշրջումից յետոյ է՛լ աւելի թուլացաւ անդրկովկասեան կենտրոնական իշխանութիւնների հեղինակութիւնը եւ դրա փոխարէն աճեց Ազգային Խորհուրդների ազդեցութիւնը իրենց ենթակայ շրջանների վրա: Մասնաւորապէս ընդլայնւեցաւ Հայոց Ազգային Խորհրդի գործունէութեան շրջանակը, որի մէջ մտնում էին ոչ միայն քաղաքացիական, այլ, որ գլխաւորն է, նաեւ զինւորականի գործերը: Դաշնակցութիւնը, ղեկավար դիրք գրաւելով Ազգային Խորհրդում, տուն ու ուղղութիւն տւեց նրա ամբողջ գործունէութեան: Այստեղ նա զգաց իրեն, որպէս ձուկը ջրում եւ ամենածանր պահերին մնաց դիրքերի վրա ու պատասխանատու դե-

րի մէջ։ Մասնաւորապէս Երեւանի շրջանում նա ոչ միայն գիտցաւ թէ ի՞նչ է ուզում, այլ, հակառակ Սէյմի ու նրա կառավարութեան, կարողացաւ նաեւ իր ուզածները իրագործել։ Իմ բարոյական եւ ընկերային ըմբռնումները չեն հաշտւում այն ամենի հետ, ինչ որ կատարուեց այդ ժամանակ Արամ ու Դրոյի ձեռքով Երեւանի շրջանում, բայց այդ ինձ չի խանգարում ասելու, որ նրանք գործեցին, հաւատալով իրենց կատարածի օգտակարութեան եւ այդ պատճառով էլ նրանց կամքն եղաւ անները ու սուրը՝ հատու։

Անցնելով այժմ սոցիալիստ-յեղափոխականներին, պէտք է ասել, որ բոլշեւիկների կատարած յեղաշրջումը ամենից աւելի ծանր անդրադարձում ունեցաւ մեր կուսակցութեան վրա։ Ինչպէս վերը մատնանշեց, մեր անդրկովկասեան կազմակերպութիւնը զրկուեց իր երկու կարեւոր յենարաններից՝ կովկասեան բանակից եւ էսէռական Պետերբուրգից։ Դրանցից առաջինը մեզ համար իրական ուժի աղբիւր էր, իսկ երկրորդը՝ բարոյական։ Ուժի ու աղդեցութեան այս նեազումի անմիջական արդիւնքն եղաւ մեր կազմակերպութեան գների ու դիրքի փոփոխութիւնը։ Հոկտեմբերից յետոյ Անդրկովկասում մենք դադարեցինք դեկավարող կուսակցութիւն լինելուց ու դարձանք ընդդիմադիրներ ուժերի նոր դասաւորութեան հետեւանքով կազմուած իշխանութեան հանդէպ։ Փոփոխութիւնը տեղի ունեցաւ ամբիճանաբար, կարելի է ասել կովկասեան բանակի «դէմքի տուն» կատարած նահանջին համընթաց։ Առաջին շրջանում, երբ Անդրկովկասը դեռ եւս ամբողջովին չէր պարպուել ռուսական զօրքերից, դեկավար կենտրոնի մէջ տեղի ունեցած փոփոխութիւնը կրեց մասնակի բնոյթ։ Կազմուեց Անդրկովկասեան Կոմիսարիատ, կառավարական իրաւունքներով, բայց նա համարուեց պատասխանատու բանուորական, զինուորական եւ գիւղացիական խորհուրդների Երկրային Կենտրոնի առջեւ։ Բայց կոմիսարիատը արդէն կազմուեց մինչեւ այժմ գործող սկզբունքի խախտումով։ Նրա մէջ մտան եւ ուրիշ տարրեր, նոյն իսկ աղդութիւնների ներկայացուցիչներ։ Շուտով պարզուեց նաեւ, որ այդ նոր իշխանութեան պատասխանատուութիւնը Երկրային Կենտրոնի առաջ զուրկ է իրական բովանդակութիւնից։

Հետեւեալ շրջանում, երբ գումարուեց Սէյմը, նա դարձաւ արդէն անդրկովկասեան իշխանութեան միակ աղբիւրը, եւ յեղափոխական կազմակերպութիւնները (Երկրային Կենտրոն) զրկուեցին իրենց դեկավար դերից ու դիրքից։ Այդ միջոցին տեղի ունեցաւ նաեւ Անդրկովկասի անկախութեան հռչակումը, որից յետոյ մեր կուսակցութիւնը վերջնականապէս խզեց իր բոլոր կապերը վրաց մենշեւիկների հետ, դուրս եկաւ կառավարական կոալիցիոնից եւ, յանձինա

Սէյմի իր վոքրաթիւ հաւուածն, դարձաւ անհաշտ ընդդիմադիր օրուայ կառավարութեան ու տիրող ռեժիմի հանդէպ:

Որոշ փոփոխութիւններ առաջ եկան նաեւ մեր կուսակցութեան անձնական կազմի մէջ: Ազգայնական սկզբունքի յաղթանակն ու տիրապետութիւնն Անդրկովկասում անհետեւանք չանցաւ մեզ համար: Մեր վրացի ընկերների մեծ մասը, դուրս եկաւ անդրկովկասեան մեր կազմակերպութիւնից ու կազմեց վրացական սոցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւն: Այսպիսով էսէռական կազմակերպութիւնը մնաց փաստօրէն հայերի եւ ռուսների ձեռքին:

Այս հանգամանքը ունեցաւ իր ազդեցութիւնը նաեւ կուսակցութեան գաղափարախօսութեան ու գործելակերպի վրա: Անհետօրէն չքացան այն պատրանքները, որ մեր ռուս ընկերները ունէին մի ժամանակ վրաց սոցիալ-դեմոկրատների «ինտերնացիոնալիզմի» մասին: Նրանք տեսան — դժբախտաբար բաւական ուշ — որ նոյն իսկ այդ սոցիալ-դեմոկրատիան քացառութիւն չէ կազմում «մէկ ազգ մէկ կուսակցութիւն» սկզբունքից եւ, հակառակ նրան, որ կազմակերպօրէն համառուսական բնոյթ է կրում, ըստ էութեան նա ազգային մի կուսակցութիւն է, իսկ եւ իսկ այնպէս, ինչպէս Դաշնակցութիւնը եւ Մուսաւաթը:

Սակայն, հարցը սրանով չփակւեց: Ասուած է, որ ինչքան աւելի ուժեղ է սէրը, այնքան աւելի սաստիկ է լինում նաեւ թշնամանքը՝ հիասթափութիւնից յետոյ: Եւ վրաց սոցիալ-դեմոկրատիան՝ մեր երէկւայ զինակիցը, դարձաւ մեր կուսակցութեան համար այն դիխաւոր հակառակորդը, որի դէմ նա պայքարեց այս եւ հետագայ շրջանում իր ձեռքի տակ եղած բոլոր միջոցներով: Անշուշտ, այստեղ դեր էր խաղում՝ վերոյիշեալ հոգեբանական ազդակից աւելի՝ այն հանգամանքը, որ, ինչպէս տեսանք, նաեւ այդ շրջանում վրացի սոցիալ-դեմոկրատներն էին, որ վարում էին Անդրկովկասի քաղաքականութիւնը եւ բնական է, որ ամենից շատ նրանց դէմ էին ուղղւում ընդդիմադիր կուսակցութեան հարուածները: Մենշեւիկների եւ անդրկովկասեան կառավարութեան դէմ մղած մեր պայքարը մեծ հաճոյք էր պատճառում այդ կառավարութեան անդամներից մի քանիսին ու նրանց պատկանած կուսակցութեանը: Խօսքը դաշնակցականների մասին է, որոնց համար սիրելի թերթ էր այդ ժամանակ էսէռական «Զնամէնա Տրուդա»ն, եւ նրանց պաշտօնական օրգան «Հորիզոն»ը առանձին գոհունակութեամբ արտատպում էր օրը օրին համառուսական կազմակերպութեան (որի պարտութիւնը դեռ վերջնական չէր համարում) կարծիքները արտացոլող այդ ռուս օրգանի խմբագրականները, որոնց մեծ մասի հեղինակը, սակայն,— թող անհամեստութիւն չլինի ասել — այս տողերի դրողն էր:

Կար նաեւ այն կարեւոր հանգամանքը, որ օրւայ ամենահրատապ ու ամենագլխաւոր խնդիրների մասին մեր ունեցած ու յայտնած տեսակէտները ներդաշնակում էին հայկական լայն պանդուխտների բուն տրամադրութիւններին: Այսպէս, օրինակ, չնայած Յ. Քաջազնունու յայտարարութեան, թէ Դաշնակցութիւնը միանում է Անդրկովկասի անկախութեան հռչակման ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ այդ անկախութիւնը ուզում են Թուրքերն ու վրացիները, բայց ոչ հայերը: Մեր կուսակցութեան բաց ու արձակ ընդդիմութիւնը այդ ակտին եւ մեր ընկերների բուռն ելոյթները Սէյմի ապրիլ 9ի նիստում շատ աւելի հարազատօրէն էին արտացոլում հայ ժողովրդի ու դաշնակցական լայն շարքերի տրամադրութիւնները, քան Յ. Քաջազնունու վերը մատնանշած պաշտօնական ու առհարկի յայտարարութիւնը: Նոյնը պիտի ասել նաեւ պատերազմի ու հաշտութեան, ինչպէս եւ «թրքական իմպերիալիզմի» ու նրա անդրկովկասեան գործակալ «հակայեղափոխական Թուրք բէգերի ու Ֆէոդալների կուսակցութիւն Մուսաւաթի» հանդէպ մեր բռնած խիստ բացասական դիրքի մասին:

Որպէս ընդդիմադիր մեր կուսակցութիւնը շատ աւելի հնարաւորութիւն ու յարմարութիւն ունէր խիստ քննադատութիւններով հրապարակ գալու վերոյիշեալ բոլոր խնդիրների վերաբերմամբ, քան կոալիսիոն կառավարութեան անդամի ու որոշ ազդեցութիւն ներկայացնող կուսակցութեան հանգամանքով կաշկանդուած Դաշնակցութիւնը: Եւ երբ որ Անդրկովկասի բաժանման վրացական ծրագրին վաւերացում տալու համար գումարուած Սէյմի վերջին նիստում մեր ընկեր Բերեզովը, մերկացնելով Ծերեթելու սուտ ու պատիր յայտարարութիւնները հայերի մասին, բացադանչում էր թէ՝ «Կռիւը դեռ շարունակւում է թշնամու դէմ, հայկական զօրամասերը շարունակում են կռւել. նրանք մեռնում են մնացել, նրանք օգնութիւն են կանչում, նրանք դաշնակիցներ են որոնում»,— նա, անշուշտ, աւելի հարազատօրէն էր արտայայտում հայութեան յոգերն ու տրամադրութիւնները, քան Սէյմում նստած դաշնակցական պատգամաւորը իրենց լռութեամբ:

Այս ու սրա նման բազմաթիւ ուրիշ ելոյթներ, որ բխում էին մեր կազմակերպութեան որդեգրած նոր ուղեգծից, նախկինից միանգամայն տարբեր փոխյարաբերութիւններ էին ստեղծում նրա եւ անդրկովկասեան միւս ազգային կուսակցութիւնների մէջ: Աւելի որոշ ասած, նրանք խորացնում էին տարակարծութիւններն ու հակամարտութիւնները մեր եւ մենշեւիկների ու Մուսաւաթի միջեւ եւ, ընդհակառակը, մերձեցման հող էին պատրաստում էսէռների եւ Դաշնակցութեան միջեւ: Ուժերի այս վերախմբաւորման արդէն

նշմարուող պրոցեսը չունեցաւ, սակայն, իր հետագայ զարգացումը, որովհետեւ Անդրկովկասի ամբողջականութեան քայքայմամբ, հիմնովին փոխուեցան հրապարակի վրա եղած կուսակցութիւնների գործունէութեան պայմանները:

1918թ. մայիս 26 — 30 կատարուած յաջորդական ակտերով Անդրկովկասը մասնատուեց երեք անկախ ազգային հանրապետութիւնների: Մէջտեղից վերացան համանդրկովկասեան բոլոր հարցերն ու խնդիրները եւ քաղաքական ամբողջ գործունէութիւնը ամփոփուեց երեք ազգութիւնների Ազգային Խորհուրդների շուրջը: Մեր կուսակցութիւնը ստիպուած եղաւ համակերպուել ստեղծուած այս նոր կացութեան ու ձեւնարկեց ըստ այնմ էլ վերակառուցել իր կազմակերպութիւնը: Շատ աշխատանք չկար կատարելիք: Վրացի ընկերները արդէն հեռացել էին: Հատ ու կէնտ թաթարները՝ նրանցից էլ առաջ: Փոքրաքանակ ռուսներ եւ մի երկու հոգի հայեր պաշտօն ստացան ընդհանուր կազմակերպութեան խարխլած շէնքը պահելու, իսկ մնացած բոլոր հայերս վերջնականապէս փոխադրուեցինք Արամեանցի տունը:

Փոխարքայի պալատից — Արամեանցի տո՛ւնը: Ո՞ր մասն է կազմում սա այն երկար ճանապարհի, որ մենք անցանք հետագային..

Փարիզ·



ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ

(1912 — 1914)

V

ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԸ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Նախ քան բարենորոգումներու նախագիծերու մասին խօսիլը, անհրաժեշտ է պատկերացնել այն անբնական յարաբերութիւնը, որ գոյութիւն ունէր Թիւրքերու եւ ազգային պաշտօնական շրջանակներու միջեւ, ինչպէս նաեւ Ազգ. Երեսփ. Ժողովի մէջ տիրող տրամադրութիւններն ու մտայնութիւնը, որովհետեւ անոնք սերտ առընչութիւն ունին ծրագրին պատրաստութեան եւ անոր էութեան հետ:

Հայկական Հարցի յարուցման այդ շրջանին պաշտօնի գլուխ կը գտնուէր Ֆեամիլ փաշայի երկրորդ դահլիճը՝ բաղկացած ոչ այնքան շեշտուած խիթիհատականներէ: Հայոց պատրիարքն էր Արշարունին. ժամանակին համար բացարձակ անյարմար մէկը: Ազգ. Երեսփ. Ժողովին մէջ տիրապետող հոսանքը «կեդրոնի խմբակցութիւնն» էր. ժամանակաւոր միութիւն մը՝ ներքին-ազգային խնդիրներու մէջ առաւել կամ նւազ միատեսակ մտածող անձերէ բաղկացած, որոնց կը գլխաւորէին իրաւաբան Դաւիթ Տէր-Մովսէսեանը, Հայկ Խոճասարեանը, Վ. Թէքէեանը եւ այլք՝ նախատիպը ներկայ Ռամկավար-Ազատական կուսակցութեան: Կար նաեւ հետագային կազմուած «Ազատական Խմբակցութիւնը»՝ գլխաւորուած Գ. Զոհրապէ, որ ընդհանուր կերպով մօտ էր Դաշնակցութեան հաւուածին: Առնցմէ զատ, բացի քանի մը անհատ երեսփոխաններէ, Դաշնակցութեան հաւուածն էր, որուն մէջ մտած էին կուսակցութեան որակեալ ընկերները:

1912ի սկիզբը Գ. Ասլանեանի վարչութիւնն էր գործին գլուխը, երբ դեռ բարենորոգումներու հարցը հրապարակ հանուած չէր: Օգոստոսի վերջը Գարայեան առաջին, ապա երկրորդ վարչութիւնը կանցնէր գործին գլուխը, որ կը պաշտօնավարէր մինչեւ 1914 յունուարին վերջը, այսինքն՝ Հայկական Հարցի ձեւակերպման դրեթէ ամբողջ շրջանին:

ՍՏԵՓԱՆ ԳԱՐԱՑԵԱՆ

Բալկանեան պատերազմի առաջին իսկ օրերէն, հայաբնակ նահանգներուն մէջ վերսկսան հարստահարութիւնները եւ աւարառութիւնները: Ճշգրիտ գաղափար մը տալու համար այդ ատենեան վիճակի, ինչպէս նաեւ այդ առթիւ ազգային շրջանակներու մտահոգութիւններու եւ ձեռնարկներու մասին, օգտակար կը նկատեմ քաղուածօրէն ներկայացնել Ազգ. Երեսփ. Ժողովին մէջ գտած արձագանգը եւ այդ առթիւ պատրիարքին, Ազգ. Կեդրոնական Վարչութեան եւ հոսանքներու արտայայտութիւնները: (Քաղուած Ազգ. Երեսփ. Ժողովի արձանագրութիւններէն):

1912 մայիս 11ի Գ. Նորատունկեանի ատենապետութեամբ Երեսփ. Ժողովի նոր նստաշրջանը կը բացուի պատրիարքի ճառով, որուն մէջ կարտայայտուեն մտահոգութիւններն ու դառնութիւնը տիրող կացութեան եւ կառավարութեան անտարբերութեան մասին, ապա վարչութեան ատենապետ Գ. Ասլանեան կը կարդայ վարչութեան յայտարարութիւնը (քաղուածքներով)...«Հողային հարցին ըստացած կնճռոտ հանգամանքին եւ Հայկական Նահանգներու խորերը տիրող անապահովութեան հետեւանքով, մեր երկիրը կը դատարկուի ... Հողային այս հարցը սակայն ո՛չ միայն չէ լուծուած, այլ եւ եղած դիմումներուն կարծես իբր պատասխան, ազգապատկան եւ վանքապատկան դետինները գրաւուած ու գրաւելու բաղձանք մը կը նշմարուի իբր մահիլ (անտէր): ... Կրթական գործին ու հաստատութեանց եւ Մէարիֆի կողմէ յատկացուելիք դրամական բաժնին վերաբերող հարցերը՝ դեռ չփոթ ու անլուծելի կը մնան, հակառակ կառավարութեան հետ տեղի ունեցած այնքա՛ն բանակցութեանց ու դիմումներու»:

Նոյն թուի ամառը դրութիւնը աւելի մտահոգիչ կը դառնայ եւ յարաբերութիւնները աւելի ճգուած: Օգ. 24ին Երեսփ. Ժողովի ատենապետ Հ. Խօճասարեանը յայտարարելէ վերջ թէ՝ «Հայաստանի ստացած անապահով դրութեան խնդրով պիտի զբաղի ժողովը, որ կարեւէր կերպով խոցած է ժողովին սիրտը», կը շարունակէ. «Այսօր կը գտնուենք այնպիսի վիճակի մէջ եւ կացութիւնը այնքան սուր հանգամանք մը առած է, որ ո՛չ միայն ժողովը իր նախագահով կը զգայ այդ ցաւը, այլ եւ յետին չինականն ալ»: Եւ խօսք կուտայ պատրիարքին, որու ղեկուցումէն կը քաղենք հետեւեալը.—

«... Դիմումներ կատարեցինք նախարարներուն եւ խոստումներ տրուեցաւ մեզի: Մեր խօսակցութիւնը բուռն եղաւ անոնց հետ... Մենք ըսինք թէ այս տեսակ խօսքեր շատ լսեցինք, մենք արդարութիւն կը պահանջենք...»:

Պատրիարքի այցելութիւնը զուգադիպած է նախարարական նիստին. վարչապետը եւ պատերազմական նախարարը նիստը կը

թողուն պատրիարքը ընդունելու համար։ Պատրիարքը իր խօսքը կը վերջացնէ... «Այդ օրը ըսի ներքին գործոց նախարարին (Տանը՛ պէյ) թէ՝ այս բոլոր ոճիրները որ սկսան, մեծ կոտորածի մը սկզբնաւորութիւնն են...»։

Ապա Ս. Գարայեան վարչութիւնը կը կարդայ նոր վարչութեան «յայտարարութիւն – ծրագիրը», որմէ հետաքրքիր են հետեւեալ հատուածները.— «Օսմ. Սահմանադրութիւնը հոչակելէ ի վեր երկրին վիճակը փոխանակ բարելաւելու, աստիճանաբար աւելի կը վատթարանայ»։ Ու պետական այդ բարձր պաշտօնեան (վճռաբեկ առեանի անդամ) չի քաշուեր անվախօրէն շարունակելու, թէեւ իրեն յատուկ խիստ նուրբ ու զգուշաւոր ձեւով ըսելով թէ՝ ինքը կը հաւատայ որ կառավարութիւնը ունի պէտք եղած բարեացակամութիւնը, սակայն, չունի պէտք եղած կարողութիւնը եւ կարելի չէ այլ եւս յոյս դնել անոր վրա ներկայ ծանրակշիռ պարագաներու մէջ... «Կը մնայ երկու ելք՝ կամ դաղթել խմբովին կամ ճարահատ ծանրագոյն միջոցի մը դիմել — խնդրել օտար քրիստոնեայ կառավարութիւններէ. բարեխօսելու Օսմ. պետութեան մօտ՝ պաշտպանելու մեր ինչքը, կեանքը եւ պատիւը — *վստահելի տարրերէ միլիս կազմել եւ զէնք կրելու արտօնութիւն տալ»*։ Եւ ատենապետը իր ճառը կը վերջացնէ գոչելով. «Կեցցէ յաւիտեան Օսմ. սահմանադրական վեհապանծ պետութիւնը...»։

Քաղաքական կուսակցութեանց պատկանող երեսփոխանները, ինչպէս՝ Ճհանկիւլեան, Վարդէս, Մուրատ, Շահրիկեան եւ... Հմ. Արամեան, կը յայտարարեն թէ կառավարութիւնը խարդախ դիրք է բռնած եւ որ ժողովուրդը իր վրա պէտք է դնէ յոյսը եւ պատրաստուի ինքնապաշտպանութեան եւ օտար պետութիւններու աջակցութեան դիմէ։ Վարդէս կը խօսի անզուսպ եւ արդար ցասումով լի ...«Պէտք է որ վերջնական քայլի մը դիմենք, որպէսզի մեր ձայնը լսելի ընենք. եւ երբ այս անդամ ալ չյաջողինք, այլ եւս ամբողջ հայ ազգը թո՛ղ դադրի օսմանեան քաղաքացի ըլլալէ եւ դառնայ օսմանեան գերի...»։ Իսկ ներքին գործոց նախարարի կողմէ պատրիարքը եւ վարչ. ատենապետը չընդունելու առթիւ, կառաջարկէ որ Ազգ. ժողովը իր արհամարհանքը յայտնէ...

Ազգ. Երեսփ. ժողովէն դուրս, հայ ժողովրդի բոլոր տարրերը յուզուած ու վրդովուած են։ Գաւառներէն հեռագրական բողոքներ եւ հանրագրութիւններ կը հասնեն. Պոլսոյ հայութեան զանազան խաւերը (թաղերը, Հայրենակցական Միութիւնները, ուսանողութիւնը եւ այլք) եկեղեցիներու մէջ հաւաքելով եւ առանձին պատգամաւորներով ուղերձ–հանրագրութիւններ կուղղէին Ազգ.Երեսփ.ժողովին՝

խնդրելով արագ եւ կորովի միջոցներ ձեռք առնել փրկելու համար հայաբնակ նահանգներու հայութիւնը վերահաս վտանգներէ...:

Ազգ. Երեսփ. ժողովը հարկ կը տեսնէ, իբր բողոքի ցոյց, առաջարկել որ, պատրիարքը և վարչութիւնը հրաժարին: Արշարունի պատրիարքը կը յայտնէ թէ՝ պատրաստ է հրաժարելու, սակայն, քանի որ կառավարութիւնը նոր խոստում է ըրած կտրուկ միջոցներ ձեռք առնելու, պէտք է շաբաթ մը եւս սպասել: Այդ ժամանակամիջոցը, ի հարկէ, նոր բաբելաւում մը չի բերեր, եւ 1912 սեպտ. 7ին պատրիարքը ու Քաղաք. ժողովը կը յայտարարեն թէ՝ իրենց միջոցները այլեւս սպառած ըլլալով, կը հրաժարին: Սեպտ. 21ին կը կազմուի Գարայեան երկրորդ վարչութիւնը: Հետեւեալ նիստին կընդունուի պատրիարքի հրաժարականը եւ տեղապահ կը նշանակուի ճէվահիրճեան եպիսկոպոսը:

V

ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐՈՒ ՁԵՒԱԿԵՐՊՈՒՄԸ

Առաջին անգամ ըլլալով, 1912 դեկտ. 21ին Ազգ. Երեսփ. ժողովին մէջ հրապարակով կուրւագծուի հայկական բարենորոգումներու էութիւնը: Հարցումը կը բերուի Հմ. եպ. Դիմաքսեանի կողմէ հետեւեալ ձեւին տակ.— «Թիւրք կառավարութեան կողմէ խմբագրուած եւ հրատարակուած «Բարենորոգումներու ծրագիրը ոչ 1880 եւ ոչ 1895 Մայիսեան Ծրագրի բնոյթն ու խորհուրդն ունի, նա չի համապատասխաներ երբեք ներկայ ժամանակի ոգւոյն եւ պահանջներուն եւ ըստ ինքեան անբաւական է Օսմ. երկրի վերածնութեան»: 61րդ յօդւածին կիրառումը կը պահանջէ եւ կառաջարկէ լսել վարչութիւնը իր կատարած աշխատանքներու մասին «կարելիութեան սահմաններուն մէջ»:

Վարչութիւնը հետեւեալ բացատրութիւնը կուտայ.— «Մեր ընտրութենէն վերջ մարմին առաւ Հայկ. Բարենորոգմանց խնդիրը եւ անմիջական միջոցներու պէտք տեսնուեցաւ... Այս անգամ վարչութիւնը նկատի առաւ ներկայ պարագաներէն օգտուելու անհրաժեշտութիւնն: Բայց միայն ծրագրով չէ որ պիտի գոհանանք, այլ ամբողջ զօրութեամբ պիտի պնդենք որ այդ բարենորոգումներու գործադրութիւնը անխախտ կերպով երաշխաւորուի»: Այս հիմերու վրա վարչութիւնը կը պարզէ իր ուղեգիծը.—

1· *Պատրիարքարանը իր օրինական դիրքին վրա մնալով*, կը պահէ իր յարաբերութիւնները Օսմ· կառավարութեան հետ՝ շարունակելով պնդել իր պահանջներուն վրա՝ բարենորոգումներու մասին:

2· *Մշակել եւ ապահովել բարենորոգումներու անխախտ գործադրութեան եղանակը եւ տեւականութիւնը հաստատ երաշխիքներով*: «Ասկէ զատ ռեւէ գօմպինեզօն չի կրնար գոհացում տալ մեզի», *կը վերջացնէ վարչութիւնը*:

Մէկ բան պարզ է բոլորին համար, թէ՝ ցանկալի չէ եւ ոչ հնարաւոր բարենորոգումները վերածելու անկախութեան պահանջի: Յեղափոխական-քաղաքական կուսակցութիւններն իսկ չէ ինխորհեր այդ մասին: Վարչութիւնը իր ըմբռնումները բարենորոգումներու էութեան մասին կը պարզէ հետեւեալ բացատրութիւններով.— «Բարենորոգման ծրագիր ըսելով կը հասկնանք մեր կամ ուրիշներէ առաջարկուած՝ սիստեմ մը, որ նպատակ ունենայ հիմնաւորել հայերու քաղաքացիական իրաւունքները: Նա հիմը պիտի ըլլայ մեր ազգային գոյութեան պահպանման՝ ապահովուած կատարեալ երաշխիքներով: Պիտի օգտինք պատմութեան դասերէն եւ հիմնուենք միջազգային դաշնագրերու եւ նոյն իսկ թիւրք կառավարութեան կողմէ ընդունուած յանձնառութեանց եւ երաշխիքներուն վրա»: Եւ վարչութեան ատենապետը իր սովորական ղդուշութեամբ կաւելցնէ· «Ամբողջ հայ ազգի եւ ամբողջ լուսաւորեալ երկիրներու պետական մեծ մարդոց կարծիքն է թէ՝ առանց այս բարենորոգումներու գործադրութիւնը ապահովութեան տակ դնելու, անկարելի է բարենորոգումներ երկրին մէջ: Ամբողջ ազգը եւ քաղաքակրթեալ աշխարհը բացորոշապէս կը յայտարարեն թէ՝ երբ հայկական բարենորոգումներ ապահովենք, ատով ամբողջ թիւրքիոյ փրկութիւնը ապահոված կըլլանք···»:

Իսկ Փարիզի մէջ, 1913 *մարտ* 13*ին Պատուիրակութեան նախագահ Պօղոս փաշան ներկայանալով ռուս դեսպան Իզվոլսկիին՝ կը խնդրէ ըսել թէ՝ արդեօք ժամանակը հասած կը համարի՞ դիմել Լոնդոնի դեսպանաժողովին Հայկական Հարցը արծարծելու համար: Այս առթիւ Պօղոս փաշան կը յայտարարէ դեսպանին թէ՝ «Թիւրքահայերը ինքնավարութիւն կամ հպատակութեան փոփոխութիւն չէ, որ կուզեն, այլ բարենորոգումներ, որ նախատեսուած է Բերլինի դաշնագրով եւ այն ծրագրով, որ մշակուեցաւ* 1895*ին ռուս, Ֆրանսական եւ անգլիական կառավարութիւններու ձեռքով: Կաւելցնէ նաեւ, թէ ինքը «այլ պատուիրակներու հետ արդէն իսկ ձեռնարկած է մշակելու մանրամասն ծրագիր մը* 1895 *թուի ծրագրի հիմերու վրա, ժամանակի յարմար որոշ փոփոխութիւններով եւ լրացումներով, մասնաւորա-*

պէս կոնտրոլի բացարձակ անհրաժեշտութեան ապահովութեամբ»։ Կըսէ, թէ նախագիծը կաթուղիկոսի հաստատման ենթարկելէ վերջ կը ներկայացուի ռուս կառավարութեան։ Իրվոլսկին կը թելադրէ անոր ոչ մէկ քայլ ընել, մինչեւ առաջադրուած հարցերու մասին արտաքին գործոց նախարարէն պատասխան չառնէ (եւ, ուրեմն, Լոնդոնի դեսպանաժողովին պէտք չէ դիմել)։

Կեդր. Վարչութեան բարեհորոգումներու յիշեալ ձեւակերպումը կընդունի վստահութեան քէով եւ անմիջապէս կը կազմէ «Ապահովութեան Յանձնաժողովը», որ իսկոյն շփման մէջ կը մտնէ կաթուղիկոսի, Պօղոս փաշայի և Պոլսոյ ռուս և այլ դեսպանատուներու հետ, միեւնոյն ատեն ձեռնարկելով պատրաստելու բարեհորոգումներու ծրագրին նախագիծը, որ բանակցութիւններու առարկայ կը դառնար մէկ կողմէ Փարիզի Պատուիրակութեան եւ Պատրիարքարանի, միւս կողմէ Պատրիարքարանի եւ Կ. Պոլսոյ ռուս դեսպանատան միջեւ։

1913ի գարունը սկսաւ երկրէն չարագուշակ լուրեր բերելով (ինչպէս հին ռեժիմին՝ կոտորածները կը սպասէինք միշտ գարնան սկիզբը...)։ Այնքան բազմաթիւ էին անոնք ու մտահոգիչ, որ շատ երեսփոխաններու պահանջով ապրիլ 21ին Ազգային ժողովի դռնփակ նիստ հրաւիրուեցաւ լսելու համար Կեդր. Վարչութեան զեկուցումը դայրենակ նահանգներու վիճակի եւ ձեռք առնուած միջոցներու մասին։

Ս. Գարայեան, այդ խոհեմ ու զգուշաւոր մարդը, այս անգամ առանց երկար կշռելու իր խօսքերուն հետեւանքները, ըսաւ, թէ՝ «Սահմանադրութենէն ի վեր հայ ազգը իր պատմական համբերութեամբ կրցաւ տոկալ օրէ օր աճող անապահովութեան եւ հարստահարութեանց այն յոյսով թէ, վերջապէս, կառավարութիւնը կտրուկ միջոցներ ձեռք պիտի առնէ։ Ցարդ սպառած ենք օրինական բոլոր միջոցները, լաւատես հայեացք ունեցած ենք կառավարութեան բարեացակամութեան վերաբերմամբ, այսօր սակայն, Հայաստանի վիճակը այլ եւս անհանդուրժելի եւ խիստ վտանգաւոր է դարձած. մենք այս վայրկեանիս կանգնած ենք վերահաս վտանգի մը առջեւ, որ կը տարածուի Կիլիկիայէն — Վան...»։

Պատրիարքարանը այս վիճակին հանդէպ կը շարունակէ իր «թագրիր»ները (1912 հոկտեմբերէն — 1913 մայիս 176 թագրիր ներկայացուած է եղեր Բ. Դրան), առանց հետեւանքի։ Հողային խնդիրները աւելի կը կնճռոտին եւ սպառնալի կերպարանք կառնեն։ Թիւրք թերթերը կը հրատարակէին արդէն տեղեկութիւններ՝ օտար պետութեանց հետ կատարուող պատրիարքարանի տեսակցութիւնները եւ պաւիրակութեան կազմութիւնը, միւս կողմէ կառավարութիւնը

ներքին նահանգները հրահանգած էր աչալուրջ հսկել հայ ազգային-քաղաքական տարրերու շարժումներու վրա, եւ մէկ կողմէ ալ հաւաստիքներ շռայլել պատրիարքարանին թէ՝ «ինշալլահ» կարգի պիտի իյնայ երկիրը, մանաւանդ որ կը պատրաստուին «իսլահաթ»ի ենթարկել (բարեկարգել) բոլոր նահանգները: Ու միեւնոյն ատեն կառավարութիւնը թիւրք թերթերու մէջ, Էնտէրվիւի ձեւով լուր մը թողուց, թէ իբր, հայերու բաղձանքով, ծրագրուած բարենորոգումներու օրինագծին մէջ որոշ փոփոխութիւններ են մտցուած: Ասով թիւրք կառավարութիւնը կուզէր հասկցնել թէ հայերը բանակցութեան մէջ են իրենց հետ, ըստ էութեան քննութեան ենթարկելով թիւրքերու «իսլահաթի» ծրագիրը: Եւ այսպիսով կուզէր, անշուշտ, կանխել արտաքին միջամտութիւնը...

Այդ ատեն Շէվքէթ փաշայի դահլիճն էր արդէն գործին գլուխը՝ գունաւորուած իթթիհատականներով, որոնք աստիճանաբար կը ձգտէին սահմանափակել պատրիարքարաններու քաղաքական իրաւունքները: Այդ ատեն էր նոյնպէս, որ լուր տարածուեցաւ թէ Ֆրանսացի Պօմօն (փաշան) կը ղրկուի ներքին նահանգները ժանտարմերիան կազմակերպելու: Եւ նոյն իսկ կը խօսուէր Պետրոս Հալաճեանի մասին, որ իբր թէ պիտի նշանակուէր ընդհանուր նահանգապետ «Արեւելեան Նահանգներու»: Անպաշտօն առաջարկութիւն կըլլար Պոլիս հրաւիրել Պօղոս փաշան եւ «ընտանեկան եղանակով» իրար հասկընալ...

Երկրի օրէ օր աճող վտանգաւոր կացութիւնը, ստեղծած էր աւելի մեծ աղէտ մը — արտագաղթի վարակիչ հոսանքը: Երիտասարդութիւնը մեծ թիւով կը հեռանար երկրէն, գլխաւորապէս Ամերիկա, մասամբ զինուորութենէ խուսափելու, իսկ գլխաւորապէս սպառնալի վիճակէ եւ տնտեսական ճգնաժամէն ազատուելու նկատումով: Կեդր. Վարչութիւնը ահազանգ կը հնչեցնէր Երեսփ. Ժողովի 1913 յունիս 21ի նիստին մէջ պաշտօնագիր մը ներկայացնելով, որմէ կերեւար, թէ միայն մէկ օրուան մէջ Քղի գիւղաքաղաքէն Ամերիկա մեկնած էին 100 հոգի. Երզնկայէն մէկ շաբաթուան մէջ 1,000 հոգի: 1908—12 միայն Ամերիկա գաղթած էին 20,000 անձ, առանց հաշուելու Կովկաս եւ Բալկաններ մեկնողներու մեծ թիւը, իսկ Պոլսէն ամէն շաբաթ կը մեկնէր 200 անձ...

Ստեղծուած ծանր եւ միանգամայն ճգտուած վիճակին հանդէպ, Ազգ. Երեսփ. Ժողովը գերագրգիռ աստիճանի հասած էր, որուն արտայայտիչը եղաւ կեդրոնի խմբակցութեան ականաւոր անդամներէն Հ. Խօրասանճեանը հետեւեալ պատմական ճառը արտասանելով 1913 մայիս 7 նիստին մէջ. «Վարչութիւնը իր պարտքը կատարեց եւ կատարելու վրա է, իսկ մենք՝ երեսփոխաններս լոկ հանդիսատե՞ս պի-

ոի ըլլանք: Դժբախտաբար, կը տեսնեմ թէ այս ժողովը մտավախութենէ զերծ չէ: Աւելի վտանգաւոր եւ փափուկ ժամանակներուն մէջ այս ժողովը Հայկական Հարց ստեղծեց (ակնարկ 1878 թուին): Այն ատեն իրաւունք մը չինեցինք· տաժանելի պարագաներն են, որ կազմած են այդ կենսական խնդիրը... Մտավախութիւն կըլլայ այլ եւս երեսփոխաններուն համար՝ այդ խնդրին չդառնալ: Եթէ Օտեաններն ու Սերվիչէնները ողջ ըլլային, անոնք ուրախ պիտի ըլլային գտնուելու այն դերին մէջ, որուն մէջ մենք կը գըտնուինք: Ըսել չեմ ուզեր թէ պաշտպանողական ընթացքի մէջ չգտնուինք եւ խոհեմութիւնը ձեռքէ ձգենք· բայց պէտք չէ՛ մտավախութիւն ալ ունենալ վեհ· հայրապետի Պատուիրակութեան դերը չեղոքացնելու չափ: Ամենէն աւելի մենք է, որ ձայն պէտք է բարձրացնենք անոր օգնելու համար... Այս ժողովն է, որ նոյն իսկ համիտեան բռնակալութեան օրով, զբաղած է հարստահարական հարցով, հիմա՞ պէտք է վախնայ մօտենալու այդ հարցին: Եթէ ընաջինջ պիտի ըլլանք, գոնէ պատուաւոր կերպով ջարդուինք — թումբերու վրա մեռնինք մեր պարտքը կատարելով...»:

Կը խօսի նաեւ Վ· Թէքէեանը·— «Մեծ յուզում մըն է, որ կը կրենք Վարչութեան յայտարարութիւններէն· կը ծանրանայ հայ ժողովուրդի վիճակը... Հայկական խնդիրը կը յուզի այսօր եւ արդէն ջանքեր կը թափուին· այս բոլոր դէպքերը կապուած են անոր հետ, որուն բարեյաջող լուծմամբ է, որ վերջ կը գտնեն այդ դէպքերը: Ան որոշ պիտի ըլլայ թէ ազգին ամենէն բարձրագոյն ժողովը եւ անոր վարչութիւնը իրարու հետ համաձայն կերթան այսօրուան մեծ գործին մէջ»:

VI

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Այս պատմական պատասխանատու օրերուն, ազգային քաղաքական նպատակներու իրականացման ջանքերու մէջ գոնէ, բոլոր հոսանքները աննախընթաց ոգեւորութեամբ եւ անկեղծութեամբ միացած էին (որ, դժբախտաբար, կարճատեւ եղաւ):

Այսպէս, «Կեդրոնի Խմբակցութեան» պարագլուխ Դ· Տէր-Մովսէսեանը 1912 մայիսի նիստին մէջ կը յայտարարէր· «Կառավարութիւնը պէտք է գիտնայ եւ համոզուի թէ՝ հայերը այս երկրին մէջ միակ քաղաքականութիւն մը ունին, թէ՝ հայերը որոշած են իրենց իրաւունքները պաշտպանելու համար՝ մէկ սիրտ եւ մէկ հոգի ըլլալ, թէ՝ ուր որ հայուն կեանքը, պատիւը վտանգի տակ է, հայը մէկ հոգի է...»:

Ուրիշ արտայայտութիւններով, նոյնը կը յայտնէ նաեւ Վ. Թէքէեանը:

Դաշնակցութեան կողմէ, քանի մը նիստերէ վերջ, Շահրիկեանը կընէ հետեւեալ յայտարարութիւնը.— «Այստեղ իմ պատկանած կուսակցութեան հայեցակէտը թէեւ տարբերւում է օրւան արտայայտւած մտայնութենէն (ժողովրդը ինքնապաշտպանութեան պատրաստելու մասին է խօսքը. Վ. Փ.), բայց թողնելով ատոր պատասխանատուութիւնը պաշտօնական եւ առհասարակ ղեկավար ընդհանուր շրջանակներու վրա, կուսակցութիւնը բարձի թողի է արել իր հայեցակէտը, այժմ նա իր քաղաքական դերի մէջ չէ եւ դրել է իրեն ամբողջովին այս տիրող հոսանքի տրամադրութեան տակ, ապացուցելու համար, որ հայութիւնը պատմական այսպիսի րոպէներում միայն մի կամք, մի ձայն կարող է ունենալ: (Բրաւո՛, գոհ ենք — ձայներ):

Ուրեմն, ազգային հարցին մէջ բոլոր տարբերու այս միացման հետեւանքով Ազգ. Երեսփ. ժողովը նոր կատարեալ վստահութեամբ կամրապնդէ Կեդր. Վարչութիւնը տալով անոր խորհրդարանական յանձնաժողով մը իբր աջակից« Հարստահարական» անւանելով պայն «յանուն բովանդակ Թիւրքիոյ Ազգ. ժողովոյ», ինչպէս կը ձեւակերպէր Գ. Զոհրապը: Եւ հարստահարական յանձնաժողովը կը կազմի հինգ հոգիէ, առնելով իր մէջ կարեւոր հոսանքներու ներկայացուցիչներ — Գ. Զոհրապ, Յ. Շահրիկեան, Վ. Թէքէեան, Յ. Գալֆայեան եւ Գ. Տէր Մովսէսեան:

Միեւնոյն ատեն (1913 սեպտ.) Ազգ.Կեդր. Վարչութիւնը նախաձեռնարկ եղաւ, Հայ Ազգային–քաղաքական նպատակներուն իրականացման խնդրոյն մէջ Համազգային Միութիւն մը կազմել՝ հրաւիրելով անոր մէջ նաեւ հայ կաթոլիկ եւ բողոքական համայնքները: Մէկ ամսւան մասնաւոր բանակցութիւններէ վերջ, յաջողութեամբ պըսակւեցաւ ձեռնարկը: Գիրերու գիւտի 1500 ամեակի տօնակատարութիւններու մասին Ազգ. ժողովի 11 Հոկտ. նիստին մէջ կաթողիկոսական կոնդակի ընթերցումը տեղի ունեցաւ, որով կառաջարկւէր «Դպրոցական Հիմնադրամի» մը հաստատումը՝ ձեռնարկելով ընդհանուր հանգանակութեան: Ազգային այս մեծ տօնին առթիւ, գլխաւոր հոսանքներուն պատկանող խումբ մը երեսփոխաններ գրաւոր առաջարկ մը կը ներկայացնեն, որով կը յայտնեն թէ՝ «Հասած է ժամանակը այլեւս՝ որ հայութեան բոլոր դաւանական հաւատածները գէթ պիտի ձգտին ազգային միակ ու բարձրագոյն իտէալին–կրթական–բարեգործական եւ ազգային– քաղաքական համագործակցութեան... Ազգ. ժողովը կոչ կուղղէ հայ ազգի բոլոր յարանւանութիւններուն, որ ընդունելով օրւան ազգային այս մեծ տօնը որպէս խորհրդանշան

դէպի Համազգային Միութիւն առաջնորդող նեւրական գաղափարին» մէկ զանգւած կազմեն։ Միեւնոյն նիստին կը կարդացուի նաեւ արդէն իսկ յարանւանութեանց ներկայացուցիչներէ ստորագրւած համաձայնագիր մը, հետեւեալ հիմերով. «Ամէն հայ պաշտօնապէս եկեղեցիներէն որուն ալ պատկանին, զուտ կրօնական չեղող ամէն խնդիրներու մէջ, Հայ Ազգ. Սահմանադրութիւնէն հաւասարապէս կօգտուին։ Այսպէս կրթական– բարեգործական եւ Ազգային– քաղաքական ամէն գործերու մէջ, առանց բացառութեան կատարեալ գործակցութիւն տեղի ունենայ...»։

Այս յայտարարութիւնը եւ համաձայնագիրը կընդունին երկարատեւ ծափահարութիւններով, եւ նոյն օրը, Մայր Եկեղեցիի մէջ, հանդիսաւոր նիստ գումարելով՝ Ազգ. ժողովը հռչակեց բոլոր յարանւանութեանց Միութիւնը։

Միութեան այդ քայլը բարոյական մեծ ազդեցութիւն թողուց թէ ներսը՝ հայ ժողովրդին մէջ եւ թէ, մանաւանդ, յաչս արտաքին աշխարհի։

Մինչ այդ արդէն իսկ տենդոտ բանակցութիւններ կը կատարւէին Պատրիարքարանի եւ Փարիզի Պատւիրակութեան մէջ պատրաստւած ծրագիրներուն շուրջ։ Պետերբուրգ—Մոսկւայի եւ կաթողիկոսի նախագիծերը ծառայեցին իբր ատաղձ։ Հիմերը վերի երկու ծրագիրներն էին, որոնք մէկ յայտարարի բերելը բաւական երկարատեւ եւ դժւար աշխատանք կը պահանջէր, տրւած ըլլալով որ թէ՛ Պորիարքարանը եւ թէ Պատւիրակութիւնը հաւասարապէս կը կարծէին թէ՝ ունին պէտք եղած հեղինակութիւնը եւ կարողութիւնը եւ, մանաւանդ, երկուքն ալ կը կարծէին ապահոված ըլլալ մէկ կողմէ Պոլսոյ եւ միւս կողմէ Փարիզի բարեկամ պետութիւններու ներկայացուցիչներու համաձայնութիւնը իրենց նախագիծերու այս կամ այն կէտերու նկատմամբ*)։ Այս հանգամանքը խիստ կը դժւարացնէր միակ ծրագրի մը մշակումը եւ, մանաւանդ, կը դանդաղեցնէր անոր փոխոխ պատրաստութիւնը, հակառակ անոր, որ մասնաւորապէս ռուս կառավարութիւնը կը փութացնէր, նախաձեռնութիւնը իր ձեռքէն չփախցնելու մտահոգութեամբ։

Փարիզ.

*) Հետագային Փարիզի եւ Պոլսոյ ռուս դեսպաններու միջեւ եւս վէճեր ծագեցան Հայկական Հարցի դեկավարութեան նկատմամբ. ատոր պէտք է վերագրել հակասութիւնները անոնց թելադրութիւններու եւ քայլերու մէջ։

ՎԱՀԱՆ ՄԻՆԱԽՈՐԵԱՆ

ԱՆՋԱՏԱԿԱՆՆԵՐԸ

V

ԵՐԿՈՒ ԴԱՏԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Նախ եւ առաջ այդ գործի մէջ արտայայտւում են Դաշնակցութեան նկատմամբ այն տրամադրութիւնները, որոնք յատուկ էին զալիք անջատականներին։ Մռաւեանը դեռ դաշնակցական է։ Նա խոնարհւում է «Երկրի» դատի առաջ, ջերմ կողմնակից է «աղգային կուլտուրային» եւ միաժամանակ քննադատում է Դաշնակցութեան այլատարը կազմը, որի մէջ տեղ ունեն «թէ՛ գիւղացին, թէ՛ վաշխառուն, թէ՛ աշխատաւորը, թէ՛ բուրժուազիան, թէ՛ տիրացուն, թէ՛ տէրտէրը» եւ այլն։ «Դաշնակցութիւնը պէտք է դադարէ միջդասակարգային նեխւած հակայառաջադիմական մի կազմակերպութիւն լինելուց։ Դաշնակցութիւնը պէտք է լինի միայն եւ միայն աշխատաւորների դասակարգային կուսակցութիւնը» (Դ. Ա. էջ 338)։

Ժամանակակից դաշնակցական ընթերցողի համար այդ եզրակացութեան մէջ ոչ մի տարօրինակութիւն չկայ, բայց, Դաշնակցութիւնը աջ ու ձախ դէպի իրենց քաշող հակամարտ հոսանքների բախման օրերին այլ էր նրանց նշանակութիւնը։ Մռաւեանը թոյն է թափում տաճկահայ դատը գործիք դարձրած բուրժուազիայի դէմին եւ մտրակում է նրա հետ «նոյնացած» Դաշնակցութիւնը։ Այս նոյնացման շուրջը տեղի են ունենում երբեմն չփոթութիւններ, երբ մէկ կողմից՝ պաշտպանելով տաճկահայկական դատը, միւս կողմից՝ նա հակւում է դէպի տարածւած այն թիւր կարծիքը, թէ դատը ինքնին բուրժուազիայի տենչանքների արդասիքն է (Անդ, էջ 335)։ *Սակայն, էականը այդ չէ։ Հարցի ծանրութեան կենտրոնը Մռաւեանի համար գործելակերպի խնդիրներն են, որոնց հետ էլ կապւած է Դաշնակցութիւնը «աշխատաւորների կուսակցութիւն դարձնելու» խնդիրը։*

«Մենք, կովկասահայ աշխատաւորներս, գրում է նա, չենք կարող օգնութեան ձեռք չմեկնել մեր տաճկահայ եղբայրներին, բայց միայն օգնութիւն. մենք իրաւունք չունենք միջամտելու, խառնւելու նրանց ներքին գործերի մէջ, որովհետեւ... ծանօթ չենք երկրի կոնկրետ պայմանների հետ... փչացնում ենք նրանց գործը... կանգնում ենք սայթաքման այն քարի վրա, որը գլո-

րում է թէ կովկասահայ աշխատաւոր ժողովրդին եւ թէ՛ տաճկահայերին կովկասահայ բուրժուազիայի գիրկը, որը դէպի կորուստ է տանում թէ՛ մեզ, թէ՛ նրանց» (Անդ, էջ 338)։

Նոյնը կրկնելով «Յաւելուածի» մէջ («Դաշնակցութեան կրիզիսը», էջ 55) *եզրակացնում է՝ «Այստեղից բնականօրէն բխում է երկու դատերի բաժանման հարցը»։ Ապա նորից նոր քննարկելով Դաշնակցութեան խայտաբղէտ կազմը, ասում է. «Այն պայքարը, որ այսօր գոյութիւն ունի Դաշնակցութեան մէջ — դա տաճկահայ եւ կովկասահայ դատերի պայքար չէ, այլ ազգայնական բուրժուազիայի եւ գիտակից սոցիալիստական բանւորութեան պայքարը, եւ բաժանման այն հարցը, որ այսօր հրապարակի վրա է դրուած, դա ոչ թէ տաճկահայ Դաշնակցութեան եւ կովկասեան Դաշնակցութեան բաժանման հարցն է, այլ բուրժուական Դաշնակցութեան եւ սոցիալիստական Դաշնակցութեան բաժանման հարցը։ Տաճկահայ դատի բաժանման հարցը դժուար թէ առաջ գար, եթէ տաճկահայ շարժումը լինէր սոցիալիստական շարժում եւ ոչ թէ համազգային մի գործ, որ գտնւում է հակասոցիալիստական տարրերի ղեկավարութեան տակ»* (Անդ, 56)։

«Եւ ամենքը սիրահարուած են տաճկահայ խնդրի վրա», գրում է Մռաւեանը։ «Եւ մանրունքի այն խանութպանը, որ ապդասիրութիւն է անում մուշտարիներ շատացնելու համար, եւ այն վաճառականը, որի իդէալը իր ձեռքի արշինն է, եւ այն վաշխառուն, որը իր կէս տոկոսի համար կը զոհէ ամբողջ ազգը, եւ այն նաւթային կրեսոսը, որի համար 10,000 տաճկահայերի գլուխը 10 փութ մազութի գին չունի,— նրանք ամենքը, ամենքը մի առանձին քնքշութիւն են տածում դէպի տաճկահայ խնդիրը» (Անդ, էջ 48)։

Աւելորդ է ասել, որ Մռաւեանի այս թունալից տողերը գրուած չեն ո՛չ ազգային հաւատաքների փոխյարաբերութեան նկատառումներով, ո՛չ էլ ուղղուած են ստոյգ հասցէի։ Նրան զբաղեցնողը փաստացի վիճակն է։ Նա մինչեւ անգամ որոշ չքմեղանքներ ունի, որքան այդ վերաբերւում է անցեալին.—

«Մեղադրել Դաշնակցութիւնը այդպիսի՛ քաղաքականութեան համար, անմտութիւն է, աւելի եւս անմտութիւն է առանձին անհատներին մեղադրելը։ Այդ քաղաքականութիւնը բխում է իր ժամանակի իրական պայմաններից։ Այդ ձեւով են ազատել յոյները, այդ ձեւով են ազատել բոլգարները, այդ ձեւով էլ պէտք է ազատեն հայերը։ Դա հետեւողական մի եզրակացութիւն է քաղաքական այնպիսի պայմաններում, որոնք գոյութիւն են ունեցել մինչեւ վերջին տարիները»։ Սակայն, այժմ քաղաքական պայմանները փոխւել են եւ փոխւել են նաեւ տեսակէտները տաճկահայ դատի նկատմամբ (Անդ, էջ 37)։ *«Տաճկահայերի ամենամեծ սխալը կայանում է նրանում, որ նրանք իրենց բախտը կապում են միայն եւրոպական բուրժուազիայի տրամադրութեան հետ եւ ոչ թէ Ռուսաստանի հետ, որը իրաւամբ նայում է սուլթանի վրա, որպէս իր վասալի վրա, եւ որը արդէն չափազանց թանկ գնով ապացուցել է, որ քանի գոյութիւն ունի ռուսական բռնապետու-*

թիւնը, Տաճկահայաստանը չպիտի երաղէ ազատութեան մասին»:

Եւ մէկ երկու ճապաղ խօսքեր ասելով «տաճիկ ժողովրդի մէջ նկատուող» յեղափոխական տրամադրութիւնների մասին, իր բովանդակ թափով նորից անցնում է ռուս յեղափոխութեան, որի հետ կապուած է հարցի լուծումը:

«Ռուսաստանի յաղթական յեղափոխութիւնը ճակատագրոր էն նոյն ազդեցութիւնը պիտի ունենայ հարեւան պետութիւնների վրա (որոնց թւում Թիւրքիայի եւ Պարսկաստանի), ինչ որ ունեցաւ իր ժամանակին Ֆրանսական մեծ յեղափոխութիւնը արեւմտեան Եւրոպայի պետութիւնների վրա: Ահա թէ ինչու Ռուսաստանի ազատագրումը նշանակում է եւ Տաճկահայաստանի ազատագրում: Եւ Տաճկահայաստանի ազատագրումը Ռուսաստանի ազատագրման միջոցով — ներկայ պայմաններում միակ ուղիղ եւ անսայթաք ճանապարհն է» (Անդ, էջ 39):

Իր վերջնական կարծիքը խնդրի մասին այն է, որ «Տաճկահայաստանի ազատագրումը պէտք է ձեռք բերուի ոչ այնքան Սասունի բանաստեղծական եւ դեղատեսիլ լեռների վրա, որքան Պետերբուրգի եւ Թիֆլիսի պրոլետարական փողոցների վրա»...

Մուաւեանի (Արսէն Ամիրեան*) երկու գրքոյկները շատ մեծ ազդեցութիւն ունեցան անջատական շարժման վրա եւ փաստօրէն նրան է պատկանում այդ շարժման «նախահօր» պատիւը: Յատկապէս մեծ էր «ժամանակ է սթափելու»ի ազդեցութիւնը, որը մի տեսակ «մանիֆեստի» արժէք ունեցաւ: Ինքը Ամիրեանը շատ բարձր եւ արժէքաւոր նկարագրի տէր մարդ էր, բայց նրան պակասում էր կազմակերպողի կարողութիւնը, եւ նա չէր, որ կերտեց ու ձեւաւորեց շարժումը: Իր երկրորդ գրքոյկից յետոյ նա այլեւս հեռացաւ Դաշնակցութիւնից: Բայց քիչ յետոյ թողեց նաեւ «Երիտասարդ Դաշնակցականների» շարքերը ու երկար տարիներ մնալով «պարտիզան» յեղափոխականի դերում՝ 1918 թուին յարեց բոլշեւիկներին:

Բայց ընկերվարական Դաշնակցութեան, կամ երկու դատերի բաժանման առաջադրութիւնը մի «տեղական» բնոյթ կրող հարց, հատուածական պահանջ չէ, այլ համայնապարփակ մի տեսութիւն,

---

*) Ամիրեանը ծնուած պէտք է լինի 1878–79 թուին: Մեծ եղբայրը, խանասորի «Գիժ-թաթոսը» Նիկոլի զինուորներից էր, փոքր եղբայրը՝ Գրիգորը սոց.-յեղափոխական: Արսէնը միջնակարգ կրթութիւն ստացել էր Բագուում, ապա ուսել Մոսկուայի պետական համալսարանում: 1902թ. դեկտ. 15ին Մոսկուայում սպանուած սեղանաւոր Իսահակ Ժամհարեանի գործով բանտարկուեց: 1903 թուին փոխադրուեց Շուշիի բանտը, որտեղից ազատուեց 1904ի գարնան եւ անցաւ Բագու: Երկրորդ յեղափոխութեան շրջանում, 1918թ. «26 կոմիսարների» հետ միասին, ընկաւ Անդրկասպեան երկիր, ուր, 1926թ. սեպտ. 20ին, Ստ. Շահումեանի եւ այլոց հետ գնդակահարուեց անգլիացիների կողմից:

որի հիմքերով պէտք է փոփոխութեան ենթարկուի հայ հասարակական-քաղաքական բովանդակ կեանքը, կամ, աւելի ճիշտ, նրա այժմեան «ծուռ» ընթացքը:

Հայ-թրքական ընդհարումները իրօք որ ծռել էին հայ կեանքի բնականոն ընթացքը: Անդրկովկասի բոլոր ասպարէզներում «հրամանատարական դիրքեր» գրաւած հայ ժողովուրդը տեղի էր տալիս: Հայ արդիւնաբերական բուրժուազիան, որ իր շահերով, ձգտումներով դէմ էր աւատապետական միապետութեան եւ կարող էր յեղափոխութեան ժամանակաւոր լծակիցը լինել, հայ-թրքական ընդհարումների հետեւանքով այժմ սարսափում էր նման «յեղափոխական» արհաւիրքների կրկնութիւնից: Տասնամեակների ընթացքում յեղափոխական վարակով համակուած կովկասահայութիւնը, նոյն դէպքերի հետեւանքով, ոչ միայն ղերծ մնաց ռուս առաջին յեղափոխութեան գործերից, որոնց ընթացքում ուրիշ ժողովուրդներ դիրքեր էին գրաւում, բաժին, «ժառանգութիւն» ստանալու համար, այլ եւ լինելով իր բարձր դիրքերից՝ մէկ մակարդակի վրա դրուեց թուրք-թաթարական աստանդական ցեղերի ու նրանց սնանկացող աւատապետների հետ: Նեղ ազգայնական, հիւանդագին շաղախը ամրապնդուում էր յատուկ, ազգային-քաղաքական հիմքերով: Տնտեսապէս յառաջադէմ եւ Անդրկովկասի արդիւնաբերական կենտրոններում արդէն իսկ շերտաւորուած հայ կեանքը նորից նոր միաձուլուած էր վերեւից: Ուղիները նեղում, ճամբաները նեղացուում եւ կղզիացումը անխուսափելի էր դառնում: Հարսանիքի օրերին հայութիւնը մեկուսանում էր...

Անդին յեղափոխութեան կոհակները դեռ ծփում էին: Հարեւաններից վրացիները բռնել էին ազգաշինութեան միջազգային ճամբան եւ շարժման մէջ նշանակալից դիրքեր էին գրաւում, որոնց համազգային արժէքը յետոյ պէտք է հասկացուէր... Իսկ շարժման ղեկավար ժողովանիան, իբր թէ անդիտակ հայ-թրքական ընդհարումների պատճառներին ու առաջացող հետեւանքներին, աջ ու ձախ ճաղկում էր Դաշնակցութեան (հայութեան) «նացիոնալիզմը» եւ հայն ու թաթարը մշակութային ու յեղափոխական մէկ մակարդակի վրա դնելով՝ բողոքում էր, որ նրանք իրենց կռիւներով խանգարում են վրաց աշխատաւոր ժողովրդի յեղափոխական վերելքը: Օրերի հետ միասին ժողովուրդների ճակատագիրն էլ էր փոխուում...

Սրանք են այն հիմքերը, որոնց համաձայն չի կարելի երկու դատերի բաժանումը կամ «սոցիալիստական Դաշնակցութեան»

առաջադրութիւնը հաւասարական, մասնաւոր ու տեղական խնդիրը նկատել։ Յատկապէս տաճկահայկական դատը, սկզբից մինչեւ վերջ եւ ո՛չ մի հատ հակառակորդ կամ անտարբեր մարդ չունեցաւ անջատականների շարքերում. խնդիրը ուղիների մասին էր։ — Հայ քաղաքական կեանքի ծանրութեան կենտրոնը Տաճկական Հայաստանից պէտք է փոխադրւի Ռուսական Հայաստան եւ ա՛յստեղ պէտք է լուծւի ամէն բան, որովհետեւ՝

ա. Տաճկահայերը իրենց յեղափոխական շարժման մէջ մենակ են, իսկ կովկասահայերը կարող են կրթնել Ռուսաստանի մի շարք ժողովուրդների յեղափոխական շարժման։

բ. Տաճկահայերը անզէն են, կովկասահայերը բաւական լաւ զինւած եւ նիւթական, քաղաքական անհամեմատ նպաստաւոր պայմանների մէջ են։

գ. Կովկասահայերը կարող են տասնեակ հազարաւոր կռւող ուժեր դուրս բերել, տաճկահայերը մի՛անգամայն զուրկ են երիտասարդութիւնից, որը ամբողջութեամբ պանդխտութեան մէջ է։

«Ինչպէս տեսնում ենք, տաճկահայերի դրութիւնը ոչ թէ տան անգամ, այլ դուցէ հարիւր անգամ աւելի դժոխային է, քան կովկասահայերի դրութիւնը», եզրակացնում է Մռաւեանը։ «Եւ այդ է պատճառը, որ երկու տարւայ ահեղ հայ-թրքական պատերազմը հայերից խլեց ոչ աւելի քան 2000 մարդ, մինչդեռ տաճկահայերը նոյն ժամանակամիջոցում զոհ տւին մօտ 100,000 հոգի, եթէ 300,000ը չափազանցութիւն համարենք» (Անդ, էջ 45)։

Միւս կողմից՝ եթէ խօսելու լինենք հակառակ զուգահեռականների վրա՝ ապա ուրեմն դժւար չի լինի գալ այն եզրակացութեան, որ նախ՝

Հայ քաղաքական ծանր լուծը դէպքերի բերումով ընկել է տաճկահայերի վրա, ապա՝

Կովկասահայութիւնը այդ շարժման մէջ գործօն մասնակցութիւն ունի երկու-երեք տոկոսի չափով ու իր հոծ բազմութեամբ չեզոքացած է Անդրկովկասի քաղաքական-յեղափոխական կեանքից, ուր նա զոհանում է «արժան համակրանքներով» պէտք «ազգային դատը» Տաճկահայաստանում...

VI

ԼԵՒՈՆ ԱԹԱԲԷԿԵԱՆԻ ՀԱՅԵԱՑՓՆԵՐՆ ՈՒ ԴԵՐԸ

Հրապարակի վրա եղած հարցերը չարունակեցին յուզել անջատականների շարքերը: Յեղափոխութիւնը այլեւս տեղի տալու վրա էր եւ ռէակցիայի մութ դէմքը հեռէն-հեռու տեսանելի էր նաեւ Կովկասում: Միաժամանակ հրապարակը լեցւել էր թարգմանական եւ ինքնուրոյն բրոշիւրային, յեղափոխական-ընկերվարական գրականութեամբ, որ երիտասարդութիւնը լափում էր չտեսնուած ագահութեամբ: Համանմանութեան մղումով նոր հարցեր էին ծագում — «մատերիալիզմ», «իդէալիզմ», «մոնիզմ», «դուալիզմ», հողային հարց, բանւորական հարց, սինդիկալիզմ եւ այլն: Միաժամանակ պրպտումներ էին լինում ցաւառանջ հարցերի շուրջը. ի՞նչ է ընկերվարութիւնը, ինչո՞ւ նա հնարաւոր չէ թիւրքիայում, ի՞նչի մէջ են դիւանագիտութեան փոփոխութիւնների հիմքերը, ի՞նչ է իսկապէս տաճկահայկական իրականութիւնը եւ այլն: Այժմ հարցերի նեղ շրջանակները ընդլայնւում էին, հաւաստիացնող յայտարարութիւնները ուսումնասիրութեան ընոյթ էին ստանում:

Անջատական շարժման այս հարցասիրութեան ղեկավարն ու ներշնչողը Լեւոն Աթաբէկեանն էր (Բիխարդ)): Արդէն նախ քան այդ օրերը դաշնակցական երիտասարդութիւնը Բագւում համախմբուած էր նրա շուրջը: Իր պարզ ու ընկերական վերաբերմունքով, հարցերի իր համբերատար, վերլուծող, պատճառաբանող բացատրութիւններով, իր անխոնջ աշխատանքների բերումով, իր կապ-*

---

*) Աթաբէկեանը ծնւել է Շուշում 1875ին: Միջնակարգ կրթութիւնը աւարտել է Շուշու ռէալական դպրոցում, բարձրագոյնը՝ Ցիւրիխի բժշկական համալսարանում: Ուսանողութեան շրջանում նպաստել է Եւրոպայի հայանպաստ գործերին, աշխատակցել է «Դրօշակ»ին: Բագւում երեւաց 1903 թւի վերջերը եւ մտաւ հանրային գործունէութեան ասպարէզ: 1906ին պատգամաւոր ընտրւեց նոյն թւի օգոստոսի 15ին Խրիմեանի հրաւիրած «Հայոց Ազգային Ժողովին»: Այնուհետեւ նւիրւեց անջատական շարժման: Բանտարկւեց 1908ի վերջերին, Դաշնակցութեան «Լրժինի գործով». բանտից ազատւեց 1912ին: Այս շրջանի իր գործունէութիւնը կենտրոնացել է «Սոց. Յեղ. Կուս. Հայ Կազմակերպութեան» աշխատանքների շուրջը, բայց եւ աշխատակցել է «Ազգագրական Հանդէս»ին, «Առողջ Կեանք»ին եւ այլն: Գրել է նաեւ ուսանաւորներ, որոնք լոյս են տեսել առանձին գրքոյկով: Սպանւեց Բագւում 1918թ. ապրիլ 2ին, նոր հայ-թրքական ընդհարումներին վերջ տալու համար թրքական թաղ առաքւած երկու ռուս պատւիրակ ընկերների հետ միասին:

մակերպական չեշուած ընդունակութիւններով նա արդէն գրաւել էր այդ երիտասարդութեան սէրն ու համակրանքը:

Իր « Սոցիալիստական պրոբլեմներ » ընդարձակ յօդուածով՝ գրուած Վահէի (Ե. Թոփչեան) « Անջատուածները » գրքոյկի առթիւ՝ նա մանրաղնին քննութեան է առնում խնդրոյ առարկայ հարցերը, աւելի լայն մակարդակի վրա: Հաշուի առնելով երկու Հայաստանների գերակշիռ գիւղացիական կազմը՝ նա հարց է դարձնում ընկերվարութեան, գիւղացիական դասակարգի հասկացողութիւնները եւ Կաուցկու, Մարքսի, Ֆրիդրիխ Հէրցի, ռուս ս.-դ., էս-էռ տեսաբանների գործերով, նախ եւ առաջ եզրափակում է այն, որ «ժամանակակից սոցիալիզմը, թէ իբրեւ մտածողութիւն, թէ իբրեւ շարժում, արտայայտութիւն է մի բարձր կուլտուրայի եւ կարող է մասանների մէջ խոր արմատներ ձգել միայն այն վայրերում, ուր գոյութիւն ունեն վերջնականապէս զանազանաւորուած հասարակական խաւեր, ուր արդիւնաբերութիւնը կատարւում է ընկերակցօրէն եւ հասարակականօրէն, ուր տեխնիկան, գիտութիւնը եւ գեղարուեստը հասել են ամենաբարձր կատարելութեան »:

Այնուհետեւ Աթաբէկեանը, խնդիր յարուցանելով այն առարկայական պայմանների մասին, որոնք հնարաւոր են դարձնում ընկերվարական գիւղացիութեան գոյութիւնը (գիւղատնտեսական կօօպերացիա, երկրի մշակութային մի որոշ աստիճան, (իրաւակարգ եւ այլն)՝ եզրակացնում է, որ գիւղացիական ընկերվարութիւնը Տաճկահայաստանում « ուտոպիա » է*): Նա ծառանում է այն տարածուած հասկացողութեան դէմ, թէ ընկերվարութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ « ճնշուած, հարստահարուած եւ իրաւազուրկ դարձած մասանների ազգային կուլտուրական, ինչպէս նաեւ տնտեսական դասակարգային շահերի պաշտպանութիւնը»**): Զքաւորութիւնը հազարամեակների պատմութիւն ունի եւ սակայն, ընկերվարական շարժումը միայն 19րդ դարու ծնունդն է:

Երկու դատերի անջատման տեսութեան հետ սերտ կապ ունէր նաեւ տաճկահայ եւ կովկասահայ միջավայրերի տարբերութեան խնդիրը՝ իրենց քաղաքական-ընկերային հիմքերով:

Այս հարցը թէեւ վրիպել էր Մռաւեանի ուշադրութիւնից, բայց ուրիշ ընկերների կողմից բանաւոր ղեկուցումների, հրապարակային վէճերի նիւթ էր դարձել: Առիթն այն էր, որ դեռ եւս 1906ի վերջերին սկսել էր քաղաքացիութիւն ստանալ Դաշնակցութեան

*) «Վերգնահատումներ» ամսգ. թիւ 1, էջ 66–74, «Անիւի» գրադարան, 1908թ.:

**) Վահէ, «Անջատուածները» էջ 30, ըստ «Վերգն.»:

ԼԵՒՈՆ ԱԹԱԲԷԳԵԱՆ

հարքերում այն թիւը տեսակէտը, թէ ընկերվարական շարժման համար տեսակներ կան նաեւ Տաճկահայաստանում, որով երկու դատերի անջատման կարիք չկայ ու երկու տարբեր երկրների ընկերվարական գործը կարելի է միասնաբար վարել անբաժան Դաշնակցութեան միջոցով:

Վահէի քննադատութիւնները անջատական շարժման դէմ հիմնւած են յատկապէս այդ տեսակէտի վրա, որին առարկում է Աթաբէկեանը վերը յիշատակւած յօդւածում: Մենք կանգ չենք առնի այդ հարցի վրա, որովհետեւ նախ՝ Դաշնակցութեան ղեկավարներից իրաղեկները տաճկահայկական իրականութեան մասին կանգնած էին նոյն տեսակէտի վրա ինչ որ եւ անջատականները (աւելի շուտ՝ հակառակը, քանի որ անջատականներն իրենց այդ կարծիքները՝ Տաճկահայաստանում ընկերվարական գործունէութեան տեսակների բացակայութեան մասին՝ հիմնաւորել էին բացառապէս Դաշնակցութեան գրականութեան միջոցով — Խաժակ « Հարկերը Տաճկահայաստանում », Ա. Գասպար « Հայկական շարժում », Մ. *Յովհաննիսեան* « Գորդեան հանգոյցը », « Դաշնակցութիւնը եւ նրա հակառակորդները », « Դրօշակ »*ի թրքական բաժինը, գաւառական թղթակցութիւնները եւ այլն: Ապա՝ այն փաստը, որ, հակառակ դրսի բոլոր ջանքերին, մինչեւ օրս Թիւրքիայում որեւէ ընկերվարական կուսակցութիւն չերեւաց, ինքնին արդէն լոյս է սփռում երեք տասնամեակներ եղած վիճակի վրա:*

Աւելի կարեւոր է անջատական շարժման ղեկավարի վերաբերմունքը դէպի բուն տաճկահայկական խնդիրը, որի վրա նա կանգ է առել « Ինչո՞ւ ենք անջատւում Դաշնակցութիւնից » *գրքոյկում* (*Բագու*, 1907) :

« *Տաճկահայ խնդիրը, գրում է նա, տաճկական մեծ խնդրի բաղկացուցիչ մի մասն է միայն: Ենթութիւն է կարծել, որ հայ ժողովուրդը, որը մինչեւ անգամ իր հայրենիքում փոքրամասնութիւն է կազմում, պիտի կարողանայ սեփական ուժերով ազատագրւել: Ենթութիւն է կարծել, որ եւրոպական դիպլոմատները պիտի կամենան եւ տաճկահայ դատի երկու դոյգ եւրոպական բարեկամները պիտի կարողանան նպաստել յատկապէս տաճկահայերի ազատագրութեան գործին* »:

Այստեղ ուշագրաւը հարցի չրջանակների ընդլայնումն էր, նրան մօտենալու կերպը — « տաճկական մեծ խնդիրը »: Յայտնի է, որ հարցը այս ձեւով հազարամեակի անցեալ ունի եւ եթէ այժմ Աթաբէկեանի կարծիքով կասկածելի է, որ տաճկահայկական մասնակի խնդիրը լուծւի «յատկապէս», ապա ուրեմն՝ վերէն-վար սխալ է մինչեւ օրս կիրառւող բալկանեան դրութեան ազատագրական

շարժումը։ Մռաւեանի « Գեղատեսիլ Սասունի » քննադատութեան կրկնութիւնն էր այս, բայց աւելի մեծ հեռաւորութիւնից և ինքնագիտակ մի ձեւով։

« Հայ ժողովուրդը պիտի ազատուի տաճիկի հետ միասին, կամ բնաւ չպիտի ազատուի », գրում է Աթաբէկեանը։ Այս էլ կանխագուշակում էր թերեւս՝ իր վճռական « բնաւ »ով...

Բայց ի՞նչ անենք եւ ինչպէ՞ս։

« Տաճկահայ յեղափոխութիւնը՝ այդ պատճառով տաճկական յեղափոխութեան բաղկացուցիչ եւ ենթակայ երեւոյթներից մէկը պիտի կազմի և չի կարող ունենալ որևէ սեպարատիստական (անջատական) նպատակ։ Հայդուկային արշաւանքների, անպատրաստ ապստամբութիւնների, դիպլոմատիական ակնկալութիւնների եւ պարլամենտական հարցապնդումների քաղաքականութիւնը պէտք է թողնել մի կողմը եւ ձեռնարկել անմիջապէս միջազգային յեղափոխութեան կազմակերպութեան Թուրքիայում »։

Ի՞նչն է այստեղ կարեւորն ու նորը։ Այն՝ որ հայկական շարժումը « չի կարող ունենալ որե՛ւէ սեպարատիստական նպատակ »։ Սա մէկ կողմից հարցադրութեան տրամաբանական հետեւութիւնն է, միւս կողմից՝ հայ հասարակական-քաղաքական շարժման ընթացքի տրամադծական հակադրութիւնը։

Սակայն, նրանք՝ որոնք մինչեւ օրս կարծում են, թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը Թուրքիայում միջազգային յեղափոխութիւն կազմակերպելու վրա չի աշխատել, Թուրք ընդդիմադիր հոսանքների հետ համերաշխ գործակցելու ջանքեր չի Թափել, նրանք, նշանակում է, միտք ունեն յաւիտենապէս երանելի դրութեան մէջ մնալու։ Դաշնակցութիւնը այս ուղղութեամբ արել է առաւելագոյնը և այս առումով եղած բոլոր քննադատութիւնները « դի դո՛ւ միայն կաս յԵրուսաղեմ » են։

Աւելի հիմնաւոր են այլ կողմից լսուող քննադատութիւնները, թէ ինչո՞ւ Դաշնակցութիւնը ոյժ տուաւ « Երիտասարդ Թուրքերի » կազմակերպութեան, ինչո՞ւ առաջ քաշեց նրանց Եւրոպայում, կապեր, ծանօթութիւններ ստեղծեց, ինչո՞ւ նպաստեց նրանց գործունէութեան երկրի մէջ, ինչո՞ւ, վերջապէս, պատսպարեց Թալէաթին եւ ընկերներին Համիդի հալածանքների օրերին, ինչո՞ւ ազատեց նրանց ստոյգ մահից, քանի որ կարելի էր բուռ դանակով մորթոտել։

Այսպիսով, խնդիրը թեր ու դէմ այս « քննադատութիւններ »ի մէջ չէ։ Եւ այդ չէ նաեւ Աթաբէկեանի միտքը։ Կարեւորը այն է, որ Դաշնակցութիւնը իր բոլոր համագործակցական աշխատանքները Թուրք ընդդիմադիրների հետ կատարել է « սեպարատիստական

նպատակով », այդ բառի ընդարձակ իմաստով: Դաշնակցութիւնը չի ձգտել ամէն գնով Տաճկահայաստանում «Հայոց թագաւորութիւն» ստեղծելու, ինչպէս ենթադրում են անգործ մարդիկ: Նա չի որոճացել անպայման Հայաստանը Թիւրքիայից անջատելու ծրագիրներ: Բայց որ Թիւրքիան Թիւրքիա է, իսկ Հայաստանը՝ Հայաստան, որ նրանք իրենց « սեպարատ » կեանքն ու բախտը պիտի ունենան, որ հայութիւնը ամէն տեղ՝ Թիւրքիայից անկախ՝ իր ազգային ուրոյն ձգտումներն ու իդէալներն ունի եւ ամէն մարդ պէտք է այդ իդէալներին ընդառաջ գնայ,— այդ եղել է Դաշնակցութեան քաղաքականութեան հիմքը Թիւրք ընդդիմադիր հոսանքների նկատմամբ: Բնականաբար, ամէն անգամ, երբ սաստկացել են հալածանքները, « սեպարատ » ձգտումները աճել են, իսկ երբ Թուլացել են ճնշումները, այդ ձգտումներն էլ նւազել են: Եւ այդ քաղաքականութիւնը չի եղել ինչոր գաղտնի դաւադրութիւն Թիւրք ընդդիմադիրների նկատմամբ, այլ ծրագրով, գրականութեամբ, խօսքով ծանուցւած, պարզաբանւած տեսակէտ ու վարքագիծ: Որով, ուրեմն, հարց կարող է լինել միայն այն մասին, Թէ ինչո՞ւ Դաշնակցութիւնը « Թոյլ է տւել» իրեն մինչեւ իսկ այդ կարգի «սեպարատիզմ»...

Բայց Աթաբէկեանը այդ կարգի հարց չի դնում, նա գիտէ միայն, որ այդ « սեպարատիստական նպատակները » կան, գիտէ նաեւ այն, որ նրանք հեռաւոր ու մօտաւոր անցեալի պատմութեան արդասիքներն են, գիտէ, որ այդտեղ է հասել հայ հասարակական — քաղաքական մտքի ու գործի զարգացման բնականոն ընթացքը: Այդ բոլորը գիտէ եւ իմանալով հանդերձ, այնուամենայնիւ, ասում է, Թէ՝ տաճկահայութիւնը « չի կարող ունենալ որեւէ սեպարատիստական նպատակ », որովհետեւ « հայ ժողովուրդը կամ պիտի ազատւի տաճիկի հետ միասին, կամ բնաւ չպիտի ազատւի »...

Միտքը ունենում է երբեմն Թռիչքներ, որոնք կապ չունեն ոչ սրտի, ոչ խելքի հետ. այսպիսի մի Թռիչք է Աթաբէկեանի այս միտքը:

Մենք բնաւ չենք կարող պատասխանել այն հարցին, Թէ ի՞նչ կը լինէր այն դէպքում, եթէ Դաշնակցութիւնը կամ տաճկահայութիւնը պարզապէս Թրքանար, կամ իսպառ որեւէ անջատողական նպատակ չսնուցանէր: Անցեալից մեզ յայտնի են բանիմաց փաստեր՝ Թէ մէկ, Թէ միւս ուղղութեամբ: Ջարդերի ժամանակ տեղ-տեղ տաճկահայ ժողովուրդի մի մասը Թրքացաւ, բայց սրանց դժբախտութիւնը կրկնակի եղաւ: Մենք վկայ ենք, որ մեծ ջարդերից անմիջապէս յետոյ սրանք Թրքացած վիճակում ջարդւեցին: Գալով առ հասարակ « սեպարատ նպատակների » հարցին, այս դէպքում մենք ունենք Դաշնակցութեան Հինգերորդ Ընդհանուր ժողովի որոշումնե-

ը, որոնք կայացել են թրքական յեղափոխութիւնից անմիջապէս յետոյ: Այնտեղ ճերմակի վրա սեւով գրւած է.

« Ողջունելով հին ըէժիմի տապալումը Օսմանեան պետութեան մէջ, ուր նախկին կարգերու աւերակներուն վրա կը ճեւաւորուի ազատութեան շէնքը, Դաշնակցութեան՝ Ընդհանուր ժողովը,—քաջալերւած քսանամեայ յեղափոխական դրական աշխատանքով,— պարտք կը համարի յայտարարել ի գիտութիւն Թիւրքիոյ բոլոր ժողովուրդներուն եւ յատկապէս հայ ժողովուրդին.

« Որ՝ Դաշնակցութիւնը իբրեւ կուռ, յեղափոխական կուսակցութիւն, վար կը դնէ դաւադրական այն միջոցները, որոնցով կը պայքարէր հին բռնակալ ըէժիմին դէմ, եւ իբրեւ կողմնակից սահմանադրական ըէժիմի, որ մերձաւոր եւ լաւագոյն հանդրւա՛ն է իր ծրագրին եւ սկզբունքներուն մշակման ու գործադրութեան համար, ի հարկին հանդէս կուգայ մարտական–ռազմական իր ամբողջ ուժով՝ կռիւ մղելու ըէաքսիոնին դէմ, երբ ան սպառնայ սահմանադրական կարգերուն եւ փորձէ վերահաստատել այն վիճակը՝ որ այս երկրի անկման եւ յետամնացութեան պատճառ եղաւ:

« Որ՝ Դաշնակցութիւնը հաւատարիմ իր սկզբունքին եւ գործելակերպին, պիտի շարունակէ նոյն թափով եւ աւելի լայն ծաւալով համագործակցիլ թիւրք երիտասարդ կուսակցութեան եւ մտաւորականութեան հետ՝ ի պաշտպանութիւն սահմանադրութեան եւ համախմբել այդ գործակցութեան շուրջը այն բոլոր դիմադիր տարրերը, հայ եւ օտար, որոնք գիտակցութիւն եւ նպատակ ունին պաշտպանելու նոր կարգերը, ինչպէս նաեւ ժողովուրդին կեղեքւած դասին շահերը, եւ իր այդ վերաշինող աշխատանքին մէջ կուսակցութիւնը ջանք չպիտի խնայէ վերացնելու համար միջազգային եւ ազգային այն բարդութիւնները, որոնք կրնան դժւարացնել իրաւակարգի հիմնաւորումը եւ ազգերու փոխադարձ եւ անկեղծ համերաշխութիւնը:

« Որ՝ Դաշնակցութիւնը նախանձախնդիր հայ ժողովուրդի ներդաշնակ եւ անարգել զարգացման, պիտի պաշտպանէ մեր ազգային–կուլտուրան քաղաքակրթող բոլոր հիմնարկութիւնները, պիտի հիմնաւորէ ժողովրդական բոլոր իրաւունքները, միշտ յարգելով ուրիշ ժողովուրդներու նոյնքան սրբազան իրաւունքները:

« Որ՝ Դաշնակցութիւնը՝ վճռականապէս ետ մղելով անջատողական ձգտումները, պիտի տքնի վերակազմել երկրի քաղաքական եւ տնտեսական կարգերը, Օսմանեան պետութեան ամբողջութեան մէջ, հիմնւած բոլոր շրջաններու տեղական լայն ինքնավարութեան

վրա եւ ամրապնդուած բոլոր տարրերու դաշնակցական կապերով»*) :

Ուրե՞մն... ուրեմն այն, որ թէ՛ մէկ, թէ՛ միւս ելքը անօգուտ եղաւ բնաջնջման դէմ, որովհետեւ սրան յաջորդեց Ադանայի ջարդը, ապա նաեւ Մեծ Եղեռնը:

Այսպիսով, համազգային աղէտի աղբիւրը հեռուէն կը հոսի: Մի օր պէտք է մէկ կողմ դնել ամէն բան եւ այդ աղբիւրի ակունքին մօտենալ, տեսնել, չօշափել, հասկանալ ու զգալ այն, այլ կերպ կոյր աչքերով յաւիտենապէս պիտի կոխկրտենք այդ աղէտի նահատակների դիակները...

Եւ Աթաբէկեանի խօսքը այդ «ակունքի» մասին էր. նա ուղղուած էր հայ ազատագրական շարժման հին ուղիների դէմ, որովհետեւ «խենթութիւն է կարծել, թէ եւրոպական դիպլոմատները պիտի կամենան նպաստել յատկապէս տաճկահայերի ազատագրութեան գործին»: Նա ուղղուած էր միաժամանակ թէ՛ կլոր սեղանի վրա դրուած «ապուրի» եւ թէ՛ այդ ապուրը «երկաթեայ շերեփներով» հաշակելու դէմ...

Առհասարակ, անջատականների մտորումները այս ուղղութեամբ ճշտուում ու զարգանում էին որոշ հետեւողականութեամբ, որովհետեւ թէ՛ «տեղական գործունէութեան» նախնական պահանջը, թէ՛ հայ ազատագրական շարժման ծանրութեան կենտրոնը Տաճկահայաստանից Կովկաս փոխադրելու պատճառաբանուած առաջարկը, թէ՛ ամէն մի «սեպարատիստական նպատակների» բացասումը, թէ՛ ռուս միապետութեան տապալման կենսական անհրաժեշտութիւնը, թէ դիւանագիտութեան արժէքի բացասումը,— որոնց դէմ ծառացած էին ժամանակին՝ այսօր հրապարակը աղմկող «դատախաղները»,— ներկայացնում են տեսական մի ամբողջութիւն:

Այդ տեսութեան անկիւնաքարերից մէկն է նաեւ «աղգային հարցը», որը այդ օրերին, ինչպէս տեսանք, ենթակայ էր գիտակից շահագործման, «Տաճկահայկական դատ»ի միջոցով՝ կովկասահայութեան բուրժուա-աղատական տարրերի եւ նրանց ձեռքին կոյր գործիք դարձած տաճկահայ դեմոկրատ խաւերի կողմից (միհրանականներ):

Սրա հետ միասին «աղգի» եւ դասակարգի բաղկացուցիչ փոխյարաբերութիւնների խնդրում կային տարածուած անորոշութիւններ, որոնց համաձայն՝ մէկ կողմից՝ «աշխատաւոր մասանները», միւս կողմից՝ «հայութեան կենսունակ տարրերը», երրորդ կողմից՝ «ճնշուած, հարստահարուած, իրաւազուրկ դարձած դասա-

*) Յայտարարագիր եւ Որոշումներ Հ. Յ. Դաշնակցութեան V Ընդհ. ժողովի, 1909, էջ 1—3:

կարգերը » պարտաւորւում էին « բարձր բռնել » ընկերվարութեան « դրօշակը » ամէն տեղ, ուր հայ կայ՝ « հայ աշխատաւորութեան ազգային–կուլտուրական, մարդկային–քաղաքական » շահերը պաշտպանելու համար...

Այնքան, որքան այս անորոշութիւնների մէջ ստուգութիւն էր կատարւում, արժէք ունէր նաեւ Աթաբէկեանի միջամտութիւնը: Հայ ս.–դ.ները դիւրութեամբ ելան խնդրի միջից. ժամանակի ոգուն համաձայն պարզապէս զանց առին այն (Դ. Անանունի բացառութեամբ): Այլ էր անջատականների եւ յատկապէս Աթաբէկեանի վերաբերմունքը: Թէ ներքին ժողովների, թէ դրսի վիճաբանութիւնների հերթական նիւթերից մէկն էր այդ հարցը: Հետագայում այս առթիւ Աթաբէկեանին մեղադրում էին մարքսիզմի մէջ, բայց այդ ճիշտ չէր. Աթաբէկեանը կանգնած էր ռուս նարոդնիկների, յատկապէս Լաւրովի տեսակէտի վրա:

« Յարատեւ կենակցութիւնը եւ արիւնակցութիւնը, գրում է նա, առաջացնում են մի շատ կարեւոր երեւոյթ, որը կարելի է անուանել պսիխո–ֆիզիքական նմանութիւն: Ստեղծւում են մի շարք բոլորին ընդհանուր պսիխական գծեր, բայց աւելի պսիխական, քան ֆիզիքական: Այդ գծերը բաղմանում եւ ամրանում են դարերի ընթացքում եւ ժառանգութեան ու կուլտուրայի միջոցով անցնում են սերունդից սերունդ եւ այդպիսով առաջ է գալիս պսիխո–ֆիզիքական մի տիպ, մի կոլլեկտիւ անհատականութիւն, որը ուժեղ կամ թոյլ չափերով տարբերւում է ուրիշ կոլլեկտիւ անհատականութիւններից եւ ինքը միայն իրեն նման է: Ազգութեան էութիւնը այդ անհատականութեան մէջ պէտք է փնտրել»*):

Ինչ մնում է դասակարգի հասկացողութեան, նա այս դէպքում երկու ոտքով կանգնած է ռուս սոց.–յեղափոխականների, իտալական եւ ֆրանսական սինտիկալիստների, գերմանական ռեվիզիոնիստների արծարծած տեսակէտի վրա: Ժխտում է դասակարգերի « այն կլասիֆիկացիան, որի գլխաւոր կրիտերիումը մասնաւոր սեփականութիւնն է », մեկնում է աշխատանքի քանակից, որակից եւն:

Սակայն, Աթաբէկեանը իր « կոլլեկտիւ անհատականութեան » կեանքի մէջ շատ մանրամասն եւ ուշադիր զտում, զատում է դասակարգայինը ազգայինից — ընդհանուր պատմութիւնը, հայրենիքը, օդը, ջուրը, կապոյտ երկինքն ու գեղատեսիլ սարերը՝ այդ հայրենիքի մէջ եղած բուրժուական հիմնարկութիւններից — տալով ամէն մէկին իր տեղը:

---

*) Ռիխարդ, «Ազգութիւն եւ դասակարգ», Եր. Դաշ.–երի Գրադարան, թիւ 5, 1907, էջ 28:

«Հասարակութիւնների տնտեսական զանազանաւորումը եւ սուր ներհակութեան մէջ գտնուող դասակարգերի առաջացումը ստեղծում են մի ազգի սահմանների մէջ պսիխիական նոր անհատականութիւններ, որոնցից իւրաքանչիւրը ձգտում է ունենալու իր ուրոյն արտայայտութիւնը»:

Ձենք կարող մասնաւորւել այստեղ: Միայն ասենք, որ այժմ Խորհուրդների մէջ արծարծւող «պրոլետարական կուլտուրայի», բանւորի գեղարւեստի, ուրոյն տենչերի, ապրումների, հաւաքական հոգեբանութեան տեսութիւնները նորութիւններ չէին ոչ Ամաբէկեանի և ոչ էլ Դաշնակցութեան մտաւորականներից ոմանց համար*):

Տարբերութիւնն այն էր, որ Ամաբէկեանը աւելի առաջաւոր ու յառաջադիմական էր համարում աշխատաւորի «ազգութիւնը», որովհետեւ «սոցիալիզմը արդէ՛ն պարփակում է իր մէջ այն ամենը, ինչ որ գեղեցիկ է, վեհ է եւ մարդկային է ազգութեան մէջ», որովհետեւ «սոցիալիզմը միայն հնարաւոր պիտի դարձնի անկախ անհատականութիւնը եւ անհատականութեան կատարեալ ու անաղջատ կամաարտայայտութիւնը, ուրեմն, եւ ազգային կոլլեկտիւ անհատականութիւնը եւ նրա լրիւ կամաարտայայտութիւնը», որովհետեւ «սոցիլիզմի մէջ միայն հնարաւոր է բոլոր լեզուների, բոլոր գեղարւեստների անարգել զարգացումը եւ փթթումը», եւ, վերջապէս, որովհետեւ «սոցիալիզմը միայն երջանիկ պիտի դարձնի ազգի բոլոր անդամներին»*):

VI

ԱՆՋԱՏԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՐԺԷՔՆ ՈՒ ՎԱԽՃԱՆԸ

Անճնաւորելով անջատականներին յուզող հարցերի տեսութիւնները երկու զեկավար ընկերների մէջ՝ մենք բնաւ միտք չունէինք անտեսելու մնացած ընկերների դերն ու նշանակութիւնը: Միայն պէտք է ասենք, որ մէկ կողմից Մռաւեանի եւ Ամաբէկեանի դերն ու արժէքը շարժման մէջ շա՛տ է մեծ ու գերակշիռ, միւս կողմից՝ մեր ձեռքի տակ չունենք անջատականների մամուլը (·նիւ, Շեփոր, մօտ 30–35 թիւ), որի էջերում, զանազան ժամանակներ, ատայայտւել են և ուրիշ ընկերներ թէ՛ այստեղ չօշափւած և թէ՛ մեր յօդւածից դուրս մնացած այլ հարցերի մասին (դիւանագիտութիւն, կոոպե-

**) Գ·Խաժակ, «Զմարսւած բառեր», «Կովկ· Առաւօտ», № 38· «Կուսակցութեան բիւրեղացում», «Երկիր», 1907, նոյեմբ··

*) «Ազգութիւն եւ Դասակարգ», էջ 42:

բացիա, բանուորական հարց, Օսմանեան յեղափոխութիւն եւ այլն)։

Անջատական շարժումը շօշափելի կերպով սկիզբ առաւ 1906թ. գարնան ու վերջնականապէս ձեւակերպուեց 1907 թուի յունիսին, սահմանադիր համագումարով, Բագուում։

Նախապէս անջատականները կոչւում էին «Երիտասարդ Դաշնակցականներ», յետոյ որակուեցին «Անջատականներ», յետոյ դարձան «Հայ սոցիալիստ յեղափոխականներ»։ Այս որակումներից իւրաքանչիւրը շարժման ուրոյն շրջանների արդասիք է։ «Երիտասարդ Դաշնակցականների» մէջ էին առհասարակ բոլոր այն ընկերները, որոնք դժգոհ էին պաշտօնական Դաշնակցութեան մէջ տիրող ընթացքից, մտայնութիւնից՝ Կովկասին վերաբերուող հարցերի նկատմամբ. որանց մի մասը ընկերացաւ մեզ մինչեւ սահմանադիր համագումարի մէկ-երկու նիստերը, որից յետոյ հեռացաւ եւ մնաց Դաշնակցութեան մէջ (Արտ. Աբեղեան, Գրիգոր Միրզոյեան – Սիւնի եւ այլն)։

Երկրորդ անւան հետ կապւած է մի թիւրիմացութիւն, որը լաւ կը լինէր պարզել. մեզ «անջատականներ» անւանեցին դաշնակցականները, որոնք դժգոհ էին, որ մենք շարունակում ենք Դաշնակցականներ կոչւել, թէկուզ «երիտասարդ» ածականի յաւելումով։ Ենթադրւում էր, որ մենք այդ ձեւով շահագործում ենք կուսակցութեան անունն ու հմայքը մեր շարժման համար, ինչ որ, ի հարկէ, իրաւացի չէր. նախ՝ մեր ընկերների մի ստւար մասը որոշ անցեալ ունէր Դաշնակցութեան մէջ եւ նրանցից երեք հոգի մինչեւ անգամ մասնակցել էին 1905 թ. ապրիլի ռայոնական ժողովին Թիֆլիսում, որով նոյնչափ իրաւունք ունէին դաշնակցական կոչւելու, որքան եւ ուրիշները։ Ապա՝ առանց համագումարի հնարաւոր չէր ուրիշ կերպ կոչւել, իսկ այդ համագումարը կայացաւ աւելի ուշ։

Սակայն, մեզ «անջատականներ» կոչեցին ոչ թէ նրա համար, որ մենք անջատւել ենք, կամ ուզում ենք բաժանւել Դաշնակցութիւնից՝ որով եւ «անջատւածներ» ենք, այլ այն պատճառով, որ մեր հիմնական առաջադրութիւնը Կովկասահայ եւ Տաճկահայ դատերի անջատումն էր։ Այս տարածւած թիւրիմացութեան տեղիք է տւել նաեւ ժամանակի երկու գրքոյկների վերտառութիւնը՝ Ռիխարդի (Աթաբէկեան) «Ինչո՞ւ ենք անջատւում դաշնակցութիւնից» եւ Շահէնի՝ «Ինչո՞ւ չենք անջատւում դաշնակցութիւնից»։ (Վերջինի հեղինակը՝ Գէորգ Մելիք – Շահնազարեան՝ յետոյ անջատւեց Դաշնակցութիւնից ու մեր գործով դատապարտւեց ցմահ՝ աքսորի Սիբիր)։

Ինչ վերաբերւում է երրորդ որակման, խնդիրը մի շարք ժողովների նիւթ դարձաւ Բագուում, համագումարի նախօրեակին. ընկեր-

ների ճնշող մեծամասնությունը կողմնակից էր « Սոց.-Յեղ. կուսակցութեան հայ կազմակերպութիւն » որակման, փոքրամասնությունը, որի մէջ նաեւ, Աթաբէկեանը, առաջարկում էր պարզապէս ձուլուել Ռուս Ս.-Յ. կուսակցութեան հետ եւ հաւաքաբար աշխատել: Վէճը շատ սուր բնաւորութիւն ունէր, բայց Աթաբէկեանը խուսափում էր այդ առթիւ «կողմ» դառնալուց եւ միակ հարցն էր, որի մէջ նա չեզոքացած դիրք ունէր: Միաժամանակ բարդութիւններ ունէինք նաեւ Ռուս Սոց. Յեղ. կուսակցութեան հետ, որը Դաշնակցութեան վերաբերեալ նկատառումներով՝ դժւարանում էր մեզ որդեգրել « Հայ կազմակերպութեան » ձեւով: Սակայն, Սոց. Յեղ. կուս. Կ. Կոմիտէի կողմից համագումարին եկած ընկ. Օ. Ս. Մինորը ընդառաջեց մեծամասնութեան ցանկութեան, եւ անջատական շարժումը՝ թէեւ մկրտուեց « Ս. Յ. Կ. Հայ կազմակերպութիւն » անունով՝ բայց իրապէս շարունակեց աւելի ժողովրդական մնալ « անջատականներ » որակումը:

Ի՞նչ էր անջատական շարժման արժէքը:

Ծնունդ առնելով այնպիսի մի շրջանում, երբ հայ հասարակական, քաղաքական, տնտեսական կեանքը ենթակայ էր շերտաւորման՝ նա ձգտում էր այդ շերտաւորումներից մէկին ձեւակերպւած, կազմակերպւած բնոյթ տալ:

Իբրեւ շարժում, ըստ էութեան նա ուղղւած էր ոչ այնքան Դաշնակցութեան դէմ, որքան կովկասահայութեան Տոծ բազմութեան անշարժ ու մեկուսացած դիրքի: Եւ այս ուղղութեամբ նա քընում, քրքրում էր պատճառները, սխալ – ուղիղ ելքեր էր առաջարկում, ձգտում էր դրաւել Կովկասում թափուր մնացած յեղափոխական դիրքերը, դառնալ Վրացինների պէս գործօն, տիրական ոյժ ռուս յեղափոխութեան մէջ: Իսկ թէ այս դէպքում անջատականները յաջողութիւն չունեցան, դրա հետեւանքները մէջտեղն են. այսօրւայ մեր դիրքն ու դրութիւնը Կովկասում, ի դիմաց թոյլ եւ վտիտ հայ բոլշեւիկների, մեր այդ անյաջողութեան արդիւնքն է: Նոյն անյաջողութեան արդիւնքն են նաեւ ճակատագրական դէպքերը Բրեստում, եւ յետոյ՝ եթէ Բաթումը պատկանէր հայ, իսկ Կարսը վրացի բոլշեւիկների իշխանութեան, պիտի դիջէր Բաթումը:

Իր տեսութեան հիմքերով անջատական շարժումը ձգտում էր յենւել սեղմ առումով հայ գիւղի եւ քաղաքի աշխատաւորութեան վրա: Եւ իր բոլոր յոյսերը կապում էր բացառապէս այդ աշխատաւորութեան յաջողութիւնների հետ: Ձգտում էր նրան « Լոյս Աշխարհ » հանել, ինչպէս ասում էր շարժման տաղանդաւոր առաջնորդը: Իր այդ աշխատանքը որոշ արդիւնք ունեցաւ եւ երկրորդ յեղափոխութեան օրերին նրա բանւոր ու գործակատար հին անդամնե-

ըից ոմանք պատասխանատու դիրքեր գրաւեցին ու որոշ գործ կատարեցին:

Բայց աւելի մեծ եղաւ անջատական շարժման արժէքը նոյնինքն Դաշնակցութեան համար. կովկասահայ կեանքը շարժման մէջ մըտաւ, տենդով արհեստակցական միութիւններ կազմեցին, Դաշնակցութիւնը լրիւ ընկերվարական ծրագիր ու գործելակերպ ընդունեց, « զոման », « բիւրեղացման » շարժումների միջոցով անհարազատ տարրերը դուրս ելան: Ինչ էլ որ լինին ժամանակի քննադատութիւնները այս գործերի մասին, այնուամենայնիւ, շատ պարզ է, որ նրանք լաւ ու յառաջադիմական գործեր էին Դաշնակցութեան մէջ եղած աշխատաւոր զանգուածների համար:

Մենք, ի հարկէ, միտք չունինք ասելու, թէ այդ բոլորի դրդիչը անջատական շարժումն էր: Բնա՛ւ: Բայց որ նա որոշ դրական ազդեցութիւն ունեցաւ այդ գործերի վրա — իրողութիւն եւ անհերքելի փաստ է: Բաւական է թէկուզ վերյիշել 1907 թուի ընդհանուր ժողովի նախօրեակը եւ այդ ժողովում անցած – դարձածը...

Անջատական շարժումը ոտքի կանգնեց մեծ թափով ու դեռ տարին չբոլորուած նրա շարքերում կային մօտ 200 բանւորներ, մի քանի բանւոր թղթակիցներ, Թիֆլիսում կային մի քանի բանւոր ընկերներ, շարժման սկզբից գործի վրա եղած լաւ ու կարող ընկերների մի խումբ, Շուշում, Երեւանում՝ անհատ ընկերներ եւայլն: Կազմակերպութիւնը ունէր շաբաթաթերթ, լոյս ընծայեց վեց եօթ կտոր մեծ ու փոքր գրքոյկներ, բայց՝ նիւթական պատճառներով՝ անկարող եղաւ « Վերագնատումներ » ամսագրի շարունակութիւնը ապահովել:

Բայց շարժումը շատ չապրեց: Հազիւ հազ գործի անցած՝ ռէակցիայի ծանր թաթը լիջաւ նրա մէջքին: 1907 թուի գարնան Բագուում մութ ուժերի ձեռքով սպանուեց մեր աչքառու ու ղեկավար բանւոր ընկերներից մէկը՝ Մովսէս Քոթանջեանը: Բիբիէյբաթի հայ բանւորութեան կողմից շատ սիրուած էր « Մօսուն », եւ հարուածը մեծ էր: Քիչ յետոյ, ձերբակալուեց մեր լաւագոյն ընկերներից Տիգրան Տէր – Սահակեանը, Պարապետի հրապարակում մէկ ժանդարմ եւ մի լրտես սպանելու համար: Տիգրանը արդէն 1902 թ. Միրզոյեւի նաւթահորերի դաժան կառավարիչ Բորիսովի ահաբեկման գործով դատապարտուել էր տաժանակիր աշխատանքների Սիբիր, որտեղից փախել էր 1905 թ.: Այժմ նրա կորուստը համարւում էր անդառնալի, թէեւ յետոյ մահւան դատապարտութիւնից հրաշքով ազատուեց: 1908ի ամրան, Սոց. Յեղ. կուսակցութեան Անդրկովկասի շրջանային ժողովում միասին ձերբակալուեցին գործի վրա եղած ընկերներից Սրմենակ Տէր – Սարգսեանը, Միքայէլ Խաչատուրեանը, Գէորգ Մելիք – Շահնազարեանը, Վասակ Խորխորունին եւ ես, որոնք 1910

թւի մայիսին՝ զրկւելով բոլոր իրաւունքներից՝ դատապարտեցին ցմահ աքսորի Սիբիր եւ այդպիսով շրջանառութիւնից հանեցին։ Մեր ձերբակալութիւնից քիչ յետոյ բանտ բերին «Անիւ »ի պատասխանատու խմբագիր Գրիգոր Բազաղ – Աղաջանեանին, եւ թերթը փակւեց։ Դուրսը մնացած ընկերները սկսեցին հրատարակել « Շեփոր »ը, որին երբեմն յաջողում էինք աշխատակցել բանտից։ Բայց քիչ չանցած ձերբակալեցին նաեւ Աթաբէկեանին, ճակատագրի քմահաճ կամքով, « Դաշնակցութեան գործով »։ Մնացած ընկերները ցրւեցին, եւ գործը կանգ առաւ ու քայքայւեց...

Պատերազմի եւ յեղափոխութեան տարիներին անջատական շարժումը, այլեւս « Սոց. Յեղ. կուսակցութեան հայ կազմակերպութիւն » անւան տակ, վերելքի նոր շրջան ունեցաւ։ Բայց այդ շրջանում մենք կտրւած մնացինք մեր կազմակերպութեան գործերից։

1918 թւի աշնան, երբ Թիւրքիայից փախանք՝ ուր փախել եւ ապաստանել էինք Սիբիրից 1911 թւին, Բագւում արդէն սպանւած էին Աթաբէկեանը, Հայկ, Խորէն, Ստեփան Ստեփանեանները, Գրիգոր Բազաղ – Աղաջանեանը։ Մնացածների մասին լուր չկար։ Թիֆլիզում մեռել էր Արտաշէս Ալիխանեանը, սպանւել էր Ստեփանոս Նաղարեանը եւ միայն երկու հին ընկերուհիներ գտանք։

Հանրապետութեան օրով այս հին ընկերներից յայտնւեցին վեց հոգի՝ 0 – բо – մարշէ վաճառատան գործակատար Աբրահամը, կооպերատոր Յովհաննէս Լազարեանը, ահաբեկիչ Տիգրան Տէր Սահակեանը, կեղծ անուններով՝ Շէֆ, Թիւնին, Զարմայրը։ Սրանցից առաջինը սպանւեց Վէդի – Բասարի շրջանում՝ մութ ուժերի ձեռքով, երկրորդը՝ փետրւարի ապստամբութեան օրերին Ղամարլուի ճակատում, երրորդը՝ խորհուրդների օրով, ինչ որ մի ոճրագործի ձեռքից զոհը ազատելու ժամանակ Երեւանում։ Իսկ միւս երեք ընկերները այժմ աքսորի մէջ են։

Ընդհանրապէս անջատականներին վիճակւեց նոյն բախտն ու ճակատագիրը, ինչ որ իր օրերի դաշնակցական մտաւորականութեան մեծ մասին...

Պրագա

ԱԲՐ. ԳԻԼԼԱՆԴԱՆԵԱՆ

ՕԳՈՍՏՈՍ ՀԻՆԳԸ

(ՄԻ ԷՋ ԲԱԳՈՒԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՑ)

Ամերիկացիք պէտք է մի վայրկեան կանգ առնեն եւ խորհեն, թէ ի՞նչ կը լինէր պատերազմի ելքը եւ տեւողութիւնը Արեւմուտքում, եթէ *թիւրքերը ութ ամիս առաջ հասնէին Բագու*: Եւ նրանք աւելի կանուխ կը հասնէին, եթէ *հայերը չդիմադրէին*:

Ճէմս Վ. Ճերարդ (Բերլինի ամերիկեան նախկին դեսպան) .—

« Գլխաւոր ազդակը, որ գերման արեւմտեան բանակի խորտակումը առաջ բերեց, վառելանիւթի պակասն էր, որովհետեւ *թիւրքերը չկարողացան ժամանակին գրաւել Բագուն, եւ հայերն էին*, որ թիւրքերին արգելք եղան Բագուն գրաւելու ժամանակին»: Զօրավար Լիւդենդորֆ

« Պաղեստինի թիւրքական ճակատի խորտակումը վերագրելի է այն իրողութեան, որ թիւրքերը հակառակ իմ հրամանին եւ խրատին երկու զօրաբաժին ուղարկեցին *Կովկաս հայերի դէմ կռուելու համար*»: Զօր. Լէման ֆոն Սանդերս

1918թ. յուլիս 28ի գիշերը ամենածանր գիշերներից էր Բագուի համար: Պաշարուած քաղաքի զօրքը կարծես այլ եւս դիմադրելու կարողութիւնից զրկւել էր, իսկ, ընդհակառակը, թշնամին համախմբելով նորանոր թարմ ուժեր՝ աւելի էր սաստկացնում յարձակումները: Քաղաքի պաշտպան զօրամասերը մի քանի օրւայ ընթացքում թողել էին բոլոր կարեւոր դիրքերը եւ նահանջել կուչ էին եկել համարեա թէ քաղաքի մէջ...

Այդ օրերին Բագուի ռազմական կացութիւնը հետեւեալն էր. մեր ծայրագոյն ձախ թեւում թշնամին բռնել էր Բիբի-Էյբաթի նաւ-

թահանքերի մեծ մասը: Դէպի աջ՝ Բագուի հայկական եւ այլազգի գերեզմաննոցի մի մասը, Սպանդանոցը եւ Սալեանի զօրանոցները դեռ եւս Բագուի զօրքերի ձեռքին էին, բայց մի կիլոմետրի վրա թիւրքական ուժերն էին դիրք գրաւել: Ծայրագոյն աջ թեւի վրա թշնամին բռնել էր Բալաջարի կայարանի քաղաք տանող բոլոր կարեւորագոյն կէտերը:

Շրջակայքի եւ Բագու քաղաքի ամբողջ թաթար ազգաբնակութիւնը մեծ հրճւանքի մէջ էր եւ ամէն տեսակ աջակցութիւն էր ցոյց տալիս թիւրքական ուժերին՝ ժամէ ժամ սպասելով նրանց ներխուժումին...

Բագուում վխտում էին թիւրք լրտեսները, որոնք իրազեկ էին պահում արշաւող թշնամուն: Յուլիս 26, 27 եւ 28 օրերը քաղաքը սոսկալի կերպով ռմբակոծւում էր թշնամուց՝ մահ եւ սարսափ տարածելով ամէն կողմ: Քաղաքի մէջ գտնւած լրտեսները թաթարական բարձր տների կատարներից դրօշակներով եւ այլ միջոցներով մեծ ճարպիկութեամբ ուղղութիւն էին տալիս թիւրքական թնդանօթներին, եւ քաղաքի վրա թափւող ռումբերը շեշտակի հասնում էին իրենց նպատակին: Բանւորական Խորհրդի, ինչպէս եւ Գործադիր Խառն Մարմնի յուլիս 26ի եւ 27ի ցերեկւայ նիստերը անկարելի եղաւ գումարել, որովհետեւ նիստերի ժամին թիւրքական թնդանօթները սկսեցին ռմբակոծել ճիշտ Խորհրդի շէնքը, եւ նիստին մասնակցող անդամները հրաշքով միայն կարողացան ազատւել իրական մահից:

Զօրքի ընդհանուր հրամանատար Բիչերախովը, յուլիս 28ին, իր հետ առնելով մի կարեւոր զօրամաս՝ առաջ էր շարժւել՝ յայտարարելով, թէ մտնելու է թշնամու թիկունքը, բայց, ինչպէս մի քանի ժամից պարզւեց, թողել էր քաղաքը եւ անցել դէպի Դերբենտ-Պետրովսկ:

Բոլշեւիկեան կոմիսարները, որոնք այդ ժամանակ Բագու քաղաքի իշխանութիւնն էին կազմում, յուլիս 28ին արդէն կարգադրել էին դատարկել քաղաքի բոլոր բանկային հարստութիւններն ու պահեստների ամբողջ ռազմամթերքը: Ծովի վրա գտնւող հարիւրից աւելի խոշոր նաւերը, յատուկ կարգադրութեամբ, կազմ եւ պատրաստ կանգնած էին նաւահանգիստներում, ուր բարձում էին ոչ միայն բանկային հարստութիւններ ու ռազմամթերք, այլ եւ զօրքին պատկանող հագուստեղէն, ուտելիք, մաքսատան հաղարաւոր հակերով մասնաւոր անձնաւորութիւնների եւ ընկերութիւնների պատկանող ապրանքներ: Այդ կողմից աչքի էր ընկնում մանաւանդ բոլշեւիկ Պետրովի զօրամասը, որ հրաման ստանալով թողնել քաղաքը՝ մեծ եռանդով սկսել էր պահեստների ապրանքները լցնել նաւերը:

Առեւտրական հաստատութիւնների տասնեակ միլիոնների հասնող ծովափնեայ բոլոր պահեստները թալանուեցին...

Յուլիս 28ի երեկոյեան պարզուեց, որ քաղաքը պաշտպանող մեծամասնական զօրամասերն եւս թողնում են դիրքերը եւ շտապում դէպի նաւահանգիստ, մինչեւ իսկ կոմիսարների ընտանիքներն իրենց տնային իրերով դէպի նաւերն էին շտապում... Ու պարզ էր, որ քաղաքը ընկնելու վրա էր, եւ բոլշեւիկ կոմիսարները թողնելու էին քաղաքը, գուցէ, հէնց այս գիշեր...

Արդէն հրապարակ էին եկել զանազան մութ անձնաւորութիւններ եւ այս կամ այն պետութիւնների կեղծ ներկայացուցիչներ, որոնք լուրջ կերպով մտածում էին քաղաքը տաճիկներին յանձնելու մասին...

Բաքուի Հայոց Ազգային Խորհուրդը ամբողջ գիշեր խորհրդակցութեան մէջ էր: Ազգային Խորհրդի համար պարզ էր, որ քաղաքի պաշտպանութեան համար բոլոր միջոցները չեն գործադրուած եւ որ քաղաքի զօրամասերի անզօրութիւնը արդիւնք էր այն դրութեան, որ ստեղծել էր բոլշեւիկեան ապիկար իշխանութիւնը: Ազգային Խորհուրդը համոզուած էր, թէ քաղաքը հնարաւոր է պաշտպանել, եթէ կանոնաւոր կերպով դասաւորուեն նրա ուժերը, եւ այս բոլորը անհրաժեշտ էր պարզել թէ Բանւորական Խորհրդին, որ հանդիսանում էր այն ժամանակւայ պարլամենտը եւ թէ, մանաւանդ, քաղաքացիներին, որոնց ջանքերով հնարաւոր պիտի լինէր քաղաքը պաշտպանել, մինչդեռ մեծամասնական իշխանութեան անակնկալ փախուստը, բնականաբար, քաղաքի մէջ անիշխանութիւն պիտի ստեղծէր, որից պիտի օգուտէին թիւրքական զօրամասերը:

Այդ ուղղութեամբ մեծ ջանքեր պէտք եղաւ գործադրել, մինչեւ որ, վերջապէս, բոլշեւիկեան կոմիսարները ստիպուած եղան համաձայնուել նախ քան հեռանալը հրաւիրել բանւորական խորհուրդ եւ բացատրել քաղաքի իրական դրութիւնը:

Յուլիս 29ի գիշերը տասնեակ հազարաւոր քաղաքացիներ շրջապատել էին Բանւորական Խորհրդի շէնքը եւ հեւ ի հեւ սպասում էին Խորհրդի նիստի վախճանին... Խորհրդի մէջ ժողովրդական կոմիսարների նախագահը բացատրում էր դրութեան ծանրութիւնը եւ յայտնում էր, որ բոլոր միջոցները սպառել են եւ այլ եւս անկարելի է դիմադրել տաճիկներին. միակ ելքը մնացել է քաղաքը յանձնել տաճիկներին...

Ժողովրդական կոմիսարների նախագահը միեւնոյն ժամանակ աւելորդ չհամարեց կարդալու Նուրի փաշայի մի նամակը, որ ըստացուել էր այդ օրերին: Այդ նամակը ուղղուած էր Բաքուի մեծամասնական կառավարութեան, ինչպէս եւ Բաքուի բնակչութեան:

Ինչպէս հետագային լրագիրներից պարզուեց, նոյն նամակի մի օրինակը ուղղուած էր եղել Բաղուի Հայոց Ազգային Խորհրդին, բայց վերջինիս ձեռքը չէր հասել:

Այդ նամակի մօտաւոր բովանդակութիւնը հետեւեալն էր.— «Մենք՝ տաճիկներս եկել ենք Կովկաս ոչնչացնելու համար բռնակալ Ռուսաստանը եւ նրա աւերակների վրա, պիտի հիմք դնենք կովկասեան ժողովուրդների ազատութեան եւ երջանկութեան: Ով թանդ է գնահատում ազատութիւնը, պէտք է աջակցի մեզ, որպէսզի մենք վերջնականապէս ոչնչացնենք այդ հիւսիսային արջին: Այդ իսկ պատճառով դիմադրել մեզ, կը նշանակէ նպաստել րէակցիայի յաղթանակին: Յանուն ժողովուրդների ազատութեան եւ երջանկութեան քաղաքը պէտք է յանձնել մեզ»:

Ինչպէս եւ պէտք էր սպասել, Բանւորական Խորհուրդը, որ բաղկացած էր Բաղուի բոլոր կուսակցութիւններից, մեծ զայրոյթով լսեց այդ նամակի ընթերցումը եւ ծանր յանդիմանութիւններ ուղղեց ժողովրդական կոմիսարներին իրենց առաջարկների համար: Բոլշեւիկեան կոմիսարները այլ եւս անկարող էին մնալ իշխանութեան գլուխ եւ ստիպուած եղան հրաժարական տալ: Մի զարմանալի զոհունակութեան աղմուկ բարձրացաւ Խորհրդի նիստում, որին արձագանգեցին դրսում համախմբուած քաղաքացիները.

— Բոլշեւիկները ընկա՛ն...

— Կորչե՛ն ժողովրդի թշնամի բոլշեւիկները...

— Կեցցէ՛ նոր կառավարութիւնը, կեցցէ՛ նոր իշխանութիւնը...

— Քաղաքը պէտք է փրկենք, քաղաքը պէ՛տք է պաշտպանենք ամէն գնով...

Գոռում էր անզուսպ ամբոխը եւ տասնեակ հազարների հասնող բազմութեան ինքնաբուխ ու խրոխտ ձայնը կէս գիշերային այդ ժամին տարածւում էր հեռու տարածութիւններ՝ ոգեւորութիւն եւ ուրախութիւն ներշնչելով յուսահատութեան մատնուած ժողովրդին: Կարծես մի հսկայական հեղեղ էր, որ փշրելով իր բարձրաբերձ պատնէշները՝ սոսկալի կատաղութեամբ առաջ էր անցնում:

Նոյն գիշեր կազմուեց հինգ հոգինոց նոր կառավարութիւն — ամենքն էլ Կասպից ծովի նաւային պաշտօնէութիւնից: Այդ թիւը պէտք է լրանար յեղափոխական կուսակցութիւնների ներկայացուցիչներով, որով պիտի ստեղծուէր քաղաքի իրական իշխանութիւնը:

Զնայած որ Բագուն չրջապատող տաճիկները նոյն կատաղութեամբ շարունակում էին կռիւը, մեռնող, ինքնավստահութիւնը կորցրած քաղաքացիները զարմանալի եռանդ, կռուելու ցանկութիւն էին սկսել ցուցադրել: Սքանչելի էր, մանաւանդ, Դաշնակցութիւնը, որ այդ օրերին երեւան էր եկել իր ամբողջ թափով: Այլ եւս գոյութիւն չունէին բոլշեւիկեան կաշկանդումներն ու խոչընդոտները: Դաշնակցութեան առաջին գործը եղաւ քաղաքը պաշտպանող դիրքերը լցնել այնքան զինուորներ եւ մարտիկներ, որ տաճիկները հնարաւորութիւն չունենան անմիջապէս քաղաքը գրաւելու:

Յուլիս 30ին լուսադէմից արդէն քաղաքի մէջ տարածւել էին Դաշնակցութեան կոչերը, որոնցով զէնքի էր հրաւիրւում Բագուի ամբողջ ազգաբնակութիւնը: Ոչ ոք չէր կարող խուսափել. Դաշնակցութեան կամքն էր այդ, նրա վերին հրամանը:

Բագու քաղաքի զօրքերի վերին հրամանատարութեան խուճապահար դրութիւնը, վերջին օրերի անցուդարձերը, կարելի է ասել, ամբողջապէս կազմալուծել էին կուռող բոլոր ուժերը. շատերը ինքնակամ թողել էին իրենց դիրքերը, ոմանք վերադարձել էին քաղաք բաժանելու համար սովորական քաղաքացիների կացութիւնը, ուրիշներ թափւել էին նաւահանգիստները քաղաքից հեռանալու համար: Ահա այդ վատերի, այդ խուսափողների դէմ էր, որ ամենից շատ պիտի կռւէր Դաշնակցութիւնը: Նրա կոչերը զէնքի էին հրաւիրում ամբողջ ազգաբնակութեան: «Ոչ ոք իրաւունք չունի խուսափելու՝ երիտասարդ թէ ծեր, ասւած էր Դաշնակցութեան կոչում, մենք բոլորս ոտքի պիտի կանգնենք եւ պիտի պաշտպանենք մեր քաղաքը ծանր վտանգից. բոլոր նրանք, որոնք այս ճգնաժամային դրութեան ժամանակ կը մտածեն իրենց անձնական բարօրութեան մասին, կամ կը խուսափեն կռւից, պիտի ենթարկւեն ամենածանր պատիժների Դաշնակցութեան կողմից»:

Բոլոր քաղաքացիները գիտէին, որ այլ եւս խօսողը Դաշնակցութիւնն է եւ Դաշնակցութեան կամքն է գերիշխողը...

Բազմաթիւ երիտասարդ քաղաքացիներ ինքնակամ կերպով շրջում էին քաղաքի բոլոր տները՝ թաքստոցներից հանելու համար վատերին եւ մարտիկներին համախմբելու Հայոց Ազգային Խորհրդի մէջ, ուր բոլորը ցուցակագրւում եւ զինւելով ճակատն էին ուղարկւում:

Նաւահանգիստներում թափւած զօրքի մի մասը արդէն նաւ էր նստել եւ գիշերը փորձել էր փախչել, իսկ շատերը պատրաստութեան վրա էին շուտով հեռանալու: Դրանց մի մասը հնարաւոր եղաւ յետ բերել եւ ուղարկել ճակատ. սակայն, մեծ դժւարութիւններ սկսեց հանել Բիչերախովի անունով կազմած զօրամասը, ուր օտարները

դերազանցում էին: Այդ զօրամասը, թեև աւելի քան հազար հոգի, պատրաստւում էր նաւ նստել եւ հեռանալ: Մեր ընկերների բոլոր յորդորները եւ սպառնալիքները անզօր էին այդ կազմ եւ պատրաստ բանակի փախուստը արգելելու, իսկ այդպիսի մի ուժի հեռանալը քաղաքից այդպիսի ճգնաժամային րոպէին համահաւասար էր մեր պարտութեան:

Զանազան ստոր անձնաւորութիւններ, գլխաւորապէս այդ բանակի հրամանատարութեան կազմի միջից, իրենց փախուստը արդարացնելու համար, սուտ լուրեր էին տարածել զօրքի մէջ, թէ՝ քաղաքի բոլոր ղեկավարները կաշառւած են թիւրքերից, որ արդէն որոշւած է քաղաքը յանձնել տաճիկներին եւ ցանկանում են զինւորներին վաճառել տաճիկներին եւ այլ այսպիսի այլանդակ լուրեր էին շրջում զօրքի մէջ, եւ խրախուսում էին զինւորներին, որ հեռանան եւ իրենց անձը փրկելու մասին մտածեն:

Նաւերը արդէն պատրաստ էին եւ զօրքի մի մասը տեղաւորւած էր նաւերի վրա, երբ բոլոր միջոցները գործադրելուց յետոյ, Ազգային Խորհուրդի նախագահը՝ իր հետ ունենալով Խորհրդի անդամ Ս. Տէր-Ղազարեանին հասաւ նաւահանգիստ՝ արգելելու համար այդ զօրամասի փախուստը: Նաւահանգստում նրանց թշնամաբար ընդունեցին զօրքերը եւ ոչ մի ցանկութիւն չունէին լսելու նրանց: Բայց եւ այնպէս, հակառակ ակներեւ թշնամութեան, երկար ջանքերից յետոյ, մասամբ սպառնալիքներով, մասամբ բացատրելով քաղաքի իրական կացութիւնը յաջողւեց զօրքին յետ կասեցնել իր որոշումից, հանել նաւերից եւ ուղարկել ճակատ:

Այդ աշխատանքներին աջակցեց Բիչերախովի օգնականներից մէկը՝ եսաուլ Սաւլաեւը, որ պատահմամբ չէր գնացել Բիչերախովի հետ եւ պատրաստւում էր այդ զօրամասի հետ մեկնելու՝ համաձայն Բիչերախովից ստացած կարգադրութեան. բայց երբ լսեց եւ տեղեկացաւ քաղաքի դրութեան մասին եւ ըմբռնեց, թէ վայել չէ զինւորականին թողնել անզէն կանանց եւ երեխաներին ու հեռանալ այնպիսի մի ժամանակ, երբ քաղաքը ամէն կերպ դիմադրում է, համաձայնւեց մնալ եւ կոր ի գլուխ միացաւ ու աջակցեց փախչող զօրքի վերադարձին: Բոլշեւիկները քաղաքի բոլոր զինապահեստները համարեա թէ դատարկել էին, լցրել նաւերը եւ փորձեր էին անում փախչելու՝ թողնելով անզէն Բաղուն տաճիկների դէմ: Բայց այժմ զարմացած տեսնում էին, թէ ինչպէս քաղաքը դիմադրում է այնուամենայնիւ, չէին ուզում ռազմամթերքը յանձնել, իսկ առանց ռազմամթերքի քաղաքը ամէն վայրկեան կարող էր ընկնել: Եւ ահա նորից հրապարակւեցան Դաշնակցութեան կոչերը, որոնցով զէնք էր պահանջւում քաղաքացիներից: Ցաւոնի էր, որ այժմ ամէն մի բնա-

կարանում, ամէն տան մէջ բազմաթիւ հրացաններ եւ փամփուշտներ կան: Եւ իրօք, օգոստոս մէկին վաղ առաւօտից քաղաքացիների զէնքերը սկսեցին կենտրոնանալ Ազգային Խորհրդի բակում:

Դաշնակցութիւնը նոյնպէս բաց էր արել իր պահեստները:

Դեռ եւս մի քանի օր առաջ էր, որ բժ. Ի. Ջանքերով յաջողւել էր մի ամբողջ նաւ ռազմամթերք ստանալ Հաշտարխանից, ուր բազմաթիւ թնդանօթների, գնդացիրների եւ թնդանօթի ռումբերի հետ միասին կային եւ 4000 բոլորովին նոր հրացաններ եւ մի քանի միլիոն փամփուշտ: Եւ այս բոլորը մեծ խնամքով պահւում էր Ազգային Խորհրդի եւ Դաշնակցութեան պահեստներում, որոնք բացւեցին այդ օրերին: Համարձակօրէն կարելի է ասել, որ եթէ այդ զէնքերը չլինէին, քաղաքի ինքնապաշտպանութիւնը այդ օրերին կամ չափազանց դժւար պիտի լինէր կամ չպիտի յաջողւէր...

Ծանր էր եւ ընդհանուր հրամանատարութեան խնդիրը: Ընդհանուր հրամանատար Բիչերախովի փախուստից յետոյ անմիջապէս փորձեր եղան կազմել նոր հրամանատարութիւն, բայց շատ դժւար էր: Քաղաքում մնացած, քաղաքացիների եւ զօրքի մեծամասնութեան վստահութիւնը վայելող միակ անձնաւորութիւնը զօրավար Բագրատունին էր, որը թէպէտ ցանկութիւն յայտնեց հրամանատարութիւնը ստանձնելու, բայց ոչ մի գործօն աշխատանք չկատարեց. կարծես չէր հաւատում, թէ իրօք, քաղաքը կարող է պաշտպանւել: Նոյնը պէտք է ասել եւ Ֆրանսական բանակի գնդապետ Շ.-ի մասին, որ այդ ժամանակ Բագու էր եւ յանձն առաւ մտնելու զինւորական շտաբի մէջ, բայց միւս օրը, հակառակ Ազգային Խորհրդի նախագահի խորհրդին, յորդորներին եւ յանդիմանութեան, թողեց Բագուն եւ հեռացաւ դէպի Պարսկաստան, իբրեւ աւելի ապահով վայր: Մնացել էր միայն գնդապետ Աւետիսովը, որ զինւորական շտաբի պետ էր եւ քաջաբար տանում էր իր գործը: Աւետիսովը ռուսախօս մի հայ էր, որ վաղուց կտրւել էր հայութիւնից եւ միայն պատերազմի վերջին տարին ընկնելով Բագու եւ ծանօթանալով Ռոստոմի հետ, որին շատ էր յարգում, նրա միջոցով կապւել էր Բագուի Ազգային Խորհրդի հետ եւ աստիճանաբար հայանում էր: Այսպիսով ընդհանուր հրամանատարութեան հարցը համարեա թէ մնաց բաց, եթէ ասեմ, որ այդ օրերին ոչ զինւորական կրթութիւն ունեցող անձինք աւելի մեծ քաջութիւն ցուցադրեցին եւ անհամեմատ աւելի մեծ ծառայութիւն արին քաղաքի ինքնապաշտպանութեան, չափազանցութիւն չի լինի: Սրանով պէտք է բացատրել, որ ընդհանուր հրամանատարութեան պակասը այնքան էլ մեծ չէր. այդ պակասը լրացնում էին կամ Բագուի Ազգային Խորհուրդը եւ կամ Դաշնակցութիւնը:

Շնորհիւ Դաշնակցութեան ցուցադրած ջանքերի բոլոր լքած դիրքերը լցուեցին կամ զօրամասերով եւ կամ կամաւորներով, որոնք թոյլ չուին, որ թշնամին առաջանայ եւ նոր դիրքեր գրաւի քաղաքի մէջ:

Օգոստոս 3ին մեր դիրքերը ներկայացնում էին հետեւեալ պատկերը.—

Աջ թեւի ղեկավարութիւնը յանձնուած էր գլխապետ Բէկ-Զուրաբովին, որի հիւանդութեան պատճառով օգոստ. 4ին նրան փոխարինեց գնդ. Յարութիւնեանը: Բիչերախովի զօրամասը բռնեց սպանդանոցի շրջանը. Սալեանի զօրանոցների շրջանը բռնել էր Շամախու զօրամասը՝ Համազասպի ղեկավարութեամբ. աջ կողմը բռնել էին 4, 5, 10 եւ 20րդ գումարտակները՝ փոխ-գնդապետ Խոջաէյնաթեանի ղեկավարութեամբ: Գործի ամբողջ ծանրութիւնը կենտրոնացել էր Դաշնակցութեան եւ Ազգային Խորհրդի վրա, որովհետեւ կուռողների մեծամասնութիւնը հայեր էին, իսկ Ազգային Խորհուրդը իր կողմից կարեւոր էր համարել նշանակել գնդապետ Ղազարովին, որ բաւական ժամանակ փաստօրէն տանում էր ընդհանուր հրամանատարի պաշտօնը՝ համախորհուրդ Ազգային Խորհրդի նախագահի հետ:

Օգոստոսի սկզբին Բագու հասան Վոլգայի ափերից մեր հռչակաւոր հայդուկներից Մուրատը եւ Սեպուհը, որոնք յատկապէս կոչել էին այդ երկար ճանապարհը, եկել էին Բագուի կռիւներին մասնակցելու համար եւ առաջին օրից շրջում էին բոլոր դիրքերը, քաջալերում կուռողներին եւ իրենց անձնական քաջութեամբ օրինակ էին հանդիսանում զօրամասերին...

Շնորհիւ այս ձեւի աշխատանքների քաղաքի լքած եւ յուսահատ դրութիւնը բոլորովին փոխուեց, եւ մարտիկները դարձաւ աւելի ինքնավստահ ե դիմացկուն...

Օգոստոս երեքից սկսած թշնամին կրկնապատկել էր իր ուժերը եւ կատաղի յարձակումներ էր գործում ամբողջ ճակատի վրա, մանաւանդ մեր աջ թեւի եւ կենտրոնի մօտերքը, երրորդ զօրամասի 16րդ գումարտակի դէմ, որին ղեկավարում էր քաջ եւ եռանդուն Արամ Դովլաթեանը:

Ամբողջ օրը կռիւները շարունակւում էին սոսկալի կատաղութեամբ: Թշնամին ցոյց էր տալիս մեծ եռանդ եւ նախաձեռնութիւն, իսկ մերոնք դիմադրում էին մեծ քաջութեամբ, համարձակութեամբ եւ յամառութեամբ: Թնդանօթի հարուածներին յաջորդում էին գընդացիրային եւ հրացանային կրակներ կամ սւինամարտ եւ գրկախառն կռիւներ եւ այսպէս մինչեւ երեկոյ: 16րդ բատալիոնը, որ կռւում էր մեծ յաջողութեամբ, կորցրեց իր հրամանատար Արամին, որը ծանր կերպով վիրաւորւելով այլ եւս անկարող էր վարել այդ գըը-

կախառն կռիւը։ Զրկւելով իր հրամանատարից, զօրքը յուսահատ, կարծես, ուզում էր նահանջել. Մուրատը, որ այդ ժամին այդտեղ էր եւ մասնակցում էր կռիւներին՝ նկատելով զօրամասի ջղնաժամային վիճակը, զինուորներին իր անձնական օրինակով խրախուսելու նպատակով, քաջաբար առաջ է անցնում։ Մուրատին հետեւում է զօրամասը։ Թշնամին այլ եւս անկարող է լինում շարժւել եւ կանգ է առնում... Երկու թշնամի կողմերը կատաղօրէն յօշոտում են միմեանց չղիջելով մի թիզ հող, մարդկային դիակներն ընկնում են միմեանց վրա, սակայն, թշնամին այլ եւս անկարող էր առաջանալ եւ նորից իր նախկին դիրքերն է անցնում։ Ահա այդ հերոսական կռւի վայրկեանին էր, որ թէպէտ Մուրատը կարողացաւ կասեցնել թշնամու յառաջխաղացումը, բայց ինքն եւս ընկաւ հերոսաբար։

Գիտակցելով, որ Մուրատի կորուստը չափազանց ծանր պիտի ազդի կռւող զօրքի հոգեբանութեան վրա, որոշեցինք լուռ տանել այդ ծանր կորուստը, մինչեւ որ կանցնէր քաղաքի ճգնաժամային դրութիւնը։

Ծանր կորուստ էր ունեցել եւ թշնամին. նրան չյաջողւեց պատռել մեր դիմադրական շղթան եւ մեր բոլոր դիրքերը մնացին կատարելապէս անփոփոխ։ Սակայն, կէս կիլոմետր հեռաւորութեան վրա կանգնած թշնամին չէր կարող հանդիստ նստել, մանաւանդ, որ նորանոր ու թարմ ուժեր էր ստանում թէ շրջակայ հարիւր հազարաւոր թաթար ազգաբնակութիւնից եւ թէ Գալիպոլիից, որի զօրամասերը անդադար թափւում էին Բագուի պատերի տակ՝ վերջնականապէս ջախջախելու համար հայերի դիմադրութիւնը եւ խլելու այդ նաւթի քաղաքը, որ մեծ եւ ճակատագրական դեր էր կատարում ընդհանուր պատերազմի բախտի վրա։ Օգոստոս երեքի կռիւը շարունակւեց նոյն կատաղութեամբ ամբողջ գիշերը եւ օգոստոս չորսի ամբողջ օրը եւ ամբողջ ժամանակ մեր զօրքերը կռւում էին մեծ կատաղութեամբ եւ հերոսութեամբ։

Օգոստոս 4ին տաճկական բանակի հրամանատարութիւնից Ազգային Խորհրդի նախագահը ստացաւ ռուսերէն եւ տաճկերէն լեզուներով գրւած հետեւեալ նամակը.

« Բագուի Ազգային Խորհրդի պարոն նախագահին,

Ձեզ արդէն յայտնի է, որ Բագու քաղաքի դէմ գործում է Օսմանեան բանակը։ Եթէ դուք համաձայնւէք յանձնել քաղաքը առանց կռւի, այդ դէպքում առանց ազգի եւ կրօնի խտրութեան ամբողջ ազգաբնակութեան իրաւունքները կը պաշտպանւեն։ Ձեզ առանձնապէս, հայերիդ թոյլ կը տրւի եւ կերաշխաւորւի անարգել փոխադրւել Բագուից Հայաստան, եթէ, ի հարկէ, դուք այդ բանը կամե-

նաք, իսկ եթէ քաղաքը չյանձնի, որը յամենայն դէպս պիտի գրաւի մեր կողմից, այն ժամանակ եւ լինելիք վնասների, թափուած արեան պատասխանատուութիւնը կընկնի ձեզ վրա:

Եթէ դուք համաձայն էք քաղաքը յանձնել, խնդրում եմ անմիջապէս պատասխան ուղարկէք ձեր պտգամաւորների հետ միասին:

Խնդրում եմ ընդունեցէք յարգանացս հաւաստիքը:

Ստոմանեան բանակի արեւելեան ճակատի ընդհանուր հրամանատար Միւրսէլ

Օգոստոս երեքին, 1918 թ.»:

Ճիշտ է, քաղաքի պաշտպան զօրամասերը կռւում էին հերոսաբար, բայց մենք պաշարուած էինք ամէն կողմից եւ ոչ մի տեղից մեզ օգնական ուժեր չէին կարող հասնել, իսկ դիմադրողները կամ թուլանում էին կորցնելով լաւագոյն մարտիկներին, եւ կամ անդադար եւ առանց հանգստեան կռիւներից յետոյ, բնականաբար, պիտի յոգնէին, մինչդեռ թշնամին, ընդհակառակը, մեծ առաւելութիւններ ունէր իր ուժերը անդադար աւելացնելու: Ահա այդ ժամանակ թշնամին մի կողմից կրկնապատկում էր իր ուժերը՝ սպառնալով բնաջնջել քաղաքը, միւս կողմից առաջարկում էր չկռւել եւ կամովին յանձնել քաղաքը:

Անշուշտ, քաղաքը յանձնողը կամ պահողը Բագուի Հայոց Ազգային Խորհուրդը չէր, որին դիմում էր կատարում Մուրսէլ փաշան, բայց եւ այնպէս Ազգային Խորհուրդը դեր կարող էր կատարել. այդ իսկ պատճառով զբաղւեց այդ նամակով:

Ազգային Խորհուրդը, ուր մասնակցում էին Բագուի բոլոր կուսակցութիւնները՝ բուրժուաներից սկսած մինչեւ սոցիալիստները, թէպէտ ունեցաւ որոշ տատանում եւ կային տարբեր, որոնք կարծես թէ պատրաստ էին կատարելու Մուրսէլ փաշայի ցանկութիւնները, բայց երկար խորհրդակցութիւնից յետոյ, որոշւեց ինչ գնով էլ լինի պաշտպանել քաղաքը:

Օգոստոս 4ին կռիւները աւելի էին սաստկացել: Ամբողջ օրը երկու կողմի համար ծանր կորուստներով կռիւը շարունակւում էր մեծ սաստկութեամբ: Քաղաքը կատարեալ դժողք էր դարձել. հրիւրաւոր վիրաւորներով լցւել էին բոլոր հիւանդանոցները. թնդանօթային ռումբերը բազմաթիւ շէնքեր էին անբնակելի դարձրել եւ տասնեակներով մարդկային զոհեր էին խլում ու չնայած դրան, այնուամենայնիւ, քաղաքացիներն ու զինւորները նոյն ոգեւորութեամբ եւ զարմանալի արիութեամբ ու քաջութեամբ պատասխանում էին թշնամուն: Այս ձեւով կռիւը շարունակւեց ամբողջ օրը՝ ցերեկ եւ գիշեր:

Յաջորդ օրը, օգ. 5ի լուսադէմին թշնամին թնդանօթային ահաւոր կրակ բանալով անխտիր ամբողջ ճակատի վրա, եւ մեծ ուժեր կենտրոնացնելով մեր ձախ կողմից՝ սկսեց ճնշել մերոնց եւ ջարդելով մեր ձախ կողմի զօրամասերը՝ կարողացաւ գրաւել ամբողջ Բիբի-Էյբաթի շրջանը: Ճակատից Ազգային Խորհուրդ էին հասնում օգնութեան յուսահատական ճիչեր. մերոնք անդադար նահանջում էին: Շուտափոյթ օգնութիւնից զատ անհրաժեշտ էր անցնել ճակատի այդ մասը, տեսնելու եւ գնահատելու համար իրական կացութիւնը...

Լոյսը նոր էր սկսել բացուել, երբ մենք անցնում էինք ծովափով դէպի Բայիլ: Ծովափով սրարշաւ դէպի քաղաք էր փախչում այդ թեւի ղեկավար գլխապետ Մամիկոնեանը՝ պատրւակելով, թէ գալիս էր օգնութիւն խնդրելու: Զին ձգելով փողոցում իր բախտին, նրան առինք մեր ինքնաշարժը եւ շարունակեցինք ճանապարհը դէպի Բայիլ: Թշնամու թնդանօթի գնդակները թափւում էին փողոցներում եւ տների վրա: Քաղաքամասի ազգաբնակութիւնը յուսահատ կանչերով եւ սարսափահար փախչում էր մօտակայ նաւերը: Թընդանօթի գնդակներից, թէ փախչող բնակիչների անզգուշութիւնից Բայիլում սկսել էին այրւել մի քանի տներ: Այդ ճակատի ամբողջ զօրամասը, վախի անասնական բնազդով բռնուած, թողել էր դիրքերը եւ թշնամու գնդակներից պաշտպանւելու համար ապաստան էր որոնում տների պատերի տակ: Այդ ժամին մի տասնեակ թշնամի զինուոր բաւական էր այդ հազարի հասնող զինուած ուժը կոտորելու կամ գերի առնելու համար...

Մեծ ջանքերով եւ մահւան սպառնալիքների տակ հազիւ յաջողւեց այդ ցրուած, անասնացած զօրամասը բարձրացնել Բայիլի բլուրը, որը ներկայացնում էր Բայիլը պաշտպանելու յաջող դիրքերից կարեւորագոյնը: Սակայն, թշնամին իր շեշտակի հարուածներով հնձում էր մերոնց առաջաւոր շարքերը. անկարող լինելով բարձրանալ բլուրը՝ մերոնք մի քանի անգամ յետ դարձան, բայց չնորհիւ մի քանի դաշնակցական զինուորների ցուցադրած հերոսական քաջութեան, կարելի եղաւ գրաւել Բայիլի բոլոր բլուրները: Այդ հերոսներից մինչեւ այժմ չափազանց պարզ յիշում եմ Վանի կողմերից Յովհաննէս անուն մեր մի ընկերոջ եւ նրա մի քանի ընկերներին, որոնք անձնական օրինակով վարակեցին ամբողջ զօրամասը: Մեր կուռողերին այդ օրը միացաւ Բայիլում ապրող ռուս բանւորների մի ստւար թիւ, որոնք մինչ այդ սովորական ականատեսներ էին, իսկ այդ օրը, երբ վտանգը իրենց դռուը հասաւ, ստիպւած եղան զէնքի տակ մտնել եւ միանալ կուռողներին:

Թշնամին այլ եւս անկարող առաջանալու մեր ծայրագոյն ձախ

թեւից՝ փորձեց պատռել մեր դիմադրական շղթան Զէմբերեքէնդի կողմից, ուր արդէն գրաւել էր հայոց զերեզմանատան մեծ մասը եւ զերեզմանաքարերը դիրքեր շինած՝ աշխատում էր կռւելով առաջանալ: Այդ շրջանում գնդապետ Յարութիւնեանը յուսահատական կռիւ էր մղում եւ անդադար օգնութիւն խնդրում Դաշնակցութիւնից:

Դաշնակցութիւնը, որ շարունակ պահեստի ուժեր էր կազմակերպում, շնորհիւ մեր ընկեր Լեւոն Քալանթարեանի այնպէս էր դասաւորել իր անելիքը, որ մի քանի րոպէում բեռնատար ինքնաշարժներով կարողանում էր ամբողջ ճակատին մատակարարել ռազմամթերք եւ կռող ուժեր: Իբրեւ հետեւանք այդ ձեւի օգնութեան, ձախ թեւի հրամանատար Յարութիւնեանը կարողացաւ կասեցնել թշնամու կատաղի յարձակումները եւ առաջխաղացումը:

Նոյնպիսի ծանր դրութեան մէջ էր նաեւ երրորդ զօրամասը: Թշնամին Սալեանի զօրանոցների մօտ կենտրոնացնելով մեծ ուժեր՝ վճռական կռիւ էր մղում մերոնց դէմ, փշրելու համար մեր այդ կարեւոր ուժը, սակայն, շնորհիւ մեր զօրամասերի դիմացկունութեան եւ Դաշնակցութիւնից ստացած թարմ ուժերի, կռիւը շարունակւում էր կատաղօրէն, դիրքերը անցնում էին ձեռքից ձեռք...

Այս ճակատագրական եւ շատ կէտերում անհաւասար կռիւների ընթացքում մեր զօրքին ոգեւորում էր առնական քաջութիւնը հրամանատարների, որոնք առիւծ կտրածի պէս, անցնելով առաջին շարքերը, իրենց անձնական օրինակով խրախուսում եւ ղեկավարում էին կռիւը:

Գնդապետ Աւետիսովը, որ նստած կենտրոնում (շտաբում) ղեկավարում էր ամբողջ կռիւը, մեծ սառնասրտութեամբ կարողանում էր տանել ամբողջ գործը եւ նորանոր ռազմական ծրագրներով աշխատում էր կանգնեցնել թշնամու առաջխաղացումը: Մեր ծայրագոյն աջ թեւը, ուր թշնամին համեմատաբար թոյլ էր գործում, վաղ առաւօտից գաղտնի հրաման ստացաւ տասերորդ գումարտակից երկու վաշտ դուրս բերել թշնամու թիկունքը. միաժամանակ կարգադրւած էր, որ բոլոր զօրամասերը հետեւեն տասերորդ գումարտակի շարժման եւ երբ նրան կը յաջողւի անցնել թշնամու թիկունքը, վճռական յարձակման դիմել ամբողջ ճակատի վրա:

Հմտութեամբ կազմւած այդ ռազմախաղը յանձնւած էր Բագուի ճակատի վրա կռող ամենահմուտ զինուորական Խոջայէնաթեանին. որը իր զինուորական հմտութեան հետ միասին ունէր եւ զինուորականին յատուկ գաղտնապահութիւն, սառնասրտութիւն եւ անձնական քաջութիւն: Խոջաէյնաթեանը այդ պատասխանատու գործը կատարե-

լու համար ընտրել էր գլխապետ Ստեփանեանին, որը պիտի շարժէր Խոջաէյնաթեանի ցուցմունքներով:

Տասերորդ գումարտակը առաւօտեան ժամը տասին աննկատ կերպով կարողացաւ անցնել Թշնամու խորը թիկունքը եւ այնտեղից սկսեց հարուածել: Թշնամին անակնկալի եկած՝ փորձեց պաշտպանուել, բայց այդ ժամանակ մեր երկրորդ զօրամասը դիմեց կատաղի յարձակման: Անակնկալ եւ այսքան հմտութեամբ կազմուած այդ զինուորական գործողութիւնները մի վայրկեան չչմեցրին Թշնամուն, որ փորձեց կանգ առնել իր տեղում եւ պաշտպանուել, սակայն, այլ եւս անկարող էր. նա շարժուեց տեղից եւ այդ շարժումը դարձաւ նրա համար կատարեալ գերեզման:

Մեր ամբողջ ճակատը անցաւ յարձակման, Թշնամին օգոստոս 5ին ժամը երեքից սկսեց փախչել խուճապահար՝ կռուի դաշտում թողնելով հազարից աւելի դիակներ, հարիւրաւոր ձիեր, բեռնատար ուղտեր եւ ջորիներ, մեծ քանակութեամբ զէնք եւ ռազմամթերք, 4 թնդանօթ, 116 գնդացիր եւ այլն:

Մեր աչքի առջեւ Թշնամին փախչում էր խուճապով ճանապարհին ձգելով իր զէնքը, վերարկուն, պայուսակը, մինչեւ անգամ կօշիկները: Դժբախտաբար, մենք պատրաստի ձիաւոր խմբեր չունէինք հրջապատելու, բռնելու եւ հիմնաւորապէս ոչնչացնելու համար: Թշնամին առանց կանգ առնելու փախաւ մինչեւ Ալեաթ կայարանը, որ Բագուից աւելի քան քառասուն կիլոմետր հեռու էր: Մենք բաւականացանք գրաւելով քաղաքը հրջապատող լաւագոյն դիրքերը, Պատանդար սարով, որ իշխում էր ամբողջ հրջակայքի վրա:

Մենք եւս այդ օրը կորցրինք բազմաթիւ հերոս զինուորներ եւ ընկերներ: Ընկել էր հին, փորձուած, սառնասիրտ եւ յանդուգն Սերգօ Մանուչարեանը, որը համարւում էր Համազասպի օգնականը: Սերգօի կորուստը ծանր էր, մանաւանդ, երրորդ զօրամասի համար: Կարելի է ասել, որ երրորդ զօրամասը որբացաւ Սերգօի մահից յետոյ, իսկ Բագուն կորցրեց իր նշանաւոր պաշտպաններից մէկին: Նոյն օրը ընկաւ մեր ձախ թեւում առաջին ձիաւոր հարիւրեակի հրամանատար Իսահակ Արզումանեանը, որ իր կազմակերպական շնորհքով, կռուի վայրկեաններին ցուցադրած քաջութեամբ եւ զարմանալի համեստութեամբ կարողանում էր կապել իր հետ բոլոր զինուորներին եւ նրանց մղում էր ամենավտանգաւոր տեղերը: Անկարելի է մի առ մի կանգ առնել այստեղ այն բազմաթիւ հերոսների վրա, որոնք այդ օրւայ ծանր ճակատամարտերում ցուցադրեցին դերմարդկային քաջութիւն եւ իրենց արեան գնով փրկեցին քաղաքը իրական անկումից:

Եթէ մեծ պատերազմի ընթացքին մեզ յաջողուել է քաջաբար դիմադրել եւ ջարդել թշնամուն, այդ լաւագոյն եւ մեծ օրերի շարքին անպատճառ պէտք է դասել եւ Օգոստոս հինգը, երբ հայ երիտասարդութեան, նրա մարտական կուսակցութեան եւ ընդհանրապէս հայ զինուորի ցուցադրած քաջութիւնը հասաւ չտեսնուած հերոսութեան...

Օգոստոս հինգին էր, որ հիւսւեց մի նոր եւ մեծ պատմութիւն Դաշնակցութեան փառքի համար, *որովհետեւ միմիայն Դաշնակցութեան գերագոյն ճիգերով եւ նրա լաւագոյն ընկերների թափած արիւնով հնար եղաւ այդ օրերի ծանր ճակատամարտերը վերջացնել այդքան փառաւոր յաղթանակներով:*

Փարիզ.

ՄՈՒՐԱՏԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

(1915թ. յուն. — նոյեմբ. 29)

Պատերազմի նախօրեակին, Սեբաստացի Մուրատը ապրում էր իր հայրենի Կովտուն գիւղում: Նրա ազդեցութիւնը մեծ էր հայ եւ թիւրք շրջաններում: Նա մի տեսակ Դաշնակցութեան անպաշտօն ներկայացուցիչն էր ազգային եւ պետական մարմինների մօտ: Կուսակալը նրան էր դիմում ամէն անգամ, երբ պէտք էր լինում հայերին վերաբերող մի կարեւոր գործի համար խորհուրդ լսել:

Մանաւանդ բարձր էր Մուրատի հեղինակութիւնը ժողովրդի եւ Դաշնակցական ընկերների աչքին: Իբրեւ մարտական ձեռնհաս ոյժ, իբրեւ կրթական – մշակութային ձեռնարկները գնահատող ու քաջալերող, նոր սերնդի դաստիարակութեան ու կազմակերպութեան եւ երկրի ինքնապաշտպանութեան համար աշխատող՝ Մուրատը վայելում էր հասարակութեան լայն խաւերի համակրանքն ու վստահութիւնը: Այդ պատճառով երբ սկսուեց եւրոպական պատերազմը եւ Թիւրքիայում յայտարարուեց ընդհանուր զօրահաւաք, ամենքի հայեացքը ուղղուեց նրան:

Թէ ի՞նչ եղաւ Մուրատի կեանքն ու գործունէութիւնը 1914 թ. ամառուանից սկսած մինչեւ 1915թ. յունուար, դժուարանում ենք ասել: Գիտենք միայն, որ նա շրջապատուած էր մտերիմ ընկերներով, ինչպէս Պիծան (Մկրտիչ Մսրլեան), Մամբրէ վարդ.ի ահաբեկիչ Զիմառացի Եղօն (Պ. Փափազեան) եւ ուրիշներ եւ սրանց հետ միասին աշխատում էր կազմակերպել եւ ուժեղացնել ժողովրդի ինքնապաշտպանութեան գործը: Ըստ երեւոյթին, նա կողմնակից չէր, որ հայ երիտասարդութիւնը զինուոր գնայ. գիտենք, օրինակ, որ իր եղբօր համար բէդէլ էր տուել: 1915թ. յունուարին իր համար էլ բէդէլ է տալիս Եղօի աջակցութեամբ: Շրջանում պատահած ընդհարումների կամ սպանութիւնների համար կուսակալը օգտւում է նրա միջնորդութիւնից: Այսպէս, 1914 թ. դեկտեմբերին Եղօի հետ նա այցելում է կուսակալին և համոզում վերջինիս, որ վերջ տայ Եղօի դէմ սկըսուած հետապնդման. կառավարութիւնը Եղօին մեղադրում էր 2 քիւրդի սպանութեան մէջ: Կուսակալը կատարում է Մուրատի դիմումը:

Յայտնի է նոյնպէս, որ երբ Սարըղամըշի տակ ջարդուած՝ էնվէրը վերադառնում էր Պոլիս, Սեբաստիայում սիրալիր տեսակցութիւն է ունենում Մուրատի հետ: Էնվէրը այնքա՞ն ուշադիր ու քաղցր է լինում Մուրատի վերաբերմամբ, որ սա արձանագրում է իր յուշատետրում. «շատ լաւ տպաւորութիւն թողուց ինձ վրա», թէեւ անմիջապէս շտապում է աւելցնել. «եթէ կեղծ չէ»...Էնվէրներն ու Թալէաթները վարժ էին կեղծելու իրենց իսկական զգացմունքներն ու մտածումները:

Էնվէրի կեղծ լինելը յայտնի դարձաւ շատ շուտով: Կուսակալը որ այնքա՛ն հաճոյակատար ու սիրալիր էր միշտ Մուրատի հանդէպ, շուտով փոխում է իր վերաբերումը եւ նոյն իսկ ուզում է ձերբակալել: Մարտ 15ին Կովտուն են գալիս երեք ձիաւոր ժանդարմներ, որոնք կարեւոր գործով քաղաք են հրաւիրում Մուրատին: Վերջինս կռահելով գալիքը՝ ձիաւորներին համոզում է, թէ իրեն համար անյարմար է պահակներով շրջապատուած գիւղից դուրս գալ, թո՛ղ նրանք ճանապարհ ընկնեն, իսկ ինքը շուտով գիւղից դուրս կը միանայ նրանց: Ժանդարմները ճանապարհւում են գիւղի մի կողմից, իսկ Մուրատը ոտքով դուրս է գալիս գիւղի վարի կողմից, հասնում է գետափ, ուր բերում են ձին եւ այստեղից մի քանի ընկերներով անցնում է Խորսանա գիւղը, ուր հաւաքւած էին եւ ուրիշ փախստականներ: Խորսանայից մի խումբ ընկերներով բարձրանում է Ս. Հրեշտակապետի վանքը: Այսպիսով սկսւում է այն հեքեաթային ոդիսականը, որի աղօտ պատմութիւնն է միայն յայտնի մինչեւ այսօր:

Մուրատի խումբը սկզբնապէս բաղկացած էր 7 հետեւակներից եւ 4 ձիաւորներից: Հետեւակներն էին՝ Տիգրան եւ Սարգիս Խրիմեանները (առաջինը Մուրատի եղբայրը, իսկ երկրորդը եղբօրորդին), Արմենակ Միքայէլեան, Պետրոս Ազատեան, Ոսկիան (Ոսկան) Միքայէլեան, Տիգրան Մուրատեան, Նշան Փիլաւեան, բոլորն էլ Կովտունցի: Ձիաւորներն էին՝ Մուրատը ինքը, Նշան Մուրատեան, Վարդան Սրապեան (Կովտունցիներ) եւ Պօղոս Փափազեան (Ձիմառացի Եղօն):

Իրենց թափառումների ընթացքին Մուրատն ու Եղօն պահել են օրագիր. մատիտով, անվարժ շարադրութեամբ, յուշատետրում օրը օրին արձանագրել են իրենց տեսածն ու լսածը, զգացածն ու մտածածը: Հրաշքով միայն այդ տետրակները ազատւել են եւ մասամբ օգտագործւել տիկ. Զ. Եսայեանի կողմից: Մենք ի վիճակի ենք, Մուրատի մահւան 15ամեակի առթիւ, տալու նրա յուշատետրը հարազատ ընդօրինակութեամբ:

Ինչպէս ասացինք, յուշատետրը կազմւած է անվարժ ձեռքով: Անձրեւից ու քրտինքից որոշ էջեր անընթեռնելի դառնալու չափ աւերւել են. միւս էջերն էլ շատ դժւարութեամբ են կարդացւում, յաճախ խոշորացոյցի օգնութեամբ: Մենք աշխատեցինք արտագրել հարազատօրէն, գրւածքը պահել անփոփոխ՝ սրբագրելով միայն քերականական սխալները:

Հրատարակելով Մուրատի օրագիրը՝ մեր նպատակն է հում նիւթ հայթայթել Սեբաստացի մարտիկի կենսագրութեան համար եւ կենդանի վկայութեամբ պատկերացնել այն զարհուրանքը, որին ենթարկւեց մեր ժողովուրդը բարբարոս թիւրքերի կողմից: Մի օր, երբ գրւի Մուրատի կենսագրութիւնը, հեղինակի համար այս գրութիւնը կը ծառայէ թանկագին աղբիւր: Մուրատի յուշատետրը անգնահատելի նիւթ կը լինի նաեւ վիպագիրների ձեռքին՝ ցնցող գոյներով պատկերացնելու համար Մեծ Եղեռնի ողբերգական ու միաժամանակ հերոսական էջերը:

Ինչպէս ասացինք, այս նիւթից որոշ չափով օգտւել է եւ Տիկ. Զ. Եսայեանը՝ Մուրատի Ոդիսականը նկարագրելիս, բայց որովհե-

տեւ նրա գրուածքի հիմքը աւելի Մուրատի բանաւոր պատմութիւնն է, յուշատետրի անմիջականութիւնը նրա մօտ մասամբ թուլացել է: Մուրատի արած կարճ, անսեթեւեթ եւ պարզ արձանագրութիւնը անհամեմատ աւելի ցնցող է: ԽՄԲ.

***

1915 թ. 1 յունուար, հինգշաբթի.— Գիշերով եկաւ մայրս: Եղբայրներս որսէն եկան. հետերնին բերեր են բաղ եւ ձուկ: Սեղան սարքեցինք: Շատ ուրախութիւններից վերջ, ահը սրտերնիս, շարունակ մտածում էինք, թէ ինչպէս...

5 յունուար.— Էնվէր պէյին դէմ գնացինք մինչեւ Զատրլար Զուխուրին: Շատ լաւ վերաբերուեցաւ. կանչեց քովը, հարցուց ինչպէս ըլլալս, պարզ, առանց մեծամտութեան: Աւելի լաւ տեսնուեցանք կուսակալին քով: Վերջապէս, շատ լաւ տպաւորութիւն թողուց ինձ վրա: Եթէ կեղծ չէ...

14 փետրուար.— Ոճրագործ մարդկութիւն, ե՞րբ վերջ պիտի տաս այդ ոճրագործութեան, յետ կենաս խելագար ընթացքէն: Միլիոնաւոր չէ՝ մէկ քանի տասնեակ միլիոն մարդոց կեանքին վերջ կուտաս, միլիարդներով ոսկի կը փչացնես, անդին հազարներ սովից կը մեռնին: Յոռետեսութիւնը լաւ բան չէ, բայց իրականութիւն է: Ի՞նչ յոյս կայ, երբ ծաղիկ Պելճիքան մէկէն կը վերնայ մէջտեղէն: Ի՛նչ յոյս կայ, երբ թրքուհին կտոր մը հացի համար դուռներ կը բախէ, երբ հայուհին սարսափահար կ'ըլլայ: Այս մարդիկ կը ծաղկեցնեն երկիրը եւ յետոյ, խելագարի մը պէս, տարիներով շինածը մէկ ժամէն կը փչացնեն: Թուրք ընկերվարականները աւելի ստոր մակարդակի վրա են, քան ոչ – ընկերվարականները. ոճրագործների ձեռքը գործիք դարձած են, բացի Ֆրանսացի ժուէսէն: Է՛հ, մարդկութիւն, անգութ գաղանների պէս եղբայրներդ կը յօշոտես: Վերջապէս, հայ տառապանքն եւս չափ ու սահման անցաւ. չէն տունները այրել, անհատները սպաննել, բռնի գրաւումները աւելի հային բարդել, հացը ձրի զօրքին կերցնել, բացի իրեն առածէն: Փոքր Հայքի հայ ժողովուրդեան բացարձակ կորուստ կը սպառնայ:

15 մարտ, Սուրբ Հրեշտակապետ վանքը.— Կառավարութիւնը իր տգէտ ընթացքով ստիպեց որ դուրս դանք: Կատարելապէս համոզուեցի, թէ ապուշ են եղեր. իմ մտքիս մէջ իսկ չի կար ոեւէ պայթում առաջ բերել, կամ թշնամական դիրք բռնել: Այսպէսով է, որ երկիրը քանդելու կը տանին եւ քնածը կարթնցնեն: Ապուշնե՛ր:

16 մարտ.— Եթէ թիւրքերի մէջ դիւանագէտ ըլլար, Թիւրքիան այս պատերազմին չէր մասնակցէր և բարենորոգումները կանոնաւոր կերպով կը գործադրէր: Թիւրքիոյ վեհապետութիւնը կը շարունակուէր դեռ 35 – 40 տարի այս ընթացքին մէջ: Եթէ քաղաքակրթուէին, ապագային փրկուած կ'ըլլային: Իսկ եթէ այս ընթացքի մէջ մնային, կը կորսուէին 40 տարիէն վերջ: Եւ այս բարբարոսութիւնները չէին ը-

ներ, որ որդւոց որդի պատմութեան մէջ պիտի մնան: Թիւրք անունը թուքի, մուրի եւ ատելութեամբ պիտի յիշի եւ շուտով պիտի վերջանայ:

Հայերուս ապիկարութիւնն ալ այս է, որ այս պատերազմին ռուսաց կողմը բռնեցին եւ մասնակցեցան բացարձակ կերպով: Սխալ էր: Թէ Թիւրքիան և թէ մենք չէղոք մնալու էինք, որպէսզի մեր գոյութիւնը պաշտպանէինք համաշխարհային պատերազմին մէջ... Ռուսիան հայի գոյութիւնը չի ուզեր: Աղդերը իրենց անկախութիւնը կը կորսնցնեն խելքի պակասութենէն: Գերի ազդերը կը վիշանան նորից խելքի պակասութենէն:

17 մարտ.—Մօրեղբօրս կնոջը կը ծեծեն, կը նեղացնեն, թապուրով զօրք կը բերեն. գիւղացին սարսափեցնելու համար հրացաններ կ'արձակեն. իրապէս կը ստիպեն, որ անպատճառ դուրս դան եւ սիսին կուռել:

18 մարտ.— Ամէն կողմ թալան ու կոտորած...

(Երկու էջ դարձած է անընթեռնելի: Հատ ու կտոր կարդացուող մասերից երեւում է, որ Մուրատը խիստ դժգոհ է կացութիւնից: Մէկ կողմից ճնշում, հարստահարութիւն ու սպանութիւն, միւս կողմից իրենք «զէնքերը ձեռքերնին» ստիպուած են համակերպուել ու լռել):

27 մարտ.— Այսօր թիֆոյի բռնեցի. հիւանդութիւնս ծանր է: Կառավարութիւնը կը հետապնդէ սաստիկ կերպով: Երկու եղբայրներս փախստական: Ամբարտաւան կառավարութիւնը ամենքը կ'ուզէ փչացնել: Մարտիրոսցիները*) շատ լաւ վերաբերում ունին:

28 մարտ.— Պտուկած տեղս անտանելի է: Հիւանդութիւնս հետզհետէ ծանրանալու է:

29 մարտ.— Ինծի փոխադրեցին հանգիստ տեղ մը: Ականջներս ծանրացած են: Անձրեւը կտրեցաւ: Ամէն ժամ չար լուրեր կուգան: Ընկերները առանց զգուշանալու ինծի անպատճառ լուր կուտան: Աւելի կը տկարանամ: Արծւանիկից չարագուշակ լուրեր կուգան:

30 մարտ.— Այսօր այլեւս առանց ուրիշի օգնութեան չեմ կարող շարժուել: Գիշերը հասաւ: Երեկոյեան ընկերները եկած – նստած են: Գլուխս վերուցի, որ՝ բոլորը կուլան: Հազիւ հաղ ես ինծի զսպեցի: Ըսի. «Տղե՛րք, ես այս հիւանդութենէն չեմ մեռնիր»: Ճիշդ այդպէս կը թուէր:

31 մարտ.— Կուսակալը կազմեր է 100 հոգինոց ճիաւոր խումբ՝ գիւղերը քանդելու եւ ինծի ձեռք ձգելու կամ սպաննելու համար: Ինծի բեռցած ձիու մը վրա տարին դրին հոդի մը տակ, ուր հազիւ 3 մարդու տեղ կայ:

1 ապրիլ.— Թալանիչ աւազակին մէկ մասի մօտերը հասնելու լուրը հասաւ: Ինծի ըսին՝ քեզի պիտի փոխադրենք: Նորից ձիուն

*) Մուրատը Մարտիրոս էր կոչում Տուզասար գիւղը, որի նոր սերունդը քաջ, լաւ զինուած ու հաստատակամ մարդիկ էին:

բարձան. երբեմն ալ շալակով: Երկու ընկեր հետս, գիշերը ժամը 7ին ինծի հասուցին լեռը, խրճիթ մը դրին: Տեղս անտանելի էր:

2 ապրիլ.— Երկու ձի երեք ընկերներով դուրս եկանք լուսաբացին ձորը: Ցուրտն ու անձրեւը սաստիկ էր: Եկած էին գիւղացիները: Մինչեւ երեկոյ մնացին: Խօսք տալով որ մեզի պաշար բերեն՝ փախան ու ալ չեկան: Մնացինք սոված, ծարաւ, Զորը թրքուհիներ եկան, տեսան մեզ, ինծի հաց տուին ու հեռացան՝ խոստանալով միշտ բերել:

3 ապրիլ.— Ելանք Զիարաթին տակը, ձորը: Ճիշով կաթ բերին. խօսք տուին պահել 8 օր 3 ընկերներով: Մնացի չւարած: Սոխակաձ ցրեցինք: Մտանք քարայր մը: Օդը վատ էր: Մեր տունը հրդեհելու լուրը եկաւ: Նոյնպէս՝ ուրիշ տների: Բոլոր գիւղերը ճնշման, տանջանքի տակ են: Ոչ մէկ տեղէն ոչ մէկ մխիթարութիւն: Բոլոր ժողովուրդը կանիծէ ինձ, որ իմ պատճառով է որ կառավարութիւնը կը ճնշէ իրեն: Հաւատացեր է: Մեզ տեսնողները սարսափով կը փախին: Բացարձակ կերպով մերժեցին, նոյն իսկ ընկերները դրկեցին իրենց հացէ ու պաշարէ: Հայերը լեռներէն վար իջան՝ մեզնից խուսափելու համար:

5 ապրիլ.— Մէկ օր եկանք Գոմերը: Աւերակների վերածուած էին: Գոմին մէջ մէկ ճուվալ ալիւր մնացած էր: Երկու հակ ալիւր առինք ու պահեցինք նեղ օրերի համար: Երկու օրւան ցամաք հաց պատրաստեցինք ու դնացինք գիւղին անտառը:

6 ապրիլ.— Ճիհին գիւղին համակիրներն իսկ կ'ուզեն հաւատացնել, թէ իմ պատճառով է որ կառավարութիւնը ճնշում գործ կը դընէ: Երկու ժամ գոմին մէջ: Տիկինը աւելի աղնիւ գտնուեցաւ ըսելու որ բացարձակ զինաթափ ընելու համար է:

7 ապրիլ.— Զորին մէջ: Անձրեւը սաստիկ է: Ձիերը կը սրսռան: Ուտելիք չի կայ ոչ մեզ, ոչ կենդանիներին: Ձիերը ճամբու դրինք: Իմ այս հիւանդութիւնս — ընկերների դուրդուրանքի մասին գրել կամ պատմել կարելի չէ: Ամենէն լքուած, հալածանք կառավարութենէն, հետապնդում դաւաճաններէն եւ մասնաւոր ծանօթներէն, հալածանք բնութենէն, ջրերի ճանապարհները հեղեղով անանցանելի...

8 ապրիլ.— Ընկերները իշու մը վրան դրին ինձ, եւ կամաց – կամաց երեկոյին հասանք Աղ Քարի տակի քարայրը: Ճանապարհը շատ դժուար էր. առաջը ձոր եւ ժայռ. քարայրը բաւական լաւ էր. 12 մարդ կառնէր. տղերքը տաքցուցեր էին: Երեկոյեան Խանծառցիները դընացին հաց բերելու:

9 ապրիլ.— Աղ Քարում: Ժամը առաւօտեան 1ին սաստիկ ձիւն սկսեց տեղալ: Նեղուեցինք. իջանք հովիտը: Կրակ վառեցինք, լաւ տաքացանք: Կ.Կ.էն եկած էր մէկը. 3 օխայէն աւելի հաց բերեր էր. լաւ կերանք: Մթանը քաշուեցինք դէպի Ճիվայի ծառաձորը: Գիշերւան ժամը 2ին լուր եկաւ, որ բարձրանանք Զիարաթի գոմերը: Զիւնին վրա հետքերը յայտնի կը լինէին: Ցախեր կապած՝ քարշ կուտանք խումբի ետեւէն: Բոլորս մէկ հետքով գնալով հասանք:

11 ապրիլ·— Ամայի են Զիարաթի գոմերը: Այծ մը լեռը ծներ, բուքէն նեղէր ուլիկը թողեր, եկեր ապաստաներ էր մենէ առաջ գոմերը: Այծ մը, կատու մը գտանք միայն այդտեղ: Երկու օր առաջ չէն, երկու օր վերջը աւերակ էր: Դիրքերնիս լաւ տեղ է:

12 ապրիլ·— Այս անտանելի դրութիւնը տեսնելով՝ փոխանակ առողջանալու աւելի կը վատնայի: Զէի ուզեր ոչ մէկ ընկերի հետ խօսիլ, չնայած անոնց գուրգուրանքին: Առաւօտեան 12ին Զիարաթում պահապանը լուր տուաւ, որ Սէյֆէի գլխից մէկը փրթաւ: Զիւնին վրան պարզ կ'երեւար: Մենք կարծեցինք կառավարութեան լրտեսներն են: Նախապէս ծանօթ էինք: Բայց եկաւ որ՝ 14 տարեկան Հայ տղայ մը Խանծառ գիւղէն: Սաստիկ ծեծեր են ու ղրկեր, թէ գնա՛ աղգականդ գտիր: Եկեր պահապանների քով էր...

15 ապրիլ·— Խմբին համար հեռադիտակը կենսական խնդիր է: Զիարաթից կը դիտէինք Կավրա, Գոմեր, կառավարութեան աւազակախմբերը քար ու քանդ կ'ընէին: Ընկերները կը կատաղէին. կ'ուզէին կռուել: Ես անկարող էի քայլել. նոյն իսկ աչքիս լոյսը կարճցած էր: Բացի այդ դեռ կանուխ էր գործի սկսելու: Ժողովուրդը ոչխարի պէս զէնքը յանձնելէ վերջ կը մնար անզէն: Բոլոր գիւղերը զինաթափ եղան: Նոյն պատասխանը համարեա շատ տեղերէն: Փախստական զինուորների կամ ընկերների ծնողները մեզ կանիծէին եւ կ'ըսէին. «Ամա՜ն, այն չանը»... եւ անէծքներ կուտան եւ կ'ըսեն թէ իրենց տղոց կ'ուզեն մատնել կառավարութեան ձեռքը: Լուրեր կը տարածեն, որպէսզի կառավարութիւնը ձեռք անցնէ: Ընկերներին իրենց տները կը ղրկէինք: Սարսափահար կը փախէին ու կուգային, նոյն իսկ առանց իրենց համար ուտելու բան բերելու: Ատելի մնացինք ընկերներով, բայց սիրելի պիտի մնանք մենք:

19 ապրիլ·— Զիարաթի խուզարկութեան լուրը եկաւ: Մենք քալեցինք դէպի դաշտ: Այսօր ինձ համար շատ ծանր էր. վեց ժամ շարունակ քայլել: Լուսինը չէինք ուզեր որ ելնէր:

20 ապրիլ·— Հասանք Զկնկուլ: Զորս փախստական թուրքեր կանգնած են: Անելանելի դրութեան մէջ ենք: Ընկերներէն ոմանք կուզեն վերջացնել: Ես հակառակեցի: Ուզեցինք կապել, պահել մինչեւ երեկոյ ու թող տալ: Ընկերները բոլորն ալ գնացին: Մնացինք առանց պահնորդի (պահակի): Մեզ համար առանց պահնորդի շատ դժուար է:

22 ապրիլ·— Հասանք Սրբոյ Գլուխ: Բոլորովին անծանօթ: Ամէն մէկս մէկ կողմ ընկանք. պահուելու տեղ կը փնտռենք: Հազիւ տեղ մը գտանք, մնացինք:

(Շարունակելի)

ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ

Այս երկու նամակներն էլ գրած են միեւնոյն առիթով· 1889թ· Կար· Եզեանցը հրատարակեց Դարտելիի յայտնի ժամանակագրութիւնը, որին կցած յառաջաբանով դատապարտում էր կաթոլիկ կղերի հակալուսաւորչական գործերը եւ պաշտպանում ազգային եկեղեցին, իբրեւ միակ միջոցը հայութեան պահպանութեան: Այդ գիրքը ստանալով՝ Սերվիչէնն ու Հ· Ալիշանը յայտնում են իրենց կարծիքը: Երկու նամակներն էլ արժէքաւոր պատմական վաւերագրեր են: Առնուած են Նուպարեան Մատենադարանից, Յ· քահ· Մկրեանի հաւաքածուից: ԽՄԲ·

I

ՍԵՐՎԻՉԷՆԻ ՆԱՄԱԿԸ Կ· ԵԶԵԱՆՑԻՆ

Առ Պարոն Կարապետ Եզեանց
Պետերբուրգ·

Շնորհակալ եմ Ձեզ այն գեղեցիկ նուէրին համար զոր յղած էիք ինձ: Ձեր հրատարակութիւնն, իւր գրական արժէքէն զատ, անհակառակելի այժմէութիւն մ'ունի: Ես ալ Ձեզ պէս կը խորհիմ թէ, եթէ զերծանենք մեր պատմութիւնն այն բոլոր վէպերէն որոնցմով մեր նախնիք զարդարած են զայն, եթէ դարերու մէջէն մեր ազգային անհատականութեան շրջափոխութեանն հետեւինք քայլ առ քայլ, պիտի ստիպուինք ընդունիլ թէ մենք ալ ճիշտ ուրիշ ազգաց անցած երեւոյթներէն անցած ենք, նշանակութիւն մ'ունեցող մարմին մը կազմելէ յառաջ:

Շատ հաւանական է որ ի սկզբան ընդ ամենը մէկ տոհմ կար, երկրին մէջ կազմակերպուած կամ դուրսէն եկած իբր դաղթականութիւն· այս տոհմը որոյ իղձերը կամ միտումները ժամանակէն կը նուիրագործուէին, խաղացած է կեդրոնի մը դերն, որոյ շուրջ յաջորդաբար եկած խմբուած են ուրիշ տոհմեր որոց իւրաքանչիւրն, թէև տարբեր ծագումէ, միեւնոյն պայմանաց դէմ կռուելու հարկին մէջ էր, և այս կը նշանակէ թէ հասարակութիւնք աւելի դաշնակցութիւն մ'էին քան հոծ ազգայնութիւն մը:

Մեծապէս կը սխալի մարդ եթէ արդի տեսակէտով ելնէ խորհրդածել հնութեան իրողութեանց վրա: Հնութեան մէջ մեծ համախմբութիւններ չը կային, մինչեւ իսկ Ասիոյ հզօր Կայսրութեանց համար: Եթէ իրողութեանց խորը նկատենք, պիտի տեսնենք թէ Կայսրութիւնք կը ձեւանային առընթերադիր մարմիններէ, որք քիչ հակամէտ էին ձուլուելու: Քանի որ այդ հեռաւոր դարուց մէջ ուրիշ երկիրներ ենթակայ եղած են այս ընդհանուր օրէնքին, Հայք ի՞նչպէս կրնային զերծ մնալ անկէ: Ուրեմն այն

զանազան տարերք, որք կը ծածկէին Հայաստանն, կը բաժնուէին կարգ մը կեդրոններու՝ որք հասարակ կեդրոնի մը հետ ուրիշ կապ չունէին՝ եթէ ոչ անմիջական շահն կամ բռնութիւնն: Այս տեսակէտէն դիտելով է որ կարելի է բացատրել շատ պատմական իրողութիւններ որք ինքնին, առանց այս ուղղիչ տեսութեան, անմեկնելի հանելուկ մը պիտի թուէին:

Հայք ստէպ Ասիոյ հզօր պետութեանց շուրջը ծիր բոլորած են. այսինքն Ասորեստանեայց, Մարաց և Պարսից: Հայ պատմութեան մեծ անձնաւորութիւններն, որպէս Մեծն Տիգրան, օդերեւոյթներ են որք պահ մը փայլած են նորէն ձգելու համար զՀայս այն ստորադաս վիճակի մէջ որ իրենց սովորական բաժինն եղած է:

Իրաց խորհրդածեալ ուսումնասիրութիւնն զմեզ կ'առաջնորդէ չը նկատել մեր աղգն իբր մի հոծ մարմին, որ իւր տարերաց մէջ ստացած լինի այն յարակցութիւնն՝ առանց որոյ աղգ մը ուրիշ բան չը նկատուիր եթէ ոչ հաւաքում մը առընթերադիր տարերաց, որք միջոց մը համանման շահեր կունենան, այլ ուրիշ միջոց մ'ալ ենթակայ են անջատուելու: Արդ՝ ցորչափ կապակցութիւնք կենդանի արմատներ չունենան ժողովրդոց մէջ, քայքայում մը կը պատահի միշտ, վաղ կամ անագան:

Այսպէս էր երկրին քաղաքական կացութիւնն երբ Քրիստոնէութիւնն տնկեց խաչն ի Հայաստան: Հելլեն քաղաքակրթութիւնն, ուղղակի կամ Հռոմայեցւոց միջոցաւ, դարերէ ի վեր Ասիոյ ժողովրդոց միտքը ղբաղեցուցած էր. այս քաղաքակրթութիւնը (չէր կրնար) այդ կապը լինել, առանց երբեք կարենալ խլելու բոլոր տարերքն իրենց մասնաւոր ձգտմանց մէջ: Քրիստոնէութիւնն է որ ջանաց ստեղծել բարոյական կապ մը, թէ՛ միօրինակ կրօն մը վերադրելով բոլոր անոնց՝ որք կախում ունէին Հայ վեհապետէն, եւ թէ՛ մանաւանդ Հայ լեզուաւ կրօնական դրականութիւն մը ստեղծելով: Կրօնի և լեզուի այս երկու կապերուն տակ, արքունի իշխանութիւնը ջանաց կեդրոնացնել, եկեղեցական իշխանութենէն մղեալ: Արքունի իշխանութիւնը յաղթուեցաւ այս ձեռնարկին մէջ, զի չէր յաջողած խոնարհեցունել զանազան տոհմապետներն եւ սահմանել անոնց հպատակութիւնն, ժողովուրդին վրայ լենելով:

Թագաւորական հեղինակութեան պարտութեան առջեւ, կղերը ձեռք առաւ միութեան դրօշն, ալ՛ չձգելու համար զայն: Կրօնը միութեան կեդրոն եղաւ ազգայնոց համար: Իրողութիւնք կը հաստատեն թէ այս կառանը այնքան ամուր է որ այդ օր իսկ, հակառակ այն յեղաշրջմանց որոց կրած է ազգը, նա չէ դադրած գոյութիւն ունենալ: Եւ դիտելի է որ կղերը բնաղդով շարունակած է Հայ Եկեղեցւոյ Հայրապետաց աւանդութիւնն ի մասին պահպանութեան ազգային լեզուի, իւր արարողութեանց մէջ գործածելով նախնեաց խօսած լեզուն եւ զայն յաւէտ կամ նուազ մշակելով: Դարերէ ի վեր այն աղջամուղջին մէջ որ խաւարեցուց Հայաստանն եւ ծանրացաւ մեր բոլոր ազգակցաց վրայ, Քրիստոնէական կրօնի պաշտօնեայք պահպանեցին ազգին մտաւոր կենաց մնակ նշմարներն:

Ամէն բան յառաջ կընթանայ աշխարհիս մէջ: Եթէ այսօր կրօնը չէ կարող կազմել միակ բարոյական կապը ազգայնութիւն մը պահպանելու համար, ոչ նուազ ճշմարիտ է թէ բնաւ ուրիշ դրօշ մը չունինք որոյ տակ պահպանենք մեր աւանդութիւններն և վերապահենք մեր ապագայն: Ուստի հաստատապէս համոզուած եմ թէ ամենէն աւելի Հայ մնացած մարմնոյն, այն է բուն Հայկական Եկեղեցւոյն յարելով է որ կրնանք զերծ մնալ մեր ազգայնութիւնն ուրանալէ: Այս է համոզումս որ համաձայն է Ձեր սկզբանց:

Պիտի յաւելում թէ ինչ որ Հայ Կղերը ձեռնարկած է ի սկզբան, այն է հայերէնի մշակումն, մենք պարտաւոր ենք անոր նուիրել մեր բոլոր ոյժն, մինչեւ իսկ երբ այս մասին մեր եկեղեցականութեան վրայ թուլացում նշմարենք:

Այսպէս միայն պիտի արժանանք լինել հարազատ որդիք այն Հարց՝ զորս նախախնամութիւնը պարգեւած է մեզ:

ՍԵՐՎԻԶԷՆ

1889, Կ. Պոլիս.

II

ԱԼԻՇԱՆԻ ՆԱՄԱԿԸ Կ. ԵԶԵԱՆՑԻՆ

Հայր Ղեւոնդ Մ. Ալիշան առ պարոն Կարապետ Եզեան
Ի Ս. Պետրբուրգ.

Վենետիկ. Ս. Ղազար 7/19 Յունուար 1891

Մեծապատիւ Տէր,

Ցեռ շնորհաւոր եւ յաջող մաղթելու ֆեզ նոր տարիս, շնորհակալ եմ եւ ղրկած Դարդելի գրքիդ համար, զոր ուշ ընդունելով՝ ուշացաւ եւ պատասխանս: Ես ալ Ի.ԻՈՆ կոմսէն ընդունելով բնագրին թերթերը՝ կարդացեր էի եւ ինչ ինչ նշանակեր էի ի Սիսուանիս. անտարակոյս մեր թարգաւորին եւ թարգաւորութեան վերջին նկատմամբ՝ կարեւոր եւ հետաքրքրական գործ մի է, ի բաց թողլով սղալ զրոյցները ի սկզբան գրոցն:

Գալով մեր կարծեաց եւ տեսութեանց տարբերութեան, այդ միշտ եղած է, եւ եթէ առաջ ոչ՝ հիմայ ալ չի վնասէր մեր բարեկամութեան, զուցէ եւ կերպով մի՝ համարձակութեամբն՝ աւելի ալ կը հաստատէ: Կարծիքն՝ քանի որ կարծիք ենթադրուի երկու կողմէ ալ՝ հաւասարակշիռ է. ինդիրն կը տրուի՝ եթէ մէկ կամ միւս կողմն ի վեր քան զկարծիս՝ գիտութեան, ստուգութեան եւ հաւատոց վրայ վստահացեալ է: Այս տեսութեամբ՝ միշտ յարգելով մեր բարեկամները, կրնամք չյարգել անոնց օտար կարծիքը, որով եւ ես թողլով Հ. Ալիշանին կարծիքը եւ գրածները՝ զոր կը յիշէք, (երբեմն զանց ընելով անոր ծանօթութենից մէջ ըրած բացատրութիւններն ալ), նոյն բարեկամութեամբ, նաեւ՝ կարդիս, ազգասիրութեան եւ երկար ժամա-

նակեայ քննութեանցս շնորհօք, երկու բան միայն կը յիշեցնեմ իմ ազնիւ բարեկամիս. մին՝ իմ կամ նմանեացս կաթոլիկական տեսութիւնները, որոց համատես եւ համահաւան են ոչ մի կամ երկու՝ այլ հարիւրաւոր միլիոն անձինք՝ ի յետնագոյն մասունս երկրի:

Երկրորդն է նկատմամբ Ներս. Լամբրունացւոյ, որոյ վրայ իմ բարեկամիս ըսածը՝ կը թողում իրեն իբրեւ իր եւ նմանեացն կարծիք. իսկ իմ ըսածս՝ ոչ իբրեւ կարծիք ընդունիմ, այլ իբրեւ սրբազան հաւանութիւն եւ հաւատիք՝ այն Անձին գերագոյն Սրբութեան և արժանաւորութեան, որոյ, կարծեմ շատք և շատք համաձայնէին՝ եթէ ինձ պէս Անոր բոլոր գործները, մանաւանդ, Սաղմոսաց մեկնութիւնը կարդացած եւ քննած ըլլային, որոց մէջ կան այնպիսի խոր, ջերմ եւ բարձր զգացմունք, այնպիսի վերացմունք եւ խօսք առ Աստուած՝ զոր անհնար է ունենայ այն՝ զոր կարծէ իմ բարեկամս, այլ միայն այնպիսիք՝ որ եւ յընդհանուր եկեղեցիս եւ ի դուռս Սրբոց՝ հազուագիւտ երեւին, եւ յետ իմ նուաստիս յիսուն եւ աւելի տարիներու ազգային եւ անազգային քննութեանցս՝ համարձակ եւ պարծանօք կը ճանչնամ զնա մի ի գերագոյն անձանց եւ պարգեւաց՝ զոր Աստուած շնորհեր է մեր ազգի եւ եկեղեցւոյ:

Կարդա՛, Սիրելի Բարեկամ, անդամ մ՚ալ անոր աշակերտ Խաչատրոյ գրածը, ռամկաբար լեզուաւ՝ այլ խորամուխ ճանաչողութեամբ, որոյ նման ոչ ոք գրած է ի մերայոց եւ ոչ աւելի ճանչցեր է իր գովածը, եւ մի՛ զարմանար թէ Հ. Ալիշանն այդքան երես բան գրեր է իր Սիսուանին մէջ. շատ փոքր է այդ գրածն իր զգացման և ճանաչման առջեւ, իսկ Անոր արժանաւորութեան համար՝ ոչինչ: Մեծ պակասութիւն համարիմ ազգայնոցս՝ այսպիսի չքնաղ անձին վրայ քիչ կամ սղալ ծանօթութիւն ունենալն, մեծագոյն եւս ապերախտութիւն՝ չգիտնալով եւ արհամարհելն, եւ վերադասել քան զնա՝ զայնպիսիս՝ զորս չգիտեմ կամ չուզեմ զի՞նչ անուանել: Ո՛հ, Բարեկամ, յուսամ որ ես զիս չեմ կորուսած, այլ տարօք մօտենալով հանդերձեալ կենաց, հոգիս կը համարձակի հայրական թեւեր արձակել, եւ եթէ կարելի ըլլար այս վայրկենիս կը պլլուէի անոր հետ որու կը գրեմ, եւ թերեւս երկու կաթիլ արտասունք ալ թափել տայի ի պատիւ Անոր՝ որ ի կեանս իւր Սիրելի մականանեալ էր, որպէս միւս Ներսէսն Շնորհալի:

Հաճոյ կամ անհաճոյ՝ ներէ՛ երկայնաբանութիւնս, որ շատ աւելեալ կրնար յերկարել, եթէ պաշտպանութեան կամ ընդդիմութեան մտօք գրուելու ըլլար, այլ ես գրուածոցս մէջ ալ մտադրած եմ պարզապէս եւ իբրեւ հարկ եւ կարդ պատմութեան՝ ըստ տեղւոյն յիշել հանդիպածներ, եթէ անհատ անձի մի եւ եթէ բազմութեան, ըստ այսմ սկզբան՝ նաեւ յաջորդ գրուածիս՝ Սիսականի մէջ՝ կայ տեղ մի, ուր երկար պիտի խօսիմ մեր եկեղեցական պատմութեան ճիւղի մի վրայ, որ կրնայ բարեկամիս եւ նմանեաց անհաճոյ ըլլալ, սակայն ես, որպէս ըսի, իբրեւ պարզ պատմութիւն տեղական կը յիշեմ, ի հարկէ ինձի լաւ երեւեալը լաւ ըսելով՝ հակառակն ալ նոյնպէս.

Անցողաբար ծանուցանեմ որ յիշեալ վերջի գործս սկսաւ

տպագրիլ, բայց այդ կողմերուդ Աղգայնոց՝ թերեւս անծանօթ կամ անընդունելի եղած ըլլայ։

Եթէ բաց ի էջմիածնի Դանիէլեան Սարկաւագի եւ Մկ. Փափազեանի հանած լուսանկարներէն, ուրիշ լուսանկար կամ գծագրեալ տեսարան եւ պատկերք գիտէք Սիւնեաց կողմերու, խնդրեմ որ նշանակէիք, ըլլայ եւս տպագրեալ գրոց կամ լրագրոց մէջ, եւ ընդունելով իմ յարգանօք մաղթանքս՝ ողջ լեր։

Խ. Ծ.

Հ. ՂԵՒՈՆԴ Մ. ԱԼՆՇԱՆ



ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

ԲԱՐԵՆՇԱՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Խորհրդային բոլոր երկրներում — ուրեմն նաեւ Հայաստանում — ահա մի տարուց աւելի է, որ սկիզբ է դրուած *մշակութային ճակատի* վերակառուցման: Վերջին ամիսների կարգադրութիւնները դպրոցական նոր ծրագրերի ու ուսումնական պլանների, համալսարանի վերաբացման, գիտական ու գեղարուեստական մարզերում աշխատանքները աշխուժացնելու մասին որեւէ կասկած չեն թողնում, որ Կոմկուսի այս անգամւայ կատարածը ոչ թէ մի ապերասան արշաւ է դէպի « սոցիալիստական » նորանոր փորձարկութիւններ, այլ նահանջի մի ճիգ դէպի հին, նախախորհրդային ուղիները: Ձեռնարկած այդ վերակառուցումը, *եթէ միայն յարատեւի*, դնելու է մասնաւորապէս ազգային մշակոյթների հետագայ զարգացումը քիչ թէ շատ բնականոն հունի մէջ եւ ուղղելու է դէպի հայրենի ակունքները: Այս հանգամանքը դարձնում է անհրաժեշտ, որ մի երկու խօսք ասենք այն անդրադարձումների մասին, որ ունեցել է Հայաստանում Կոմկուսի կատարած այս նոր շրջադարձը:

Խորհրդային Հայաստանում բոլշեւիկ նոր քաղաքականութիւնը աւելի կամ պակաս չափով իր արտայայտութիւնն է գտել մշակութային բոլոր ճիւղերում՝ կրթական, գրական, գիտական, արուեստի եւ այլն: Առանձնապէս զգալի են կատարուած փոփոխութիւնները կրթական մարզի մէջ: Այսինքն, այն *ճակատամասում*, որտեղ վերջին տարիների « սոցիալիստական » փորձարկութիւնները ստեղծել էին մի այնպիսի կացութիւն, որ, եթէ շարունակուէր եւս մի փոքր ժամանակ, յանգելու էր միայն մի արդիւնքի՝ *դպրոցի մահացման*: Ոչ թէ մեր, այլ հէնց իրենց՝ հայ բոլշեւիկների վկայութեամբ « դպրոցի մահացումը » եղել է այն հիմնական նպատակը, որին գիտակցաբար ձգտել են Հայաստանում: Այդ նպատակին հասնելու համար, խորհրդային դրպրոցում կիրառուել է դասաւանդման մի եղանակ, որ կոչւում է « *պրոէկտ – կոմպլեքսային* » եւ որի յատկանիշներից մէկն էլ այն է, որ նա «*ժխտում է կայուն, որոշակի սահմանուած ու լաւագոյն դիտելիքներ տուող դասագրքերը*», ինչպէս նաեւ «*թերագնահատում է ուսուցչի դերը՝ ուսուցչին աւելորդ, նոյն իսկ վնասակար դէմք համարելով*» («Խ. Հ.» № 206): Դպրոց՝ առանց ուսուցչի եւ առանց դասագրքերի, սրանից աւելի մեծ անհեթեթութիւն դժուար է երեւակայել: Եւ այս անհեթեթութեան առաջ ստիպուած են եղել տեղի տալ բոլշեւիկները: Մեկնելով Մոսկուայի կարգադրութիւնից՝ Հայաստանի Կենտկոմը հրատարակել է մի շարք նոր կարգադրութիւններ, որով վերջ է տալիս դասաւանդման վերոյիշեալ չնաշխարհիկ ձեւին,

մտցնում է «կայուն դասագրքեր», սահմանում է ուսումնական ծրագիր եւ վերադարձնում ուսուցչին իր իրաւունքներն ու պարտականութիւնները:

Միեւնոյն պատճառները ստիպել են վերակառուցման ենթարկել նաեւ բարձրագոյն կրթութեան գործը, որի հետեւանքով վերաբացել է Հայաստանի համալսարանը: Ինչպէս յայտնի է, մի երկու տարի առաջ, խորհրդային երկրներում փակեցին համալսարանները եւ նրանց փոխարէն հիմնեցին *ինստիտուտներ*: Այս քայլը արդիւնք էր այն նոր հասկացողութիւնների, որ իւրացրին բոլշեւիկ ղեկավարները քաղաքական ձախ ընթացք (հնգամեակի քաղաքականութիւն) որդեգրելու կապակցութեամբ: Համաձայն այդ ըմբռնումների, Կոմկուսի հիմնական նպատակի՝ սոցիալիստական շինարարութեան համար միանգամայն աւելորդ էին համարւում «բուրժուական» զանազան «հումանիտար» եւ տեսական արժէք ներկայացնող գիտութիւնները: Խորհրդային շինարարութիւնը կարիք ունի միայն գործնական գիտելիքներով օժտուած մասնագէտների, որոնց պատրաստման համար միանգամայն բաւական են բոլշեւիկեան ինստիտուտները, իրենց կրճատ ծրագրով ու 2–3 տարուայ դասընթացքով: Ինչ վերաբերում է տեսական գիտութիւններին, նրանց բոլորի փոխարէն կայ միայն մի գիտութիւն՝ մարքսիզմ–լենինիզմ, որին ծառայելու համար կոչուած է համանուն ինստիտուտը: Այս փորձը նոյնպէս չուշացաւ տալու իր արդիւնքները: Մէկ անգամից ընկաւ բարձրագոյն կրթութեան մակարդակը եւ տեսականօրէն թերուս մասնագէտները անկարող ու անպէտք դուրս եկան նաեւ «սոցիալիստական շինարարութեան պրակտիկայի» համար: Դրութիւնը փրկելու համար նաեւ այստեղ ստիպուած եղան վերադառնալ այն հին ուղիներին, որոնցից հրաժարւել էին վերջին տարիները: Այս ուսումնական տարուանից վերաբացւել է Երեւանի համալսարանը, իր լրիւ բաժիններով, որտեղ դասախօսելու հրաւիրուած են լաւագոյն գիտական ուժեր «Հայաստանից եւ խորհ. Միութեան կենտրոններից:

Կրթական գործի վերոյիշեալ վերակառուցման կապակցութեամբ արժէ յիշատակել այն բընորոշ խօսակցութիւնները, որ հայ բոլշեւիկները սկսել են անել հրապարակով *ազգային մշակոյթի* ու մեր ժողովրդի պատմութեան ուսումնասիրութեան եւ անցեալի մշակութային ժառանգութեան իւրացման անհրաժեշտութեան մասին: Մոռանալով, որ իր քարտուղարութեան օրով է փակւել Հայաստանի համալսարանը եւ որ իր կարգադրութեամբ է, որ արգելւել է հայոց պատմութեան ու հայագիտական առարկաների ուսուցումը՝ Ա. Խանջեանը այժմ այդ յանցանքների պատասխանատուութիւնը փորձում է ձգել «կեղծ ինտերնացիոնալիզմի փետուրների տակ թաքնուած մեծապետական շովինիստների վրա», որոնք «աւելորդ են համարել մեր անցեալի, մեր պատմութեան ուսումնասիրութիւնը»: Կենտկոմի քարտուղարը անհրաժեշտ է գտնում ուղղել այդ սխալը ու յայտարարում է, որ «առաջարկուած է լուսժողկոմատին այս իսկ ուսումնական տարուանից մտցնել հայոց պատմութիւնը՝ մարքս–լենինեան լուսաբանութեամբ,

որպէս դպրոցների դասաւանդման կարեւոր առարկաներից մէկը» («Խ. Հ.», № 192)։ Եւ, իսկապէս, վերջին տեղեկութիւններից պարզւում է, որ լուսժողկոմատը արդէն ձեռնարկել է մշակելու հայոց պատմութեան եւ գրականութեան ծրագիր ու այդ առարկաները մտցրել է այս տարւայ ուսումնական պլանների մէջ։

Փոխւել է վերաբերմունքը նաև դէպի գիտական աշխատաւորները ու գիտական աշխատանքները։ Մարդիկ, որ 1929 — 30 թ.թ. հալածւում էին, որպէս ռեժիմի թշնամիներ, որպէս անհարազատներ ու մինչեւ անգամ վնասարարներ, այսօր նորից համալսարանի դասախօսութեան են հրաւիրւում ու նոյն իսկ արտասահման ուղարկւում՝ կատարելագործւելու համար։ Ինչ վերաբերւում է գիտական առանձնապէս հալածւած ճիւղերին, ինչպէս, օրինակ, հայագիտութեան ու հնագիտութեանը, նաեւ այս մարզում նկատւում է որոշ փոփոխութիւն իշխանութեան վերաբերմունքի մէջ։ Դեռ երկու տարի առաջ այս գիտութիւնները համարւում էին «մամռապատ ճիւթեր», որոնք «ակտուալ նշանակութիւնից ու գործնական արժէքից զուրկ են մեր կառուցւող նոր կեանքի համար»։ Այսօր պրոֆ. Աշխարհբէգը նորից կեանքի է կոչւել եւ աշխուժութեամբ առաջ է տանում իր հնագիտական ուսումնասիրութիւնները։ Ճիշտ է, նա չկարողացաւ փրկել վանդալական կործանումից հրնագիտական մեծ արժէք ներկայացնող Երեւանի Պօղոս-Պետրոս եկեղեցին, (որի տեղը այժմս սինեմայի շէնք է կառուցւում), բայց Զանգեզուրում ու Նոր-Բայազէտում պեղումներ անելը նրան այլ եւս չի արգելւում։

Աւելի պակաս զգալի է քաղաքականութեան այս փոփոխութիւնը արւեստի եւ գրականութեան մէջ։ Թատրոնական գործում նա զգացւում է առ այժմ խաղացանկի վրա, որի մէջ արտօնւած է մտցնել «սոցիալիստական շինարարութեանը սատարող» թատերակների կարգին նաեւ դասական գործեր, պայմանով, սակայն, որ այս վերջինները բեմադրւեն մարքս-լենինեան վերամշակման ենթարկւելուց յետոյ։ Ինչ վերաբերում է գրականութեան, այստեղ հրատարակչական մարզի մէջ է միայն, որ նկատւում է որոշ *լիբերալիզմ*։ Լենինի, Ստալինի եւ խանջեանի նառերի հրատարակութիւնից յետոյ, Պետհրատը ձեռնարկել է լոյս ընծայելու նաեւ Պետ. Դուրեանի, Մեծարենցի, Ե. Օտեանի եւ Պարոնեանի երկասիրութիւնները։ Գամառ-Քաթիպան, Մուրացանը, Ահարոնեանը, Րաֆֆին եւ ուրիշներ շարունակում են մնալ արգելքի տակ։ Գալով նոր ստեղծագործութեան, այստեղ դրութիւնը մնում է համարեա թէ անփոփոխ։ Ճիշտ է, որոշ սանձ է դրւած պրոլետ-ֆենոդատների բերանին, եւ նրանք այլեւս չեն համարձակւում «հակադիալեկտիկական ստորակէտի» համար խաչ հանել իրենց ընկեր գրագէտներին, բայց հիմնական սկզբունքը՝ գրականութեան ծառայեցումը «սոցիալիստական շինարարութեան»՝ մընում է անփոփոխ։ Ակնդէտ հրսկումէ կենտկոմը նաեւ գրողների ամենափոքր չափով իսկ թոյլ տւած ազգային թեքումների վրա, հէնց իր արմատում խեղդելով այդ ուղղութեամբ կատար-

ւած իւրաքանչիւր փորձ: Այսպէս, օրինակ, «խիստ յանդիմանութիւն ու վերջին նախազգուշացում» է ստանում Ա. Բակունցը « նացիոնալիստական տենդենցներ արտացոլող » իր մի յօդուածի համար եւ արտաքսւում է կազմկոմիտէի (Գրողների Միութեան Վարչութիւն) կազմից: Նոյն բախտին է արժանանում նաեւ այդ կոմիտէի քարտուղարը՝ Ն. Զարեանը:

Անշուշտ, դեռ վաղաժամ է խօսել « կուլտուրական փրոնտում » կատարուած լուրջ շրջադարձի մասին, բայց թէ որ այնտեղ որոշ փոփոխութիւններ ընդ նշմարւում են, այդ կասկածից վեր է:

Ա. Խ.

ԽՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԳՐՈՂՆԵՐԻ ԴԷՄ

Օգոստ. 20ին, Հայկենտկոմի քարտուղարութիւնը, քննելով Հայաստանի Գրողների Միութեան գործերը՝ եկել էր այն եզրակացութեան, որ « խմբային տրամադրութիւններն ու խմբակային պայքարը », այսինքն՝ թայֆականութիւնն ու ներքին հակամարտութիւնները չեն վերացել հայ գրողների միջից, ոչ էլ գաղափարական խարխափումներն են վերջ գտել: Քարտուղարութիւնը մատնանշել էր, որ Գրողների Միութեան պաշտօնաթերթ « Գրական Թերթ»ը հետեւում է անթոյլատրելի գծի», եւ որ «Բակունցի խմբակը ··· պաշտպանել է կենտկոմի կողմից դատապարտուած նացիոնալիստական տենդենցներ արտացոլող դիրքեր»: Այս փաստից ելնելով՝ կենտկոմի քարտուղարի աշխատանքից հեռացնել Ն. Զարեանին եւ «իր ցուցադրած անթոյլատրելի վարքագծի համար » « յանդիմանութիւն անել ընկ. Ա. Բակունցին՝ վերջին նախազգուշացումով եւ հանել նրան կազմկոմիտէի կազմից »:

Երկու ամիս յետոյ, Հայ Գրողների Միութեան գործերը ենթարկուած են նոր քննութեան, որի հետեւանքով կազմ. կոմիտէի նախագահութիւնից հեռացուած է Եղիա Զուբարը եւ տեղը նշանակուած է Դր. Տէր-Սիմոնեանը, իսկ «Գրական Թերթ»ի խմբագիր նշանակուած է Ալազանը:

Հիմա պարզւում է, որ Հայաստանի գրողների եւ գրականութեան մէջ տիրող «հիւանդութիւնները» երթալով սաստկանում են: Այսպէս, Ռոստովի «Գրոհ» հայերէն թերթի նոյեմբ. 26ի համարում կարդում ենք. «Հայաստանի գեղարուեստական և գիտական գրականութեան ասպարիզում մի շարք ռէակցիոն, բացայայտօրէն նացիոնալիստական աշխատութիւնների լոյս ընծայման համար Հայաստանի կոմկուսի կենտկոմի քարտուղարութիւնը նոյեմբ. 14ին յատուկ որոշում է կայացրել Հայպետհրատի արտադրանքի իդէոլոգիական անկայունութեան մասին: Այդ որոշումով գործածութիւնից հանուած է Մկրտիչ Արմէնի «Երեւան» գիրքը, արգելուած է Եղիշէ Զարենցի « Գիրք Ճանապարհի »ի հրատարակումը — որը պարունակում է հակայեղափոխական – տրոցկիստական գրպարտութիւն կուսակցութեան դէմ. նոյնպէս արգելուած է հայոց գրականութեան ութերորդ խմբի համար կազմուած խրիստոմատիան եւ այլն:

Այդ նոյն որոշման համաձայն հանուած է Պետհրատի գեղարուեստական սեկտորի վարիչի

պաշտօնից եղիշէ Չարենցը: Հայաստանի Լուսժողկոմին առաջարկուած է անյապաղ վերանայել հիւսիսատում հրատարակութեան համար պատրաստուած բոլոր նիւթերը»:

Այսպէս, ուրեմն, մի կողմից կարծես բարենշան երեւոյթներ մշակոյթի եւ գրականութեան ասպարիզում, միւս կողմից — նոր հաւատաքննութիւն, նոր աուտոդաֆէներ ու հալածանքներ գրականութեան ու գրողների դէմ:

Վ. ԹԷՓԷԵԱՆԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Հինգ ամիս առաջ, յուլիսին, հասարակական տարբեր դիրքի ու դաւանանքի պատկանող փարիզահայ մտաւորականների մի խումբ կազմեց մի յանձնաժողով՝ տօնելու համար պ. Վահան Թէքէեանի 40ամեայ գրական գործունէութեան յոբելեանը: Յանձնաժողովի մէջ մտան, ի միջի այլոց, Ա. Ահարոնեանը, Ա. Չուպանեանը, Ռ. Բերբերեանը, Լ. Բաշալեանը եւ ուրիշներ: Յանձնախմբի որոշումով յոբելեանը պիտի տօնէր այս տարուայ վերջը: Ասել է՝ մինչեւ «Վէմ»ի յաջորդ համարի լոյս տեսնելը հանդէսը կարող է արդէն կատարուած լինել:

Վ. Թէքէեանի հասարակական արժէքը գնահատելիս պէտք է իրարից տարբերել բանաստեղծն ու հանրային-կուսակցական գործիչը, թէեւ, վերջին հաշուով, հասարակական գործի ասպարէզում էլ պ. Թէքէեանը մնաց աւելի բանաստեղծ, քան հանրային գործիչ: Հանրային գործիչ Թէքէեանի հանդէպ մենք ունինք հիմնական վերապահումներ. նրա գաղափարներն ու գործելակերպը մերը չեն: Աւելին. մենք հակառակ ենք նրանց:

Բայց Վ. Թէքէեանի հասարակական արժէքը նրա հանրային-կուսակցական գործի մէջ չէ: Ինչ որ տուել է նա հայ ժողովուրդին դրական ու մնայուն, այն գեղեցիկ հնչեակներն են ու լիարժէք ֆերթուածները, որ դուրս են եկել նրա գրչի տակից, թուով սահմանափակ, բայց բարձրարակ: Հասարակութիւնը տօնում է ա՛յս Վ. Թէքէեանի յոբելեանը: Եւ մենք՝ մերժելով հանրային-կուսակցական գործիչ Թէքէեանին՝ յօժարութեամբ ու սիրով մասնակցում ենք բանաստեղծ ու բազմամեայ մշակութային աշխատաւոր Թէքէեանի յոբելեանին, որ Հայ Մշակոյթի տօնն է միաժամանակ: Եւ օգտուում ենք առիթից մաղթելու, որ պ. Վ. Թէքէեանն իր աճի նկատմամբ էլ գործադրէ այն իմաստուն խորհուրդը, որ վերջերս տուել էր մեր երիտասարդ բանաստեղծներից մէկին—դուրս գայ հասարակական պայքարի մինչեւ այժմ հետեւած ճանապարհից՝ աւելի մեծ արդիւնքով ծառայելու համար մշակոյթին:

Նրա՛ տարի առաջ, արտասահմանի հայութիւնը տօնում էր Ա. Ահարոնեանի գրական գործունէութեան նոյնպէս 40ամեայ յոբելեանը: Գտնուեցին մարդիկ — գլխաւորապէս Վ. Թէքէեանի կուսակիցներից — որոնք հանրային-քաղաքական գործիչ Ահարոնեանի յետեւից չտեսան բանաստեղծի ու գրագէտի դէմքը եւ ոչ միայն զլացան մասնակցել, այլ ձեռքի տակից ջանք էլ չխնայեցին, որպէսզի ձախողութեան մատնեն նրա յոբելեանը: Ուզում ենք անկեղծօրէն հաւատալ եւ համոզուած ենք, որ Վ.

թէֆէեանի գաղափարական հակառակորդները կը լինեն աւելի լայնախոհ եւ աւելի բարձր կը գիտակցեն հայ մշակոյթի յարգը: Տալով զկայսերն կայսեր եւ զԱստծոյն Աստուծոյ՝ ճրանք՝ յանախ նեղմիտ ու կրքոտ կուսակցական գործչի յետեւից կը կարողանան տեսնել տաղանդաւոր բանաստեղծ Վ. Թէֆէեանին: Ու կը բերեն բանաստեղծին իրենց յարգանքի տուրքը իբրեւ դոյզն վարձադրութիւն նրա՝ Հայ Մշակոյթին մատուցած ծառայութեանց:

ԳԷՈՐԳ ԱԲՈՒԼԵԱՆ

Սեպտ. 16ին, Փարիզի Ֆլամառ արուարձանում, 77 տարեկան հասակում, մեռաւ վաստակաւոր կրթական գործիչ Գէորգ Աբուլեանը: Հանգուցեալը թիֆլիսեցի էր, ծնուած 1856թ.: Ներսիսեան դպրոցը յաջողութեամբ վերջացնելուց յետոյ, Աբուլեանը ուիթուեց ուսուցչական գործունէութեան: Ապա թոշակ ստանալով Մկրտիչ Սանասարեանից՝ բարձրագոյն ուսումը աւարտեց Գերմանիայում, մասնակցեց Կարնոյ Սանասարեան դպրոցի հիմնադրութեան եւ մինչեւ համաշխարհային պատերազմ պաշտօնավարեց նրա մէջ մերթ իբրեւ դասատու, մերթ որպէս տեսուչ եւ գրեթէ միշտ դպրոցի ղեկավարութեան բարձր դիրքերում: Դասաւանդում էր ընդհանուր պատմութիւն, բնական եւ մաթեմատիկական առարկաներ, աշխարհագրութիւն եւ արուեստի ճիւղեր: Պատերազմի նախօրեակին, թիւրք կառավարութեան կողմից աքսորուեց Կովկաս եւ մինչեւ զինադադար մնաց Թիֆլիսում: Յետոյ անցաւ Պոլիս, ուր մի ժամանակ շարունակեց կրթական աշխատանքը որբանոցներից մէկում: Վերջը, էմալական արշաւի օրերին, տեղափոխուեց Փարիզ, ուր եւ ապրում էր հասարակական կեանքից հեռու, իր հարազատների մօտ:

Գ. Աբուլեանը լայն զարգացման տէր, իր գործին նուիրուած հմուտ մանկավարժ էր: Հիմնական կերպով ծանօթ հայ անցեալ ու ներկայ կեանքին՝ նա տոգորուած էր ջերմ հայրենասիրութեամբ: Սանասարեան դպրոցը իր յաջողութեան մեծ մասով պարտական է նրան: Առաց չափազանցութեան կարելի է ասել, թէ Սանասարեան դպրոցի պատմութիւնը Գ. Աբուլեանի կեանքի եւ գործի պատմութիւնն է:

Եղաւ մի կարճ շրջան, Սահմանադրութիւնից յետոյ, երբ Սանասարեան դպրոցի շուրջ ընտրուած պայքարում Աբուլեանի անունն էլ խառնուեց: Անաչառ պատմութեան կը մնայ պարզել, թէ ով եւ որքան պատասխանատու էր Սանասարեան դպրոցի Կարնից փոխադրելու անհեթեթ որոշման համար: Անհերքելի փաստը, սակայն, այն է, որ Գ. Աբուլեանը մինչեւ մահ մնաց նուիրուած այդ հաստատութեան և հայ մշակոյթին՝ յարգուած ու սիրուած ոչ միայն բոլոր սանասարեանցիների, այլ եւ հայ հասարակութեան կողմից:



ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ

ՄԵՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ

ՀԱՅՐԵՆԻՔ ԱՄՍԱԳԻՐ. — Հոկտեմբերին լրացաւ « Հայրենիք » ամսագրի 11 տարին: Ամբողջ այդ ժամանակաշրջանում նա քայլեց մեր պարբերականների առաջին շարքերում, աւելի ճիշտ՝ առջեւից: Անսպառ նիւթ տուեց հայ մշակոյթի եւ պատմութեան համար: Նա կարողացաւ իր շուրջը համախմբել գաղութահայ մտաւորականութեան լաւագոյն ուժերը եւ տեղ գտաւ ոչ միայն զարգացած խաւերի մէջ, այլ եւ հասարակութեան լայն շրջաններում: Եւ որպէս այդպիսին՝ մնում է եւ այսօր: Ապացոյց ամսագրի վերջին տարւայ համարները, ուր գտնում ենք մեծարժէք գրական – պատմական աշխատութիւններ:

« Հայրենիք » ամսագրի վերջին տարեշրջանի գրական բաժնի նիւթերից առանձնապէս ուշագրաւ է *Համաստեղի* « Սպիտակ Ձիաւորը », որի երկրորդ մասը վերջացաւ № 12ում: Երրորդ եւ վերջին մասը, որ արդէն գրուածպատրաստ է, տրւելու է 1934ին: Համաստեղի վէպը գրական երեւոյթ է մեր կեանքում եւ լրանալուց յետոյ դեռ խօսեցնել պիտի տայ իր մասին: Ցանկալի է, սակայն, օր առաջ առանձին հատորով հրատարակուած տեսնել այդ նշանակալից երկը, որ ամսագրի էջերում, ամսէ ամիս կարդացւելով, շատ բան կորցրեց իր ամբողջական տպաւորութիւնից: Սխալ է գրական երկերի ամիսներ ու նոյն իսկ տարիներ տեւող հրատարակութիւնը պարբերականներում. գրուածքը անհամեմատ աւելի կը շահի, եթէ լոյս ընծայւի առանձին գրքով:

Նոյնը պէտք է ասել եւ *Կ. Զարեանի* « Բանկօօպը եւ Մամութի ոսկորները» գրուածքի մասին, որ երկրորդ տարին է ահա տպւում է ամսագրում եւ յայտնի էլ չէ, թէ երբ է վերջանալու: Կ. Զարեանի գրելակերպով կարելի է շարունակել անվերջ, քանի գոյութիւն ունի ամսագիրը: «Բանկօօպի եւ Մամութի Ոսկորները»ի մէջ կան փայլուն էջեր, յատուկ Կ. Զարեանի խոշոր տաղանդին, բայց կան եւ կրկնութիւններ հերոինակի նախկին երկերի, կամ՝ գրեթէ լրագրական ժամանակագրութիւն: Կ. Զարեանի մեծ տաղանդը, դժբախտաբար, շատ է կորցնում հեւ ի հեւ, օրւայ մտահոգութիւններով կատարուած աշխատանքից:

Յ. Օշականի «Հանի Մուրատը» նոյնպէս խոշոր տաղանդի պրոդուկտ է, մէկ օղակը այն ամբակուռ շղթայի — «Մնացորդացը» — որ քանի տարի է ահա յամառ ուժգնութեամբ կոփւում է հերոինակի գրական մուրճի տակ:

Պատմական հարցերին նւիրուած նիւթերից դեռ է յիշել Յ. Զարեանի «Մի Դրւագ հայ-կաթոլիկ յարաբերութիւններից » խնամուած, հարուստ փաստերով եւ պատմական մեկնութիւններով յագեցած ուսումնասիրութիւնը, *Մ. Օգանեանի* «Ա. Վռամեանը իբրեւ հրապարակագիր», *Արմէնի* « Յ. Հ. Դաշնակցութիւնը Բալկաններում » եւ *Ա. Գիւլխանդան-*

Եանի «Հայ-թաթարական ընդհարումները Բագուի մէջ» պատմական հում նիւթեր պարունակող եւ մեր կեանքի որոշ ժամանակաշրջաններ բնորոշող աշխատութիւնները: *Ա. Աթան* եւ *Մ. Օ.* ամէն ամիս առատ փաստական նիւթ են հաղորդում Հայաստանի եւ արտասահմանի հայ կեանքի մասին:

«Հայրենիք» ամսագրի բնորոշ գիծն է — գիտական առարկայականութիւնն ու լայնախոհութիւնը, մի յատկութիւն, որ առանձնապէս գնահատելի է մեր կեանքում, ուր ամէն ինչ չափւում է «իմ»ի եւ «քոնի»ի չափով:

ԱՆԱՀԻՏ, հանդէս մտածման և արուեստի: 1929թ. մայիսից ի վեր լոյս է տեսնում Փարիզում, Ա. Զոպանեանի խմբագրութեամբ, սկիզբը իբրեւ երկամսեակ—շատ անկանոն—այս տարուանից՝ երեք ամիսը մէկ անգամ: «Անահիտ»ը նեղ մտքով անհատական գործ է, իր խմբագրի անձնական «մտածման», «ես»ի արտայայտիչը: Սկզբից մինչեւ վերջ Ա. Զոպանեանի հոտն է գալիս վրայից՝ անախորժութեան աստիճան: Ամէն, օրինակի համար, վերջին թիւը (յուլ.—սեպտ.). 112 էջնոց գրքից 57 էջ նիւթը պատկանում է խմբագրին. մնացեալ [illegible] բաժանուած է 11 աշխատակիցների միջեւ:

Ոչ միայն ըստ քանակի, որակով էլ «Անահիտ»ը նեղ-անձնական հրատարակութիւն է, որ իր խմբագրի ձեռքին ծառայում է որպէս զէնք եսական պայքարի եւ անհատական հաշիւների: Եւ որովհետեւ Ա. Զոպանեանը ինքը, իբրեւ անձնաւորութիւն կրքոտ ու փոքրոգի մարդ է, այդ պատճառով «Անահիտ»ի հրապարակագրութիւնն էլ դառնում է՝ բոլորովին անարժէք: Զափազանցութիւն չի լինի, եթէ ասենք, թէ «Անահիտ»ի «նոր շրջանում» Ա. Զոպանեանը գրեթէ ոչ մի դրական արժէք չի տուել հայ «մտածման» եւ «արուեստի»ն:

«Անահիտ»ի չորս տարուայ համարներում կան և մի քանի ձեռնհաս, հայ մշակոյթին նուիրած մարդկանց արժէքաւոր աշխատութիւններ, ինչպէս Ա. Սագըզեանի «Կ. Պոլսոյ հայ ոսկերչութիւնը» կամ «Հայկական Գորգերը ԺԵԷՆ ԺԹ դար», Յ. Քիւրտեանի «Հայ եւ Արաբ Գեղարուեստ. Յարաբերութիւնը» եւ այլն: Կարեւոր տուրք է հայ մշակոյթին եւ Յ. Անտոնեանի թարգմանութիւնը Շելլիի «Պրոմեթէոս Արձակուած»ի:

Անտարակոյս, «Անահիտ»ը անհամեմատ աւելի օգտակար գործ կատարած կը լինէր, եթէ իր խմբագրի զամբիւղ նետելիք հրապարակագրութեան փոխարէն՝ զբաղուէր հայ մշակոյթի խնդիրների լուրջ եւ բազմակողմանի ուսումնասիրութեամբ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՈՒՀԻ.—Բոլորովին ուրոյն տեղ է բռնում Տիկ. Սիրան Սեզայի խմբագրութեամբ Բէյրութում հրատարակուող այս ամսագիրը, որի առաջին տարին լրացաւ սեպտեմբերին: «Երիտ. Հայուհի»ի նպատակն է ծառայել հայ կնոջ դաստիարակութեան ու զարգացման գործին. նա «առանց տարիքի եւ կրօնքի խտրութեան կուզէ միացնել բոլոր հայ կիները եւ պարտադրել, որ անոնք հանոյքով մասնակցին մտքի, հոգիի եւ ցեղի ազնուացման աշխատանքին»: Գովելի նպատակ, թէեւ «*բոլոր* հայ կիները» միացնելը անկարելի լինելու չափ դժուար է: Զէ՞ որ կինն էլ, այր մարդու պէս, ենթակայ է

գաղափարային ու տնտեսական շերտաւորումների:

Հետեւելով «Երիտ. Հայուհի»ի մէկ տարուայ համարներին՝ կարելի է ասել, որ նա սրտանց ձգտում է ծառայել դրած նպատակին. կայ բուռն տենչ օգտակար լինելու հայ կնոջ, կայ սէր դէպի հայ ժողովուրդն ու մշակոյթը, կայ գրական ու գեղարուեստական միտք ու ճաշակ, երեւում է զոհաբերութեան ոգի ու եռանդ: «Եր. Հայուհի»ն պարունակում է հեռաբրբական ու դաստիարակիչ նիւթ եւ աստիճանաբար յառաջադիմում է: Մաղթելով, որ նա լինի տեւական եւ յայնօրէն տարածուի հայ ընտանիքներում՝ կուզէինք միաժամանակ յայտնել եւ մի քանի բաղձանքներ:

Նախ՝ անհրաժեշտ է աւելի, ծրագրուած ձեւով, մօտենալ հայ իրականութեան: «Եր. Հայուհի»ի տուած նիւթի էական մասը առնուած է օտար միջավայրից. թարգմանութիւններ, օտար մեծ մարդոց իմաստալից խօսքեր, օտար պատմական դէպքեր ու դէմքեր, օտար գրական էջեր, այն ինչ նոյն արժէքը ունեցող նիւթի մեծ մասը կարելի է առնել հայ կեանքից, հայ պատմութիւնից, հայ հեղինակներից: Գլխաւոր տեղը պէտք է տալ հայ իրականութեան, իսկ օտար միջավայրին դիմել հայկականը հիմնաւորելու համար: Չէ՞ որ «մաշուած մեռաքի նման ծէնծէն թափելու վրա է մեզմէ հայութիւնը»: Չէ՞ որ պէտք է լծել «հոգի եւ ցեղի ազնուացման աշխատանքին»:

Երկրորդ՝ ի նկատի ունենալով հայ իգական սեռի մտաւոր զարգացման աստիճանը՝ պէտք է գրել աւելի պարզ, աւելի հասկանալի եւ հայ մտքին ու սրտին աւելի հարազատ նիւթեր ընտրել:

Վերջապէս, աշխատանքի մղել հայ կինը, որ ո՛չ միայն պէտք է կարդայ ու սովորէ, այլ եւ գրէ ու սովորեցնէ: «Եր. Հայուհի»ի աշխատակիցների մեծ մասը այրեր են, որոնք մշակում են *արական* նիւթեր, մինչդեռ կի՛ն գրողները պէտք է լինեն կանանց թերթի գլխաւոր աշխատակիցը:

ՆԱՀԱՏԱԿ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

1929թ. սեպտեմբերին, խումբ մը փարիզաբնակ մտաւորականներ հիմը դրին Նահատակ Գրագէտներու Բարեկամներ ընկերակցութեան՝ նպատակ ունենալով հրատարակել եւ տարածել հայ նահատակ եւ մեռած գրագէտներու անտիպ մնացած, սպառած կամ հին մամուլի մէջ կորած երկերը: Զուտ գաղափարական գետնի վրա, առանց նիւթական շահի ակնկալութեան եւ, կարելի է բսել, առանց դոյզն իսկ դրամական միջոցներու սկսուած գործ մը՝ որ ոմանց կը թուէր անիրական: Քանի մը հարիւր փրանկ՝ մէջտեղ հանուած «բարեկամներու» վտիտ գրպաններէն եւ լեռ մը հաւատ ու սէր դէպի հայ մշակոյթը — ահա ձեռնարկին նախնական դրամագլուխը:

Այս դրամագլուխով Ն. Գ. Բարեկամները անցան գործի: Քիչ յետոյ, 1930ին, Փարիզի «բարեկամներու» միացան խումբ մը «բարեկամներ» եւ Նիւ Եորքէն, որով ընկերակցութիւնը դարձաւ երկնիւղ, բայց մէկ էութիւն ներկայացնող մարմին մը: Առաջին հատորի հրատարակութենէն յետոյ բացուեցաւ 12 հատորնոց շարքի մը նախնական բաժանորդագրութիւնը: Չորս տարի անցած, այս համեստ միջոցներով սկսուած

գործի արդիւնքը, իր տպագրած հատորներով ու հաշիւներով, ահա մէջտեղն է:

1930 թւին լոյս տեսաւ Ն. Գ. Բարեկամներու հրատարակութեան առաջին հատորը — *Ռուբէն Զարդարեանի* գործերը. 1931 թւին լոյս տեսաւ արդէն 4 հատոր՝ *Մելքոն Կիւրճեան*, *Գեղամ Տէր-Կարապետեան*, *Գեղամ Բարսեղեան*, *Արփ. Արփիարեան*. 1932 թւին, տագնապի հետեւանքով, միայն *Գրիգոր Զոհրապի* հատորը եւ այս տարի՝ 1933ին, Տիգրան *Զէօկիւրեանի* եւ *Օհան Կարոյի* հատորները: Տնտեսական տագնապը քիչ մը կասեցուցած է «Բարեկամներու» աշխատանքի ընթացքը, բայց յուսալի է, որ նիւթական պայմաններու բարելաւումով, նորէն կարագանայ գործին թափը: Հրատարակելիք ցանկին վրա դեռ կը մնան Եր. Օտեանի, Եր. Սրմաքէշխանլեանի, Արտ. Յարութիւնեանի, Տ. Զրաքեանի եւ Ռ. Սեւակի հատորները:

Ն. Գ. Բարեկամներու ձեռնարկին եռանդուն աջակցութիւն ցոյց տուած է նաեւ հանգուցեալ Հ. Արսէն Ղազիկեան, հին թերթերու մէջ կատարած պրպտումներով, արտագրութիւններով եւ բարեկամական խորհուրդներով:

Գալով, Բարեկամներու գործունէութեան նիւթական կողմին՝ անոր հաշիւները պարբերաբար հրատարակուած են հրապարակով: Հետեւեալ թիւերը բաւական են տալու համար անոր յստակ պատկերը:

Ինչպէս ըսինք, Ընկերակցութիւնը գործի անցաւ առանց ոեւէ դրամագլուխի: 1929թ. սեպտեմբերէն սկսած անոր ընդհանուր հասոյթը եղած է՝ 78,587,95փր.: Այս գումարէն 5000 փր. նուէր տուած է Վ. Խորասանեան, 300 փր. Ն. Կիւլպէնկեան, 866 փր. 85ս. լուծուած «Յարդգոդ» Գրական Միութիւնը, 10,126փր. 80ս. Տարօն – Տուրուբերանի Հայր. Միութիւնը Գ. Տէր-Կարապետեանի հատորին տպագրութեան համար, 1000 փր. Գ. Շահլամեան՝ Տ. Զէօկիւրեանի հատորի ծախսերուն մասնակցելու համար, 25,465փր. 85ս. Նիւ Եորքի Ն. Գ. Բարեկամները՝ այս գումարին մէջը հաշուելով նաեւ Ամերիկայի բաժանորդներու վճարները եւ Յ. Պարոյրեանի ու Ղ. Ե. Պօյանեանի նուիրած 100ական տոլարը՝ Ա. Արփիարեանի եւ Գ. Զոհրապի հատորներու պատրաստութեան համար: Մնացեալը գոյացած է տպած գիրքերու վաճառքէն:

Նոյն ժամանակամիջոցին ելք եղած է՝ 78,546,80 փր., որմէ 51,451ը հատորներու տպագրութեան համար, 10,262,10՝ առաքման եւ փոստի, 7996,70՝ ձեռագիրներու ընդօրինակութեան, 4950՝ քարտուղարի եւ առաքիչի վարձադրութիւն, 20004,20՝ հեղինակի իրաւունք, մնացեալը՝ նկարներ, գրենական պիտոյք, ծանուցում, թռուցիկներ եւայլն: Ուրիշ խօսքով՝ վարչական մեքենան անշնչան դրամ նստած է համեմատած ելքի ընդհանուր գումարին հետ: Գործը տարուած է գլխաւորապէս Բարեկամներու անձնական զոհողութեամբ:

Նախնական բաժանորդագրութիւնը — 12 հատորը 200 ֆրանկ — տուած է 131 բաժանորդ:

Ն. Գ. Բարեկամներու հրատարակած գիրքերու սպառման մասին գաղափար կուտան հետեւեալ թիւերը: Սպառում ըսելով կը հասկցի՝ բաժանորդ, վաճառք և մամուլի ու հաստատութեանց նուէր.

Թիւ 1· *Ռ· Զարդարեան՝ տպւած* է 1500, սպառուած՝ 1182 հատ·

Թիւ 2· *Հրանդ՝* 1500 — 692·

Թիւ 3· *Գ· Տ·Կարապետեան՝* 1500 — 1096·

Թիւ 4· Գ· Բարսեղեան՝ 1500—543·

Թիւ 5· *Ա· Արփիարեան՝* 1500 — 696·

Թիւ 6· *Գ·Զոհրապ՝* 1500—527·

Թիւ 7· *Տ· Զէօկիւրեան՝* 1000 — 345·

Ուրեմն, ընդամէնը տպւած է 10,000 գիրք, որմէ սպառուած է 5081 օրինակ:

ՌՈՒՍ – ԹՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ ՄԱՍԻՆ

Նորերս լոյս տեսաւ «*Համաշխարհային Պատերազմը Կովկասեան ճակատում*· 1914—1917 թ·» ռուսերէն 504 էջնոց մեծածաւալ հատորը — "Міровая Война на Кавказском фронтѣ 1914-1917 г. Գրքի հեղինակն է Կովկասեան բանակի ընդհանուր հրամանատար զօր· Իւդենիչի գործակից զօր· Ե· Վ· Մասլովսկին:

Վերջին ռուս–թրքական պատերազմին նւիրուած գրականութեան մէջ մինչեւ այժմ մի կարեւոր բաց էր մնում· Լարշէի հատորը*), որ ամփոփում է թրքական բոլոր ճակատների պատերազմի պատմութիւնը, Կովկասեան ճակատը չի ներկայացրել իր բովանդակ ծաւալով եւ, որ գլխաւորն է, չի օգտւել ռուսական հիմնական աղբիւրներից: Մասլովսկիի գրքի առաւելութիւնն այն է, որ նա նախ՝ զբաղւում է բացառապէս ռուսական ճակատի գործերով եւ երկրորդ՝ ընդարձակ սահմանների մէջ օգտագործել է ռուսական աղբիւրները — թէ պաշտօնական հրամանները եւ հաղորդագրութիւնները, թէ պատերազմին մասնակցած անձերի յուշերն ու օրագրերը եւ թէ, առհասարակ, գոյութիւն ունեցող տպագիր եւ անտիպ ողջ նիւթը: Այդ պատճառով Մասլովսկիի գիրքը յագեցած է առատ եւ արժէքաւոր փաստական տեղեկութիւնով, թէեւ նրա յայտնած մտքերն ու գնահատութիւնները երբեմն չափազանցւած ու վիճելի են: Գոյութիւն ունեցող ընդհանուր գրականութեան մէջ այս գիրքը միակն է, որ Կովկասեան ճակատի գործերը ներկայացնում է հրնարաւոր լրութեամբ:

«Վէմ»ի էջերում դեռ առիթ կը լինի խօսելու զօր· Մասլովսկիի գործի մասին: Այստեղ կը տանք միայն նրա բովանդակութեան համառօտ ամփոփումը: Գիրքը սկսւում է հակիրճ նախաբանով այն դէպքերի մասին, որոնք, ի վերջոյ, յանգեցին ռուս–թրքական պատերազմին· ապա ներկայացնում է Կովկասի վիճակը զինուորական տեսակէտից, մինչեւ Սարրղամիշի կռիւները: Համեմատում է Ռուսաստանի, Թուրքիայի պատերազմական ծրագիրները եւ երկու երկրների բանակների տեսակարար կշիռը: Մանրամասնօրէն խօսում է Սարրղամիշի կռիւների մասին· Էնվէրի պարտութիւնն ու փախուստը: Գծում է Եփրատեան գործողութիւնների ընթացքը 1915ին: Հրամանատարութեան մէջ եղած փոփոխութիւնները: Կռիւները պարսկական ճակատում: Մի շարք գլուխների մէջ պատմում է այն գործողութիւնները, որոնք վեր-

---

*) Com. M. Larcher «La Guerre turque dans la Guerre Mondiale». Paris.

ջացան Էրզրումի գրաւումով 1916 թ-ի փետր·3ին: Պատմում է Վանի, Մուշի, Տրապիզոնի, Երզընկայի գրաւումը: Առաջխաղացումներն ու նահանջները, յաջողութիւններն ու պարտութիւնները, մինչև ռազմանակատի վերջնական փլուզումը բոլշեւիկների յաղթութեան հետեւանքով:

Պատերազմական դէպքերին զուգընթաց Մասլովսկին տալիս է եւ թիկունքի ու կառավարական շրջանների պատկերը, հանգամանօրէն վերլուծում, քննում ու եզրակացութիւններ է հանում ռուս եւ թիւրք բանակների գործողութիւններից:

Մեզ համար, բնականաբար, շատ հետաքրքրական են եւ գրքի այն էջերը, ուր խօսւում է հայերի մասին: Հեղինակը այնքան էլ ծանօթ չէ հայկական գործերին եւ նրա տեսակէտները, յաճախ, անհիմն կամ վիճելի են: Գրքում իրենց տեղն ունին եւ հայ Կամաւորական խմբերը:

Գրքի յաւելուածներում ահագին նիւթ է տրուած Կովկասեան ճակատի ռուսական եւ թրքական բանակների կազմի, տեղաւորման ու շարժումների մասին զանազան ժամանակներում: Ռուսական եւ թրքական բանակների կազմի վերջին թւական պատկերը վերաբերում է 1917թ· յունուարին:

Վերջապէս, գրքին կցուած են զինուորական մասնագէտի ձեռքով գծուած քարտէսներ ու յատակագծեր պատերազմի ընդհանուր վայրերի եւ մասնաւոր ճակատամարտների մասին:

Կրկնում ենք, զօր·Մասլովսկիի գիրքը թանկագին աղբիւր է Կովկասեան ճակատի պատերազմական դէպքերի ուսումնասիրութեան համար: Մենք դեռ կը խօսենք նրա մասին:

Մ· ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑԻ ԵՐԿԵՐԸ

Երեւանից հաղորդում են, որ պատրաստութեան մէջ է Միք· Նալբանդեանցի ամբողջական երկերի ակադեմական հրատարակութիւնը: Գործը բռնելու է 4 պատկերազարդ մեծ հատորներ և լոյս է տեսնելու յառաջիկայ տարիներին: Հատորների կազմութեան, խմբագրութեան եւ ուսումնասիրութիւն – յառաջաբան պատրաստելու աշխատանքը յանձնուած է Հայկոմկուսի նախկին քարտուղար Աշոտ Յովհաննիսեանին, որ այժմ գտնւում է աքսորի մէջ Մոսկւայում: Հրատարակութեան մէջ մտնելու է այն ամենը, որ երբ եւ ինչ դուրս է եկել Նալբանդեանցի գրչի տակից — նրա բոլոր գրուածքները, նամակները, յուշատետրները եւ այլն, այլ եւ Նալբանդեանցի նշանաւոր դատաստանական գործը, Նալբանդեանցի մասին եղած հաղորդումներն եւ օտար գրականութեան ցանկը, լուսանկարներ եւ այլն: Հրատարակութիւնը տալու է բաւական նոր նիւթեր Մ· Նալբանդեանցի մասին, ինչպէս եւ մինչեւ այժմ ոչ մի տեղ լոյս չտեսած գրուածքներ: Առհասարակ, մեծարժէք գործ է ձեռնարկուածը:

ՄՈՒՍԱ ԴԱՂԻ 40 ՕՐԸ

Վիէնիայում նորերս լոյս տեսաւ հայկական կեանքից մի նոր վէպ՝ գերմանի գրագէտ Ֆրանց Վերֆէլի «Մուսա Դաղի 40 օրը»: Վէպի նիւթը առնուած է վերջին պատերազմից և ներկայացնում է Մուսա Դաղի հայութեան հերոսական դիմադրութիւնը թիւրքե-

ին: Հեղինակը 1929ին ճամբորդել է Սիւրիայում, ուսումնասիրել է հայերի կեանքը եւ, իբրեւ արդիւնք այդ ուսումնասիրութեան, 1932թ. յուլիսից մինչեւ 1933թ. մարտ, գրել է այս վէպը՝ 2 ընդարձակ հատորներ շուրջ 1000 էջով:

Վիէնական *Նոյէ Ֆրայէ Պրեսէ* լրագրի գրական քննադատ Վիկտոր Պոլդերը, մի համակրական գրախօսականում, ի միջի այլոց, հետեւեալ տեղեկութիւնները է հաղորդում Վերֆէլի աշխատութեան մասին.

« Վէպի արտաքին շրջանակը հայ ժողովրդի հերոսական ճակատագիրն ու դիւցազնական պայքարն է համաշխարհային պատերազմի երկրորդ տարուայ ընթացքին, երբ Էնվէր փաշան եւ Թալէաթ բէյը վճռել էին նրա բնաջնջումը: Վէպի գործողութեան վայրերն են Հայաստանի եօթը գիւղերը, Մուսա Դաղի ընտորոտին, ապա Անտիոքի եւ Ալեքսանդրետի միջեւ հազւագիւտ գեղեցկութեամբ բարձրացող լեռնազանգուածը»...

« Հեղինակն իր դժուարին ճիւթը հաւաքել է, մեծ մասամբ, իր ուղեւորութեան միջոցին Սիւրիայում: Օգտագործել է բազմաթիւ գրութիւններ 1915ի դէպքերից՝ Էնվէրի եւ Թալէաթի յղացած տեղահանութեան մասին: Հայկական ցարդերին վերաբերող մի շարք գրութիւններ է հրատարակել գերման գեր. երէց Լէպսիուսը, որի տեսակցութիւնը Էնվէր փաշայի հետ վէպի կարեւոր մի դրւագն է կազմում: Կան նաեւ գերման միսիոնարների եւ գթութեան ֆոյրերի հաղորդած տեղեկութիւններ, ինչպէս եւ դիւանագիտական հրատարակութիւններ: Սոյն երկը, ըստ հեղինակի հաւաստիացման, էապէս պատմական է, բացառութեամբ վիպական գլուխների, սիրային մասերի եւ այլն. 1915ին մի քանի հազար հայեր, փոխանակ ենթարկւելու տեղահանութեան հրամանին, այս լեռների կատարներին պատնէշներ են շինում եւ իրենց չնչին ռազմամթերքով 40 օր դիմադրում են թիւրքական յարձակումներին»...

Վերֆէլի հերոսն է Փարիզում մեծացած ու դաստիարակւած եւ ֆրանսուհու հետ ամուսնացած Գաբրիէլ Բագրատեանը, որ համաշխարհային պատերազմի նախօրեակին վերադարձել էր հայրենիք եւ կապւել – մնացել էր: Այնտեղ, նա կազմակերպում ու վարում է այն հերոսական դիմադրութիւնը, որ կազմում է վէպի նիւթը: Գիրքը ունի խիստ յաջող էջեր, ինչպէս երրորդ գլուխը — « Մեծ ժողովում », ուր որոշւում է մերժել տեղահանութեան հրամանը եւ լեռ բարձրանալ: Տոգորւած է համակրանքով ու ջերմ սիրով դէպի հայ ժողովուրդը, ներշնչւած է լաւատեսոգով եւ, առհասարակ, հայերի մասին լոյս տեսած լաւագոյն գործերից մէկն է:

Վերֆէլն իր վէպում, մի տեղ, բերել է Աշուղ Չիւանիի « Զախորդ Օրերը » երգը: Իր հիմնական տեսակէտն էլ նոյնն է հայ ժողովրդի ճակատագրի մասին.—

Զախորդ օրերը ճմրան նման կուգան ու կերթան:

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

«Der Zusammenbruch des Ottomanischen Reiches». Von Joseph Pomiakovsky 1928. Wien.

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՓԼՈՒՉՈՒՄԸ. Եոզէփ Պոմեակովսկի:

Այս գրքի հեղինակը, ծագումով լեհ մի զինուորական, Աւստր եւ հունգարական կայսրութեան զինուորական կցորդն է եղել Պոլսում եւ առանց ընդմիջումի 1909ից մինչեւ 1918 թ. վերջը գտնւել է իր պաշտօնավայրում: Գիրքը ներկայացնում է հեղինակի յուշերը, որոնց գլխաւոր արժէքը թրքական բանակի զանազան ճակատների զինուորական-կազմակերպչական վիճակի պատկերացումն է ժամանակագրական կարգով եւ պատերազմական գործողութիւնների նկարագրութիւնն ու վերլուծումը: Զուգընթացաբար Պոմեակովսկին տալիս է նաեւ հետաքրքրական մանրամասնութիւններ գերման քաղաքականութեան եւ զինուորականների, ինչպէս եւ նրանց խաղացած դերի մասին: Մեզ համար մասնաւորապէս հետաքրքրական են նրա տպաւորութիւնները երկրի ներսերը եւ ռազմաճակատները կատարած ճանապարհորդութիւններից եւ հայկական խնդրի մասին տուած վկայութիւնները: Վերջին տեսակէտից գիրքը արժանի է բացառիկ ուշադրութեան, եւ այդ ժամանակաշրջանով հետաքրքրող ամէն մի քաղաքական գործիչ եւ պատմաբան պարտաւոր է ի նրկատի ունենալ:

Գրքի ընթերցանութեան ընդհանուր տպաւորութիւնը այն է, որ հեղինակը, իբրեւ թիւրքիոյ զինակից պետութեան ներկայացուցիչ, եթէ թրքասէր էլ չէ, յամենայն դէպս թրքական քաղաքականութեան եւ տեղեկատուութեան ազդեցութեան տակ է, բայց աշխատում է լինել առարկայական իր հասկացողութեամբ: «Թիւրքերը, ըստ Պոմեակովսկու, ամենալաւ զինուորներն են աշխարհում, Արեւելքի իսկական ջէնտլմէնները եւ ամենից աւելը հոմակրելի Մերձաւոր Ասիոյ բոլոր ժողովուրդների մէջ»: Այս բնորոշումը աւելի եւս արժէքաւոր է դարձնում հեղինակի հետագայ գրածները թրքական անցուդարձերի մասին:

Թիւրք ժողովրդի եւ մտաւորականութեան բնորոշումը տալուց եւ երկրի յետամնաց վիճակը պատկերացնելուց յետոյ, Պոմեակովսկին կանգ է առնում կառավարութեան վրա:

«Այս երկիրը կառավարւում էր Երիտասարդ Թիւրքերի կողմից, որոնք յաջորդեցին աստուածապետական գաղափարով ստեղծած սուլթանին, որի տեսական հիմքը համիսլամութիւնն էր»: Սուլթանի յաջորդների «կառավարական սկզբունքն էր համօսմանցիութիւնը», որի հետեւանքն եղաւ այն, «որ մահմետական, բայց ոչ թիւրք ազգութիւնները (արաբ, ալբանացի, քիւրդ) Երիտ. Թիւրքերի յայտարարած օսմանեան հայրենիքին շատ սառն էին վերաբերւում եւ նոյն իսկ անջրաբերւում եւ նոյն իսկ անջատման ուղղութեամբ էին աշխատում»: Գործնականում «համօսմանցիութիւնը փոխարինուեց

պանթիւրքիզմով »: « Թիւրքերի թւական թուլութեան պատճառով (10 միլիոն թիւրք ընդդէմ 17 միլիոն ոչ-թիւրքերի) այդ ծրագիրը դժուար թէ երկար ժամանակ գործադրելի լինէր, մանաւանդ թիւրքերի մշակութային յետամնացութեան պատճառով : Բալկանեան պատերազմի ժամանակ Թիւրքիա եկած Կարմիր Կիսալուսնի առաքելութիւնների ազդեցութեան տակ հրապարակ ելաւ պանթուրանիզմը, որ ուզում էր Օսմանեան կայսրութեան թրքական տարրը ուժեղացնել ցեղօրէն մօտիկ, բայց օտարին հպատակ տարրերը միացնելով Թիւրքիային: Եւ առաջին հերթին պարսկական Ատրպատականի եւ Արդիլանի թուրքերը եւ հիւսիս ընկած կովկասեան «թաթար հողամասը, որի մէջ պանթուրանականները հաշւում էին թէ Բագու քաղաքը եւ թէ արժէքաւոր ողջ նաւթաշխարհը: Երրորդ հերթին պիտի հետեւէին թաթարներով բնակւած Վոլգայի շրջանը եւ Ղրիմը, ինչպէս նաեւ Կասպից եւ Արալեան ծովի այն կողմը ընկած երկրները՝ թրքական ցեղերով բնակւած Թուրքեստանը, Խիվան եւ Բուխարան »: Երիտասարդ Թիւրքերի մի մասը երազ էր համարում այդ ծրագիրը, միւս մասը համիսլամական էր, բայց «Թալէաթը, Էնվէրը, Ջէմալը եւ շատ ուրիշներ պանթուրանական գաղափարները համարում էին իրական և իրագործելի»:

Հետեւում է Թալէաթի եւ ընկերների բնորոշումը, որ բացասական է: Պոլսոյ դիւանագիտական շրջանակների եւ անձերի մասին խօսելիս Պոմեակովսկին հետեւեալն Է պատմում անգլիական մայեոր Տիրելիի մասին, որ անգլիական դեսպանատան զինուորական կցորդն էր: Ինքը Պոմեակովսկին բարեկամ է եղել նրան «ոչ միայն այն պատճառով, որ Տիրելը մի քանի տարի անգլիական հիւպատոս էր եղել Վանում, այլ նաեւ այն պատճառով, որ Թիւրքիան լաւ էր ճանաչում եւ համոզւած էր իր տեղեկութիւնների ճշմարտութեան մէջ : Տիրէլը ատում էր թիւրքերին, յարաբերութեան մէջ էր անուղղայ հայ յեղափոխականների հետ եւ անձամբ գտնւել է դաւադիրների մի բնակարանում այն րոպէին, երբ թիւրք ոստիկանութիւնը շրջապատում է բնակարանը՝ յեղափոխականներին բանտարկելու համար: Նա ստիպւած եղաւ (1914ի սկիզբը) Պոլիսը թողնել եւ փոխարինւեց մայեոր Օվէնով»: Թէ ինչքան համապատասխանում է իրականութեան այս պատմութիւնը, մենք դժւարանում ենք դատել:

«Գէոբէն» եւ «Բրէսլաու» նաւերի միջադէպի եւ պատերազմ յայտարարելու անցուդարձից յետոյ հետաքրքրական է գերման դեսպանի գաղտնի կապը Երիտասարդ Թիւրքերի կոմիտէի հետ: «Բարոն Վագենհայմը՝ գերմանների կողմից շարժիչ ուժն էր եւ ամբողջ թիւրք պատերազմական գործողութիւնները կարգադրւում էին նրա եւ Էնվէրի միջեւ, թէեւ Վագենհայմը զինուորական չէր : Վագէնհայմի հաւանութեամբ են եղել նաեւ 1914ի Սարրղամիշի կռիւները, հակառակ Լեման ֆոն Սանդերսի դիմադրութեան: 1915ի նեղուցների կռիւները նոյնպէս շատ կենդանի, հետաքրքիր կերպով եւ նրկարագրւած, նոյն իսկ ոչ զինուորական մասնագէտների համար: Նմանապէս եւ 1915ի խալիլ բէյի շարժումը Տիգրանակերտից

դէպ՝ Բրուսանդուց, Ուրմիա, Խոյ եւ ջարդելը Խոյի մօտ:

Այս առթիւ հեղինակը գնահատում է Վանի հայկական ապըստամբութիւնը:

Այս դէպքերի մէջ պէտք է նըկատի ունենալ թէ Անդրկովկասի պանթուրանական գործողութիւններ՝ի վրա ինչ վնասական ձեւով ազդեց հայերի ապստամբութիւնը Վանում, որ Վանում պահեց ժամանակների զօրաբաժինը, մինչեւ խոշոր բէյի ջարդելը Խոյում: Կապը ռուսական ապրիլեան յարձակման եւ հայ ու ասորի ապստամբութիւնների միջեւ ակներեւ պարզ է եւ առանց գերգնահատման կարելի է պընդել, որ հայկական ապստամբութիւնը անյաջողութեան դատապարտեց Էնվէրի պանթուրանական յարձակումը Պարսկաստանի վրա: Սրանով է մասամբ բացատրւում Թալէաթի եւ Էնվէրի կատաղութիւնն ու վրէժը:

Թէեւ Պոմեակովսկին Էնվէրի եւ Թալէաթի կատաղութեամբ եւ հայերի մասնական մեղքով է բացատրում թրքական հալածանքները հայերի դէմ, բայց ինքը հակասում է իրեն, երբ հակառակ 147 էջի վերի տողերին Վանի մասին, 160րդ էջում ասում է. «Վանի եւ Զէյթունի ապըստամբութիւնները այնտեղի հայերի յուսահատութեան արտայայտութիւններ էին, որովհետեւ ընդհանուր կոտորածը սկսել էր եւ մօտակայ օրերին հերթը նրանց էլ պիտի հասնէր»: Նշանակում է կոտորածները եղել են մինչեւ ապստամբութիւնները, եւ հայերի «յարձակողական դիրքի» մասին խօսք չի կարող լինել:

Պոմեակովսկին հայոց պատմութեան եւ հայերին նուիրուած մասում 1895ի ջարդերի մասին խօսելիս՝ այդ ջարդերը բացատրում է հայերի մէջ առաջ եկած ազատագրական շարժումով, որ «թւում է թէ դրսի, գլխաւորապէս անգլիական եւ ռուսական գործակալների գործունէութեան արդիւնք է»: Սակայն, նրա հետագայ պատմածներից հակառակը ն է ապացուցւում: «Լսել եմ շատ մտաւորական թիւրքերից, գրում է նա, որոնք իմ ներկայութեամբ այնպէս են արտայայտւել, թէ Օսմանեան կայսրութեան անկման պատճառը, յատկապէս երկու դար տեւող կոռուստները եւրոպական եւ ասիական (կովկասեան) նահանգների հետեւանք էին միայն սուլթանների ծայրայեղ մարդասիրութեան: Սուլթանները կամ պէտք է գրաւուած նահանգների բնակիչներին ստրպէին մահմետականութիւն ընդունել, կամ թէ չէ՝ կոտորէին, ցրէին: *Ըստ այս ընդհանրապէս տարածուած համոզմունքի կասկածից վեր է, որ Եւրոպասարդ թիւրքերի կառավարութիւնը դեռ պատերազմից առաջ որոշել էր ամենամօտիկ եղող հնաւորութեան դէպքում գործադրել եւ նախկին սուլթանների սխալները դէթ մասամբ ուղղել եւ այդպիսով վերջին րոպէին Օսմանեան կայսրութեան մնացորդները նոր բաժանումներից ազատել: Շատ հաւանական է, որ այդ նկատումները եւ նպատակները խիստ կարեւոր ազդեցութիւն են ունեցել Բ. Դռան որոշման վրա կենդրոնական պետութիւններին միանալու եւ պատերազմը սկսելու ժամանակի վերաբերմամբ»:* Այն հարցին, թէ Գերմանիան եւ յատկապէս, բարոն Վագենհայմը պատերազմը սկսելուց յետոյ ի վիճակի էին արգելելու կոտորածները թիւրքերի կողմից, դժուար է պատասխանել: Ինքը Պոմեակովսկին ա-

ելացնում է, որ գերման դեսպանը «Սարաէվոյի սպանութիւնից շատ առաջ կրկին անգամներ ասել է, թէ պետութիւնների բարեենթրոգման ծրագիրները սխալ են եւ օգտակար չեն: Իր կարծիքով հայերը միայն մի միջոց ունեն խաղաղութիւն եւ իրենց կեանքի եւ գոյքի ապահովութիւնն երաշխաւորելու, այն է՝ ընդունել մահմետականութիւն» :

1916ի պատերազմական գործողութիւնների վրա շատ ազդել է հայերի տարագրութիւնը, որի հետեւանքով բանակների կերակրումը դժուարացել է եւ պէտք է եղել փոխել ռազմագիտական ծրագիրները, որպէսզի զօրքը սովից եւ ցրտից չկոտորուի:

Այս դէպքերին զուգընթաց Պոմեակովսկին շօշափում է Վրաստանի խնդիրը: 1915ի յունուարին Էնվէրի պարտութիւնից յետոյ Կովկասում, գէթ տեսականօրէն, փոխուել էր Թիւրքիոյ վերաբերմունքը դէպի վրացական խնդիրը: Առաջ Թիւրքիան լսել իսկ չէր ուզում Վրաստանի անկախութեան մասին, բայց 1915ի գարնանից ընդունեց Վրաստանի անկախութիւնը ապագայ կովկասեան դաշնակցական պետութեան սահմաններում, մտաւ յարաբերութեան մէջ Բերլինի վրացական ազգային կոմիտէի հետ եւ թոյլատրեց թիւրքական հողի վրա, կազմակերպել մէկ վրացական լէգէոն: 1916ի օգոստոսին՝ այդ լէգէոնը ընդամենը 16 սպաներով եւ 700 զինուորներով, կոմս Շուլենբուրգի հրամանի տակ ճակատ ուղարկուեց: Մահմետական վրացի կամաւորները ծառայում էին առանձին, այսպէս կոչուած Լազիստանի զօրամասում: Քրիստոնեայ վրաց լէգէոնը տեղիք տուեց տեւական անախորժութիւնների եւ առանց որեւէ ուղղութեամբ գործածելու լուծեց 1917ի յունուարին»:

1918ի Դանօք դէպքերը նկարագրելիս Պոմեակովսկին գրում է. «Հայերի զինուած ուժերը՝ 25–30 հազար, վրացիներինը՝ 10,000»:

Նաեւ կովկասեան ժողովուրդների փոխյարաբերութիւնները չեն վրիպել հեղինակի ուշադրութիւնից: Այսպէս, 1918թ. փետրուարին Գէգէչկորին դիմում է Պոլիս Անդրկովկասի կառավարութեան կողմից բանակցութիւններ սկսել: «Թիւրք արտաքին գործոց նախարարը՝ Ահմեդ Նեսիմին, խորհրդարանի փետր. 21ի նիստում իր զարմանքը արտայայտեց, թէ կովկասեան կառավարութեան դիմումը ինչ որ գեներալ Գէգէչկորու կողմից է ստորագրուած, ըստ անունի վրացի, այն ինչ պէտք է ստորագրուած լինէր մի Ահմէդի կամ Մահմէդի կողմից, որովհետեւ, ինչքան որ ինքը գիտէ, Կովկասի 11 միլիոն բնակչութիւնից եօթը միլիոնը մահմետականներ են»:

Ռուսական յեղափոխութիւնը, կովկասեան քառը, պանթուրանական ծրագիրներին նոր թեւեր են տալիս «եւ նոյն իսկ մինչայժմու հակառակորդները թուրանական ծրագիրների վրա մեծ յոյսեր են դնում»: Հետաքրքրական են հեղինակի բացատրութիւնները գերմանների դիրքի մասին կովկասեան անցքերի ընթացքում 1918ին: Բաթումի բանակցութիւնների մանրամասնութիւնները չեն տրուած եւ ներկայացուած է միայն վէհիբ փաշայի եւ զօրավար Լոսովի հակառակութիւնը բանակցութիւնների ընթացքին:

Կովկասեան ճերքին զինուրական իրադարձութիւնները շատ

հեռից են դիտած: «Ուրմիոյ մօտ թիւրքերին դիմաւորեցին ուժեղ եւ լաւ կազմակերպուած հայ եւ ասորի խմբեր, իսկ Նախիջեւանի կողմից ուրիշ հայկական զօրամասեր, որոնք յառաջխաղացող թիւրքերի թիկունքը անցան: Մուսուլից Ռեւանդուզի վրայով շարժուող թրքական 5րդ զօրաբաժինը (մօտ 2000 զէնք) 3000 հայերից ոչ միայն կանգնեցուեց, այլ եւ նահանջի դիմելու ստիպուեց»:

Պոլսոյ 1918ի խորհրդաժողովը, ըստ գերմանների, պէտք է կարգադրէր Վրաստանի խնդիրը, բայց թիւրքերը հրաւիրեցին թէ հայերին եւ թէ թաթարներին ու լեռնականներին: Կովկասցիները մեծ հետաքրքրութիւն առաջ բերին Պոլսում: Վրացի եւ հայ գործիչները կատարեալ եւրոպացիներ էին, իսկ թաթարների ներկայացուցիչները արեւելեան ժողովուրդների նախնական տիպեր էին· նրանք հագած էին ասիական վերարկուներ, փափախ եւ ամէն տեղ երեւում էին թիւրք սպաների եւ պաշտօնեաների ուղեկցութեամբ»:

Զօր· Ղորղանեանը այցելում է Պամեակովսկուն· «զօր· Ղորղանեանը հազիւ 40 տարեկան է, ռուսական գլխաւոր սպայակոյտում պաշտօնավարած շատ զարգացած, ազնիւ սպայ է»:

Թրքական ախորժակները 1918ի ամառը, գերման հակառակութիւնը, հայերի դիմումը Աւստրիոյ՝ հովանաւորութիւն ստանալու, փոխարէնը դիւանագիտական պաշտպանութիւն խոստացուելը գրքի հետաքրքիր մասերն են եւ դիտող մարդն են մատնում հեղինակի մէջ:

«Գէթ ձեւականօրէն Բրեստ – Լիտովսկի դաշնագիրը իրագործելու համար թիւրքերը, օգոստոսի առաջին կէսին Արդահանում, Բաթումում եւ Ղարսում հանրաբուէ կազմակերպեցին: 85 հազար էին Թիւրքիոյ կողմը եւ միայն 1924 էին Թիւրքիոյ դէմ: Առաջին գործը այդպիսով օրինական դարձած թիւրք վարչութեան այն եղաւ, որ զէնքի ընդունակներին զինուորութեան առին»:

Բագուի խնդիրը շատ էր զբաղեցնում գերմանացիներին եւ էնվէրին: Վէճերը անվերջ էին: Գերմանները Բրեստի տեսակէտի վրա էին, իսկ թիւրքերը՝ Բաթումի:

Բագուի կոտորածների մասին Պոմեակովսկին գրում է, թէ «Բագուի վրա յարձակուեց 5րդ թրքական զօրաբաժինը եւ 30,000 տեղական թաթարներ»: Բագուն գրաւելիս «թրքական 5րդ զօրաբաժինը մնաց քաղաքից դուրս, իսկ թաթարները մտան ներս եւ միացած մահմեդական բնակչութեան հետ՝ արեան բաղնիք սարքեցին հայերի գլխին: 10,000 հայեր կոտորուեցին»:

Պաղեստինի եւ Սիւրիոյ ճակատները փլում են, Բուլղարիան պարտուում, իսկ թիւրքերը դեռ չեն ըմբռնում տեղի ունեցածի կարեւորութիւնը. Մի շաբաթ էր պէտք, որպէսզի թիւրքերը հասկանային, թէ պէտք է փրկել կարելին: Հոկտ· 2ին թիւրքերը որոշեցին Կովկասը դատարկել:

Գրքի ընթերցումը ամէն հայի կը համոզի, որ ոչ պէտք է մեզ զերազնահատենք եւ ոչ էլ որեւէ ձեւով թերագնահատենք: Օսմանեան կայսրութեան փլուզումը եւ պանթուրանական ծրագրի պարտութիւնը նաեւ հայութեան պայքարող ուժերի արդիւնքն են:

Ն· ԲԱԴԻԼԵՆ

ՍՏԱՑԻԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. Գիւլխանդանեան, «*Հայ – Թաթարական ընդհարումները*», *հատոր Ա. Փարիզ*, 1933:

Օհան Կարօ, «*Խրնիթ-ներէն մինչեւ Խորհրդարանը*», *Փարիզ*, 1933, *Հրատ. Ն. Գ. Բարեկամներու* № 8:

Օմար Խայեամի Քառեակները, *թարգմ. Արամ Զարբէ, Փարիզ*, 1934. *Հրատ. Պարոնեան եղբայրների ի յիշատակ իրենց եղբօր՝ Արշակ Պարոնեանի*:

Մկ. Պարսամեան, «*Շաւարշ Նարդունի*», «*Կապոյտ Տետրակներ*» *շարք, Փարիզ*, 1933:

Գր. Յ. Աղաբաբեան, «*Հայաստանի լեռսիտները*», *Թեհրան*, 1932:

NOE JORDANIA. « Difficultés Socialistes». Editeur D. Keladzé. 50, Faubourg du Temple. Paris.

М. ВАЧНАДЗЕ. "Проблема Кавказа" Парижъ, 1933, Изд. Д. Хеладзе.

Մ. և Մ. Պարսամեան, «*Կեանք եւ Արեւատ*», *Դ. տարի, Փարիզ*, 1934:

Այլ եւ՝ « Հանդէս Ամսօրեայ » (*Սեպտ.—Հոկտ.*), « Հայրենիք » *ամս.* (*Հոկտ., Նոյ.*), «Անահիտ» (*յուլ.—սեպտ.*), «Նրիտ. Հայուհի» (*Հոկտ.*), «Երկունք» (*օգ.*), «Հայ Կոչնակ», «Հայրենիք» *օրաթերթ*, «Յառաջ», «Յուսաբեր», «Նոր Օր», «Ազատ խօսք», «Արազ», «Ապագայ», «Նոր Երկիր», «Ալիք», «Արմենիա» (*Արժանտին*), «Ապարէզ», «Գրոհ» (*Թրապուզ*):

„ՎԷՄ" ՆԻՒՐՈՂՆԵՐ

Տիկ. Թ. Բերբերեան, *Փարիզ* — Յուսիկ եպ. Զոհրաբեանին, *Բուքրէշ*:

Գ. Սարգիսբէգեան, *Ռէթէլ* — Համազգ. Ճեմարանին, *Բէյրութ*:

Ա. Պարտէզեան, *Բոստոն*—Օր. Թագ. Վրացեանին, *Աթէնք*:

Մ. Զօրեան, *Լոնգ Այլընտ Սիթի* — Հ.Յ.Դ. Պատ. Միութեան, *Բէյրութ*:

Մ. Օգանեան, *Բոստոն* — Մեսրոպեան Ճեմարանին, *Սոֆիա*:

Յ. Պարոյրեան, *Նիւ Եորք* — Ատրպ. Կենտ. Դպրոցին, *Թաւրիզ* եւ Յ. Պարոյրեանին, *Թեհրան*:

Յ. Կոբոյեան, *Նիւ Եորք*—Ազգային վարժարանին, *Հալբէղք*:

Զարդարեան ընտանիքը, *Փարիզ* — Հ.Յ.Դ. Ռ. Զարդարեան Գրադարանին, *Լիոն*:

Սեդր. Աւդոյեան, *Նիւ Եորք*—Ազգային վարժարանին, *Սուլթանապատ*:

Վ. Խրիմեան, *Սէնթ Էթիէն* — Միհրան Խրիմեանին, *Բէյրութ*:

Ա. Թ. Բրուտեան, *Նիւ Եորք* — Միս Եփէի Հաստատութեան, *Հալէպ*:

Թ. Պաղտասարեան, *Լէ Վան*—Առաքել Տայճոնեանին, *Ֆիլիպէ*:

Դր. Ա. Գապաճեան, *Հալէպ* — Ա. Մ. Գազազեանին, *Զիլի*:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջին Հայ թատերգութիւնը, ԻՐԱԶԵԿ 1
Ամենայն Հայոց Բանաստեղծը, Ա. ՋԱՄԱԼԵԱՆ 19
Սայեաթ Նովա, Յ. ՋԱՒՐԵԱՆ 32
Վահան Թէքէեան, Մ. ՊԱՐՍԱՄԵԱՆ 47
Հայագիտութիւնը Յետպատերազմեան Գերմանիայում, Ա. ԱԲԵՂԵԱՆ 55
Օպոզիցիան Հանրապ. Հայաստանում, Ա. ԽՈՆԴԿԱՐԵԱՆ 68
Հայկական Բարեհորոգումները, Վ. ՓԱՓԱԶԵԱՆ 80
Անջատականները, Վ. ՄԻՆԱԽՈՐԵԱՆ 90
Օգոստոս Հինգը, Ա. ԳԻՒԼԽԱՆԴԱՆԵԱՆ 108
Մուրատի Յուշատետրը 122
ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ.— Սերվիչէնի եւ Հ. Ղ. Ալիշանի նամակները Կ. Եզեանցին 128
ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ.— Բարենշան երեւոյթներ Հայաստանում. Ա. Խ. — Խստութիւններ Գրողների դէմ — Վ. Թէքէեանի յոբելեանը — Գ. Աբուլեան 133
ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ.— Մեր Պարբերականները: — Նահ. Գրագ. Բարեկամներ: — Ռուս-թրքական Ռազմանակատի մասին: — Մ. Նալբանդեանցի երկերը: — Մուսա Դաղի 40 օրը 139
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ.—Պոմեակովսկի «Օսմանեան կայսրութեան Փլուզումը», Ն. ԲԱԴԱԼԵԱՆ 146
ՅԱՒԵԼԻԱԾ. Վահր. Եպ. Մանկունի, «Գէորգ Դ. եւ իր ժամանակը 17-32

ԿԵԱՆՔ ԵՒ ԱՐԻԵՍՏ

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍ. ՏԱՐԵԳԻՐՔ

Գ. Տաբի՛

Խմբագրութիւն՝ Մ. եւ Մ. ՊԱՐՍԱՄԵԱՆ

94, Rue Lafayette, Paris 10e.

պատկերազարդ և ճոխ բովանդութեամբ

Գին՝ 25 ֆրանք

Ա. ԳԻՒԼԽԱՆԴԱՆԵԱՆ

ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

Հատոր Առաջին

Բազուի առաջին ընդհարումները

Նկարներով

Գին՝ Ամերիկա, Բրիտ. կայսրութիւն եւ Եգիպտոս 20 ֆր.
Միւս երկրներ 15 ,,

Դիմել՝

A. Gulkhandanian, «Haratch», 17 rue Damesme, Paris 13e.

«ՎԷՄ»Ի ՄԻԶՈՑՈՎ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ

Шота Руставели

„Носящій Барсову Шкуру“

Переводъ Д. К. БАЛЬМОНТА. -:- Роскошное изданіе Д. Хеладзе.
Цѣна 150 франк. Парижъ 1933.

աբեղայք զերկրորդ եւ զերրորդ պատարագսն ի Ս. Աստուածածին, ի Ս. Խաչ եւ ի Ս. Յարութիւն եկեղեցիս, սակս երիցս եկեղեցեաց, եւ քարոզք Գէորգայ հանեն զհռչակ մեծ, ընդ որս հաւանի յոյժ Ս. Պատրիարք: Վասն որոյ փութայ Տ. Ստեփաննոս Ս. Պատրիարք Արքեպիսկոպոսն տալ Տ. Գէորգայ եւ օծակցացն զգաւազան մասնաւոր իշխանութեան վարդապետութեան, որպէս զի արտօնութիւնք եւ խրախոյս բարձեալ քարոզեսցեն համարձակ զբանն կենաց յօգուտ եւ ի փրկութիւն հաւատացելոց:

Համբաւ Տ. Գէորգայ վարդապետի հռչակ հարկանէր, միանգամայն կուսակցութիւնք ազգայինք եւ կիրք անձնականք,— որք դաւադրէին ընդդէմ Ս. Պատրիարքի եւ Փոխանորդի,— ոչ մոռանային եւ զԳէորգ վարդապետ, որ անձնուիրութեամբ եւ հաւատարմութեամբ շարունակէր զպաշտօն իւր եւ զպարտս, եւ յաւէտ ջանայր նանրացուցանել զջանս հակառակորդաց:

Տակաւ երեւէին խլրտմունք ազգային շարժմանց, եւ նորահաս անձինք խմորեալք նորովք գաղափարովք հետեւէին արդիւնաւորել զգաղափարս և զնպատակս իւրեանց, գրգռէին զխռովութիւնս՝ պատրուակեալ զգաւառական խնդիրս, որովք հրապուրէին զդաւառացիս: Էին կուսակցութիւնք եւ ի մեծամեծս ազգային եւ յամիրայս, յորոց օգտէին նորահասք*):

Սո. ի պաշտպանել զխաղաղութիւն ազգիս եւ զվարչութիւն իւրեանց, Պօղոս եւ Գէորգ վարդապետք, ախոյեան գլխաւոր հանդիսացեալ, ազգու գործունէութեամբք ջանային ջլատել զխարդաւանութիւնս, սիրաշահեալ զոմանս, յորդորեալ զայլս, եւ յանդիմանեալ զնորահասս: Սակայն նենգամտութիւնք ոմանց եկեղեցականաց ոչ տկարանային եւ ոչ դադարէին, առանց երբեք նախամեծարելոյ եւ խորհելոյ զիրական շահ եւ զպէտս Ազգի եւ Եկեղեցւոյ: Անձնական կիրք եւ ակնկալութիւնք զեկավարէին եւ բորբոքէին զնոսա, ընդ գլխաւոր թելադրութեամբ Մատթէոս

*) ԾԱՕՐ. Վ. ԵՊ. Մ. — Հետեւանք այսպիսեաց ջանից եւ շարժմանց հետզհետէ եղեն հաստատել զկանոնաւոր ժողովս, «Գերապոյն» եւ «Հոդեւոր» անուամբք, ապա զՍահմանադրութիւն ազգային եւ զնոր ժողովս վարչականս ի մայրաքաղաքի եւ ի վիճակս Թուրքիոյ, չեղոքացուցանել զքմահաճոյ եւ զանկանոն գործողութիւնս, նշանակել զսահմանս իրաւասութեանց անձնիւր ժողովոց եւ իշխանութեան Արքեպ.-Պատրիարքի, թէպէտ տակաւին կարօտին ոչ սակաւ բարեփոխութեանց, յարմարելով իսկական դրից եւ պիտոյից Ազգի եւ Եկեղեցւոյ Հայաստանեայց: Զարգացեալ երիտասարդք՝ թէեւ անփորձք առ հասարակ՝ ձեւացուցեալ միանալ եւ ծառայել ազդեցութեանց զօրաւոր անձանց եւ թեկնածուաց, յառաջ վարէին զիսկական նպատակս իւրեանց եւ զջանս, եւ արդիւնաւորէին, զորս անադան ուրեմն զգացին ամիրայք եւ թեկնածուք, եւ փորձեցին ի զուր խանգարել, եւ կնքեցան կուսակցութիւնք նորք, «Խաւարեալ» եւ «Լուսաւորեալ», չեչտեցին զհալածանս բանիւ և գործով, ազդեցութեամբք եւ հրատարակութեամբք, մինչեւ յաղթական կուսակցութիւնն Լուսաւորեալ չեղոքացոյց ի սպառ զԽաւարեալն կուսակցութիւն երբեմն ամենահզօր եւ գերակշիռ: Ահա վերջաբանութիւնն ջանից հակառակորդաց Ստեփաննոսի, սկսեալ տարբեր իմն նպատակաւ եւ ուղղութեամբ ի Յակոբոս-Մատթէոսեանց, ծայրայեղ ընթացիւք:

վարդապետի (ապա եպիսկոպոսի եւ Կաթուղիկոսի), որ վայելէր զհամբաւ քաջաքարոզ եկեղեցականի:

Խառնեալ էին ի յուղմունսդ եւ զկրօնական խլրտմունս մերթ ի պապականութիւն եւ յաճախ ի լութերականութիւն, ընդ պատրուակաւ կրօնական ազատութեան եւ վերանորոգութեանց կամ բարեկարգութեանց:

Ապաքէն ո՛րչափ յաջողէին Պօղոս եւ Գէորգ վարդապետք ի Ջանս իւրեանց, եւ ի պաշտպանութիւնս, զժուարին էր նոցա յաղթել խպտառ հակառակորդաց եւ դաւադրութեանց, մինչդեռ նենգամիտք դիմէին ի չափազանցութիւնս, ի զրպարտութիւնս եւ ի զրդռութիւնս, ընդ պատրուակօք ազգային բարեկարգութեանց եւ սահմանադրական վարչութեանց, մինչեւ լինել պատճառ բանտարկութեանց ոմանց ազգայնոց գաւառացւոց, եւ այսու դարբնել զծայրայեղ ատելութիւնս եւ զթշնամութիւնս, յաւելեալ զձեռագիր հրատարակութիւնս լի զրպարտական ամբաստանութեամբք ընդդէմ Ստեփանեանց: Իսկ Տ. Ստեփաննոս Արքեպ.-Պատրիարք էր այր հեղահոգի եւ խաղաղասէր, առաքինի եւ զթասիրտ, երկնչէր ի հակառակութեանց եւ կամէր հրաժարիլ ի պատրիարքութենէ, որում ոչ հաւանէին ամիրայք, մանաւանդ կամէին զսոցել զխռովարարս ի ձեռն քաղաքական իշխանութեան որում ոչ հաւանէր Աղաւնի: Ոչ հաւանէր նա հալածել եւ զեկեղեցականս խմորեալս, զորոց ամբաստանէին մոլորեալ լինել ի բողոքականութիւն: Էին ի նոսա եպիսկոպոսունք լեղաւագէտք, որք տկարամտութեամբք առթէին զգայթակղութիւնս եւ խրախուսէին զաշխարհականս, յորոց ոմանք անկեալ էին ի թակարդս եւրոպացի լութերականաց, որք պատրուակեալ զարուեստ բժշկութեան՝ երթեւեկէին ի տունս եւ արդիւնաւորէին զքարոզչական պաշտօնս իւրեանց:

Մինչ այս մինչ այն, եւ ահա ամիրայք եւ ժողովուրդ Խասգեղջ խնդրեն ի Ստեփաննոս Արքեպ.-Պատրիարքէ կարդել զԳէորգ վարդապետ ի քարոզիչ Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ:

ԳԼՈՒԽ Ե.

ՅԱՂԱԳՍ ՔԱՐՈԶՉՈՒԹԵԱՆ ԳԷՈՐԳ ՎՐԴ.Ի Ի ԽԱՍԳԵՂՋ ԵՒ ՎԱՍՆ ՀԱԼԱԾԱՆԱՑ ԵՒ ԱՅԼՈՑ ԱՆՑԻՑ ԻՆՁ

Յետ ձեռնադրութեանն կացեալ Տ. Գէորգայ վարդապետի զամ մի ողջոյն ի Պատրիարքարանի պաշտօնիւ գրագրութեան շարունակելոյ ի հնդից ամաց եւ յերից ամսից հետէ ի Փոխանորդարանի, եւ յաջակցութեան Տ. Պօղոս վրդ. Փոխանորդի՝ խոնարհեցաւ ի հրաման Ս. Պատրիարքի եւ ի թախանձանս ամիրայից եւ ժողովրդեան Խասգեղջ, թէպէտ եւ ինքն թախանձեաց քանիցս հրաժարիլ: Ի 10 Սեպտեմբերի 1836 ամի ել եւ գնաց Տ. Գէորգ ի Խասգիւղ եւ ստանձնեաց զքարոզչութիւն Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ, զորպիսի պաշտօնս տակաւ ընդարձակեաց եւ

հաստատեաց մեծահռչակ Զաքարիա Արքեպիսկ.–Պատրիարք Կաղզուանցի, միաբան Ս. Էջմիածնի:

Էին Տ. Զաքարիայի տասն եւ մի աշակերտք, յորոց եպիսկոպոս եօթն եւ վարդապետ չորս, այս են՝ եպիսկոպոսունքն Տ. Յակոբ ի Թիֆլիսէ, Տ. Բարթուղիմէոս Կապուտիկեան Առաջնորդ Նիկոմիդայ ի Կ. Պոլսոյ, Տ. Յովհաննէս Զամաշըրճեան փոխանորդ իւր ի Կ. Պոլսոյ, Տ. Անդրէաս Առաջնորդ Գաղատիոյ ի Կ. Պոլսոյ, Տ. Յակոբ Առաջնորդ Մշոյ ի Կ. Պոլսոյ, Տ. Պօղոս Գրաքօշեան Առաջնորդ Պրուսայու ի Կեսարիոյ, Տ. Պետրոս Բերդումեան–Ալթունեան դրադիր կամ քարտուղար իւր ի Կեսարիոյ, եւ վարդապետքն Տ. Թոմա Առաջնորդ Եւդոկիոյ ի Վանայ, Տ. Կարապետ ի սպասու իւրում ի Կ. Պոլսոյ, Տ. Աստուածատուր նոյնպէս ի Կ. Պոլսոյ եւ Տ. Թադէ՝ արտաքսեալ եւ թափառեալ յօտարութեան սակս մոլորութեանցն:

Տ. Զաքարիա կաղմակերպէ ըստ մասնեայ զհաստատուն քարոզչութիւնս եւ ի Կ. Պոլիս, եւ կարդէ երբեմն զմեծ մասն ձեռնասուն աշակերտաց իւրոց ի քարոզչական պաշտօնս երթեւեկութեամբք: Յամ Տեառն 1820–30 էր վանքաձեւ–վանաձեւ տուն հաստատեալ ի բարձունս Իւսկիւտարու, եւ կից նմին այգի ընդարձակ («Վանքի պաղը»), եւ առ հասարակ սովորական միաբանք Ս. Էջմիածնի, Ս. Յակոբեանց վանուց Երուսաղէմի եւ այլոց վանօրէից մնային անդ յորժամ գային այսր ի Կ. Պոլիս: Վեղարաւորք պահէին զայդին եւ վայելէին զարդիւնսն: Վանքաձեւ տունն այն եւ տեղին–գետինն ընդարձակ կտակեալ էր կէս առ կէս յանուանս Մայր Աթոռոյ եւ Ս. Յակոբեանց վանուց, եւ ըստ այսմ արձանագրեալ ի ճակատու շինուածոյն: Ի սկզբան ԺԹ. դարու, իմա՛ ցամ Տեառն 1810–30, յորժամ առթիւ քաղաքական անցից եւ պատերազմաց դադարեցան երթեւեկութիւնք եւ յարաբերութիւնք Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի ընդ Կ. Պոլսոյ՝ արգելմամբք նուիրական պաշտօնից՝ միաբանք Ս.Երուսաղէմի բարձին զհին կտակաձեւ յիշատակարանն եւ եդին ի տեղի նորա զյիշատակարան նոր, յատկացուցեալ բացարձակաբար ի կատարեալ տիրապետութիւն Երուսաղէմի: Այլ ոչ տեւեաց ընդ երկար, եւ ահա Հայք Իւսկիւտարու առին ի ձեռաց Ս.Յակոբեանց վանուց զվանքն եւ հաստատեցին անդ զդպրոց «Ճեմարան» անուամբ, որ եւ այրեցաւ յամի Տեառն 1888: Իսկ այգին մնաց ի տիրապետութեան Սաղմայ, ուր եւ շինեցին այլ եւ այլ անձինք զտունս իբրեւ ի վերայ «վաղֆ» զետնոյ, յորմէ շահին Ս. Յակոբեանք, եւ վասն այնորիկ Մատթէոս Կաթուղիկոս ետ գրաւել յանուն Մայր Աթոռոյ զերուսաղեմական կալուածս ինչ ի Գանձակ, եւայլն: Նուիրակք եւ բարձրաստիճան եկեղեցականք բնակէին ի Պատրիարքարանի, կամ ի նուիրական տունս առ եկեղեցեօք: Իսկ աշակերտք Զաքարիայի մնային ի Պատրիարքարանի, թէեւ բաղումք տակաւ զնացեալ էին ի թեմակալութիւնս ի վիճակս: Քաջահմուտն եւ քաջագիրն Պետրոս եպիսկ. Բերդումեան–Ալթունեան խոյս տուեալ է յառաջնորդութեանց՝ սիրահար լեալ բազոսեան ընկերութեան, եւ պարապեալ է ի գրական վաստակս զոյգ ընդ քարտուղարութեան Տ. Զաքարիայի ի

կենդանութեան նորա: Ասէին զՊետրոսի, զի դժուարանայր գրել ինչ՝ եթէ ոչ ընկերանայր Բաղոսի*):

Տ. Գէորգ վարդապետ ձեռնարկեաց անմիջապէս եւ հետեւեցաւ յառաւել բարեկարգութեան եկեղեցւոյ եւ դպրոցի: Ջանկալաւ ուղղել զխանգարեալ կարգս ինչ, առաջնորդեաց դպրաց եւ խրախուսեաց ի ներդաշնակ երգեցողութիւնս եւ ի բարեկարգ ժամերգութիւնս նախանձելիս, յորդորեաց զքահանայս զօր հանապազ կանխել յեկեղեցի յառաւօտու եւ յերեկոյի, արթնութեամբ վճարել զանձնիւր պարտսն ի պայծառութիւն եկեղեցւոյ եւ ի միխիթարութիւն ժողովրդեան. նախանձախնդիր եղեւ ի պահպանութիւն եւ ի բարեզարդութիւն անօթոց, զգեստուց եւ զարդուց եկեղեցւոյ, հրապուրեաց զժողովուրդ յաճախել ի սբ. եկեղեցի առ ի լսել զհոգեպարար քարոզս եւ զներդաշնակ երգեցողութիւնս սրտաշարժս, ի վայելել զփառաւոր հանդէսս եւ

*) ԾԱՆՕԹ.Վ.ԵՊ.Մ.— Բազում վիպակք են զԶաքարիայէ եւ զաշակերտէ նորա զՊետրոսէ, զորս հնար է առնուլ ի գիր եթէ պարապոյ ժամք լիցին: Առիթ բարեպատեհ համարիմք դնել աստ զտապանագիր Տ. Զաքարիայի ամփոփելով ի գերեզմանի ի հարաւակողմն առաջի ձախակողմեան պահարանի Ս. Նշան-խաչ եկեղեցւոյ Գուրուչէշմէի որ ի Կ. Պոլիս.

ՀԱՆԳԵԱՒ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1799 ԵՒ ՀԱՅՈՑ ՌՄԽԸ ԵՒ ՄԱՐՏԻ ԺԱ.

« Մեծ վարդապետս այս մեր զգօն գերահռչակ եւ զգաստ,
« ծնեալ յերկրին Կաղզուանայ, ուրսնամեայ հանգեաւ աստ,
« ի Փօքուզեանց համեստ զարմէն մաքրասնունդ բարեբաստ,
« ի դիս մանկութեան սուրբ հաւատով բնաւորեալ ճոխիմաստ,
« Զսերտ հաւատն ուղղադաւան ետես ի սա սբ. Հոգին,
« կոչեաց ի սուրբ էջմիածին լուսակառոյց նօր յադին,
« Սրար զնա անտ Միաբան վեհապետացն առ ոտին
« եւ փայլեցոյց գերափառօք զերդ արուսեակ առաւօտին.
« Սրբոյ գահոյս ժիր գործակալ միշտ ուր ուրեք յաջողակ,
« Գեղեցկադէմ, ահագնաձայն՝ Եպիսկոպոս շնորհունակ,
« Էր բնախօս Աստուածաբան՝ եկեալ Պոլսոյ Նուիրակ,
« Լուսաւորչիս դաւանութեան ուղիղ մտօք դաստիարակ,
« Ի գործ կրկնակ Նուիրակութեան բարուք ծանեան բարեկարգ.
« Զաքարիա արհիապանծ ետին Պոլսոյ Պատրիարք,
« Հռչակեցաւ յոյժ ազգասէր եւ բարեբաղդ գերայարգ,
« Տինեալ զումանս եկեղեցիս եւ հիւանդաց յերկուս յարկ,
« Յոյժ ճոխացոյց շատ դպրատունս, յորս հաստատեաց վարժապետս,
« Հասոյց եօթնեակ եպիսկոպոսս եւ չորեսին վարդապետս,
« Զանայր զուսումն ճոխել Ազգիս նախիմաց յարհանգէտ,
« Պահեաց հանգիստ զԱզգս մեր տարով քսան եւ վեց կացեալ դէտ,
« Զետ Սբ. Սահակ զփայտ վշտաց հոգս Հայոց բարձեալ յուս,
« Յահէ պետիս բոլոր հերձուածք բերանափակ տային խոյս,
« Ազդմամբ Հոգւոյ գիտաց զիւր մահ՝ խնդրեաց թաղիլ շիրմիս կոյս,
« Ակն ունելով սբ. աղօթից. տամք զողորմիս շնորհալոյս: »

զարարողութիւնս եկեղեցւոյ, յորպիսիս կարի նախանձախնդիր եւ փութաջան էր Տ. Գէորգ վարդապետ:

Սանձեաց եւ զոմն քահանայ Թադէոս անուն որ քննադատելի էր վարուք եւ բարուք, եւ ունէր զյարաբերութիւնս «մտերմականս», վայելէր զրարեկամութիւնս նշանաւոր անձանց Օսմանցւոց, զլխաւորաց Եէնիչէրեաց եւ նախարարաց անգամ, այլ ոչ ըստ բարի վարուց եւ ընդունակութեանն, եւ մերթ կատարէր զկարեւոր ծառայութիւնս միջնորդութեամբք առ օտարս, ի նը-պաստ Պատրիարքարանի, վասն որոյ եւ Պատրիարքարան յաճախ տայր զանցառութեան զյանցանս նորա եւ զպատժապարտութիւնս: Որով զուցես ակամայ խրախուսէր զսանձարձակ վարս եւ զաննախանձելի գործողութիւնս Թադէոսի (միջնորդ ի կնամոլութեանց, կաշառակերութեանց, քսութեանց, եւայլն): Տ. Յակոբոս Արքեպ.-Պատրիարք փորձէ պատժել զնա սակս քստմնելի ինչ յանցանացն, յորպիսիս առաւել եւ յաւէտ հռչակեալ էր Թադէոս, եւ գրէ Տ. Գէորգ վարդապետ քարոզչի ենթարկել զնա ընդ «քառասնօրեայ» ապաշխարանօք, այլ ի նմին իսկ աւուր ընդ երեկս փութացուցանէ Տ. Յակոբոս զերկրորդ հրամանագիր առ Տ. Գէորգ, առ ի ապատ թողուլ զԹադէոս...: Ազդեցիկ անձինք, ի ներքնոց եւ մանաւանդ յարտաքնոց, ծանրացեալ էին ի վերայ Տ. Յակոբոսի:

Յանկուցեալ յինքն զսէր եւ զվստահութիւն Մկրտիչ ամիրայի Ճէղայիրլեան, որ սիրէր զուսումն եւ զկրթութիւն, միանգամայն հետեւէր նորաձեւ գաղափարաց՝ ունելով զյարաբերութիւնս ընդ լութերական քարոզչացն բժիշկ ձեւացելոց, (Գէորգ վրդպ.) յորոմէ նա, եւ աջակցութեամբ նորա ընդ առատանուէր դրամական օգնութեանցն, յորս ոչ անմասն եղեն եւ այլ ամիրայք եւ ձեռնհաս անձինք ի մերազնեայց, ընդարձակեաց զՆերսիսեան փոքրիկ դպրոց տեղւոյն եւ բարեկարգեաց, մինչեւ նախանձելի լինել այլոց դպրոցաց մայրաքաղաքի, ըստ ներելոյ միջոցաց ժամանակին: Կարգեաց անդ յուսուցիչ զհմուտ վարժապետս, յաւել եւ զՊապա Համբարձում Լիմօնճեան ի դասատու ձայնագրութեան եւ երաժշտութեան, թէպէտ ոչ հաշտ ակամբ նայէին դպիրք եւ շարականագէտ քահանայք ի նա, առարկեալ զի ոչ հաւատարմութեամբ յաջողէր ձայնագրել զՇարականս եւ այնպէս տալ երգել աշակերտաց, եւ ունէին ընդ մասնեայ զիրաւունս:

Պապա Համբարձում Լիմօնճեան ծաղկեցաւ ի սկզբան ԺԹ. դարու, ծնեալ ի վերջին կոյս ԺԸ. դարու (1768—1839թ.), այլ ըստ ձայնագրական արուեստի հարկ է մատնացոյց լինել ԺԹ.րդ դարու: Պապադաւան Հայ լեալ, հետեւի ուսանել զյունական ձայնագրութիւն, եւ ոմն յոյն ձայնագրագէտ դասատու մերժէ նմա ուսուցանել զարուեստն: Յորմէ խոժոռի նա: Դժուարալուր էր եւ անախորժ ձայն նորա, այլ դիտէր զարտաքին երաժշտութիւն թուրքական կամ ասիական եւ ջանայր ձայնագրութեամբ օժտել զուսուցն (իբր բաղխում): Իսկ հայկական ձայնախաղք կորուսեալ էին զիսկական նշանակութիւնս իւրեանց եւ ոչ ոք էր

որ գիտէր զմանր ուսմունս հայկականս, յորմէ ուսանէր Պապա Համբարձում:

Որպէս տեսանի ի գրաբար դասատետրի, զորոյ զպատճէն եգիտ եւ էառ կենսագիրս ի Մատենադարանէ Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, պակասին չափք տեւողութեան եւ այլ կանոնք անհրաժեշտք ի գործածութիւն հայ ձայնագրութեան կամ խազագիրութեան*): Դասատետրն յիշատակեալ ունի զվերնագիրս զայս. «Համառօտութիւն երաժշտականի գիտութեան՝ հարց եւ պատասխանատուութեանց, շարադրեցեալ յումեմնէ բանասիրէ, ի փառս ամենակալին Աստուծոյ եւ յօգուտ Ազգի Արամեանս»: Յետ ինչ Ազգարարութեան իբր աստուածաբանօրէն յառաջաբան, պարունակէ զհետագայ գլուխս.— Գլ. Ա. Յաղագս երաժշտական գիտութիւնն թէ զի՞նչ է: Բ. Գովութիւն երաժշտութեան: Գ. Թէ ուստի՞ գտաւ երաժշտութիւնն: Դ. Թէ վասն է՞ր ութն են ձայնքն: Ե. Հին ձայնից: Զ. Հաղորդականութեանց ձայնից: Է. Անուանց ութ ձայնից: Ը. Բաժանման ձայնից: Թ. Հեգման ձայնից: Ժ. Դարձման ձայնից: ԺԱ. Ուստի՞ եւ յումմէ՞ գտաւ գիրն Հայոց: ԺԲ. Զաւիաբանութիւն տառից: ԺԳ. Վանկաչափութիւն: ԺԴ. Պարզ եւ բարդ ոտից: ԺԵ. Անուան եւ բաժանման ոտից: ԺԶ. Տաղի եւ չափաբերութեանն: ԺԷ. Բաժանման տեսակացն տաղից: ԺԸ. Յաղագս խաղից թէ զի՞նչ է: ԺԹ. Յաղագս բացայայտութեան խաղից: Ի. Յաղագս անուանց խաղից:

Իբր ուսումնասիրէ դասատետրն այն (ի Գլ. Թ.) զութն ձայնս Հայոց, ա՛, ակ եւայլն, որպէս համառօտէ եւ զՅունացն յայլ գլուխս, հանդերձ պատմական տեսութեամբք քաղելովք ի հին ձեռագրաց, թէպէտ ոչ ըստ ճշտութեան արուեստի, իբր բացատրէ զարժէս ձայնաւոր տառից Հայոց եւ բաղաձայնից կամ կիսաձայնից, դասակարգի զձայնախաղս փուշ, էկորն եւ այլն, եւ յաւելու ընդ փէրտէ (թուրք) անուամբս դնել զթուրքերէն կամ զպարսկերէն անուանս, եէկեահ, տիւկեահ, սէկեահ, չարկեահ, փէնճուկեահ, եւայլն:

Ո՞վ արդեօք հնարեաց զդասատետրն զայն խառնուրդ եւ յորո՞ւմ ժամանակի, ոչ է հնար ասել ինչ ստոյգ: Այլ եւ այլ հանգամանք գրչութեան օրինակին որ ի Մատենադարանի Ս. Էջմիածնի՝ կազմեալ ընդ տպագիր Տաղարանի միոյ 150–200 ամենուոյ (եթէ ոչ վրիպի յիշողութիւն կենսագրիս), ցուցանէին լինել պատրաստութիւն դասատետրի յառաջ քան զամս 150–200: Մանր Ուսմունքն կամ խազագիտութիւնք Հայոց ծաղկեալ էին ի Կիլիկիա եւ ընդարձակեալ յաւուրս Ներսիսի Շնորհալւոյ, որ կանոնադրէ որոց լիզձ են մտանել յեկեղեցականութիւն՝ ուսանել ընդ այլ եւ այլ անհրաժեշտ ուսմանց եւ գիտելեաց եւ զմանր ուսմունս: Այլ դարձեալ եւ միշտ ոչ է հնար գտանել եւ յայնոսիկ ժամանակսն զչափ կամ զնշանս տեւողութեանց յերգելն խազիւք

*) ԾԱՆՕԹ.Վ.ԵՊ.Մ.— Լրացուցանէ զայսոսիկ կանոնս Պապա Համբարձում, եւ աշակերտք Արիստակէս (Արիս) աշակերտի նորա Գաբրիէլ Երանեան, Նիկողոս Թաշճեան եւ այլք ընդարձակեն օժանդակութեամբ յաւէտ եւրոպական ձայնագրութեան:

զեղանակ ինչ ըստ ուրթն ձայնից եւ դարձուածոցն: *Ի խորհուրդ կամ անյայտ մնան եւ* մանր տառք *ինչ եղեալք ցանցառապէս ընդ խազիւք՝ որոշ ի բառից եւ ի բանից երգոց եւ շարականաց:*

Անկումն Կիլիկիոյ արդիւնաւորեաց զայլ եւ այլ խանգարմունս, որպէս յեկեղեցական դասակարգութիւնս, յօրէնս, ի կանոնս, յազգային կենցաղս, ի սովորութիւնս, ի տարազս եւայլն, նոյնպէս ի խազագիտութեան եւ ի մանր ուսմունս, *եւ իսկական գիտութիւն եւ գործածութիւն խազից Հայոց զոգցես կորեաւ, թէպէտ ի տպագրութիւնս երգոց եւ շարականաց անգամ շարունակէին մերայինք դնել զխազս, եւ երգիչք ոմանք գործածէին իբրեւ զարտաքին նշան ինչ երկարելոյ, սղելոյ, կրկնելոյ զեղանակս եւայլն:*

Թուի, զի ի վիճակին Կեսարիոյ, իբրեւ սահմանակից Կիլիկիոյ, վանօրայք, եւ յականէ՝ վանքն Ս. Կարապետի, ջան կալեալ եւ պահպանել զնշխարս *խազից, միանգամայն յետ ժամանակաց ինչ պատուաստեալ են ընդ ասիական–թուրք–պարսկական եղանակաց եւ ձայնից՝ յաւելեալ* եէկեահ, տիւկեահ, սէկեահ, *եւ ըստ եղանակաց* սապահի (*զկ*), հիւսէյնի (*բձ*), *եւայլն, առանց յաւելելոյ զէ՛թ զկանոն* չափի *և* տեւողութեան, *բաւականացեալ յաւէտ կանոնիւ ասիական կամ պարսկական* ուսուցի, *որ եւ պակասաւոր է միշտ**):

---

*) ԾԱՆՕԹ·Վ·ԵՊ·Մ·— Ենթադրութիւնք կենսագրիս զօրանան փաստիւք դասատետրին առարկելոյ, եւ նամակաւ Կարապետ վարդապետի Էվէրէկցւոյ որ ի միաբանից Ս· Կարապետի վանուց որ ի վիճակին Կեսարիոյ, զորմէ պարտ է ուսումնասիրել առանձինն յորժամ ժամ պարապոյ լիցի եւ ներեսցէ անձնական վիճակ կենսագրիս: Տ· Կարապետ վրդ· Ծառուկեան Էվէրէկցի ծաղկեալ է ի սկզբան ԺԹ·դ դարու, եւ միաբանակցեալ է Ս· Կարապետի յամսն 1820 — 1830, որպէս գրէ Տ· Տրդատ եպս· Պալեան Առաջնորդ վիճակին Կեսարիոյ, ի պատասխանի կենսագրիս, ի 28 Յունիսի 1906 ամի, ընդ թուահմ· 1950: Հարկ է յաւելուլ եւ աստ զպատճէն նամակին յիշելոյ·

« ··· Ահաւասիկ մեր տեղեկութիւնները յիշեալի մասին:

« Կարապետ վարդապետ Ծառուկեան բնիկ Էվէրէկցի է, եւ
« միաբան եղած է Կեսարիոյ Ս· Կարապետի վանքին: Ի միաբանու-
« թեան ժամանակը (գրեթէ 1820–1830ի միջոցները) Ս· Կարապետի
« վանուց մէջ ճեմարան անունով վարժարան մը կար, ուր կը դա-
« սախօսէին Պոլսեցի Մեղրեան Գրիգոր վարժապետ անուն մէկը եւ
« քանի մը վարդապետներ, եւ ուր գտնուեր է նաեւ, երբեք տարինե-
« րու չափ, Ֆիզիքայ Պօղոս պատուելին:

« Ծառուկեանը իր ուսումն առած է այս վարժարանին մէջ,
« նոյն դասատուներէ, հմտացած էր հայերէն եւ թուրքերէն լեզու-
« ներու քաջապէս, եւ բաւականին ալ արաբերէն լեզուի· շատ ու
« շատ հմտացած էր Հայ· երաժշտութեան, Հայ· եւ թրքական ձայ-
« նից եւ եղանակաց, բամբ եւ անուշ ձայն մը ունէր ու «նէյ» կը
« զարնէր շատ նարտարօրէն· իր երաժշտական գործերէն որ եւ է
« երկ մը, գործ մը, անցած չէ մեր ձեռքը, թէեւ հետաքրքիր եղած
« ենք փնտռելու:

Պապա Համբարձում լսէ, զի ի կեդրոնական վանս վիճակին Կեսարիոյ գիտեն եւ գործածեն վանականք զհայկական ձայնագրութիւն ինչ, վասն որոյ ելեալ յուղի դիմէ ի Կեսարիայ եւ ուսանի զուսումնդ անկատար, որպէս տեսաք մեք եւ ունիմք զձեռագիր օրինակ խառնուրդ դասագրոյ ձայնագրութեանց յաճախ թուրքական անուամբք:

Շարունակէ Պապա Համբարձում զճանապարհորդութիւն իւր ի Բարձր Հայս, անցանէ յԱրարատեան աշխարհ մինչեւ հասանէ ի Շիրազ ի Պարսկաստան, ուր ուսանի զեղանակս ասիականս, քրդականս, պարսկականս, եւյլն, եւ վերադառնայ այսր ի Կ. Պոլիս: Ասա կաղմակերպէ եւ ընդարձակէ, օժանդակութեամբ եւրոպական ձայնագրութեան եւ աջակցութեամբ ուրումն եւրոպացի ձայնագրագիտի,— ոչ սակաւ օգտեալ եւ ի հռոմէադաւան Տիւղեանց, որք դիտէին զձայնագրութիւն եւրոպական, մանաւանդ թէ նախանձախնդիր լեալ են եւ խրախուսեալ զնա,— զարուեստ հայկ. ձայնագրութեան առաւել քան զոր ուսեալ էր ի Կեսարիա, եւ հաստատէ զներկայ ձայնագրութիւն հայկական ի վերայ հայ ձայնախաղից, յարմարեալ եւ զհին նշանսն եւ զնոր չափս: Միանգամայն ուսուցանէ կանխաւ հնգից աշակերտաց ընտրելոց համաձայն յանձնարարութեանց երեւելեաց Ազգիս՝ առեալ զուիտ եւ զերդումն ստորագրութեամբ զի մի՛ երբեք ուսուցեն Յունաց զարուեստդ, եւ ոչ Հայոց դասախօսեցեն ի կենդանութեան իւրում: Մին եւ առաջինն հնգից աշակերտաց էր Արիստակէս երաժիշտ ձայնագրագէտն Յովհաննիսեան

« Կարապետ վարդապետ ժամանակակից է եղեր նաեւ Կեսա-
« բացի Գապասագալեանի, որ քաջ երաժիշտներէն մին ալ այս է
« եղեր:

« Ս. Կարապետի վանքին մէջ ձեռնարդրուած է Կարապետ ա-
« նունով, եւ իր կեանքը ։անկ մը տարիներ միայն դուրսը անցու-
« ցած է, էնգարէի՞ թէ Մարաշի Առաջնորդական պաշտօնով, եւ իր
« կենաց միւս մասերն անցուցած է անընդհատ Ս. Կարապետի վան-
« քին մէջ: Ինքը բնաւորութեամբ աւելի հանդիստի, կերուխումի,
« «նէյ» զարնելու, եղանակելու, եւ իր անուշ ու գեղեցիկ ձայնով
« միշտ երգելու հակամէտ, վարդապետական պարտաւորութիւնն-
« ը շատ անգամ մոռացման կուտայ եղեր: Բնութիւնը օժտած է
« եղեր զինքը լաւ ձիրքերով, բայց պէտք եղածին պէս մշակելու հոգ
« չէ տարած.

« Նարեկի թուրքերէն թարգմանութիւնը ըրած է, կ՚ըսեն,
« բայց ձեռագիրը այժմ չի կայ, եւ չի գիտցուիր թէ ո՞ւր մնացած
« է: Վախճանած է 1875 թուականին, գրեթէ 70 տարեկան հասակին
« մէջ, եւ թաղուած է վանքին գերեզմանատան մէջ:

« ... Կեսարիոյ մէջ կը յիշուի Ադամ Գալֆայ անունով վար-
« ժապետ մը ալ, ժամանակակից նոյն վարդապետի, եւ անոր հա-
« մար ալ կըսուի թէ երաժիշտ էր, եւ սակայն այս վերջնոյն վրայ
« տեղեկութիւնք բոլորովին կը պակսին մեզ առ այժմ...»:

որ ունէր զձայն ախորժալուր: Երկրորդ էր տիրացու Աբիսողոմ Իւթիւճեան ի Խասդեղջ, որ յետ ամաց ինչ մոլորեցաւ ի լութերականութիւն: Երրորդ՝ տիրացու Յովհաննէս Միւհէնտիսեան, ապա տպարանատէրն: Չորրորդ՝ Թամպուրի Ալիքսան ի Կէտիկ-փաշայէ: Հինգերորդ՝ խեցեղէնավաճառ (չէօմլէքճի) Պետրոս յիւսկիւտարէ:

Սակայն թերութիւնք ինչ արուեստին բացայայտ երեւէին ի գրելն զՇարականս, եւ յայս սակս տրտնջէին շարականագէտք: Զուգընթաց էր եւ համբակութիւն Համբարձումայ յեկեղեցական երգեցողութիւնս*):

Առանց ճշդելոյ, հնար է կարծել՝ զի ուղեւորութիւն եւ վերադարձ Պապա Համբարձումի որ ի կողմանս Կեսարիոյ, Բարձր Հայոց եւ Իրանու եղեւ յամսն 1808—1816, մինչ ուսանէր Ծառուկեան ի վանական դպրոցի Ս. Կարապետի, համաձայն հետազօտիչ գրութեան Տ. Տրդատ եպս.ի, լեալ ամաց իբր 15–25: Անդ ուսաւ Ծառուկեան զհայկական երաժշտութիւն եւ զձայնագրութիւն—նօթաւ, ոչ գիտեմք յորմէ՞ ուսուցչէ կամ երաժշտագէտէ, թէեւ յիշատակին լինել ի վիճակին Կեսարիոյ քաջ երաժիշտքն Գրիգոր դպիր Գապասաղեան Կեսարացի (ԺԸ. դար, ծնեալ 1740թ.), Ադամ Գալֆայ: Ոչ հաւանական երեւի եւ ոչ հնար է գտանել զտեղեկութիւն ինչ, զի Պապա Համբարձում դասախօսեալ էցէ ի վանական դպրոցի Ս. Կարապետի: Եւ առ ի՞նչ ելանէր Համբարձում ի ճանապարհորդութիւն եւ ի հետազօտութիւնս եթէ գիտէր զձայնագրութիւն այնչափ որչափ ուսոյց աստ ի Կ. Պոլիս պայմանեալ աշակերտաց սակաւուց, կամ 4–6 անձանց, ըստ սակարկութեան և վճարմանց ոմանց ամիրայից ժամանակակցաց, յետ իբր 1820 թուականի (Գրիգոր ճարտարապետ Պալեան, Մարտիրոս Սագայեան, Մկրտիչ ճէզայիրլեան, եւն):

Դարձցուք ի նորոյ ի կարգ պատմութեանս՝ բաւական համարեալ զոր համառօտեցաք սակս Պապա Համբարձումի եւ հայկական ձայնագրութեան, զորոց ունիմք ընդարձակել յա-

---

*) ԾԱՆՕԹ.Վ.ԵՊ.Մ.—Ունիմք առաջի աչաց զձայնագրեալս ի Պապա Համբարձումէ, Շարական, երգ, տաղ, և տեսանեմք զկանոնական թերութիւնս ոչ սակաւս, զնոյնս և ի ձայնանիշս կամ ի խազս: Աշակերտք եւ թոռնեայքն նորա տակաւ լրացուցին, օժանդակութեամբ եւրոպական ձայնագրութեան եւ ընդարձակեցին զկանոնս: Ի պատիւ ձայնագրագէտ-երաժիշտ Գաբրիէլի Երանեան, աշակերտի Արիստակէսի, պարտ է յաւելուլ աստէն զի նա օժանդակութեամբ եւրոպական ձայնագրութեան յաւել զկարեւոր նշանս եւ զկանոնս ինչ ի հայկական ձայնագրութեան, որովք բազմօք պակասեցան դժուարութիւնք եւ թերութիւնք ի ձայնագրել եւ երգել ճշտութեամբ զշարականս եւ զերգս Հայոց: Մանաւանդ զի եւ խանգարմունք եղանակաց շարականաց յայլեւայլ բերանս յաւելեալ էին եւ յաւելուն զդժուարութիւնս, եւ ոչ է հնար որոշել հաւատարմութեամբ զիինն եւ զինչկականն, այնչափ զգալի էին ե են խանգարմունք ի կեդրոնս անգամ, ի մայր Աթոռոջ եւ յայլուս:

ռանձին եւ ի յատուկ ուսումնասիրութեան, որչափ ներեսցեն պարագայք եւ միջոցք մեր, զուրկ յընդարձակ մատենադարանէ եւ յեղանակաւոր ձեռագրաց:

Կարդեալ Պապա Համբարձում յուսուցիչ ի Ներսիսեան դըպրոցի, գրեա՛ թէ համաձայն ջանից, հրահանգաց եւ ուղղութեան Տ. Գէորգ վարդապետի սկսաւ ուսուցանել աշակերտաց տակաւ առ տակաւ զձայնագրութիւն եւ զերգս ընդ կարեւոր շարականաց ձայնագրելոց, որք յետ փոքու միջոցի սկսան երգել ներդաշնակ եւ կանոնաւոր ի Ս. Ստեփաննոս եկեղեցւոջ եւ գրաւել զյաճախութիւն եւ զբաղմութիւն ժողովրդեան ի Խասգեղջ եւ ի շրջակայից:

Համբաւ ներդաշնակ եւ բարեկարգ երգեցողութեանդ տարածեալ յարուարձանս ի Կ. Պոլիս, եհաս եւ ի լսելիս անգղիական դեսպանի, որ խնդրէ ի Մկրտիչ ամիրայէ Ճէղայիրլեան եւ յայլոց լսել զերգեցողութիւնս:

Վասն որոյ Գէորգ վարդ. տեսանէ զպատրաստութիւն կարեւոր, եւ տայ հրաւիրել զդեսպանն յեկեղեցի յՈւթօրէս ի տօնի Անուանակոչութեան Տեառն, յորում աւուր, հանգոյն հանդիսի եւ փառաւորութեան առաջին աւուրն Ս. Ծննդեան, կատարէ զհանդէս մեծ, երգեն զպիրք եւ աշակերտք յատենէ եւ ի վերնատանէ յատուկ եղելոյ Ս. Ստեփաննոսի եկեղեցւոյ, փոխ ի փոխ զՕրհնութիւն, զՓառք ի Բարձունս*), արարեալ ի միասին ըստ կարգին

*) ԾԱՆՕԹ. Վ. ԵՎ. Մ.— Հանդիսամոլութիւնք Հայոց Կ. Պոլսոյ լեալ են առիթք ծանրացուցանելոյ, միանգամայն խանգարելոյ զեղանակս կարեւորագոյն շարականաց, թո՛ղ զերգս, զտաղս, մանաւանդ ի պէտս ննջեցելոց, հարսանեաց եւ տօնախմբութեանց, որպիսիք են շարականք «Խորհուրդ Մեծ», «Այսօր Յարեաւ», «Ուրախացիր Սրբուհի», «Զարհուրեալ», «Որ ի յերկնից իջեր», «Անսկիզբն Ատուած սկիզբն արարչութեան», «Նշանաւ ամենայաղթ», «Մանկունք ոմանք», «Ուրախ լեր Սբ. եկեղեցի», եւայլն, եւայլն: Առիթ բարեպատեհ եղեւ մեզ յամսն 1896–98 լսել զշարականս ինչ ի Տ. Պետրոս Արքեպիսկոպոսի Թահմիզեանն, ի թեմական Սեբաստիոյ, յորժամ գտանէր աստ ի Կ. Պոլիս ըստ ամբաստանութեանց Համիտեան կառավարութեան հրաւիրեալ այսր, եւ ճշտեր նա ըստ բաւականին զիին եղանակս շարականաց, որպէս եւ զերգն «Անբաժանելի», յորոց վերայ յօրինեալ է Համբարձում զեղանակ անհարազատ եւ զծանր, որպէս տեսցի ի ձայնագրեալ երգս ժամագրոց տպագրելոց ի Ս. Էջմիածին յամին 1877, յերեսն 20–24, եւ զհարազատն յերեսն 37–38 ըստ երգելոյ Թահմիզեանի, որպէս երգեն ի վանսն Ս. Ղազարու Վենետկոյ, եւ երբեմն միաբան Ս. Ղազարու վանուց հանգուցեալ Տ. Գաբրիէլ Արքեպ. Այվազեան ի Ս. Էջմիածին, եւ ըստ այսմ ետ ձայնագրել Հոգելոյս Տ. Գէորգ Դ. Հայրապետ Ազգիս Հոգեւոր ծնողն մեր եւ տպագրել: Լուաք զայս եղանակ որպէս եւ զայլ շարականս ելն ի Հռովմէադաւան երաժիշտ Հայր Կոմիտասէ որ ի Միաբանութենէ Վենետկոյ: Ոչ գիտէին ի Մայր Աթոռոջ զեղանակս «Անբաժանելւոյ» շարականի միւռօնօրհնութեան եւ միոյ Սաղմոսի, թէեւ հինք երգէին զշարականս վերոյիշեալսն ըստ հնոց: Մնաց մեզ սպասել գիւտի բա-

եւ զերգեցողութիւնս Ս. պատարագի: Յորմէ մեծապէս զոհ լեալ դեսպանի, եւ վայելեալ զպատիւս, վերադառնայ ի բնակարանն: Եւ այսու առթիւ խռնեալ էր բազմութիւն ժողովրդեան յոյժ յոյժ ի շրջակայից եւ ի հեռաւորաց:

Ապաքէն բարեբաղդ էր Խասգիւղ ի քարոզչութեան Տ. Գէորգ վարդապետի, եւ այսպիսեօք բարեկարգութեամբք եւ յառաջադիմութեամբ պանծայր եւ մխիթարէր առաւել քան զԳէորգ վարդապետ: Վասն որոյ յանչափս սիրէին եւ պաշտէին անդամ զքարոզիչ իւրեանց: Սակայն հաղիւ դադարեալ էին իբր միաբանեան տաղնապալից յուզմունքն եւ հալածանքն որ առթիւ պապականութեան եւ ընդդէմ պապականացեալ Հայոց, թէեւ ոչ ի սպառ, եւ ահա յարեան նոր խնդիրք կրօնականք եւ յուզմունք բողոքականութեան, որպիսիք ծանրացան յոյժ յոյժ, յաւելեալ նաեւ զգաղտնի դաւադրութիւնս պատրուակաւ կրօնական նախանձախնդրութեան եւ ազգային պաշտպանութեան, եւ անփորձութիւնք պաշտօնական անձանց խառն ընդ արտաքնոցն յուզեցին որպէս զհամայն Կ. Պոլիս, նոյնպէս զԽասգիւղ: Թող զգաւառս սակաւաթիւս:

Առ ի սանձել զչարժումն կրօնափոխական, զոր արծարծէին ի գաղտնի լութերական–բողոքական քարոզիչք յԱմերիկայէ, մանաւանդ յԱնգղիոյ, հաստատեալ եւ զՌօպէրթ–Գոլէճ վարժարան ի բարձունս Բումէլի–Հիսարի, ազդեցիկ եկեղեցականք ոմանք եւ սակաւք ի գլխաւորաց Ազգիս կամէին յարուցանել զհալածանս ընդդէմ մոլորելոց, որում ոչ համաձայնէր Տ. Ստեփաննոս Արքեպիսկոպոս Պատրիարքն Ազգաւնի: Հնարիւք իմն եռուն կարգել կանխաւ զՏ. Պօղոս վարդապետ Թաքթաքեան յԱռաջնորդ Զմիւռնիոյ, հանդերձ վկայականաւ եպիսկոպոսութեան, որում արժանացաւ Թաքթաքեան՝ երթեալ յիրմիրէ ի Ս. Էջմիածին յԱպրիլի 1839 թուականի, եւ ապա հրաւիրեալ զՅակոբոս եպիսկոպոս զԱռաջնորդ Մարդուանու–Ամասիոյ այսր ի Կ. Պոլիս՝ կարգեցին ի տեղապահ Տ. Պատրիարքին Ստեփաննոսի արքեպ. ի ի 5ն փետրվարի 1839 ամի յաւուր Բարեկենդանի:

Յակոբոս եպիսկ. կրկնակի իմն ակնկալութեամբք ցուցեալ զանձն նախանձախնդիր եւ արթուն, միացեալ ընդ համախոհս իւր՝ սկսաւ հալածել բուռն միջոցօք զմոլորեալս եւ զկարծեցեալ մոլորեցուցիչս, տղիտացեալ մինչեւ ի սպառ զի հալածումն քերէ զտարածումն անհրաժեշտ, եւ ոչ էր պարտ մոռանալ զմերձաւոր անցս պապականութեան:

Վառարան կրօնափոխութեան համարեալ զԽասգիւղ, յորում արդարեւ յաճախէին օտարազգի լութերականք՝ կապեալ զմտերիմ յարաբերութիւնս ընդ Մկրտիչ ամիրայի Ճէղայիրլեան, բեւեռեաց անդր Տ. Յակոբոս զգլխաւոր ջանս իւր եւ զհալածանս, եւ ըստ դատապարտ ամբաստանութեանց յաճախելոց յանբարեմիտ եւ ի

նալեաց հին խազից մերոց, յորում ոչ սակաւ աշխատեցաք առանց յաջողելոյ: Զայնագրագէտ քաջ Տ. Կոմիտաս վարդապետ որ ի Միաբանութենէ Ս. Էջմիածնի, խոստանայ պարզել զրահայիս հին խազից, եւ հաղորդեաց մեզ առանձինն զզոհացուցիչ տեղեկութիւնս ինչ:

դաւադիր անձանց, սկսաւ ենթարկել ընդ հաւատապրպիտ քննութեանց զարս կասկածելիս, բանտարկել, աքսորել, մինչեւ ազդել սարսափս ամիրայից անդամ:

Ըստ այսմ ուրեմն կալաւ եւ բանտարկեաց զԳէորգ քահանայ Արծրունի՝ զպաշտօնեայն Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ Խասգեղջ՝ ի ժամարարատան Աւագ-եկեղեցւոյ ի Գումգաբու ի 28ն փետրվարի 1839, որպէս եւ յետ պախարակելի իմն քննութեան առաքեաց զնա յաքսորս յ9ն Ապրիլի, զկնի Հրաժարման Ստեփաննոս Արքեպ.ի ի պատրիարքութենէ*):

Արդ, Աղաւնի ոչ հաւանեալ հալածանաց եւ այսպիսեաց ջանից, ըստ որում գիտէր զվտանգաւոր հետեւանս հալածանաց, զորոց զդառն փորձս տեսեալ էր անձամբ եւ բազմօք լուեալ ականջօք իւրովք, մանաւանդ տեսեալ եւ զխարդաւանութիւնս հակառակորդաց, հրաժարեցաւ ի պատրիարքութենէ, եւ հրաժարագիրն առաքեցաւ առ Բ. Դուռն յ3ն Մարտի: Յետ որոյ ընտրուեցաւ Տ. Յակոբոս եպիսկոպոս ի պատրիարք ի 11ն այնր Մարտի ամսոյ (1839), եւ ի 13ն գնաց Տ. Յակոբոս եւ ընկալաւ զնշանն պատրիարքական ի Բ. Դրանէ, եւ սկսաւ շարունակել առաւել խստութեամբ եւ բուռն միջոցօք ի ձեռն քաղաքական իշխանութեան զհալածանս, աքսորել, բանտարկել եւայլն զորոց ամբաստանէին: Իսկ Տ. Ստեփաննոս արքեպ. Աղաւնի փութացաւ վերադառնալ յիւրն վիճակ յԱրմաշ-յիզմիտ ի 17ն Մարտի, թօթափեալ զփոշի ոտից իւրոց, եւ զի մի՛ մասնակից՝ միանգամայն ականատես լիցի դառն եւ վտանգաւոր հետեւանացն:

Յաճախ կիրք անձնականք առիթս ետուն ո՛չ միայն տարածման եւ ընդարձակման, այլ եւ իսկական կրօնափոխութեան բազմաց, որոց միացաւ տիրացու Աբիսողոմ ձայնագրագէտ առ ի ազատել զանձն ի հալածանաց ընդ պաշտպանութեամբ դեսպանացն Անգղիոյ եւ Ամերիկայի: Եւ այսպէս, փոխանակ դադարեցուցանելոյ, առաւել արծարծեաց Տ. Յակոբոս զհակառակութիւնս եւ զկրօնափոխութիւնս, կասկածեալ անդամ զանձանց որ խրատէին դադարել ի հալածանաց եւ բաւականանալ խրատուք եւ քարոզութեամբք, որպէս պատահեցաւ Տ. Գէորգայ վարդապետի, որ ոչ համակերպէր հրահանգաց Պատրիարքարանի, ոչ ախորժէր ի հալածանաց, մանաւանդ տածէր զսիրալիր յարաբերութիւնս,— խրատականս եւ ազգօգուտս,— ընդ հալածեալս, որոց թիւ ոչ էր նուազ ի Խասգեղջ առաւել քան զայլ տեղիս:

Տ. Յակոբոս լուեալ զամբաստանութիւնս եւ զթադէոս քահանայէ Խասգեղջ, որոյ վարք եւ բարք էին յաւէտ արժանի դատապարտութեան, հրամանագրէ Տ. Գէորգ վարդապետի ի 19ն Նոյեմբերի զի թադէոս արգիլեալ է քահանայութենէ, միանգամայն լուծեալ ի կարգէն, եւ մնայ սոսկ աշխարհական անուամբ թադէոս: Իսկ ի 21ն նոյն ամսոյ, ըստ միջնորդութեան ազդեցիկ անձանց ոմանց, ի նորոյ հրամանագրէ Յակոբոս թէ ներեցաք թա-

*) ԾԱՆՕԹ.Վ.ԵՊ.Մ.— Վերադարձաւ Արծրունի քհնյ. յաքսորանաց յ3ն Սեպտեմբերի:

գէոսի, ենթարկեալ զնա յապաշխարութիւն ի նոր քառասունս (չիլէ), որպէս եւ եղեւ այնպէս:

Յետ ամսոց ինչ յառաջ վարեալ պատրիարքի զհալածանսն, արտաքսէ զՅակոբ վարդապետ Պէրպէրեան ի պաշտօնէ պատրիարքական Փոխանորդութեան (Վէքիլ) եւ կարգէ ի տեղի նորա զՊետրոս վարդապետ Կեսարացի, որ չափազանցէ ի բանտարկութիւնս եւ ի գլանակս (փալախա, փալաքա), ենթարկեալ ի գանահարութիւնս զօտար ազգիս անգամ (չքարոզիչս), զպապականս եւ զբողոքականս անխտիր, որպիսիք յարուցին միջազգային միջամտութիւն եւ զբողոքն դեսպանաց ոմանց:

Ամբաստանեն եւ զԳէորգ վարդապետէ, եթէ խմորեալ է ի բողոքականութիւն, արձակէ եւ զնա ի քարոզչութենէ Խասգեղջ, ընդ որ վչտանան յոյժ բազումք ի Հայոց:

ԳԼՈՒԽ Զ.

ՅԱՂԱԳՍ ՔԱՐՈԶՉՈՒԹԵԱՆ ԳԷՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏԻ Ի ՄԻՋԱԳԵՂՋ

Տ. Յակոբոս Արքեպիսկոպոս պատրիարք արձակեալ զԳէորգ վարդապետ ի քարոզչութենէ Խասգեղջ, եւ տեսեալ զյուզմունս Հայոց եւ ամիրայից՝ առ ի առնուլ զառաջս միջնորդութեանցն, փութայ կարգել զնա ի քարոզիչ Ս. Երրորդութեան եկեղեցւոյ Բերայի (Պէյ Օղլու) նորոգ հիմնելոյ, զորոյ զհիմնարկութիւն կատարեաց Աղաւնի (Ստեփաննոս) յ7ն Յունիսի 1836 ամի յաւուր բարեկենդանի պահոց որ յանուն Ս. Գրիգորի երկրորդ լուսաւորչի Հայաստանեայց, ընդ Աղաւնոյ գտեալ եւ Գէորգ վարդապետ ի նմին հանդիպի: Զայնու միջոցաւ աննչան էր Բերա, եւ առաքումն Գէորգայ անդր համարէր իբրեւ յաքսորս: Տ. Յակոբոս յանձնեալ էր Տ. Գէորգայ եւ զՍ. Լուսաւորիչ եկեղեցի Ղալաթիոյ: Մինչեւ ամիրայիցն բնակելոց ի Խասգեղջ եւ ի Միջագիւղ՝ ջանան եւ յաջողին տալ կարգել զԳէորգ ի քարոզիչ Ս. Աստուածածին եկեղեցւոյ Միջագեղջ, բացարձակապէս զգուշացեալ ի հակառակելոյ պատրիարքի: Թէպէտ ջանային ոմանք դրդռել զժողովուրդ ընդդէմ պատրիարքի, այլ Գէորգ աղաչէր եւ հանդարտեցուցանէր զնոսա:

Վասնորոյ յ2ն Մարտի 1840 թուականի երթայ Տ. Գէորգ վարդապետ եւ հաստատէ զբնակութիւն իւր ի Միջագիւղ, ստանձնեալ զնոր պաշտօն քարոզչութեանն, յետ մնալոյ ի Խասգեղջ զամս չորս եւ զամիսս եօթն:

Միջագիւղ էր յանժամ երկրորդ կեդրոն ամիրայից ազգիս յետ Խասգեղջ, որ տակաւ անկանէր եւ առաջինն բարձրանայր:

Գալուստ Երզնկացի էր քահանայ Ս. Աստուածածին եկեղեցւոյ տեղւոյն եւ վայելէր զհռչակ եւ զպատիւ ի շնորհս եւ ի պաշտպանութիւն Յարութիւն Ամիրայի Գազէպ, որոյ էր խոստովանահայր, որպէս եւ այլոց ոմանց ամիրայից եւ նշանաւոր անձանց, միանգամայն գրաւեալ էր զաղդեցիկ դերս յեկեղեցւոջ եւ արտաքոյ եկեղեցւոյ, եւ ի Պատրիարքարանի անդամ:

Գէորգ վարդապետ մինչ ջանայր առաւել պայծառացուցանել զեկեղեցի, բարեկարգեալ զկարեւոր կարգս ընդ դպրոցի, որպէս բազձայն եւ խնդրէին ամիրայք եւ ժողովուրդք՝ յառուկ ժողովով յանձնարարեալ նմա եւ խոստացեալ օժանդակել ըստ ամենայնի, սեւանէ զհակառակութիւնս այնր քահանայիս, որ վարժեալ էր յաւէտ իշխել եւ քարոզչաց, եթէ եպիսկոպոս լցէ եւ եթէ վարդապետ: Վասնորոյ խոհեմութեամբ լմն կատարեալ ընդ նմա, տակաւ ջանայ եւ յաջողէ ածել սիրով ի խոնարհութիւն, եւ նոյնպէս արդիւնաւորէ զջանս իւր՝ որպէս արար ի Խասգեղջ: Որով ուրախ լինէին Միջագիւղացիք եւ մխիթարէին յոյժ:

Եւ այսու եղեւ սիրելի եւ հաճելի նաեւ յաչս Հայոց Միջագեղջ, եւ կալաւ զաղդեցիկ դերս, թէպէտ Տ. Մատթէոս եպսկ. որ բնակէր անդ ի սեփական տան իւրում, ոչ մնայր ի հանդարտութեան եւ ջանայր թելադրել զյուղմունս ընդդէմ Գէորգայ, այլ ի նանիր: Ունէր եւ զհին կիրս:

Յաւուրս պատրիարքութեան Ստեփաննոսի եղեն առիթք եւ հակառակեցան միմեանց Մատթէոս եպսկ. եւ Գէորգ վրդ. (*):

Էր երբեմն Մատթէոս եպսկ. Աւաջնորդ վիճակին Պրուսայու, զայնպիսի պաշտօնս վարեաց նա յԱրմաշ – Նիկոմիդա եւ ի Զմիւռնիա, եւ ապիկար դտեալ ի վարչական ասպարէզի**) շարժէ եւ դդժգոհութիւնս Պրուսացւոց, որք ոչ կամին զնա եւ հանրագրութեամբք բողոք բառնան առ պատրիարքարանն, եւ այս ո՛չ մի անգամ: Ուր ուրեմն արձակեալ զնա Ստեփաննոսի Արքեպ. – պատ-

*) ԾԱՆՕԹ.Վ.ԵՊ.Մ.— Հռչակաւոր Յովհաննէս եպիսկ.ի երբեմն Պատրիարքի Կ. Պոլսոյ Էին աշակերտք Տ.Տ.Յակոբոս եւ Մատթէոս եպիսկոպոսունք, իսկ Տ. Ստեփաննոս Աղաւնի եպիսկ. ի Պրուսայէ երբեմն պատրիարք Կ. Պոլսոյ եւ Տ. Պօղոս եպիսկ. Թաքթաքեան ի Պրուսայէ Էին աշակերտք Տ. Պօղոս եպիսկ.ի Գարագօչեան ի Կեսարիոյ՝ Առաջնորդի Պրուսայու եւ Նիկոմիդայ: Յովհաննէս եւ Պօղոս Էին ի ԺԱ. աշակերտաց Տ. Զաքարիա Արքեպ.ի Կաղզուանցւոյ երբեմն պատրիարքի Կ. Պոլսոյ, թէեւ Պօղոս տկար լեալ է յուսմունս եւ ի քարոզութիւնս:

**) ԾԱՆՕԹ.Վ.Եպ.Մ.—Առաւել վատթար լեալ ի Հայրապետական իշխանութեանն ի Ս. Էջմիածին, եթէ ըստ վարչականի, եթէ ըստ վանականի եւ եթէ ըստ դիւանագիտութեան:

ըիարքի ի վիճակէն Պրուսայու, ըստ թախանձագին խնդրանաց Պրուսացւոց Ջանայ Գէորդ վրդ. համոզել զՊօղոս վրդ. Թաքմաքեան Պրուսացի առ ի երթալ յԱռաջնորդութիւն Պրուսայու, որում հաղիւ հաւանի Թաքմաքեան: Յետ պատրաստելոյ Գէորգայ զկարեւոր կոնդակս եւ զհրամարտակ արքունի, Թաքմաքեան գիտացեալ զքննադատելի ընութիւն եւ զուղղութիւնս Մատթէոս եպիսկ.ի՝ զառնայ ի յօժարութենէ իւրմէ, բացայայտ հրաժարի եւ ոչ կամի երթալ ի Պրուսա: Մանաւանդ զի եւ յարաբերութիւնք Մատթէոսի ընդ Պօղոսի ոչ էին բարեկամականք, եւ կասկածամիտն Մատթէոս ըստ բաղում իրաց կարծէր զի Պօղոս դաւադրէր ինքեան եթէ յԱրմաշ, եթէ ի Պրուսայ եւ եթէ ի Կ. Պոլիս: Եւ ըստ վերջին խնդրանաց Պրուսացւոց առաքէ պատրիարքարան զնախկին Առաջնորդ զՅարութիւն եպիսկ. Ուրֆացի ի Պրուսա:

Այսու առթիւ առաւել թշնամացաւ Մատթէոս եւ ընդ Գէորգայ, եւ ոչ էին բարեկամք կամ համակիրք միմեանց ցվերջին շունչս կենացն իւրեանց: Մանաւանդ եւ կարեւոր դէպք յաճախեալք մի զկնի միոյ նպաստէին արծարծման հակառակութեանց իրեարաց, որպէս տեսցեն ի կարգի պատմութեան մերում: Յաւել ի վերայ նոցա եւ զՋանս կուսակցականս:

Առթիւ հալածանաց՝ որոց ենթարկեցան թէ մեղապարտք եւ թէ մանաւանդ անմեղք ոչ սակաւք, բորբոքեալ երկպառակութեանց եւ արծարծեալ կրօնափոխութեան փոխանակ նուազելոյ, յարեան աղմուկ մեծ եւ դժդոհութիւնք ծանունք յԱզգի մերում ընդդէմ Յակոբոս եպիսկ. պատրիարքի: Ուստի միացեալ ազգապետաց եւ իշխանապետաց ստիպեցին զնա ի հրաժարել ի պատրիարքութենէ, այնպէս եւ եղեւ իսկ ի 23ն Հոկտեմբերի 1840 թուականի, առաքեալ զհրաժարագիրն առ Բ. Դուռն ըստ սովորութեան եւ ըստ կարգին:

Իսկ յաւուր կիւրակէի Գիւտ Խաչի ի 27ն Հոկտեմբերի (1840 թ.) Համագումար ժողովն Ազգային վերընտրէ ի պատրիարքարանի վիճակաւ երկրորդ անգամ զՍտեփաննոս Արքեպ. զԱռաջնորդ Արմաշու, միանգամայն կարգէ ի Հրաւիրակ զԳէորգ վրդ. քարոզիչ եւ զԳալուստ աւագ քհնյ. Ս. Աստուածածին եկեղեցւոյ Միջաղեղջ:

Ի յաջորդ աւուր մեկնեալ Հրաւիրակաց նաւակաւ ի Կ. Պոլսոյ, փութան հասանին ի Նիկոմիդիա (Իզմիտ) եւ անտի ելանեն ընդ ցամաք յԱրմաշ, եւ առեալ բերեն զՍտեփաննոս Արքեպ. ի պատրիարքարան ըստ սովորական կարգի՝ փառօք եւ հանդիսիւ՝ յՅին Հոկտեմբեր (Նոյեմբեր) ամսոյ: Եւ զի Ռամազան էր Օսմանցւոց՝ ի գիշերի երթեալ պատրիարքի ի Բ. Դուռն ընկալաւ զսովորական նշան պատրիարքական:

Համաձայն կարգադրութեան ամիրայից եւ դլխաւորաց՝ խորհրդով Ս. Պատրիարքի՝ հրաւիրեալ էր եւ Պօղոս եպիսկ. Առաջնորդ Զմիւռնիոյ, որ եւ եկն եհաս յԻզմիրէ ի Կ. Պոլիս ի 4ն Դեկտեմբերի (1840), ինքեալ ուղղակի ի պատրիարքարան:

ԳԼՈՒԽ Է.

ՅԱՂԱԳՍ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԳԷՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՒ ՍԱԿՍ ՅԱՐԱԿԻՑ ԱՆՑԻՑ ԻՆՉ

Երկրորդ անգամ ստանձնեալ Տ. Ստեփաննոս Արքեպ.ի զպաշտօն պատրիարքութեան Կ. Պոլսոյ, անմիջապէս դադարեցուցանէ զհալածանս, սիրաշահէ զյուզեալս եւ զդայթակղեալս, խրատէ զհակառակորդս, յորդորէ ի խաղաղութիւն զզրգռեալս, միանգամայն ջանայ ձուլել ի մի նպատակ բարի զկուսակցութիւնս:

Ի 12ն Դեկտեմբերի (1840) կաղմեալ ամիրայից՝ իշխանաց եւ իշխանապետաց զժողով առ Ստեփաննոս Արքեպ.ի ի պատրիարքարանի, յետ խորհրդակցութեանց որոշեն եւ անմիջապէս կարգեն զՊօղոս եպիսկ.ի Տեղապահ, եւ զԳէորգ վրդպ.ի փոխանորդ (վէքիլ) պատրիարքարանի, թողեալ ի վերայ վերջնոյս եւ զպաշտօնն քարոզչութեանն Միջագեղջ, յոր երթայր յետ այնորիկ յերեկոյս շաբաթ աւուրց ի կիրակնամուտս, ի տօնական աւուրս եւ ի Տաղաւարս, եւ յետ միոյն կամ երկուց աւուրց վերադառնայր, եւ մնայր ի պատրիարքարանի զցայգ եւ զցերեկ:

Աղաւնի ճանաչէր քաջ՝ միանգամայն առաւել սիրէր զԳէորգ վարդապետ, որում յանձնեաց զկնիքն սովորական փոխանակ տալոյ Պօղոսի, ընդ որ խոժոռի թաքթաքեան:

Սակայն գիտէր Գէորգ սիրաշահել զնոսա ըստ իւրաքանչիւր աստիճանի եւ արժանեաց, որպէս եւ զայլս ամենայն:

Սկսաւ վարել արթնութեամբ եւ աղդուապէս զպաշտօնս իւր որ ի պատրիարքարանի եւ ի Միջագեղջ:

Յայսմ նուագի Ս. Պատրիարք՝ Պօղոս եւ Գէորգ կեդրոնացուցեալ էին զջանս իւրեանց առաւել ի խաղաղել զԱզգ, ի մոռացուցանել զհալածանս, ի փարատել զկասկածանս եւ զերկիւղս բազմաց, ի դադարեցուցանել զկրօնափոխական տագնապս եւ զյուզմունս, ի մխիթարել եւ խրախուսել զվշտացեալ եւ զտառապեալ պաշտօնեայս եկեղեցւոյ, միանգամայն իսկ ասել, ի խաղաղել եւ ազատել զվիճակս եւ զՀայս դաւառացիս ի ներքին եւ յարտաքին թելադրութեանց եւ յաղդակործան վտանգից:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅՐԵՆԻՔ
ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան	5 դոլար
Վեցամսեայ	3 ,,

ՀԱՅՐԵՆԻՔ ԱՄՍԱԳԻՐ ԵՒ ՕՐԱԹԵՐԹ ՄԻԱՍԻՆ

Տարեկան	10 դոլար
Վեցամսեայ	5 ,,

13, Shawmut st, Boston, Mass (U. S.A.)

ՆՈՐ – ՕՐ
ՕՐԱԹԵՐԹ

Յունաստան՝	տարեկան	420 տր·
,,	վեցամսեայ	210 ,,
Եւրոպա՝	տարեկան	135 փր·
,,	վեցամսեայ	80 ,,
Ամերիկա՝	տարեկան	8 դոլար
,,	վեցամսեայ	4,50 ,,

„Nor - Or", 20-A, rue Vouli, Athènes (Grece).

ԱԶԴԱԿ
ՕՐԱԹԵՐԹ

Սիւրիա՝	տարեկան	550 ս· դ·
,,	վեցամսեայ	300 ,,
Արտասահման՝	տարեկան	7 դոլար
,,	վեցամսեայ	4 ,,

„Aztag", B. P. 587 Beyrouth (Liban)

ԱԼԻՔ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Տարեկան՝	48 ռիալ
Վեցամսեայ	24 ,,
Արտասահման	80 ֆրանք

„Alik" 22, Ala-ed-Dovleh. Teheran (Perse).

ՅՈՒՍԱԲԵՐ
ՕՐԱԹԵՐԹ

Եգիպտոս՝	տարեկան	150 եգ· դահ·
,,	վեցամսեայ	80 ,, ,,
Արտասահման՝	տարեկան	40 շիլին
,,	վեցամսեայ	20 ,,

Հասցէ՝
„Houssaper", B. P. 868, Le Caire (Egypte)

ՀՈՐԻԶՈՆ
ՕՐԱԹԵՐԹ

Ներքին՝	տարեկան	300 տր·
,,	վեցամսեայ	150 ,,
,,	եռամսեայ	80 ,,
Արտասահման՝	տարեկան	150 փր·
,,	վեցամսեայ	80 ,,

Հասցէ՝
2, rue Franguini. Salonique (Grece).

ԱՐԱԶ
ՌՈՒՄԵԱՅ ԹԵՐԹ

Տարեկան	500 լէյ

Հասցէ՝
„Araz" 14 Str. Pictar Luchian Bucarest (Boumanie)

ԱՐՄԵՆԻԱ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Արտասահման՝	տարեկան	3 դոլար
Արժանթին՝	տարեկան	6 փեսո
,,	վեցամսեայ	3,50 ,,

Հասցէ՝
„Armenia", Canning 1087. Buenas-Aires (Argentine).

ՅԱՌԱՋ
ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ
խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԻՆԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	Տարեկան	վեցամսեայ	եռամսեայ
Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆրանք
Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա	250 ֆրանք	130 ֆրանք	
Ամերիկա	200 ֆրանք	100 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	200 ֆրանք	100 ֆրանք	

Հասցէ՝ 17, rue Damesme, Paris XIII.

Vem-Pierre. Gérant: V. Hampartzoumian.



Typographie Franco-Caucasienne, 50, Faubourg du Temple. — Paris XI